7 - 78





ՈՐՊԷՆՍՈՆ ՔՈՒԻԶՕԷ·

ԱԽՅ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОСПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՅԿ-ՍՍՌ

546-ԱԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ ՌՕՊԷՆՍՕՆԻՆ ՔՌԻՍՏՈՍԷ ԴԻՄԱՏ ԵՒ ԴԻԿՐԹՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ

Թարգմանեալ 'ի գաղղիական լեզուէ յաշխարհաբառ։

ԴՀԱՅՐ ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ԲԺՇԿԵԱՆ ՏՐԱՊԻԶՈՆՑԻՈՅ
ԴՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

1817 ԹՎԻՆ
'Ի ՎԻԵՆԷՏԻԿ
'Ի ՎԱՆՍ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

2004

82-31

ГОСУДАРСТВЕНА БИБЛИОТЕКА
СОФИЯ-СОРА
Н. Мясиновски
Общодържавен пъдел

5852
38

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Փիլիսոփաներն ասին թէ ամէն մարդ միակերպ ստեղծուած է. ամենուն հոգին և բնական կատարելութիւնը մէկ է. միայն կրթութիւնն ու քաղաքավարութիւնն է որ մարդ մարդէ և խելք խելքէ կորոշէ. որը շատ որը քիչ կատարեալ կընէ. որ ասել է թէ մարդս կրթութիւն ամէն կատարելութիւն կրնայ ստանալ. և առանց կրթուելու անքաղաքավար մնալով մարդկուէն կելլէ, անասնոց կարգը կրմտնէ:

Ահա զայս ճշմարտութիւնը յայտնի կընէ Ռոսէնաուն վարքը. որ անկիրթ մնալով ուսկից ոնը հասաւ, և Եւրոպային մէջ մեծնալով ի՞նչ կերպ թանձրամիտ և անհնազանդ մնաց: Իսկ անմարդաբնակ երկիրներուն այն խեղճ առանձնուելու մէջ զինքը կրթելով, որչափ կատարելութիւն ստացաւ: Ահա մէկ հայելի մը եղաւ, որ ամէն վիճակի մէջ եղողները կրնան մէջը նայիլ: Ուստի այս պատմութիւնը ոչ միայն մարդկային մտաց ուժը, այլև բոլոր աշխարհքիս դիպուածները, և ողորմելի վիճակը. նաև յաջող և ձախորդ բաղդը կընկարէ ամենուն առջեւն:

Ծերոց կըսորվեցընէ ճշդապահութիւն և անխռով երկայնմտութիւն: Ծնողաց կըքարոզէ՝ չափով սիրել զաւակներն, երես չի տալ, և ջանալ թէ բարի օրինակով և թէ կրթութիւնը առաքինի և ուսումնական

ընել զանոնք քաղաքավար մեծցընելով։ Երիտասարդաց կըսորվեցընէ համբերութիւն, և համակերպութիւն։ անանկ որ ոչչավ մեծ թշուառութեց մէջն իյնին՝ չի յուսահատին։ այլ միշտ այ ապաւիններով աշխատին ջանան յաղթել ձախորդ բաղդին, մինչև որ յաջողութիւնը գտնեն։

Մանկանց կը խրատէ, որ ամենևին ժամանակնին պարապ չանցընեն։ գիշեր ցորեկ ջանան բան սորվելու։ նաև խելացի գիտուն մարդկանց քովէն չի պակսին։ որպէս զի ատենն որ անցնի չի զղջան անօգուտ։ Իսկ տղոց կըպատուիրէ, որ ամ կերպով ծնողաց հնազանդ ըլլան։ միշտ բարի բաներ սորվին, ու կրթութեամբ աղէկ մեծնան։ Ասոր համար եւրոպացի գիտուններըը այս գիրքը՝ երևելի խրատական գրքերուն կարգը դրին զարմանալի պոպուլիրն անուանելով։ գրեթէ ամէն լեզուի մէջ թարգմանեցին։ և զանազան կերպով շարադրեցին մանկանց կրթուելու համար։ Որովհետև Բոսվէնսօն 12 տարի անբնակ կղզիին մէջ մնալով Ամերիգա, մարդուս ամէն պէտք եղած բաները հնարեց, և որպէս կատարեալ ճշտապաշտ ձախորդ բաղդին տանելով այն տղորմելի առանձնական կեանքը անցուց՝ անանկ զարմանալի եղանակաւ որ մէկ մարդուն բոլոր քաշածները այս գրքին մէջ՝ կրնան ըլլալ հայելի մը բովանդակ աշխարհքիս փոփոխական պատահմունքներուն։

Այս պատճառաւ երբոր այս գիրքը առջի անգամ՝ ինկիլիզերէն տուին 10 հազար օրինակ մէկէն ծախվեցաւ։ անկէ ետև ամէն աշխարհք տարածվեցաւ։ Բայց այն առջի գրված պատմութիւն ոչը ընդարձակ

ըլլալով, 1779 ին նեմցէ Երևելի դիտուն մը ոճը փոխելով համառօտեց. և աւելորդ պարագաները ձգելով դեղեցկացուց պատմութիւնը։ Ուստի առջի պատմութէն որոշելու համար նոր Ռոպէնսոն անուանեց։

Առջի պատմիչը այսպէս կըվկայէ. ,, Այս պատ,, մութիւնը (կըսէ) թէպէտ շատ զարմանալի է, բայց ,, շինծու ձևացուցած բան չէ. այլ ճշմարիտ պատ,, մութիւն է, և բարոյական խրատ ամէն մարդու ''։ Առջի գրված պատմութիւնի մէջ ընդարձակ կըդնէ Ռոպէնսոնին օրագրութիւնը. որ ամէն օր գլխուն եկած բաները՝ իրեն ծառէ շինած օրացուցին վրայ կընշանէ եղեր. որ ետքը գրիչ թուղթ որ գտաւ՝ բոլորը կարդի դրաւ գրեց ամէն պարագաներով։

Սակայն աւելի օգտակար և ախորժելի եկաւ մեզի այս համառօտը թարգմանել, քան թէ ընդարձակը. թէպէտ տեղ տեղ ծանօթութիւնի մէջ օրագրութէնաւ պէտք եղած բաները նշանեցինք, և վերջն աւ յաւելուած ըրինք Ռոպէնսոնին մնացած վարքն աւ պատմելով. որպէս զի մեր մանկանց ախորժակը բանանք. որ աւելի ջանան բան սորվիլ, նաև Ռոպէնսոնին վարքը իրենց խրատ ընելով առաքինի ըլլան։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՌՕԳԷՆՍՕՆԻՆ (*)

Ա. Դիպուած.

Ամպուրկ քաղաքը մէկ մարդ մը կար Ռօպէնսօն անունով. այս մարդս իրեք որդի ունէր. անդրանիկը ուզեց զօրական ըլլալ և զինուոր գրվեցաւ. ետքը մեռաւ պատերազմի մէջ Ֆրանսըզներուն դէմ (**): Երկրորդ որդին կամեցաւ ուսումնական կարդացօղ ըլլալ. բայց օր մը շատ խմելով կուրծքի հիւանդուն եկաւ վրան. վերջապէս գլուխ չազատեց մեռաւ: Ետնայ պզտի որդին որ կըսվեր Ռը-

(*) Ռօպէնսօնին առջի գրված պատմուելը այսպէս կըսկըսի. Ես ծնած եմ յամի ՌՆ 1632. հայրս էր ինկիլթէռայի Եօրք քաղքէն. վաճառականութիւն եկաւ հոս մօրս հետ պսակվեցաւ. բայց մօրս ցեղին անունը Ռօպէնսօն ըլլալուն համար՝ մենք ալ Ռօպէնսօն կոչվեցանք, թէպէտ իմ անունս էր Քրուզօէ:

(**) Ամպուրկ է մեծ քաղաք գերմանիկ և հարուստ 120 հազար բնակիչ ունի. նեմցեատանի ճոթը էլպա գետին վրա շինած է, որ մեծ ծովը կը թափի. ամէն աշխարհքէն նաւ կուգայ այս քաղաքը:

Թէոդոսէ Պոլսեցոյն. Հօրն ու մօրը յոյսը մնաց միայն այս մէկ հատիկ տղուն վրայ, որ իրենց աչքի լուսին պէս կը սիրէին. սակայն ա-ստոնց սէրը անկարդ ըլլալուն համար, թող տվեր էին, որ իրենց սիրական զաւակը իր ամէն կամքը կատարէ. ուստի աւելի կա-խորժէր խաղալ, քան թէ աշխատիլ և բան սորվիլ. գրեթէ բոլոր օրը խաղալով կան-ցընէր առանց բան մը սորվելու։

Ուրեմն այս Պոլսեցոյն, բայց ամե-նևին իրեն պէտք եղած բաները չգիտեր. հայրը կը փափաքէր որ տղան վաճառակա-նութեան սորվի. իսկ տղան ամենևին կամք չունէր բան մը սորվելու. վա՜ղ զի աւելի կը սիրէր քաղքեն քաղաք պտըտիլ. և ամէն օր նոր նոր բաներ լսել և նոր նոր տեղեր տեսնել (*)։ Սակայն այս պատանին խիստ անմտութեամբ այս բանը կը մտածէր. իրաւի էր եթէ առաջուց սկսած ըլլար բան սորվե-լու, ճամբայ ընելը աղէկ կրնար ըլլալ, բայց այսպիսի խեղճ տղան որ բան չգիտէր՝ ինչպէս պիտի աշխարհք տեսնէր, և ինչ շահ իրեն պիտի ըլլար։ Նրբոր հանդիպի

(*) Պոլսեցոյն կըսէ, թէ հայրս խելացի բարակ մարդ ըլլալով՝ շատ երևելի դպրատուններ դրաւ զիս որ գիտուն և արուեստ սորվիմ, բայց ես խելքս միտքս տվեր էի ժուռ գալու, ինձի ճանճրուն կու-գար։ Շատ անգամ զիս խրատելով գլխուս գալիքնե-րը մարգարէի պէս առաջս կըդնէր, ու ես միտիկ չէի ըներ։

քաղաք մը երթալ՝ պէտք է առաջ աշխարհագրուն և վաճառականուն լաւ տեղեկութիւն ունենալ. բայց Յովհաննոն մինչև անատենը մոքէն ալ չէր անցուցած բան սորվիլ և տեղեկութիւն ունենալ, որ արդէն 17 տարեան էր՝ իր ժամանակին մեծ մասը ճամբաները քալելով անցուցեր էր։

Ուրիշ բան չիյտեր բայց եթէ ամէն օր նեղութիւն կուտար հօրն որ իրեն հրաման տայ ճամբորդութիւն ընելու. իսկ հայրը պատասխան կուտար, թէ ամենևին մոքէն չանցրնէ և իրեն չըսէ անանկ բան, վ՚ը զի չուզեր լսել ճամբորդութիւն խօսքը։ Իսկ խեղճ մայրն ալ քանի որ կը լսեր այս բանը լալով կաղաղակեր. որդեակ իմ որդեակ իմ նստէ՛ այս քաղքիս մէջն ու բան սորվի՛։ Որ մը ինչպէս որ սովորութիւն ըրեր էր՝ դուրս ելաւ պարապ ժուռ կուգար, պատահեցաւ ընկերներուն մէկին, որ նաւապետի մը որդի ըլլալով նոյն օրը իր հօրը հետ ճամբայ պիտի ելլէին դէպ՚ի լօնտռա երթալու։ Ընկերը հարցուց իրեն, թէ կուզե՞ս դուն ալ մեզի հետ գալ։ Պատասխան տվաւ Յովհաննոն, թէ ո՞ւր էր խիստ շատ կուզէի, բայց իմ ծնողքս չէն ուզեր։ Կրկնեց ընկերը. թէ եկո՛ երթանք միատեղ շատ կուրախանաս, ինչպէս կարծեմ՝ ահա իրեք շաբթվան մէջ կը դառնանք կուգանք. իսկ հօրդ մօրդ

կողմանէ ուրիշ բան չէս ըներ, բայց եթէ ուրիշի ձեռքով կիմացընես երթալդ։ Յապա ես ծոցս ստակ մը չունիմ ըսաց։ Յոգ չէ ըսաւ ընկերը, ես քու տեղդ կը վճարեմ բոլորը, մինչև որ դառնանք (*)։

Այս միջոցս Ռօպէնսօն քիչ մը ինքնիրեն մտածեց, ու մէկէն ընկերոջը խօսքին հետևելով կանչեց. լաւ ըսիր էգ-բայր՝ ես քեզի հետ եմ. շուտով նաւն երթանք։

Յետոյ մէկ բարեկամին ապսպրեց որ երթայ հայրը գտնէ, ու պատմէ իրեն ճամբորդուելը և ըսէ, թէ միայն ինկիլթէռա տեսնելու համար կերթայ, հոգ մըներ քիչ ատենէն պիտի դառնայ։ Ան այսպէս այս երկու բարեկամները դացին նաւը մտան։

Նաւավարները նաւին երկաթը վերուցին և առագաստները բացին, սկսաւ հովը առաջ տանել նաւը. նաւապետն ալ մեծաք բարով ըսելով նետեց 10 անգամ թնդանօթը (թօփը)։ Իսկ Ռօպէնսօն նաւին վրայ կեցեր ընկերոջը հետ կը զրուցէր նարճամբայ երթալուն համար, որ նոր

(*) Ռօպէնսօն երկար կըպատմէ այս ջար ընկերին խօսքերը. այնչափ որ կըսէ՝ խելքս գլխէս առաւ. առանց ծնողացս օրհնուելը առնելու, և առանց բանի մը նայելու խիղճմտանքիս դէմ ըրի, որ դեռողջ էր, չէր մեռած խիղճս։ Նաւը մտած օրս էր սեպտեմբերի մէկը 1651 ին։

տեղեր պիտի տեսնէ։ Եւ լաւ օրերնին խիստ գեղեցիկ էր օդը. հովն ալ այնչափ յաջող էր, որ շուտ մը աներևոյթ եղաւ Ամպուրկ քաղաքը, և հետևեալ օրը հասան մինչև Լիվերպուլ. ուր տեղէն որ Էլպա գետը կանցնի կը թափի մեծ ծովը. նոյն օրը մտան գերմանական ծովը (*)։

Ընտաւենը երբոր Լոպէնսոն բացաւ աչքը նայեցաւ՝ ուրիշ բան չի կրցաւ տեսնել, միայն երկինք ու ջուր կար աչքին առաջը. վասն զի Էլաց երկիրները կամաց կամաց աներևոյթ եղան առջևէն։ Ընանկ որ այլ բան չէր տեսներ բաց 'ի մեծ Ճրագէն, որ կըվառէն Էլլինգլանտ կղզին. անալ շուտով աներևոյթ եղաւ. ուստի Լոպէնսոն նայեցաւ, որ վրան երկինքն է, և չորս դին ծով։

Երկու օր խիստ յաջող և լաւ էր հովը, բայց երրդ օրը երկինքը ամպով գոցվեցաւ, օդը մթընցաւ և հովը սաստկացաւ։ Ամմը կըփայլատակէր՝ կարծես թէ բոլոր երկինքը կը վառի. մէյ մը անանկ կըմըթննար, որ կերևնար թէ խա-

(*) Էլպա գետը մեծ և շատ շահաբեր գետ է, որ Ամպուրկին քովէն կանցնի կերթայ գերմանական ծովը կըվազէ. որ է ահագին ովկիանոսին մէկ ծայրը պալթիկ ծովին մօտ. այս տեղէն անցան մտան մեծ ծովը։ Լոպէնսոն կըսէ թէ առջի խեղճուհիս եղաւ, որ անսովոր ըլլալով ծովը գլուս բռնեց չարաչար կը նեղէի։

ւար գիշեր է. Եթքը սկսաւ ամպը սաստիկ գոռալով որոտում ընել, անանկ որ չի դադրեցաւ մինչև Եթքը։ Անձրևը գետի պէս կուգար, և փոթորիկը ահագին աւելկոծուն կընէր ծովուն մէջ. իսկ ալիքները լեռան պէս կելլէին կինջնէին։ Տեսնելու բան էր նաւը, թէ ի՞նչպէս ալիքներուն մէջ մէյմը վեր կելլէր, մէյմը վար կինջնիր. երբեմն մէկ ալիքը կառնէր մինչև ամպը կըհանէր, և երբեմն մինչև անդունդը կըձգէր. երբեմն մէկ կողմը կըպառկէր, երբեմն մէկալ կողմը։ Ըսանններուն ձայնը և նաւին աղաղակը ողորմելի կը լսէր. ամէն մարդ մէյմէկ բան բռնէր կը դողային, որ վար չիյնին։

Իսկ Յոպէնսօն՝ որ բանմը ընելու կարողութիւն չունէր, խելքը դարձած ընկեր էր հիւանդ, անանկ սիրտը կըխառնըվէր, որ կերևնար թէ հոգին պիտի տայ. անդադար խեղճ ընելով կաղաղակէր. ո՞հ իմ ծնօղքս, իմ ողբալի ծնօղքս մէյմալ ալիս չպիտի տեսնէք. ի՞նչ անխելքուն էր որ ես ըրի, ու սանակ կըտանջըվիմ։

Այս միջոցիս մէջ ձայն մը լսվեցաւ վերէն. սկսաւ նորէն աղաղակել, երեսը մեռելի գոյն, ձեռքերը իրար փաթթած կը պօռար յուսահատութիւն։ Ըղձեօք էր. կինք ողորմեցաւ մեզի. այս ի՞նչ ձայն է, կըհարցընէր կիսամեռ վախուն։ Հա կո-

բանք կըսէր, կայծակը զարկաւ կտոր կը-
տոր ըրաւ կայմը (տիրէկը). ահա մեծ
կայմն ալ անանկ ակարացաւ, որ հիմա պի-
տի կոտրի ծռիլ լինի։

Նորէն կաղաղակէր. կորա՛նք կորա՛նք.
ահա նաւը ջուր առաւ չորս ոտքէն աւելի։
Սանկ խօսելով պառկեր էր Յոպէնսօն
տախտակին վրայ՝ նայիս գլորեցաւ ընկաւ.
և բոլոր Ճանաչմունքը կորսընցուց բան
չէր իմանար։ Նաւին մէջ ամէնքը վազե-
ցին ջրհանին (թուլումպային) քով. որ
հնարքով ջուրը պարպեն ազատին վտան-
գէն. որոնք չափէն աւելի կաշխատէին։

Նաւտենը մէկ նաւավար մը եկաւ Յո-
պէնսօնին քով շարժեց գլինքն ըսելով, թէ
դուն մինակ կաս ասանկ անշարժ ընկած ա-
ռանց աշխատելու. ահա բոլոր նաւին մար-
դիկը չափազանց կաշխատին, դուն ինչո՞ւ
չես աշխատիր. ինչևիցէ Ճար ըրաւ վեր ե-
լաւ, թէպէտ շատ տկար էր, գնաց ջրհա-
նին քով աշխատողներուն օգնուելի ընելու։

Սակ նաւապետը քանի մը անգամ թըն-
դանօթը նետեց, որ եթէ մօտ տեղեր նաւ
գտնըվի, նշան տայ թէ վտանգի մէջ է-
նք, չի հեռանայ գայ իրենց օգնէ։ Յոպէնսօն
այս բանը չգիտնալով թէ ի՞նչ կը նշանա-
կէ. երբոր լսեց այս ձայները կարծեց թէ
նաւը կործանեցաւ. ուստի նորէն ընկաւ
մարեցաւ. մէկ նաւավար մը իր տեղն ան-

ցաւ, ու ոտքովը մէկ դի հրեց պայն, թո-
ղուց անանկ գետինը բռված՝ կարծելով
թէ մեռած է։

Շարունակ կը քաշէին ջրհանը ամ-
ջանքով. բայց ջուրը միշտ կը բարձրանար
նաւին գոգը. անանկ որ նաւն սկսաւ եր-
թալ ծովին տակը. ուստի թեթևցրնե-
լու համար՝ ամէն բան ծովը նետեցին,
թնդանօթները, գնտակները, տակառ-
ները (փչինները), ևն. սակայն ամենևին
շահ չբերաւ։ Մէկ նաւ մը հեռուէն լսեց
ասոնց տված նշանը՝ մակոյկը (սանտալը)
խրկեց, որ զասոնք ազատէ. բայց այս մա-
կոյկը չի կրցաւ մօտենալ նաւին. վա՜ղ
ալիքները սաստիկ վեր կը վերցընէին.
վերջապես նաւին գլխուն դիէն մօտեցաւ,
որ կարենայ չուան նետել նաւին մէջի ե-
ղողներուն. ոմ՝ զի մակոյկը կարենան ի-
րենց մօտեցընել։ Ու այս Համբայով կա-
ղողուն ունեցողները ձաթկեցին մակոյ-
կին մէջ։ Իսկ որովհետև Ասպէնսօն ոտ-
քի վրայ չէր կրնար կենալ, մէկ քանի նա-
ւավար խղճալով բռնեցին զինքը մակոյ-
կը նետեցին։ Ուրիշ թէ բաժնվիր էին
նաւէն, մէկէն նաւը գնաց ծովին տակը։
Այս ալէկոծութին ալ սկսաւ քիչ քիչ
դադրիլ. թէ չէ ալիքները կընկղմէին մա-
կոյկները, որոնց մէջ այնչափ մարդիկ լե-
ցուն էին։ Այս վտանգներն անցնելէն

Եւ գնացին հասան նաւին, և ամէնքը մտան հոն աղատեցան։ Յորս օրէն Եւ նաւը հասաւ Թամիզ գետին բերանը և հինգերորդ օրը երկաթ նետեցին Լ ենտռային առջին (*)։

Նատենը ամէնքը գետին ընկած կուրախանային որ ասանկ մեծ վտանգէ աղատեցան. իսկ Յոպէնասն ամէն բանէն առաջ աչքը վերցուց Լ ենտռա քաղքին նայեցաւ. և այն կետին մէջ բոլոր քաշածներն ու գալիքները մոռցաւ։ Յետոյ ըստամոքսը իրեն հասկրցուց, թէ անօթի է պէտք է բան ուտել, և ապրուստ ճարել եթէ կուզէ ապրիլ այն մեծ քաղքին մէջ. գնաց որ իր նաւապետը գտնէ, որուն հետ միատեղ գացեր էր. և խնդրեց որ շնորհք ընէ իրեն սեղանն առնէ զինքը։ Նաև բարերարութիւն ընելով սեղանն առաւ. կերակուրին ատենը հարցուց, Դէ ինչ պատճառաւ Լ ենտռա եկեր էր. և ոչ զինքը հոն խրկեց։ Յոպէնասն շիտակէ շիտակ պատմեց անոր, թէ ուրիշ բանի համար չէր ըրած այս ճամբորդութիւնը, բայց եթէ զբօսանաց համար, և առանց ծնող

(*) Թամիզ է երևելի գետ Ինկիլթէռայի, նաւերով լեցուն է. որ կը թափի մեծ ծովը Լենտռայէն հեռու։ Յոպէնասնին նաւը Էլպա գետէն ելաւ մտաւ մեծ ծովը. անկէ նեղուցէն անցնելով եկաւ Թամիզ գետին քովէն Լենտռա հասաւ։

զայն հրամանին եկած էր. նաև չէր գի-
տեր թէ ի՞նչ պիտի ըլլայ անկէ ետև։

Նաւապետը կանչեց բոլորովին գողա-
լով, և դանակը ձեռքին վար ձգելով ը-
սաց. Ո՞ւանց ծնողացդ հրամանի՞ն է-
կար. Ցե՛ւ ած, ես ինչո՞ւ համար առաջուց
չգիտցայ. հաւատացի՛ր անխոհե՛մ պատա-
նի, թէ որ առաջուց գիտնայի Ամպուրկ
քաղաքին մէջ՝ ո՛չ երբեք քեզ նաւս կառ-
նէի. թէպէտև բիւր հազար ոսկի վարձք
տայիր։ Յոսէֆնսօն առջին նայելով ա-
մօթն երեսը կարմրցուց, ամենևին ձայն
չէր հաներ. իսկ բարեպաշտ նաւապետը
շարունակելով իր խօսքը՝ առաջարկեց ի-
րեն ըսելով, թէ դուն ամենևին աղէկու-
թի՛ և հանգիստ չպիտի գտնես, մինչև որ
խելքդ գլուխդ չի ժողվես, ու ծնողացդ
օրհնեանքը չառնես։ Յոսէֆնսօն սկսաւ
լալ սաստիկ։ Հապա ես հիմա ի՞նչ պիտի
ընեմ, հարցուց։ Դիտե՞ս ի՞նչ պիտի ը-
նես՝ ըսաւ նաւապետը. դարձի՛ր շուտով
ծնողացդ տունը. ոտքերունին ընկի՛ր, ու
ճշմարիտ սրտով զղջա՛, և ինչպէս անա-
ռակ որդի մը թողուն խնդրէ ըրած ան-
կարգութեդ համար, ահա՛ այս է քու ը-
նելու պարտքդ։

Խնդրեմ, ըսաց Յոսէֆնսօն կրտանի՞ս
զիս Ամպուրկ։ Ո՞ս տանիմ՝ ըսաց նաւա-
պետը, ուրեմն մնացար, որ իմ նաւս ալէ-

կոծուելիք կորաւ. Էս չեմ կրնար դառ-
նալ Ը. մպուրկ՝ մինչև որ ուրիշ նաւ մը չի
գնեմ. և այս բանս հարկաւ կուշանայ.
դուն չես կրնար այնչափ ժամանակ հոս
մնալ։ Ը. հա առջի նաւն որ կերթայ Ը. մ-
պուրկ, մտիր մէջը գնա՛. մի՛ ուշանար,
նայէ օր մը առաջ հասնիս։

Բայց Էս ստակ մը չունիմ ըսաց Ա-
պէնսօն. պատասխանեց նաւապետը, թէ
Էս քեզի քանի մը կինէ փոխ կուտամ (*),
որովհետև հիմա ինծի շատ ստակ պէտք
չէ. ունեցածս ինծի բաւական է։ Ուրեմն
գնա՛ շուտով նաւահանգիստը մէկ նաւ մը
բռնէ՛ մտիր մէջը. եթէ քու զղջումդ
Հմարիտ է, ուրիշ քեզի հետ կըլլայ Համ-
բորդուելդ մէջ, և անանկ մը փառաւորէ
քեզ որ մարդու մտքէն չէ անցած։ Օ-
սանք ըսելէն ետև ձեռքը բռնեց թոթ-
վեց բարեկամաբար՝ երթաս բարով ը-
սաց։ Ապէնսօն ալ մնաս բարով ըսելով
գնաց։

Երբոր կերթար նաւահանգիստին Համ-
բան՝ մտքին մէջ զանազան բաներ կըպտը-
տէր. կըմտմըտար թէ հիմա իմ ծնողքս
ի՞նչ պիտի ըսեն երբոր տուն դառնամ.

(*) Կինէն ինկիլիզի ոսկի է, և հոն գործածական
ստակն է, որ իբր երկու մաՀաւ ոսկիի արժողքէ
ունի. Ապէնսօնը ամերիկայէն դառնալէն ետև այս
փոխ առած ստակը տվաւ նաւապետին։

յայտնի է, թէ զիս չարաչար պիտի պատուհասեն ըրած բանիս համար. և ընկերներս ալ ոչչափ վրաս պիտի խնտան, որ սանկ շուտով դարձայ. գրեթէ երկու իրեք ճամբայէն 'ի զատ ուրիշ բան չի տեսայ ճանապարհի մէջ։ Սանկ մտմըտուքով պաշարած էր, երբեմն կորոշէր որ չերթայ. երբեմն միտքը կը բերէր նաւապետին ըսած խօսքը, թէ մինչև որ ծնողացդ տունը չերթաս՝ աղէկութիւն չես գտներ։

Երկար ատեն չկրցայ թէ որն որոշէ. վերջապէս գնաց նաւահանգիստը, հարցուց հասկըցաւ, թէ շիտակ Սմիւրկ երթալու պատրաստական նաւ չկայ։ Այս լուրն իրեն տվող մարդը նաւապետն էր, որ պիտի երթար Կիւինէ քաղաքը Սփրիկէի, որ ծովուն մօտ ըլլալով հոն շատ վաճառականութիւն կըլլայ (*)։ Այս նաւապետը կախորժէր որ Ալոպէնսօնին հետ երկար խօսի. հրաւիրեց, որ իրեն նաւն երթայ գաւաթ մը չայ խըմէ. անալ հետևելով գնաց նաւը։

(*) Կիւինէ մեծ քաղաք է Սփրիկէի, ոսկի շաքար և փղոսկր շատ կելլէ. ուստի Եւրոպացոց մեծ վաճառականութիւն տեղն է. բայց բնակիչներն են սև մոլի և կատաղի մարդիկ, որ 50 տարիէն աւելի չեն ապրիր. երկիրը ապաք ըլլալով ոչխարները բուրդի տեղ մազ ունին, և մարդիկ մազի տեղ բուրդ ունին։ Այս երկիրը շատ զանազան քաղաքներ կըբաժնըվի։

Երբոր հասկրցաւ նաւապետը, թէ Ռօպէնսօն կրփափաքի Համբորդութիւն ընել և քաղաքներ տեսնել, նաև ակամայ Ամպուրկ պիտի երթայ, իրեն առաջարկեց, որ Լիւբինէ երթայ հետը։ Ռօպէնսօն առջի բերանը սոսկաց այս խօսքիս վրայ, բայց նաւապետը հասկրցուց անոր, թէ այս Համբորդութիւնը խիստ կըւարձալի գեղեցիկ պիտի ըլլայ. և իրեն հետ ընկեր ըլլալով՝ ամենևին բան չի վճարեր, և առանց կերակուրի կերթայ. մանաւանդ որ այս Համբան ընելով կրնայ շատ բան վաստրկիլ գացած տեղը։

Այս բաները լսելով մէկէնիմէկ սիրտը վառեցաւ և անանկ փափաքեցաւ այս Համբորդութիւնն ընելու, որ շուտ մը մոռցաւ մէկալ բարեպաշտ նաւապետին իրեն տված խրատները. և ինչոր քիչ մը առաջ մտքին մէջ դրեր էր, բոլորը թողուց (*)։ Ռօպէնսօն քիչ մը մտմըտալէն ետև ըսաց, խիստ լաւ. բայց ես իրեք կինէն'է զատ բան մը չունիմ. այսչափ ստակով ի՞նչ պիտի ընեմ, և ի՞նչ բան պիտի գնեմ։ որ գացած տեղս վաստակ ընեմ։ Պատաս-

(*) Այսպէս կըգրէ Ռօպէնսօն. կարծէլի թէ քաղաքս որ դառնամ ամէնքը ինձ ծաղր պիտի ընեն. մանաւանդ ծնողացս առջին ի՞նչպէս պիտի երևիմ. որչափ որ շատ մտածելով ատեն անցաւ, քաշած նեղութիւններս ալ կամաց կամաց երևակայութիւնս եկան. ուստի աւելի հաւանեցայ որ Համբայ երթամ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библіотека
Հայ. ՍՍՌ
Էմ. Ա. Ղազարյան
Ս. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

խան տվաւ նաւապետը, թէ ես քեզի կու-
տամ հոգ մընէր, շատ բան պէտք չըլլար
գնելու. քիչ բանով շատ բան կրնանք
վաստակիլ հոն, եթէ բաղդերնիս բաց է։
Յարցուց Պօպէնսօն, թէ ի՞նչ բան կը-
տանին հոն ծախելու։ Ընալ ըսաց, պէտք
է տանել տղոց խաղալիք ամէն տեսակէն,
սուտ մարգարիտ, մկրատ, կացին, հրացան,
ժապաւէն (շերիտ) և՛ն։ Սանկ բաներըը
խիստ շատ կըսիրեն սև ափրիկեցիք, որ
հարիւր անգամ աւելի կըվճարեն ասոնց
տեղը ոսկի, փղոսկր, և ուրիշ բան։ Պօ-
պէնսօնին խելքը գլխէն գնաց, և մէկէն
հանեց մտքէն ծնողքը՝ բարեկամները, և
հայրենիքն, ու սկսաւ ուրախանալով կան-
չել. կուգա՛մ հետդ պարո՛ն նաւապետ։
Ընալ ըսաց, խի՛ստ բարի. ձեռք ձեռքի
տալով որոշեցին, որ միատեղ երթան։
Խեղճ ողորմելին չիյտէ, թէ ծնողքին
դէմ ընօղը՝ ՝ՀՅ պատիժին կուգայ. ահա՛
ամէն պատիժին պատճառն ինքն եղաւ,
որ վինքը ողորմելի պիտի ընէ, մոլորած
ոչխարի պէս չիյտէ թէ ի՞նչ պիտի դայ
գլխուն. սանկ զաւակին վրայ պէտք է
որ ամէնքնիս ալ լանք։ Ինչ և իցէ Պօ-
պէնսօն ունեցած ստրկովը գնաց նաւա-
պետին ըսաց վաճառելու բաները գնեց՝
քերաւ նաւը դրաւ. քանի մը օրէն ետև
հովը յաջող ըլլալով նաւապետը նաւին

երկաթին առաւ, առաջաստը բացաւ, Ճամբայ եկան (*)։

Բ. Դիպուած.

Ռոպէնսոնին այս երկրորդ Ճամբորդութենաւ խիստ յաջողութիւն սկսաւ, որ առանց մէկ պատահմունքի մը անցաւ կիրճերը (պօղազները), և մտաւ Ադրանդեան ովկիանոսը։ Շատ օր անցնելէն ետև մէկ հակառակ հովի մը ունեցան, որ զիրենք միշտ դէպ 'ի Ամերիկա կըհեռացընէր, ինչափ որ նաւը կըջանար իր Ճամբան ընէ առաջ երթայ, այնչափ կըստիպէր հեռանալ հովին բռնութենէն. վերջապէս չդիմացան թող տալին որ հովն առաւ զիրենք դէպ 'ի Ամերիկա կըտանէր (**)։

(*) Այսպէս կըսէսի Ռոպէնսոն առջի գրած պատմութեանմէջ. Երանի՞ թէ դառնայի ծնողաց քով. որոնք լսելով մեր նաւին կորուստը հարկաւ սպասելած էին տրտմութեամբ. արդար է ասիկ որ զիս կըպատժէ. սասանկ անհնազանդ զաւակին արժանի է։ Ո՞հ թէ ինչափ պիտի ուրախանար հայրս զիս որ տեսնէր. ինչ աւետարանին առակին պէս, տեսնելով անհաւատ որդին իրեն դարձած՝ շատ մեծ ցնծութեամբ ընէր։ Ռոպէնսոնին այս խօսքերը երանի՞ թէ գրվէին ամէն տղոց սրտին վրայ, որ մեծերուն հնազանդ ըլլան. ծնողաց խօսքը՝ մտիկ ընեն. ու օգտակար բանեերու հետ ըլլան բան սորվին, որ եսքը պարապ տեղը չի լան. վա՜ զի եսքի զղջումը օգուտ մը չունի։

(**) Այս նաւը Լոնդրայէն ելաւ Թամիզ գետան անցնելով հասաւ հիւսիսային ովկիանոս. անկէ դէպ

Մէկ երիկուն մը նաւապետը իմացուց թէ հեռուն կրակ մը կըտեսնէմ, նաև քանի մը թնդանօթի ձայն կըլսեմ այն կողմէն. ամէնքը վեր վազեցին տեսան կրակը, և շատ թնդանօթի ձայն ալ առին. նաւապետը սկսաւ Յացոյց թղթին վրայ քննել նայիլ, հասկըցաւ որ այն կողմերը ցամաք չի՛կայ, հարիւրաւոր մղոն հեռուն էն ցամաքէն. ուստի ամէնքը միաբան դատեցին, թէ այն կրակը ուրիշ բան չէ, բայց եթէ մէկ նաւ մը կերի. և որոշեցին որ խեղճերուն երթան օգնուի հասնին. նաւը այն կողմը դարձուցին, շատ չանցաւ տեսան որ ըրած կարծիքնին իրաւ ելաւ. վո՞ւ ալ յայտնի տեսան որ մեծ նաւ մը բուրնկեր էր։ Իսկ նաւապետը շուտով պատուիրեց, որ հինգ թնդանօթ նետելով նշան տան անոնց, թէ մօտ տեղ նաւ կայ, կը պատրաստվին իրենց օգնուի երթալու. բայց հապա թէ այս գործողուին ըրին, նայիս ահագին ձայնով վառած նաւը մէկէն երկինքն ելաւ ու ինչաւ ծու

՝ կրակը մարեցաւ։ Այս բանէն յայտնի եղաւ թէ կրակը հասեր

'ի արևմուտք դարձուց անցաւ կիրճերը մտաւ Աղլանդեան Ովկիանոսը. ուր շատակ քանարեան կղզիները անցնելով պիտի երթար Ափրիկէի ցամաքը. անկէ կիւինէ պիտի երթար. բայց հոլզ հեռացնելով Ամերիդայի դին ձգեց։

էր վառոդին կամ ճէպխանէին տեղը. բայց չի հասկրցվեցաւ թէ արդեօք նաւին մէջի եղօղներուն բոլորը կորա՞ն, թէ չէ. վ՚ը զի կարելի էր որ նաւը վեր չելած ոմանք մակոյկին մէջ մտեր փախեր էին։ Այս պատճառաւ նաւապետը բոլոր գիշերը շարունակ թնդանօթ կընէտէր. ոմն զի վտանգի մէջ եղօղները լսեն ու հասկընան, թէ ո՛ր կողմն ալ ըլլան՝ կուգեն ասոնք իրենց օգնուի հասնիլ. նաև բոլոր կանթեղները կախեցին, որ խեղճերը կարենան զիրենք աղէկ մը տեսնել։ Առաւօտանց որոշ տեսան դիտակով երկու մակոյկ լեցուն մարդ. որոնք ալիքներուն մէջ կելլէին կինջնէին. նաև տեսան որ հոգին իրենց հակառակ ըլլալով շատ դժուարուն կը քաշէին թի քաշելով դէպ իրենց գալու։ Նաւապետը դրօշակ (պայրախ) դնել տըվաւ, որ հասկընան թէ զիրենք տեսան, և պատրաստ են զիրենք ընդունելու։ Նաատենը բոլոր ուժով դէպ՚ի վրանին գայլին, և կէս ժամուն մէջ հոն հասան. որոնք էին 60 անձինք, այր կին և տղայ. որ ելան ասոնց նաւը ազատեցան։

Տեսնելու բան էր, թէ ինչէ՞ր ըրին խեղճերը երբոր նաւը մտան. ոմանց ուրախութէն լեզունին կապված էր. ոմանք անանկ կըպօռային, ոմն թէ վտանգը նոր պիտի սկըսէր. ոմանք ասդին անդին կը-

ցանթկէին նաւին մէջ խելագարի պէս. ոմանց գոյնը փախած ձեռք ձեռքի վրայ դրած կեցեր էին. ոմանք խենդի պէս կը ծիծաղէին, և պար խաղալով ուրախութեան ձայն կը հանէին, և ոմանք ալ վար ընկած անլեզու և անզգայ մնացեր էին, մինչև խօսք մը չէին կրնար խօսիլ։

Երբեմն ոմանք ծնկան վրայ կելլէին, թևերնին երկինքը վերցուցած բարձր ձայնով ՈՒՅ ՀՈՐՀԱԿԱԼ կը լային, որ նաւ խախնամելով զիրենք աղատեց այսպիսի հրաշքով. և երբեմն յանկարծ վեր կը-ցանթկէին տղու պէս կը խաղային, լաթերնին կը պատռէին. յետոյ լալով կը-նէին անշարժ, ու հազիւ կրնային վրայ գալ։ Ո՛րչափ խստասիրտ մարդ ըլլար Հոն, այս խեղճութիւնները տեսնելով չէր կրնար զինքը բռնել որ չի լայ։

Բ. Այս խեղճերուն մէջ մէկ երիտասարդ եկեղեցական մը կար, որ ամէնէն արժանաւոր և բարեպաշտ էր։ Երբոր նաւը մնաց, մէկէնիմէկ անանկ երեսը գետինները քսելով բռվեցաւ, որ կարծէիր թէ մեռած է. նաւապետը մօտեցաւ իրեն որ զգաստացընէ կարծելով թէ մարած է։ Բայց քահանան հանդարտ կերպով հնորհակալ եղաւ նաւապետին, որ իրենց այս ողորմութիւնը ըներ էր։ Ոչ մը համբերէ կըսէր, իմ երկնաւոր ստեղծողիս հնոր-

հակալուծ ընեմ մեր աղատութեան համար. յետոյ դառնամ քեզ ալ պիտի ընեմ, որ իմանաս թէ ինչպէս սրտանց կրճանչնամ ըրած բարերարութիդ։ Նաւապետը այս խօսքերէն ամչնչնալով ետ քաշվեցաւ։

Բահանան քիչ մը ատեն ալ մնաց անանկ խոնարհ երեսի վրայ ընկած. յետոյ ելաւ ուրախութիւնէ գնաց նաւապետին, որ անոր ալ յայտնէ իր երախտագիտութիւնը։ Վերջը դարձաւ իրեն ընկերներուն ըսաց. իմ սիրելի բարեկամներ. քիչ մը սրտերնիդ թոզ հանդարտի. ամենաբարի արարիչը կամեցաւ իր հայրական ձեռքը մեր վրայ տարածել. պարտական էք, որ մտքերնիդ իրեն դարձընէք. ինչու կուշանաք շնորհակալութիւն ընելու, որ ձեր կորած կեանքը ձեզի բաշխեց։

Շատ մարդիկ մտիկ ընելով այս տված խրատը կատարեցին։ Ընկէ ետև սկսաւ պատմել ինչ որ իրենց պատահեր էր։ Ալ պատմէր թէ երած նաւը մէկ ֆրանսիզ վաճառականի մը նաւ էր մեծ. որ պիտի Քէպէք քաղաքն երթար (*). կրակը պատահեցաւ նաւապետին խուցին մէջ, և

(*) Քէպէք մեծ և գեղեցիկ քաղաք է Ամերիկայի. ուր շատ վաճառականներ և շատ վանքեր կան, պատուական նաւահանգիստ ունի, և վաճառականութիւնէ խիստ յարմար տեղ է։ Անտառները ֆրանսիզներուն ձեռքն էր. անոր համար հոն կերթար այս նաւը։

անանկ արագ բռընկեցաւ, որ չի կրցանք
Ճար մը մտածել այս վտանգին, միայն մէկ
քանի թնդանօթ նետելու ատեն ունե-
ցանք. հապա թէ մակոյկին մէջ կրցանք
զմեզ ձգել, առանց գիտնալու թէ ի՞նչ
պիտի ըլլանք։ Այս սոսկալի կետիս մէջ
խիստ զարհուրելի էր ալէկոծութիւնն, որ
անդադար ալիքները մակոյկին վրայ գա-
լով կըկուռուվէին։ Ո՛հ զայն որ անօթի
ծարաւ կորսըվէինք պիտի. վ՞ա զի երաշ
նաւէն չի կրցանք պաշար առնել. միայն
քանի մը օրուան համար հաց ու ջուր ա-
ռինք։ Այս խեղճութիւնմէջ լսեցինք քա-
նի մը թնդանօթի ձայն ինկիլիզ նաւի, և
մէկէն որոշելով հեռուէն տեսանք Հրաշ-
ներ. անատենը յոյս մը ունեցանք. բայց
վախին ու յոյսին մէջ մնացինք, բոլոր այն
տրտմալի գիշերը ալիքները անդադար ետ
կըհրէին մեզ, թէպէտ մենք ամէն ու-
ժով կըջանայինք առաջ դէպ'ի ձեր նաւը
գալ։ Վերջապէս առաւօտը ծագեցաւ,
որուն այնչափ կըփափաքէինք, բոլոր ը-
րաշ հոգերնիս վերջացաւ, եկանք հոս ա-
զատեցանք։ Իսկ Ոսպէնսօն բոլոր այս ա-
տենս զարհուրելի մտածմունքներով խռռ
ված էր. մինչև ինքն իրեն սկսաւ ըսել.
յայտնի է թէ ՈՒԾ ամենաբարին այսչափ
մարդկանց մէջ շատ բարի հոգիներ ունե-
ցաւ, որ այս ահագին վտանգէն ազատեց.

ես ի՞նչ յոյս պիտի ունենամ, որ ասանկ ապերախտուն ըրած եմ ծնողաց դէմ։ Այս մտածմունքը անանկ սիրտը տրոր ըեց, որ կարծէր թէ լեռ մը սրտին վրայ ինջաւ. չարագործն պէս մէկ դի քաշուած անխօս և դեղնած, ձեռքերն իրար կապեր նստեր էր, ու չէր համարձակէր որ աղօթք ընէ. վա՜ղ ի յոյս չունէր թէ ա՜ծ իրեն պիտի ողորմի։

Իսկ աղատողներն՝ որ հալած մաշած էին աշխատանքով, հանգիստ առին գօրացան. նայիս իրենց գլխաւորը ձեռքը քսակ մը լեցուն ստակ մօտեցաւ նաւապետին ըսելով։ Այս ստակս բաժնէ՛ անոնց որ եկան նաւով մեզ ազատեցին. և այս մէկ պզտի նշան մը թո՛ղ ըլլայ երախտագիտութեն, որ ամէնքս պարտական ենք ձեզի մեր փրկութեը համար։ Պատասխան տվաւ նաւապետը, թէ՝ Այդ դէմ կըլլայ, թէ որ քու ընծադ ընունիմ. վա՜ղ ի՞նչ ես ուրիշ բան չըրի ձեզի, բայց ինչ որ մարդկային բնական գութն ինձի ընել տվաւ։ Ասոյգ գիտեմ որ եթէ դուք մեր տեղն ըլլայիք, ու մենք ալ ձեր վիճակին մէջ գտնըվէինք՝ հարկաւ այս բանը կընէիք մեզի։

Երախտագէտ մարդը պարապ տեղը կըստիպէր որ առնէ ընծան. ամենևին չընդունեց նաւապետը, նաև աղաչեց որ այլ չխօսի։ Անկէ ետև սկսան մտածել,

թէ այն աղատածները ուր պէտք էր տանել. վա՜ զի կիւինէ երթալ անոնց խիստ յարմար չ՚ը երկու պատճառի համար. նախ՝ այս խեղճերը պիտի պարտաւորէին այնչափ երկայն ճամբայ ընելու. ուր տեղ մէկ շահ մը չէին կրնար ընել։ Երկրորդ՝ ճամբու պաշարնին քիչ կուգար այնչափ մարդիկներուն այն երկայն ճամբորդուն մէջ։ Երջապէս քաջ նաւապետը որոշեց, որ այնչափ հարիւրաւոր մղոն պտոյտ ընելով շատ չաշխատի այն խեղճերուն համար. հապա տանի զիրենք նոր երկիրը Ամերիգայի մօտ. ուր տեղ շատ նաւեր կը գտնուին ֆրանսիոյ վաճառականներու, որ ձուկ կառնեն անկէ, որոնց հետ դիւրաւ ֆրանսա կրնային դառնալ (*)։

Ուստի տարաւ հանեց զանոնք նոր երկիրը ուր ձկանց առատութենէն ելլալով շատ նաւեր կային հոն. որոնք ընդունեցին խեղճերն, որ ֆրանսա տանին։ Անոնց շնորհակալութիւնը և երախտագիտութիւն որ ըրին նաւապետին, չի պատմուիր։

(*) Նոր երկիրն է մեծ կղզի Ամերիգայի կողմը 900 մղոն է բոլորտիքը. լեռնային ըլլալով մեծ բերքն է պաքալա և մերլուցցо ձուկը. որուն համար ֆրանսիացիներն ու ինկիլիզները բնակութիւն ունին հոն. որ նաւեր կերթան բեռցնելն կը բերեն եւրոպա. և ամէն տարի 60 նաւ գաղղիացի և 30 նաւ ինկիլիզ կելլան հոն։ Այս երկիրը գտաւ մէկ վենէտիկեցի մը 1497 ին։

Լսակ նաւապետը զանոնք Ֆրանսիզի նաւերուն մէջ դրաւ, ու ինքը շուտով դարձաւ առջի ճամբան դէպ՝ի կիւինէ քաղաքը յաջող հոլով։ Նաւը անանկ կը-ձգէր ծովը կերթար, ինչպէս թռչունը օդը կը ձգէ։ որ քիչ ժամանակին մէջ հարիւրաւոր մղոն առաջ գնաց։ Ը. հա այս էր Լօպէնաօնին ուզածն, որ կը փափաքէր շուտով առաջ երթալ։ վասն զի միշտ անհանդարտ էր սիրտը։ Մինչ դէպ՝ի հարաւ կերթային, քանիմը օրէն ետև յանկարծ տեսան մէկ մեծ նաւ մը, որ իրենց վրայ կուգար։ քիչմալ անցաւ զի տեսին տեսան որ ալէկոծութենէ քաշելով մէկ կայմը կոտրած էր։ սկսան իրենց նաւն ալ այն նաւին վրայ շտկել։ երբոր խիստ մօտեցան, որ կրնային խօսիլ։ մէկ ալ նաւին մէջինները ձեռքերնին վերցուցած՝ խեղճ ընելով պոռային այսպէս։ ով ողորմած մարդիկ օգնեցէ՛ք այս խեղճ նաւին, որ ողորմելի մարդիկներով լեցուած է։ եթէ չողորմիք մեզ, ամէնքնիս պիտի կորսըվինք։ Ը. սոնք ալ հարցուցին, թէ ի՞նչ է ձեր խեղճութիւնը։ անատենը մէկը իրենցմէ այսպէս պատասխան տըվաւ։ Մենք ինկիլիզ ենք։ Ճամբայ ելանք որ մարթինիկ կղզին երթանք Ֆրանսիզիներուն։ գացինք հոն որ նաւը խարխլէ բեռցընենք։ երբոր երթալու վրայ էինք,

ՊԵՏ. ՀԱՆՐՈՒՅԹԻՆ ԳՐ.
Գ. ... 6ԱԵՆՈ
ՀԱՅԿԱԿԱՆ
Ա. Մ. Ա. ՄԱՏԻԱՆ
Ի. ...

նաւահանգստին մէջ, մեր նաւապետը և երկրորդական նաւապետը միատեղ դուրս ելան, քաղաք դացին բան գնելու։ Այս միջոցիս մէջ նայիս յանկարծ փոթորիկ մը եկաւ. անանկ սաստիկ ալէկոծուն հանեց, որ խարսխին չուանը կտրեցաւ. հովը մեզ նաւահանգստէն դուրս նետեց մեծ ծովը ձգեց։ Այս սոսկալի հովն, որ ուրագան (*) կըսվի, իրեք օր իրեք գիշեր շարունակ փչեց կատաղութիւն. նաւին կայմը կոտրեց, և հարիւրաւոր մղոն հեռացուց։ Սոսկալի խեղճութիւններ ունեցանք, որ մէջերնիս մէկը նաւավարութիւն չիյտէ, որ նաւը կառավարէ. և ահա ինը շաբաթ է, որ ընկերենք ծովուն մէջ մէկ դիէն մէկալ դին կերթանք. բոլոր կերակուրնիս հատաւ. շատը մեր մէջ կիսամեռ ընկած են անօթի։

Կտրիճ նաւապետը շուտմը պատուիրեց, որ մակոյկը ծովն ինջեցընեն. ուտելու բան ալ առաւ հետը մտաւ մակոյկին մէջ Ռօպէնսօնին հետ միատեղ գնաց խեղճերուն նաւը։ Ցեսան որ խիստ ողորմելի վիճակի մէջ են. ամէնքը անօթի ծարաւ

(*) Ուրագանն է հինտիատանցոց բառ, որ կընշանակէ մեծ փոթորիկ. վասն զի այն ծովերուն մէջ շատ հովեր իրար խառնըվելով այս փոթորիկը կը պատճառեն. անանկ որ երկինք դէտին իրար կանցնին 3 օր և 3 գիշեր։

մնայեր էն. շատը հաղիւ թէ ոտքի վրայ կրնային կենալ. սակայն երբոր վար ինջան նաւուն մէջ՝ ի՞նչ սոսկալի խեղճութիւներ տեսան հոն. մէկ կնիկ մը իր տըղան և աղախինը երկնցած էին, կերևնար թէ մեռած են անօթի. կինը բոլորովին անզգայ ընկած էր, երեսը նաւուն կողին տված. իսկ աղախինը անոր քով բռված էր ձեռքը տախտակին վրայ. տղան ալ ընկած էր վար՝ բերանը կաշիի կտորմը կար, որ ձեռնոցի (էլտիվէնի) կտոր էր կէսը ծրծած։

Ասոնք պատաւաւոր անձինք էին, որ Ամերիկայէն ինկիլթէռա պիտի երթային. կնիկը այնչափ շատ կը սիրեր զաւակն, որ ամենևին բան չէր կերած, միայն տղուն կուտար որ ուտէ ու չի մեռնի. բարի տղան ալ չէր ուտեր մօրը կուտար, որ ապրի. հաւատարիմ աղախինն ալ ինք զինք մոռցերէր բան չէր կերած, որ ասոնք ողջ մնան։

Ամէն բերանը կարծեցին թէ իրեքն ալ մեռած են. բայց փորձելով հասկըցան որ դեռ հոգի կայ վրանին. վասն զի բերաննին քանիմը կաթիլ տաք ջուր լեցուցածնուն պէս, սկսան քիչ քիչ աչվընին բանալ. բայց մայրը խիստ տկար ըլլալով բան չուտելովը՝ հաղիւ նշան մը տվաւ զաւակը հոգալու. բայց շատ չանցաւ ըս-

կրսաւ շունչ առնել։ Ցղան ու աղախինը որովհետև տարիքնին քիչ էր դեղերով վրայ եկան. որ նաւապետին մեծ հոգ ունենալովը հաղիւ ապրեցան. սակայն երբոր տղան աչքը դարձուց մօրը, տեսաւ որ մեռածի պէս ընկած է, կսկծուն նորէն ընկաւ մարեցաւ. այնչափ աշխատեցան, շատ դժուարաւ խելքը վրան բերին. ինչևիցէ յաջողեցաւ որ մէկալոնց ալ խելքը գլուխնին եկաւ, ամէնքն ալ աղատեցան։

Ընկէ ետև նաւապետը հոգ տանելով նաւին վրայ որչափ կարելի էր բոլոր բաները նորոգեց իր նաւավարներուն ձեռքովը, և իրենց առաջն ընկաւ Ճամբան սորվեցուց, որ դէպ 'ի մօտ երկիրը երթան ցամաքն ելլեն, որ գանարեան կղզիներ էին. հոն որ հասան նորէն Ճամբու պատրաստուիներ տեսան (*)։ Այս կղզիներուն մէկը կրսվի Մատէռ. ուր քանարեայ թռչունները լեցուն են. անոնց հետ հոս հասաւ իրենց նաւը՝ Ոսկենասն դուրս ելաւ, երբոր երկրին գեղեցկութիւնը

(*) Քանարեան կամ Երանելեաց կղզիք են Ադլանդեան ովկիանոսին մէջ 120 մղոն հեռու Աֆրիկայէն, մաղրբիին դիմացը կիյնին. որոնց տիրեցին Փորդուքէշները 'ի 1393. եռքը անցաւ Սպանիացոց ձեռքը. բոլորը 13 կղզի են. գլխաւորն է երկաթի կղզին. ուր շատ երկրաշարժուն եղած է, որուն չրջապատն է 72 մղոն։

և պարարտու�՝ տեսաւ՝ չէր կրնար կշտանալ. նաև աչքը վերցընէր հեռուն որ կը նայէր լեռներուն աղտորուելը, որ խաղողով ծածկած էին, բերնին ջրերը կը վազէր տեսնելով պատուական խաղողի կուղերը դեղեցիկ կախված։ Ինչպէս կուրախանար երբ հրաման առաւ նաւապետէն որ ուզածին չափ ուտէ։ Հոն այգիներուն մէջ տեսան, որ գինի շինողները չէին ճզմեր խաղողը ծանր բանի տակ, ինչպէս ուրիշ քաղաքները կընեն. հապա խաղողը կը լեցընեն մեծ տեղ մը և հոն ոտքով կը կոխեն, և ձեռքով կը ճզմեն. ահա ասկէ կը լսուայ այն գերազանց գինին, որ կը սիրի Մատէոեան գինի փորթուգէշներուն (*)։

Նաւապետը քիչմը ժամանակ հոն մնաց, որ նաւը նորոգէ. որովհետև մեսասած էր. իսկ Լուսկենսոն քանիմը օրէն ետև սկսաւ ձանձրանալ. վասն զի սիրտը հանգիստ չէր, փոփոխութիւն կուզէր. անանկ որ կը փափաքէր թև ունենալ թռչիլ. որպէս զի քիչ ժամանակին մէջ կարենայ բոլոր աշ-

(*) Մատէռա կղզին մեծ՝ հեռու է Լիսպոնայ մայրաքաղաքէն Փորդուքալաց 456 մղոն. ուր շատ անտառ ըլլալով այսպէս կոչվեցաւ. անանկ աղէկ է օդն որ հոն թունաւոր կենդանի չըլլար, թէ որ ուրիշ տեղաց տանին կըսատկի. այս տեղաց գինին խիստ անուանի է։

խարհք տեսնէ, ու շուտով ամէն բանի տեղեակ ըլլայ։

Այս միջոցս Հոն մէկ փորթուքէշի նաւ մը հասաւ, որ Լիզպոնայէն կուգար, Ամերիգա պիտի երթար Պրասիլիայի երկիրը. ուր տեղէն կելլէ շատ ոսկի և անգին գոհարներ։ Խօպէնսօն խելքն ու միտքը այս նոր նաւապետին տվաւ. երբոր լսեց ոսկին և գոհարները, կամք ըրաւ որ Պրասիլիա երթայ, ոնգ զի աղէկ մը հարստութիւն լեցվի (*)։

Անոր համար ասանկ կը մտածէր. վա՞ զի մանկու

Յոսպէնսօն ծնողացը կամքին դէմ Ճամբայ ելեր է, և առանց հրամանի աշխարհք կըպտրտի, ուրախացաւ որ իրմէն պիտի հեռանայ, և ինկիլթէռա իրեն տված ստակն ալ բաշխեց, ամէն կերպ բարի խրատներ տալով Ճամբեց։ Նաև գնաց մտաւ Պորթուքալցի նաւին մէջ, և ըսկրսան երթալ Պրասիլիայի Ճամբան, անցնելով Թէնէրիֆ կղզին քովէն. ուր տեղ է այն բարձր լեռն որ կըսվի Փիքօ (*)։ Խիստ զարմանալի բան մը տեսան հոն իրիկունը. երբոր խաւար մութը կոխեց ծովուն վրայ արևը մտնելէն ետև, այն լեռան գլուխը դեռ կերևնար. վասն զի ամէն լեռներէն բարձր ըլլալուն համար, արեգակին Ճառագայթը անանկ կը-

(*) Թէնէրիֆ է քանարիա կղզիներուն մէկը. բայց աւելի մեծ և վարթամ. գիներն խիստ ազնիւ է. և պատուական բերք շատ ունի։ Մանր լեռներ շատ կան մէջն, որ երկրաշարժուէ գուրս են եկած. բայց գլխաւոր լեռը կըսվի Փիքօ. որուն բարձրութիւնն է 17 հազար ոտնաչափ. հեռուէն գլուխը սրածայր կերևնայ, թէպէտ վրան տափակ է. մէջ տեղը ունի հրաբուղխ բերան խոր. և միշտ ծծումբի բոց կելլէ անկէ։ Այս անդունդին մէջ եթէ քար նետես ահագին ձայն կը լսվի. որ սպանեօլները սատանայի կամ թագայ կանչուանեն. իսկ հոն բնակիչները կըսեին թէ հոն է դժոխքը, որ գէշ մարդիկ կըտանջվին։ Այս լեռան գլուխը միշտ պարզ է ձիւն անձրև չի գար, հով չի բանիր, մարդ շունչ չի կրնար առնել հոն. կենդանի ողջ չի մնար. սակայն 'ի 1715 ին ինկիլեղները ելան վրան. տեսան որ հով կայ, և հանդիստ շունչ կառնեն։

ցոլար վրան՝ որ կարծէիր թէ կրակ է։

Բանիմը օրէն ետև տեսան ծովուն վրայ ուրիշ տեսիլ մը խիստ զարմանալի. քաղմուն ձկանց թռչելով ծովուն վրայէն կըբարձրանային. որ փայլուն ըլլալով արծաթի պէս կըցոլային. անանկ որ լուսին ճառագայթին նման պայծառուն մը կըհանէին։ (Տե՛ս ՃԷՀ. 869)։

Ասոնց ճամբորդութիւնը շատ օր յաջող գնաց. բայց յանկարծակի մէկ սոսկալի փոթորիկ մը եկաւ հարաւային կողմէն. ալիքները մէկէն սկսան փրփրիլ, ու լեռան պէս երկինքն ելլել, որ վեր վար կը նետէին նաւը։ Այս սարսափելի ալէկոծումը վեց օր քշեց շարունակ. և անանկ հեռուն ձգեց նաւն, որ նաւապետը չէր հասկընար, թէ ո՞ւր են. վերջապէս իմացաւ, թէ Գարայիպ կղզիներէն շատ հեռու չեն։

Լսակ Եօթներորդ օրը երբ սկսաւ արևը ծագիլ մէկ նաւավար մը սաստիկ ուրախութեամբ պօռաց յանկարծ. երկիր (*)։

(*) Ասկէ տեսան Գարայիպ կղզիները. որ հարաւային Ամերիգայի մէջ այրեցած դօտիին տակն են, որ կըսվին Անդիլեան կղզիք. շատ մեծ ու պզտիկ կղզիներ կան հոն. ասոնցմէ մէկն է Ռոպէնսոնին կղզին։ Ասոնց հին բնակիչներն էին Գարայիպները, որ վայրենի ըլլալով թշնամիները կուտէին, այնչափ ուժով էին, որ չորս ոտքով աչ կըվազէին. և մինչև 100 տարի կապրէին։

Այլիս ամէնքը վէր թափեցան, որ երկիրը տեսնեն. նաւը շիտակ հոն կերթար։ Սակայն այն կէտին իրենց ուրախութիւնը փոխվեցաւ, և զարհուրելի վախի մը մէջ ընկան. վասն զի նաւը աւազի վրայ նստելով սարսեցաւ, և նաւին վրայի եղօղներն ալ շարժ ելան ու կռնակի վրայ ընկան. իսկ նաւը անանկ խորեցաւ մնաց, որ կարծես թէ գամվեցաւ. ու փրփրրած ալիքները նաւուն մէջ լեցվելով ամէնքը վար փախան տակը մնան, որ ալիքները զիրենք չի տանի։ Ան ատենի եղած խեղճութիւնը՝ աղաղակը՝ և կանչը ապառաժին սիրտը կտոր կտոր կընէր։ Մէկը առ ՝ած կաղաղակէր. մէկը մաղերը կըփնթթէր. ոմանք ալ վախերնուն անշունչ ընկած էին մեռելի պէս։ Սոնց նման անշունչ ընկած էր Յոպէնսօն, որ առաւել մեռած էր քան թէ կենդանի. նայիս յանկարծ աղաղակ մը ելաւ թէ ահա ընկղմեցանք։

Այս սոսկալի լուրը իրենց նորէն հոգի մը տվաւ, որ անանկ խեղճ չի կորսըվին, հապա մէկէն վէր վազեցին նաւուն վրան. ու անհնարին արագութիւնը մակոյկը ծովը ինջեցուցին, և ամէնքը մէջը ցաթկեցին։ Բայց որովհետև շատ ուր էին նաւուն մէջ, երբոր ամէնքը հոն լեցվեցան, գրեթէ մակոյկը ջրին հաւասարեցաւ։ Յամաքը շատ հեռուն էր, և ալէկոծութիւնը անանկ

սասսիկ , որ ամէնքը կըսէին թէ անկաբելի է որ ցամաքը հասնինք . սակայն որչափ կարելի էր՝ հոգւոյ մարմնոյ թիւերը կըքաշէին . հոմն ալ եռանէն ըլլալով՝ դիւրաւ դէպ 'ի ցամաքը կերթային :

Յանկարծ տեսան որ մէկ ալիք մը կուգայ մակոյկին վրայ լեռան պէս : Այս սարսափելի ալիքն որ տեսան՝ թողուցին թիւերն , ու ամէնքը անշարժ մնացին : Ո՛հ , ահա այս էր զարհուրելի բոպէն վերջին վտանգին . ահա այս ահագին ալիքը մակոյկին զարկածին պէս՝ տակն առաւ դարձուց . և ամէնքը խուռն գացին ծովուն տակը (*) :

Գ . Գիպուած .

Ոօպէնսօն բոլոր ընկերներովը գնաց ծովուն տակը երբոր մակոյկը շրջեցաւ .

(*) Ահա անհնազանդութեան պտուղը . ահա նաւապետին խօսքը եղաւ . որ ըսաց թէ մինչև որ ծնողացդ օրհնէնքը չառնես աղէկուն չես գաներ : Իրաւ է որ անոնք անէծք չէին տվեր իրեն . բայց թափած արցունքնին պէտք էր որ խեղճ ընէ զինքը : Իսրա՞ել ըլլայ անհնազանդ մանկանց որ միայն իրենց կամքը կուզեն կատարել . թող տեսնեն թէ ի՞նչ բաներ կուգայ գըլուխնին . և քիչ մը կամքերնին չի կատարելու համար՝ կամաց կամաց ի՞նչպիսի վտանգներու մէջ կիյնին . վա՜յ զի՜ն որ աղէկ առիթը կըփորանցընէ , արժանի կընէ զինքը ձախորդ դիպուածներու . և ով որ աղէկ օրը չիճանչնար , գէշ օրերու կըհանդիպի :

բայց այն ահագին ալիքն որ զասոնք տակն առաւ, քշեց հետը տարաւ Յոպէնսօնը և սոսկալի ալիկոծելով վերուց նետեց ապառաժ քարերուն վրայ. անանկ սասսիկ ընկաւ որ ցաւէն թմրեցաւ մնաց հոն (*): Երբ աչքը բացաւ ու տեսաւ թէ ցամաքին վրան է, որ ամենևին յոյս չունէր, վերջին ջանքն ընելով աշխատեցաւ որ վեր ելլէ ապառաժի մը վրայ: Հ՝ սա հոգնելով հաղիւ թէ կրցաւ ելլել. բայց ուժը հատաւ հոն ընկաւ մնաց՝ երկար ատեն խելքը գլուխը չէր. ետքը գնաց ցամաքը:

Որանի՞ ողորմելի էր երբոր աչքը բացաւ չորս դին նայեցաւ, տեսաւ որ ո՛չ նաւ կայ, ո՛չ մակոյկ կայ, և ոչ մէկ ընկերը մնացեր է. ամենևին բան մը չի կայ. բայց եթէ տախտակի կոտրտուք, որ ալիքնեբը դէպ 'ի հոն կրբերին: Այս մինակ մէկ հոգիմը է, որ ազատեցաւ այն վտանգէն: Ուրախութիւն ու տրտմութիւը իրար խառնըվեցան. մինչև գոզալով ծնկան վրայ եկաւ, թևերը երկինքը վերցուց՝ բարձր ձայնով աչքերն արտասուք լեցուն

(*) Ընդարձակ պատմութիւն ի օրագրութիւնը մէջ կըսէ Յոպէնսօն թէ երբոր ոտքս ցամաքը կոխեցի սեպտեմբերի 30 էր: Արեգակը աշնանային գիշերահաւասարն ըլլալով՝ ճառագայթը շատակ գլխուս վրայ կրծագէր ու սասսիկ տաք կընէր. վե՞ղ կերևնար թէ այս կղզին 9 աստիճան ու կէս հիւսիսային լայնութիւն տակն էր այրեցած գօտիին մէջ:

ընորհակալ եղաւ երկնի և երկրի ստեղծողին. որ այսպիսի մեծ հրաշքով զինքն ազատեց (*):

Ա. Հա այսպէս իմաստուին ՝ այ շատ լաւ գիտէ և կը ճանչնայ մեր ամէն օգուտը. իսկ խեղճ մահկանացու մարդիկ չի ճանչնալով իրենց ճշմարիտ շահը կը զարմանան, թէ ինչու համար մինակ Յովէնսօն ազատեցաւ, ու բոլոր մէկալինք կորան: Ա՞ զի ստեղծողին իմաստուին ու կառավարուին խելքէ մաքէ դուրս գերազանց ըլլալով թոյլ տվաւ որ մարդ մը չազատի, մինակ Յովէնսօն ազատի: Ա. Հա այս բանին մարդու խելք չի հասնիր. մեր միտքը այնչափ կը զօրէ, որչափ որ ՝ ուծ դրեր է. անկէ աւելին չենք կրնար քններ դատեր: Կարելի է որ ՝ ուծ առաջ գիտնալով, թէ երկար կեանքը աւելի ՝ ինասակար է ո մանց՝ թող կուտայ որ կորսըվին. որոնք կամ թշուառութեց մէջ պիտի իյնային, և կամ ախտաւոր մոլի պիտի ըլլային. անոր համար աշխարհքէն կը վերցընէ բարի վարքով, որ հանդչին երջանկութ՝ :

(*) Յովէնսօնին օրագրութեը մէջ գրած է թէ ցամաքն որ եղայ մէկէն սիրաս եռ եկաւ. վ՝ զի ծովուն ջուրը բերանս էր գացեր. պառկեցայ որ քիչ մը հանգչիմ. վախուս եղայ առդին անդին ընկայ: Եւ այսպէս անձար մինակ հոն մնալուս համար այն կղզին անունը դրի Կղզի յոռահոգոյն. որուն երկայնութիւնը 24 մղոն էր:

Իսկ Մովսէսեանցը անոր համար պահէց, որ քաշած նեղութիւնները իրեն խրատ ըլլան ու վինքն իմաստուն ընեն. որովհետև ամէն նախախնամող հայր ըլլալով ճախորդութիւն կուտայ, որ մարդիկ խրատվելով ուղղին՝ երբ բարութիւն տեսնելով չեն շտկիր։ Ուստի երբեմն բան մը կըլլայ որ խելքերնիս չի հասնիր, պէտք չէ յանդգնութեամբ դատաստան կարել և շուտմը խելք բանեցընել. հապա պիտի ըսել թէ ամէն ինչպէս որ կարգադրէ՝ միշտ մեզի բարի է. ուրեմն ջանալու ենք մեր կամքը համակերպել իրեն, որ հայրական օրհնութիւնը վարձահատոյց ըլլայ։

Այս պատճառաւ Մովսէսեան ալ ճշմարիտ սրտով դարձաւ առ ամէն, երբեմն տեսաւ թէ կեանքը անանկ վտանգի մէջ է, և բոլոր աշխարհքը իրմէ հեռացած է. սրտին մէջէն կիմանար թէ իր բռնած ճամբան որչափ անիրաւ էր, և խիղճմտանքը կըվկայէր որ ոչ դէմ էր ըրածը։ Այս հասարոր համար ճշմարիտ զղջումով ծնկան վրայ ընկած կաղաղակէր ոչ, որ մեղքերուն թողութիւն տայ, և յատուկ առաջադրութիւն դիտաւորուն դրաւ, որ անկէ ետև ուղղվի ու ամենևին խիղճմտանքի դէմ բան մը չընէ։

Մովսէսեան այս դիտաւորութիւնը դնելէն ետև վեր ելաւ, իր փրկութիւնը վրայ ուրա-

խանալով, յետոյ սկսաւ մտածել թէ ինչ պիտի ընէ։ Կընայէր չորս դին որ ծառերէն անտառներէն 'ի զատ բան չի կայ. ամէն կողմը կընայէր բան չէր տեսնէր որ անով կարենայ յոյս մը ունենալ, թէ մարդ բնակեր է հոն. մարդու նշան մը չի կար։ Ասկէ աւելի խեղճութիւն չէր ըլլար, որ անանկ աշխարհքին ճոթը մինակ պիտի բնակէր. բոլոր մարմինը կը դողար երբոր կըպօռար, թէ վա՜յ գլխուս ի՞նչ պիտի ընեմ, թէ որ հոս լեռան մարդիկ և կատղած գազաններ ըլլան ի՞նչպէս պիտի ազատիմ։ Այս վախը անանկ պաշարեց զինքն որ անշարժ մնաց և չէր համարձակեր առաջ երթալու, մէկ պզտիկ ձայն մը լսէր՝ դող կեր ելլէր սիրտը. վ՞ը զի վախուն՝ արիւնը պաղեր էր (*)։

Սակայն սաստիկ ծարաւութիւնը մէկէն իրեն սիրտ տվաւ զօրացուց տկարութէն, մինչև չդիմացաւ անանկ մնալ. ինքն իրեն ուժ տալով ելաւ ադին անդին ընկաւ որ ջուր կամ առու մը գտնէ։ Բաղդը բանեցաւ, երբոր քիչմը հեռուն լաւ խստակ

(*) Երբոր սաստիկ կըվախնայ մարդ՝ բոլոր արիւնը դէպ 'ի սիրտը կըվազէ, անոր համար երեսը կը դեղնի, սիրտը կընեղէ. երակները բոլոր խառուած ըլլալով քիչմը բանով կըսարսափի։ Ոսկէնոսն այնչափ խառուած էր վախուն, որ նեղքի տաքութիւնը պաղերէր՝ անանկ որ կարծէր թէ երկինքը վրան պիտի փլէր։

ջուր մը գտաւ՝ վազէց սկսաւ խմելով ծարաւն անցընել. քանի՞ զըւարճալի բան է երբոր մարդ ծարաւ մարելով ջուր կը գտնէ։ Ուստի Ուսպէնսօն շնորհակալ եղաւ ոչ՝ յուսալով թէ ուտելու բան ալ կուտայ. կըսէր թէ այն ստեղծօղն որ թռչուններըը օդին մէջ կըկերակրէ, թող կուտայ որ ես անօթի մեռնիմ։

Ինչպէս անօթութի՞ էր խմանար. որ ոսկեհատ վախը և քաշածնեղուՀը անանկ սիրտը այլայլեր էին որ ամենևին ախորժակ (իշտահ) չունէր. ամէն բանէն աւելի կըցանկար քիչմը հանգչիլ. վ՞ը զի անանկ վշտով չարչարված էր որ հաղիւ թէ ոտքի վրայ կրնար կենալ։ Ինչ պատճառաւ մեծ հոգ ընելով կըմտածէր թէ գիշերը ո՞ւր պառկի. կըվախնար որ չըլլայ թէ գազանները և լեռան մարդիկ գինքն ուտեն։ Ինչն գի կերթար կրնայէր ո՛չ տուն կար, ո՛չ խրճիթ կար, և ո՛չ քարանձաւ (մաղարա). ուստի կուլար կըհառաչէր անմխիթար, չէր գիտեր թէ ի՞նչ ընէ։

Վերջապէս իրիկուն եղաւ, այլ ճարը հատաւ մտածեց որ թռչուններուն նմանի, և անոնց պէս ծառերուն վրայ բնակարան շինի. յանկարծ մէկ ծառ մը տեսաւ. որուն ճիւղերը խիստ շատ էին, և անանկ խիտ (սըխ) որ գիւրին կրնար վրան նստիլ բնակիլ. ուստի փութթըվեցաւ

ծառն Ելաւ, ու սրտանց ՝այ աղօթք ընե-
լով նստաւ ծառին վրայ մէկէն սկսաւ
քնանալ (*)։

Բայց երևակայու�՝ խռոված ըլլալուն
համար՝ բոլոր գլխուն եկածները երազն
եկան. և շատ մեծ նեղութիւն ունէր երա-
զին մէջ. կըտեսնէր ալիքներուն որոտու-
մը՝ նաւին փառատիլը, ընկերներուն և
նաւավարներուն աղաղակով խղդըվիլը։
Ընկէ ետև կըտեսնէր իր ծնողքը, որոնք
տրտմութ և դառնութ լեցված կըվշտա-
նային իրեն կարօտուն. հառաչանքով կու-
լային ու թևերնին վեր վերցուցած կաղա-
ղակէին, որ ՝ած իրենց միխիթարութիւն տայ։
Երբոր զատոնք ասանկ տեսաւ երազին
մէջ, բոլոր մարմինը ջուր կտրեցաւ պաղ
քրտինքով մը. մինչև բարձր ձայնով կան-
չեց, թէ ահա՛ ես. ահա՛ ես հոս եմ սիրե-
լի ծնողք իմ. այսպէս պօռալով քունին
մէջ՝ թևերը բացաւ որ ծնողացը փաթ-
թըվի։ Այս շարժմունքով նայիս ծառին
վրայէն վար ընկաւ (**)։

(*) Սովորաբար քունը կըպատճառի երբոր գոլոր-
շիները դէպ 'ի ըղեղը կերթան, կենսական ոգիքը
թմրելով զգայութիւնը կըկապվի քուն կուգայ. բայց
Ռօպէնսօնին քունը աւելի հոգնութիւնէն պատճառե-
ցաւ, որ բոլոր ջիղերը տկարանալով ոգիքը թմրած
էին. անոր համար մէկէն քնացաւ, մանաւանդ թէ
թմրեցաւ մնաց սասսիկ տկարութիւնէն։

(**) Երազը կըպատճառի երբոր մտքին մէջի եղած

Ա՛ծ ողորմեցաւ որ շատ բարձր չէր ծառն վրայ. և ընկած տեղը շատ խոտ ըլլալով մէկ տեղը չի կոտրեցաւ. միայն ընկած դին ցաւեցաւ. բայց երազին մէջ այնչափ նեղուն քաշեր էր՝ որ այս ցաւը բան չերևցաւ։ Ուստի նորէն ծառը ձանկելով վրան ելաւ, մինչև առաւօտ հոն մնաց։ Առաւօտուն սկսաւ մտմրտալ թէ ի՞նչ պիտի ուտէ, և ի՞նչպէս պիտի ապրի. վնզն վերի մեր աշխարհքն եղած բաներուն մէկը չի կար հոն, ո՛չ հաց կար ո՛չ միս կար, ո՛չ հունտեղէն, և ոչ կաթ։ Ինչպէտ ըլլար ալ նէ, ո՛չ կրակ կար՝ ո՛չ պտուկ՝ և ոչ բան կար որ եփէր. ծառերէն 'ի զատ ուրիշ բան չի տեսաւ հոն. անոնք ալ բոլոր անպտուղ էին, տերևէն 'ի զատ բան մը չունէին, որ կրսվին գամբէշ (*)։

Ասանկ տարտկուսով ծառէն վար ին-

բաներով հոգին կըգործէ, որովհետև հոգին չի քնաներ՝ զգայութիւնները կապված ըլլալով առաջվան ունեցած գաղափարներով զանազան բաներ կըտեսնէ. մանաւանդ ինչ բանի փափաք որ ունի հասարակօրէն զայն կերազէ։ Ինչպէնսօն ամէն բանէն աւելի ծնողաց վրայ փափաք ունէր. անոր համար զանոնք տեսաւ երազին մէջ։ Տես Ճեմ. 979։

(*) Այս կղզին կաւոտ ըլլալով խիստ անբեր էր և լեռնային, լեցուն ծառեր կային, այլ շատը անպտուղ էին. սաստիկ տաքը և խոնաւութիւնը անանկ աւրերէր օդն որ ամէն բան շուտով կապականէր. կենդանին մեռածին պէս կըհոտէր։ Գամբէշ ծառ շատ կար հոն. որուն փայտը ջուրն որ ձգես կսրմիր ներկ կըլլայ. այս փայտէն շատ կըբերեն Եւրոպա։

ջաւ. որովհետև առջի օրը բան մը չէր կէ-
րած, անօթութիւնը սկսաւ սաստիկ նեղու-
թիւն տալ իրեն. մէկ դին մէկալ դին վա-
զելով շատ տեղ գնաց՝ բան չի գտաւ ու-
տելու. ամէն տեղ լեցուն անպտուղ ծա-
ռեր կային։ Խեղճ ողորմելին այլ անօթի
փրփրրած՝ աչքը վեր վերցուց սկսաւ ա-
ղաղակել, թէ ահա այն կէտին եմ հա-
սեր; որ անօթի պիտի մեռնիմ։ Ի վերայ
այսր ամի՝ անօթութիւն հարկը ստիպելով
սիրտ տվաւ, որ անանկ չի մնայ. ուժ ա-
ռաւ երաւ վազեց զանազան Ճամբաներ.
մեծ փափաքանօք կըփնտրուեր որ ուտե-
լու բան մը Ճարէ։ Այս պարապ տեղը
հոգնեցաւ. ամէն դի գամբեշ ծառին ան-
տառներն էին, նաև հնդկաստանի ուռի
(սէօյիւտ), խոտ ու աւազ կային՝ ուրիշ
բան մը չի կար։ Ինչպէս որ՝ Ալոպէնսօն
տիարանալով կիսամեռ ընկաւ անօթի,
բոլոր զօրութիւնը հատաւ. ուստի երեսը հո-
ղին քսելով աղբիւրի պէս աչքէն արտա-
սունք կըվազեր. շատ աղէկ էր որ՝ կըսէր
ծովը խաղըված ըլլայի, քան թէ սասանկ
խեղճ անօթի մեռնէի (*)։ Յանոյ յուսա-

(*) Ալոպէսի դիպուածները երբեմն երբեմն կըպա-
տահի հնդկաստանու կողմերը և անապատ աշխարհ-
ները, ինչպէս պատահեցաւ Յոհաննէս Եզնիկին արա-
պիզոնցւոյ. որ իբր 60 տարի առաջ պարսկաստանէն
հինգ երթալու առեր սոսկալի ալէկոծուե կըհան-
դիպի ովկիանոսին մէջ, վերջապէս նաւը կընկղմի մնը-

հատած երբեմն կրսպասէր այն սոսկալի ըռ
պէին, որ անօթի մեռնի. յանկարծ տե-
սաւ մէկ ծովի թռչունմը, որ ձուկ մը
բռնեց կուտէր. մէկէն միտքն ընկաւ այս
երգն որ պզտիկութեան ատենը սորված
էր։

Կերակրէ ստեղծողն՝ ագռաւուց երամ,
զնաղդ անխնամ՝ թողցէ զաղդ մարդ-
կան.
Թէ 'ի խուն ՀՆՃղիկ՝ իւր արուեստք
պանծան,
քանի՞ աւելի՝ 'ի մարդ բանական։

գիկ կինին անմարդաբնակ տեղմը։ Անկէ ելան դէպ
'ի ցամաք կերթային մարդ գտնելու համար, անօթի
ծարաւ. գիշերանց գազանները և առիւծները մէկիկ
մէկիկ երեցմէ կըտանէին կուտէին. հաղիւ թէ մէկ
քանի հոգի ողջ մնացին. նորէն դարձան ծովուն
քով սոսկալի տառապանքով. և հոն մակոյկմը հան-
գիստեցաւ զերեզք ազատեց։ Այսպէս պատահեցաւ
և ջուղայեցի Պետրոս Ղուկասին իբր 40 տարի ա-
ռաջ. որ հնակատանու ծովին մէջ ալէկոծուբ ըն-
կաւ մալապարին կողմերը. անօթի ծարաւ անապա-
տին մէջէն կերթային որ մարդ գտնեն. ընկերները
անօթութենէ չդիմացան յուսահատուբ մեռան. ինքը
մինակ մոլորեալ անկոխ անապատին մէջ շարունակ
կերթար սիրտ տալով իրեն, որ առաջ երթալով ջուր
գտնէ. և անով քիչմը ուժ կառնէ. եարը կերթայ
սև հնդիկներուն ձեռքը կինի, ու մեծ բաներ ա-
նոնց խոստանալով՝ զինքը կըբերեն մասկատ քաղա-
քը կազատեն։ Ամանատեսը կըպատմէ թէ այս մար-
դը քունին մէջ սարսափելի աղաղակներ կըհաներ ակ-
ռաները կրճըտելով, և զարհուրելի տագնապներով.
որ դլխուն եկած բաներէն մնացեր էր վրան։

Ընատեանը Յոսիֆնսօնին խելքը վրան գալով սկսաւ մեզադրել զինքն որ ՏԾային նախախնամութիւնը վրայ յուսահատեր էր. ուստի մէկէն վեր ցաթկեց եւաւ բան փընտրուելու, միտքը դրաւ որ կարողութիւն աւելի առաջ երթայ մինչև որ Տէր իրեն կեր տակուր մը տայ. և որչափ որ կերթար՝ միշտ ասդին անդին կընայեր, որ ուտելու բան գտնէ։ Վերջապէս աւաղին վրայ տեսաւ ոստրէի աման, ՅՇ (ստրուիտեայի խոսպուխ) ուրախութիւն վազեց. մտածելով թէ կարելի է որ ողջ ոստրէներ ալ գտնէ հոն. և երբոր առաջ երթալով գտաւ քանի մը ոստրէ՝ ուրախութիւնէն չկրցաւ ինչ ընէ (*)։ Օ անոնք ուտելէն ետև մեծ զըւարճութիւն մը չեկաւ իրեն. վասն զի քանիմը հատ ոստրէն ինչ շահ պիտի ըներ այնպէս ոչ չափազանց անօթութիւնը։ Ան գտածները չի կրցան զինքը կշտացընել. բայց

(*) Այս ոստրէները ՅՇ ՍՊԸԻՏԷԱՅ՝ ՍՊԷԱՅ ԵՆ, որովհետև ծովուն մէջ շատ անգամ իրար փակչելով մեծ կոտոր կըլլան. ծովուն ալիքները մակընթացութիւն կըբերեն ծովուն քով. և երբ ծովը կըքաշվի՝ աւաղին վրայ կըմնան ոստրէները։ Իսկ մակընթացութիւն կըլլար հոն օրը երկու անգամ՝ երբոր վեց վեց ժամ ովկիանոսը կըբարձրանար. և երբ վեց վեց ժամ ծովը կըքաշվեր տեղատուն կըլլար. ուրեմն 24 ժամին մէջ երկու անգամ ծովը կըբարձրանայ լուսինին շարժմունքովը մակընթացուն կըլլայ. և երկու անգամ ալ քաշվելով տեղատուն կըլլայ։ Տես Ճեմարանին մէջ. թիւ 268։

ինքը գոհ եղաւ որ չի մեռնելու չափ բան մը գտաւ ուտելու ։

Ընկէ ետև սկսաւ աւելի հոգալ բնակարան տեղ մը ձարելու համար, որ գազաններէն և լեռան մարդկանց վախ մը չունենայ. վ՚ա զի ծառին վրայի բնակարանը անանկ անհանգիստ էր, որ մարդու միտքն որ գայ՝ կըսոսկայ. բոլոր գիշերները այն ծառին վրայ խեղճուբ կանցընէր ։ Ա՚էկ գործիք մը բան մը չունէր, որ բնակարան մը շինէ. թէ որ ծառին ճիւղերէն խրճիթ (քօլիվա) մը շինէր, իրաւ օձերէն կազատէր, բայց կատղած գազաններէն չէր կրնար ապահով ըլլալ. եթէ ունենար հրացան կամ (թիւֆէնկ) դիւրին կըլլար զինքը պաշտպանել. բայց խեղճը երկու ձեռքէն 'ի զատ բան մը չունէր ։ Շատ բան մտմըտաց, ո՛ր դին դարձաւ ճար մը չի գտաւ, որ բնակարան շինէ. ուստի նորէն յուսահատեցաւ ։ Ի՞նչ օ. գուտ եղաւ՝ կըսէր մինչև հիմա ողջ մնալս, որ այս գիշեր կրնայ ըլլալ թէ գազանները զիս պատռեն ։ Ա՚յս մտմըտուքով անանկ սիրտը խռովեցաւ, որ երևակայութիւնը դարձաւ, ու աչքին մէկ կատղած գազան մը երևցաւ, բերանը բացած կը պատրաստվէր զինքն յափշտակելու. այսպէս երևակայելով իրեն եկաւ, թէ գազանը վրան ընկաւ զինքը կըփառատէ.

ուստի ահագին ձայնով աղաղակ մը հանեց։ Ո՞վ խեղճ ծնօղքս ո՞ւր էք ըսելով՝ մէկէն դէտինն ընկաւ կիսամեռ։ Ինչ մը ատեն ասանկ ընկած մնաց. յետոյ սրտին խռովուին ու յուսահատուիր մէկ դի նետեց, մէկ երդ մը միտքն ընկաւ, որ մօրմէն սորված էր. երբոր նեղութիւն մը կունենար մայրը կերգէ էզեր այսպէս։

Ո՞ վերիպետցի՝ յաչաց տեսողին,
մնալ անխնամ՝ 'ի տես արարչին.
Ստուեր բարձրելոյն՝ վայր է անքընին,
ապաւէն պաշտպան՝ կորստականին։
Բարիւ իմ ՝ուր՝ յոյս իմ և կեանք իմ,
ես յումմէ՞ երկեայց՝ ըստ ակամբ նորին.
Հա՛ անձն իմ կեանք՝ 'ի հզօր ձեռին,
զոն աներկեան՝ 'ի յաւիտենին։

Ասուլ անանկ զօրացաւ որ երկու իրեք անգամ ցած ձայնով ըսաց Ջերմեռանդութիւն. յետոյ բարձր ձայնով ալ սկսաւ երգել այս գեղեցիկ երգս. մինչև սիրտ առաւ երաւ գնաց պտըտեցաւ, որ գէթ այր (մաղարա) մը գտնէ, ու ապահով կարենայ բնակիլ մէջը։ Սակայն մինչև անատենը չէր գիտեր թէ ամերիկային ո՞ր կողմն է. ի՞նչ աշխարհքի մէջ և ի՞նչ տեղ է. կղզիի մէ՞ջ է, թէ ցամաք երկրի

վրայ է։ Այնպես հեռուն մէկ լեռ մը տե-
սաւ, մէկէն դէպ՝ի լեռը վազեց. Ճամբան
երթալու ատենը չորս դին կընայէր, ա-
մէն տեղ անպտուղ ծառեր և խոտեր բու-
սած կըտեսնէր։ Եւ այս անապատ տե-
ղերս ալ նորէն վշտացուցին սիրտը խեղ-
ճին։ Մէկ լեռը չափաւոր բարձր էր. ինչ
և իցէ ճանկելով աշխատեցաւ վրան ելաւ.
ուսկից չորս դին կերևնար շատ մշոննե-
րով հեռու։ Տեսաւ որ ամէն կողմը ծով
ըլլալով կղզի մը մէջ է. որչափ որ հե-
ռուն նայեցաւ, ամենևին ցամաք մը չի
տեսաւ, բաց՝ի երկու իրեք մանր կղզի-
ներէն, որ ասդին անդին ծովուն մէջ կե-
րևնային։ Ուստի բոլորովին սիրտը կոտ-
րած՝ թևերն երկինքը վերցուց խեղճ ընե-
լով կաղաղակեր. ով թշուառուհս, ահա
յայտնի եղաւ որ ես ամէն մարդիկներէն
զըրկըված եմ եղեր. ուրեմն յոյս չիկայ
ամենևին, թէ ես այս տրտմալի անապա-
տէն դուրս պիտի ելլեմ. ոչ ցաւալի ծը-
նողք, ուրեմն այլ ձեզ չպիտի տեսնեմ.
չպիտի ձեզմէ ներում խնդրեմ ըրած պա-
կասուհս համար. ուրեմն չպիտի առնեմ
մէկ բարեկամիս անոյշ ձայնը. մարդու
հետ ալ չպիտի խօսիմ։ Ընժանապէս ին-
ձի այս բանն եղաւ. ես ձեռքովս ըրի.
ով ստեղծող ՝ած, արդար է քու դատաս-
տանդ. ինչ որ քաշեմ՝ լման է յանցանքը.

ես չիկամեցայ որ իմ վիճակս աղէկ ըլ-
լար (*) ։

Անանկ տրտմութիւն պաշարված մնաց, որ այն տեղէն չիշարժեցաւ. միակերպ աչքը չորս դին էր որ ցամաք տեսնէ։ Այս էր աւելի սրտին կրակը՝ թէ Այմէ ալ զրկըվեցայ մարդիկներէն ալ։ Այս մի. ջոյս յանկարծ միտքն ընկաւ իր միսիթարական ոտանաւորն որ սորված էր։

Արդ քոյդ խնդրանաց՝ իմ պատասխանին,
մտաց լքեալոց՝ ողորմութին իմ.
Արձ եմ՝ ի փրկել՝ տառապեալ գերին,
վերջ է դառնաղէտ՝ աւուրց խաւարին։
Բացաւ գթութեց՝ աղբիւր լուսածին,
քերկրանաց աւուրք՝ ոչ անագանին.
Տիրական նպաստք՝ ի բարձանց ծագին,
միսիթար սրտի՝ բազմավիշտ անձին։

Այսպէս լալագին երգելէն ետև ծնկան վրայ եկաւ այ առջին սրտանց առաջադրեց, որ անկէ ետև օրչափ վիշտ որ քաշէ, համբերէ այ յանձնելով զինքը. և խընդրեց որ ինծ ալ իրեն ուժ տայ որ սիրով քաշէ ինչ որ գլխուն գայ։

(*) Ռոպէնսոն թէպէտ աւելի մեծ նեղութիւններ քաշեց, բայց միշտ յոյսմը ունէր, թէ ցամաք երկիր ըլլալով օր մը մեկը կըհանդիպի իրեն, զինքը կազատէ. հիմա տեսնելով թէ կղզի է, բոլոր յոյսը հատաւ. այմէ 'ի զատ ճար չունցաց։ Անկէ ետև բոլորովին այ ապաւինելով իր բանին հետ կըլլայ։

Հոս տեղ աղէկ միտք առաւ, թէ ո՞ւր է ամէն մարդու ամենաբարի հայրը՝ գթած և ամենակարող ՝երը, որ ամէն տեղ ներկայ գտվելով կըմխիթարէ։ Եթէ Յոսեփնասն լաւ չիմտածէր այս քաղցր ՝ճշմարտութիւնը՝ հոն յուսահատուէն ինքը պիտի կորսընցներ։ Ա՛հա ստեղծողին այս բարութիւնը նոր հոգի մը տալով կըմխիթարէր՝ երբոր իրեն տրտմութի կուգար։ Ուրեմն մարդս որչափ աւելի ՝ճանչնայ ՝ՈՒծային բարութիւը՝ այնչափ աւելի պարտական է ջանալ, որ բարի ըլլայ. և ասով միշտ աղէկութե մէջ առաջ կերթայ։ Յոսեփնասն այս բաները մտածելով՝ բոլորովին տըրտմութէն թեթևցաւ. և ներսէն անանկ ջորութի մը իմացաւ, որ մէկէն ելաւ լեռանը չորս դին շրջեցաւ. շատ քալեց հոգնեցաւ, որ բնակելու տեղ մը գտնէ, բայց անօգուտ եղաւ աշխատանքը։

Երբ ապէս գնաց պզտի լեռ մը գտաւ, որուն երեսը անանկ շիտակ բարձրացած էր, որ կարծէիր թէ առաջը պատ է քաշած։ Ա՛յս կողմերս աւելի ուշադրութենայելով մէկ տեղ մը գտաւ, որ դէպ՝ ի ներս խորունկցած էր՝ բերանը բաւական նեղ։ Եթէ ունենար քարակոփի կռան (չէքիճ, քիւլիւնկ) դիւրին կըրնար իրեն բնակարան շինել. բայց ամենևին բան մը չունէր որ ՝ճար ընէ այն տեղը կատարելագործէ։

Երբեմն ատենն գլուխը վերցուց դէպ 'ի վեր նայեցաւ, յետոյ սկսաւ ինքիրեն խօսիլ այսպէս։ Հոս տեղի եղած ծառերը կերևնան թէ մեր աշխարհքին ուռեներ ուն նման են, որ դիւրին կրբուանին. ուրեմն կրնամ ձեռքովս այս ծառերէն հանել, և հոս ծակին առջին տնկել պզտիկ միջոցի մը մէջ մէկմէկու մօտ, անանկ որ պատի տեղ բռնեն. և երբոր աճին հաստընան, կրնամ պառկիլ այս փակ միջոցիս մէջ այնպէս ապահով՝ ինչպէս տան մը մէջ. որովհետև ետևի կողմէն ապառաժը պատի պէս դէմ է, առաջէն ալ այս ծառերն որ իրարու վրայ բուանին՝ կրնամ ապահով կենալ մէջը։

Այս յաջող գտումին վրայ խիստ շատ ուրախացաւ, ու մէկէն սկսաւ շինել. իր ուրախութիւնը շատ մեծ եղաւ երբոր տեսաւ հոն մէկ պայծառ անոյշ ջուր մը, որ լեռնէն կըվազէր. գնաց լաւմը խմեց. վերջի արեգակին մէջ այնչափ պտըտելով՝ տաքէն խիստ էր ծարաւցած (*)։

Ուստի սկսաւ ձեռքովը հանել գետնէն քանի մը մանր ծառեր՝ մեծ աշխատանքով,

(*) Այս կողմի տաքը երևելի է ոչ միայն արեգակը վրայէն անցնելուն համար, որ առտուանց կըսկսի մինչև իրիկուն կերթայ. այլև արևմտեան հովը տաք տեղերէն յաճախ փչելով՝ խիստ կընեղէ տաքու

և տարաւ այն տեղն որ տնկէ. ուր ձեռ-
քովը փորեց գետինը փոս ըրաւ ու ծառե-
ը տնկեց. և որովհետև քիչ աշխատան-
քով չէր ըլլար՝ հապա թէ հինգ վեց ծառ
կրցաւ տնկել, իրիկուն եղաւ։ Այց խեղ-
ճին անօթութիւնը ստիպեց, որ նորէն
դառնայ ծովուն քովն որ քանի մը ոստրէ
գտնէ ուտէ. գնաց բան չի գտաւ. վեր ալ
մակընթացութեան ատենն ըլլալով ծովը
բարձրացած էր. մինչև հարկ եղաւ որ ա-
նօթի պառկի այս անգամ այն իր ծառին
վրայ. իբր զի քանի որ ապահով տեղ մը
չունէր՝ բնակարանը ծառին վրայ էր (*)։

Եւ որովհետև առջի գիշերները շատ
նեղութենով կը քնանար ծառին վրայ,
խելք ըրաւ՝ ու իր գուլպային կապերը
քակեց և ոտքերը ծառին կապեց, և ա-
նանկ հաստատ ճիւղերուն կրթնցուց կրռ-
նակն, որ անկողնի պէս եղաւ իրեն. յե-
տոյ վինքը ստեղծողին յանձնելով հան-
գիստ քնացաւ։

Հա այս պատճառաւ կըսվի, թէ հարկ-
նէ ծնող արեւսակից և խելայ. որ խիստ
աղէկ կըսորվեցընէ մեզի համ բանն որ ա-
ռանց անոնց չենք կրնար ըլլալ։ Սոր հա-

(*) Ռոպէնսոն օրագրուն մէջ կըսէ՝ թէ հոկտեմ-
բերի մէկին եկայ տեսայ որ ծովը բարձրացած ըլլա-
լով, նաւը վեր էր եկած. նորէն ընկերներս միտքս ընկ-
կան, ու բոլոր նոյն օրը տրտմութիւն անցուցի։

մարդ բարերար ՝ն ծ անանկ կարգաւորէր է այս աշխարհքս ու մարդիկ . որ ունենանք պէտպէս հարկաւորութիւններ , և չի կրնանք բաւական ըլլալ , բայց եթէ զանազան գրտուութիւններով , և խելք բանեցընելով : Եթէ ստանանք աղէկ խելք և խոհեմ իմացողութիւն , պէտք է որ մեր հարկաւոր գործքերուն համար գործածենք . վ՞ զի եթէ լոր թռչունները եփած թափած գային՝ բերաննիս մտնէին . և եթէ տուն՝ անկողին՝ զգեստ՝ կերակուր , և այլ ամէն բան՝ որ հարկաւոր են մեր կեանքը պահելու , եթէ ասոնք անանկ պատրաստած գետնէն ելլէին , Ճշմարիտ է թէ ուրիշ բան չէր մնար մեզի ընելու , բայց եթէ ուտել խմել քնանալ . և մինչև ՝ի մահ անասունի պէս կըմնայինք յիմար և անխելք :

Ուստի ասալ ՝այ մեծ բարութիւն է՝ որ մարդուս ամէն պէտք եղած բաները՝ կատարեալ պատրաստած չէ ստեղծեր : Ա՛ս այս ՝ն ծային իմաստունն ու բարուները չէ՞ որ միշտ կըփայլի աշխարհքիս կարգին վրայ : Ա՛յս ՝ամ կըյայտնեն երկնային աստղերն որ ստեղծեր է ՝ն ծ գեղեցիկ փայլուն . մենք ալ տեսնելով և վայելելով այս բարիքները շնորհակալ ըլլանք բարերարին (*) :

(*) Փիլիսոփաները կըսեն թէ հարկն է ծնող արուեստից . վ՞ զի հարկաւորութիւնը ամէն բան ՝նարել

Ղ. Ղեպաց.

Ղ՝օսկէնսօն այն գիշեր հանգիստ քնաց մինչև առաւօտ. առաւօտանց վաղեց ծովուն քով քանիմը ոստրէ ժողվեց դարձաւ իր գործքը. բայց այս անգամ ուրիշ ձամբայէ գալով՝ ձամբուն վրայ մէկ նոր ծառ մը տեսաւ. շատ ուրախացաւ, որ ծառին վրայ խոշոր պտուղներ կային, թէպէտ չէր գիտեր ինչ ըլլալը, բայց կըյուսար թէ կարենայ ուտել։

Ա՝երջանիս մէկ հատ մը ծառին վրայէն ձգեց, նայեցաւ որ եռանկիւն ձևով ընկուզ էր, պզտի տղու մը գլխու մեծութիւն. վրայի կեղևն էր թելերով փաթթած կանեփի թելի պէս. երկրորդ կեղևը ասոր հակառակն էր անանկ կարծր՝ ինչպէս կրիային վրայի կեղևը. որ կրնար իրեն ծառայել ափսէի կամ (թասի) տեղ։ Այս կեղևը այնչափ ընդարձակ էր, որ Ամերիգայի մանր կապիկներն՝ որ սակուէն կըսվին, կրնան մէջը քնակիլ իրենց երկան պօչովը. մէջի ընկուզը, կամ միսն էր պարարտ հիւթ մը. որուն համն էր

կուտայ. դրեթէ բոլոր եղած արուեստները խելք բանեցնելով գտան մարդիկ։ Հարկն ստիպեց որ թիովը բէլ գտաւ դարբնուելը, և անոր քոյրը հնարեց կտաւ գործելը, ևն։

նման քաղցր նուշի (պատէմի)։ Իսկ մէջ
ի պարապ տեղն էր լեցուն պատուական
կաթ համեղ։

Ահա աս ալ եղաւ մէկ լաւ կերակուր
մը քաղցած Ռօպէնսօնին, բայց իր անօ-
թութիւնը չանցաւ մէկ ընկուզով։ Մէկ ու-
րիշմը ալ ձգեց, անալ կերաւ նոյն ա-
խորժակով։ Ուրախութէն աչքերն արտը-
սունք լեցվեցան, ու դէպ՝ի վեր նայելով
շնորհակալ եղաւ ՆՈՅ։ Այս ծառը բաւա-
կան բարձր էր, վրան լեցուն պտուղ։
Բայց մեղք որ անկէ՝ի զատ այլ չիկար
այն կողմերը (*)։ Ռօպէնսօն թէպէտ ա-
ղէկ մը կըշտացաւ, բայց էտ չիկեցաւ,
գնաց ծովուն քով ոստրէ գտնելու։ Նոյն
օրուան համար քանիմը հատ գտաւ, որ
իրեն կերակուր ընէ։

Սով մեծ պարտաւորութիւն ունեցաւ
ՆՈՅ բարիքը ճանչնալու, որ նոյն օրը իրեն
ուրիշ կերակուր ալ պարգևեց, և իրեն
վրայ այնչափ գթացաւ։ Ուռաւ գտած
ոստրէները՝ բերաւ իրիկունն ուտելու
համար, և զըւարճանալով սկսաւ իր գործ-
քը շինել։ Ծովին քով մէկ մեծ խեցի
(սէտէֆ) մը գտաւ, որ կըծառայէր բրի-

(*) Այս ծառը ԴՕԴՕՊԷՏ կըսվի։ որ հնդկաստան ալ
կըգտվի։ բայց Ամերիկա աւելի շատ կայ։ Ռօպէն-
սօն միայն մէկ ծառ մը գտաւ հոն։ Թէպէտ էտքէն
պատուաստ (աշ) ընելով շատցուց։

չի կամ (խաղմայի) տեղ. անով շատ դիւ-
րին եղաւ իր գործքը։

Դիչմը անցաւ՝ ուրիշ ծառ մը տեսաւ
վրան լեցուն կեղևներ կախված կանեփի
թելերու նման. ուրիշ անգամ ալ տե-
սեր էր, բայց խելք չէր բանեցրներ ա-
սանկ բանի վրայ. անկէ ետև ամէն բան
կըքննէր, և ուշադրութիւն կընայէր, որ
օգուտ մը հանէ, ու գործածէ որչափ կա-
րելի է։ Ուստի փորձելու համար, թէ
արդեօք կրնա՞ն կանեփի պէս գործքի գալ,
ծառին վրայէն այն թել թել կձեպնե-
րէն շատ փրցուց, կտոր կտոր իրար կա-
պեց ջուրը դրաւ որ կակըղնան. նայե-
ցաւ քանիմը օրէն ետև լաւ կակըղցեր
են. հանեց ջրէն արևը դրաւ, աւելի կա-
կըղցաւ. չորնալէն ետև փայտով սկսաւ ո-
ղըրել կանեփի պէս. ուզածէն աղէկ է-
ղաւ։ Անկէ ետև այս կեղևները ժողվեց
սասանկ ողբրելով չուաններ շինեց. այս
չուանները թէպէտ լաւ չէին ողբրվիլ,
վասն զի ոչ գործիք ունէր և ոչ օգ-
նական, բայց լաւ ամուր ըլլալով իր գը-
տած մեծ խեցին կապեց գաւազանին ձո-
թը, և ըրաւ իրեն պիտուական գործիք
մը՝ պարտէզպաններուն փետատին նման։

Անատենը նորէն սկսաւ իր գործքն ընել
ծառ ծառի վրայ տնկելով. որ մէկ պզտի
միջոց մը՝ բոլոր չորս դին գոցվելով՝ բնա-

կուռ տեղ եղաւ իրեն։ Սակայն միակարդ ըլլալով տնկած մատղաշ ծառերը բաւական չիսեպեց, թէ կրնան պատի նման զինքը պաշտպանել. առանց աշխատանքը նայելու, նորէն կարգ մը ծառ ալ տնկեց առաջիններուն քովը։ Եւ այսպէս պատի նման հաստատուեցաւ, որ բաւական ուժի դէմ կրնար դներ։ Մէն իրիկուն առտու ջուր կուտար ծառերուն՝ մօտն եղած ջրէն. որ կըլլեցընէր գտած պտուղին կըճեպնէրուն մէջ կըբերէր կուտար. անանկ որ քիչ ատենին մէջ սկսան ծառերը կանանչիլ և աճիլ. որ խիստ գեղեցիկ կերևնային։

Այս ամէն բանը կատարելէն ետև օր մը բոլոր աշխատեցաւ հաստ չուաններ շինեց, իրար կապելով ձևացուց մէկ սանդուղ (մէրտիվէն) մը ելլելու ինջնելու համար. որովհետև կըմտածէր որ շինած բնակարանին դուռ չի շինէ. և այն բաց տեղն ալ, ուսկից կելլէր կըմտնէր՝ ծառերը տնկել գոցել կուզէր։ Անանկ ըլլալով չուանէ սանդուղը իրեն դուռն տեղ պիտի ծառայէր։ Իբր զի շինած բնակարանին վերը պզտի լեռմը կար, ասոր վրայի ծառին կապեց սանդուղը, որ մինչև 'ի վար կըհասնէր. յետոյ փորձեց տեսաւ որ հանգիստ կելլէ կինջնի. ասով բաղձանքին հասաւ։ Այս ամէնը լսմընց-

նելէն ետև կըմտածէր, թէ այն պզտիկ այրը (մաղարան) ի՞նչպէս մեծցընէ լեռը փորելով, որ կարենայ մէջը բնակիլ. նայեցաւ որ միայն երկու ձեռքը չէին կրնար շինել. պէտք եղաւ գործիք մը գտնել, որ իրեն օգնէ։ Անանկ մտածելով տեղ մը գնաց, ուր տեղ շատ քարի կոտրտուք կային։

Երբոր շատ մտադրուք կըփնտրուէր, մէկ սուր քար մը տեսաւ, և այնչափ ուրախացաւ որ չէր գիտեր ի՞նչ ընէ. վասն զի այս քարին ձևը նման էր կացինի, բերանը սուր, և ծակ ալ ունէր, որուն մէջը կոթ կրնար անցնիլ։ Հօպէնսօն ձեռքն առաջին պէս հասկըցաւ թէ կրնայ կացինի տեղ գործածել. նաև այրին դուռը անով մեծցընել. որ շատ աշխատանքով սկսաւ ուրիշ քարով մը զարնել՝ մինչև կատարեց. յետոյ հաստ փայտ մը անցուց կոթ շինեց կացինին, և շինած չուանովն ալ անանկ հաստատ կապեց, որ կարծէիր թէ գամած է (*)։

Շուտով փորձել ուզեց կացինը. երբոր ծառին զարկաւ կտրեց վար ճղեց՝ ու-

(*) Այս քարն էր հրահանի (չախմախի) քարի տեսակ, անանկ կարծր ու սուր՝ որ ինչ ըլլար կըկտրէր. վասն զի կերևնայ թէ ջուրը լեռներէն այս սուր քարերը քշեր հոն էր բերեր. որոնց մէջ դանակի ձևով սուր քարերաալ կային. միայն մէկն էր կացինի ձևով՝ որ ծակ ունէր։

ըախուէն վեր կըցաթկէր. անանկ մեծ բան կերևնար իրեն, որ բիւր հազար ոսկի տային չէր տար։ Ընկէ Եթքը նորէն սկսաւ քարերուն մէջ փնտրռել. երկու քար ալ գտաւ, որ իրեն բանին կըծառայէին. մէկը նման էր ուրագի, որ քարակոփները և փայտագործները կըգործածէն. մէկալ քարը կարմ ու հատ՝ ծայրը սուր՝ նման էր սեպի (քէսկիի)։ Ասպէնսօն առաւ երկուքն ալ ուրախութիւն տարաւ իր բնակարանն, որ Եթքը գործածէ։ Ընոնք շատ լաւ իրեն բանին եկան. վե՞ղ ի սրածայր քարովը բնակարանին քարերը կոտրտէր մէկ դիէն կըմեծցընէր. ուրագով ալ վրայէն զարնելով կըփշրէր. քանիմը օր ասանկ շարունակելով տեսաւ որ բնակարանը բաւական մեծցաւ, որուն մէջ հանգիստ կրնար պառկիլ (*)։

Ընդաջուց շատ խոտ ժողվեր արեգակը դրեր էր որ չորնայ. տեսաւ թէ լաւ չորցած է, տարաւ բնակարանը փռեց՝ իրեն կակուղ տեղ մը շինելու։ Ընկէ ետև այլ արդելք վախ չի մնաց Ասպէնսօնին, որ սովորական մարդու պէս չի կարենայ պառկիլ. որն որ խեղճութիւն

(*) Ինկիլիզները տեսան որ զելանտա կղզին բնակիչները կըգործածէին դանակ կացին. որ շիներ էին սև քարէմը, որ խիստ կարծր էր, բրիչնին վայտէ էր, և մկրատնին մարդու ոսկորէ շիներ էին։

պարտաւորեցաւ ուԹը գիշեր ծառին վը-
րայ Թառիլ անբան Թուչունի նման. Եր-
բոր եկաւ սանդուղքին մտաւ իր բնակա-
րանը՝ ոչ Թէ ինչ հանգստուն իմացաւ.
և ինչ բերկրուԹիւն՝ երբ ուզածին պէս
երկնցուց ոտքերը, ու աշխատած հոգնած
խոտին վրայ պառկեցաւ քնացաւ։

Այ փառք տալով կաղաղակեր, ոչ՝
Թէ որ իմ քէջքի ընկերներս կարենային
շատ գիշեր շարունակ նստելով կարծը
ծառին վրայ քնանալ, որպէս ես նստայ.
ինչպէս անոյշ պիտի քնանային հանգիստ
անկողնի մէջ՝ այնչափ խեղճուԹիւն քաշե-
լին ետև. անտարակոյս մէկ օր մը էին
անցըներ առանց մեծաղոս շնորհակալ ըլ-
լալու ուծային ողորմուԹեն, որ այն բարի-
քը, և այն զուարճուԹիւնը պարգևեր է ի-
րենց կեանքին։

Հետևեալ օրն կիրակի՝ Ոսպէնսոն
չաշխատեցաւ. աղօԹքով և մտածականով
ոբ պահեց օրը. շատ ատենը ծնկան վրայ
չոքած անցուց, աչքերը Թաց դէպ 'ի երկ-
կինքը աղօԹք կընէր. որ իր մեղքերուն
Թողուն տայ ուծ, և իւր ողորմուԹը վախ-
Թարէ խեղճ ծնողքը։ Յետոյ ուրախա-
կան արտասունք մը Թափելով շնորհա-
կալ եղաւ ստեղծողին սքանչելի մարդա-
սիրուԹեն, որ անանկ վիճակի մը մէջ ող-
ղորմեցաւ իրեն. երբ բոլոր աշխարհքին

որբ էր մնացեր. նաև հաստատ առաջադրեց որ միշտ բարի ըլլայ և հաւատարիմ մնայ որդիական հնազանդութեան մէջ։

Ը. Հա այսպէս Յովհաննէս առաջվանէն շատ աղէկ և հոգևոր եղաւ։ Որ զի՝ բարերարը նախատես ըլլալով՝ խեղճութեան մէջ կը ձգէ մարդն որ համբերութիւն առաքինի ըլլայ։ Ը. յս պատճառաւ խեղճութիւն կուտայ մարդու. ուրեմն ինչոր ընէ մեր երկինաւոր Հայրը՝ միշտ մեզի համար բարի է. ուրչափ մեզ չարիք խրրկէ, բարկութիւն չէ՝ հապա ողորմութիւն. վասն զի գիտէ թէ կարօտ ենք բարի ըլլալու. և այն իր բարերար ձեռքին դեղն է մեր օգտին համար։ Իսկ Յովհաննէս օրերուն կարդը չէր մոռնալու համար, և մասնաւորապէս կիրակին որոշելու համար կը մտածէր, որ օրացոյց մը շինէ. բայց չէ թէ մեր գործածած օրացուցին պէս. որովհետև ոչ թուղթ կար, ոչ գրիչ. հապա չորս ծառ որոշեց, որ մէկ մէկու քով անկած ըլլալով իրարու միացած էին։ Ը. ուելի հաստ ծառին վրայ ամէն իրիկուն մէյմէկ գիծ կը քաշէր սուր քարով մը. նշան էր, թէ օր մը անցաւ. երբոր եօթը գիծ կը ըլլար, որ շաբաթը կը լմննար, անատենը քովի ծառին վրայ մէկ գիծ մը կը քաշէր, որ կը նշանակէր շաբաթ։ Ը. յս երկրորդ ծառին վրայ երբոր չորս գիծ կը ըլլար՝ երրորդ ծա

ռին վրայ գիծ մը կըքաշէր, որ ամիս կը նշանակէր. և երբ այս գիծերը լման ԺԲ կըլլային՝ չորրորդ ծառին վրայ կընշանէր. որ մէկ տարին կը լմընար։

Եւ որովհետև ամէն ամիս մէկ չէ. որը Ի օր է, որը ԼԱ. սկսաւ ձեռքին վրայ համրելով գտնել այս կերպովս. նախ ձեռքը գոցեց, ու մէկալ ձեռքին մատովը ըսկըսաւ համրել գոց ձեռքին յօդուածներն ու փոս տեղերը մէյմէկ ամսու վրայ յունվարէն սկսելով. այն ամիսներն որ յօդուածին վրայ կուգային ԼԱ էին. անոնք որ փոսին վրայ՝ Ի օր։ Բայց 'ի փետրվարէն. որ ԻԸ օր է, և չորս տարին հեղմը ԻԹ օր։ Բայց ցուցական մատին յօդուածէն սկսելով քովի փոսը կըլլայ փետրվար. որով բոլոր ամիսները յայտնի կըլլան։ Յոսկենսօն անոր համար հոգ տարաւ այս բանին, որ ժամանակը գիտնայ կիրակիներն որոշէ ու քրիստոնէաբար օրը կատարէ, կիրակիները տօնները պահելով (*)։

Բայց արդէն քօքօ պտուղներուն մեծ մասը կերեր լմընցուցեր էր, և ծովին

(*) Գրեթէ ամէն գիտուն ասանկ անկատարէն առաջ եկերեն. երբոր հարկ կըլլար մարդիկ բնական խելքերնին բանեցընելով կըհնարէին. ինչպէս եգիպտացիք նշանագիրերը հնարեցին, անկէ գիրը գտան. փիւնիկեցիք երկնային աստղերը գիտելով՝ մոլորակներուն շրջանը որոշեցին. և աստղաբաշխութիւնը գտան. ու անով ժամանակագրութիւնը և տոմարագի-

քով այնչափ քիչ ոստրէ կը գտնէր, որ իրեն չէր բաւէր ապրելու. ուստի նորէն սկսաւ այս բանիս վրայ հոգալ։ Անանկ ալ վախկոտ էր, որ միշտ չորս դին կընայէր, և չէր համարձակէր իր տեղէն հեռուն երթալ. գազաններուն և լեռան մարդկանց վախը զինքը կարգելէր. իրաւ թէ որ այն կողմերը գտվէին, շատ վախնալու բան էր։ Սակայն հարկը զինքն ըստիպեց, որ վախը մէկ դի դնէ, ու կղզին հեռու տեղերնալ երթայ ժուռ գայ նոր ապրուստ գտնելու համար։ Անանկ միտքը որոշեց որ միւս օրը երթայ դաշտերը պտտի, տեսնէ ե՞ծ ինչ կուտայ։ Բայց արեգակին տաքուէն ազատելու համար՝ իրիկունը մէկ հովանոց (ումպրէլա) մը շինեց. թէպէտ ո՛չ լաթ կար քովը, ո՛չ դանակ, ո՛չ մկրատ, ո՛չ ասէղ, և ո՛չ թել. հապա ի՞նչպէս շինեց։ Ուռիի ճիւղերն առաւ իրարու հետ հիւսեց բոլորակ (էմ պէր) մը շինեց. մէջ տեղը մէկ փայտ մը հաստատեց բարակ չուանով. յետոյ իր քօքօ ծառին լայն տերևները ժողվեց ձըկան փուշերով հաստատեց բոլորակին վրայ, որ հիւսեր էր։

տուին հնարեցին։ Այսպէս ալ Ռոպէնսոն բնական խելքը բանեցընելով շատ աղէկ այս գիւտը հնարեց. որ իրեն օրացուցի տեղ կը ծառայէր, ու ամէն բան հոն կընշանէր։

Պէտք է գիտնալ, թէ երբեմն ծովը կը-
քերէ մեռած ձկներ կընետէ աւազին վը-
րայ, կըփթթին, և թռչուններըը միսը
կուտեն փուշերը կըմնան. Լոպէնսօն
բարակ փուշերը ժողվէր՝ասեղն տեղ կը-
գործածէր։ Այս կերպով շինեց հովա-
նոցը անանկ հաստատ որ ամենևին արև
չէր անցներ։ Երբեմն անգամ կըյաջողէր
Լոպէնսօնին նոր բան մը շինելու, սովոր
էր ինքն իրեն ըսել. ափսոս որ մանկուե
ատենս յիմար մնայի. մե՛ղք որ շատ ժա-
մանակս պարապ անցուցի, ո՞հ թէ եւրո-
պա ըլլայի հիմա, և գործիքներ ունենայի
իմ պիտեական բաներս շինելու, ինչե՞ր
չէի ըներ դիւրուքը։ Երբեմն ուրախութի-
կըլլար ինձի եթէ պէտք եղած բաներս և
գործիքներս ունենայի։

Այս միջոցս մէկ միտք մը եկաւ ի-
րեն, թէ կարելի ըլլար մէկ տօպրակ
մը շինելու, որ գտած բաներըը մէջը
դնէ. և նոր ուտելու բան մը թէ որ
գտնէր, մէջը պահէ. որ շատ հարկա-
ւոր էր իրեն։ Գիշերը ատեն ասոր վրայ
մտածեց. յետոյ ճամբայ մը գտաւ շինեց
չուանէ տօպրակ մը կերակուր պահելու
համար այսպէս. նախ երկու ծաւի վրայ
չուաններ կապեց իրարու մօտ, և շատ
թելեր մէկ մէկու հետ հինեց, նման հի-
նած կտաւի. յետոյ վերէն վար հիւսե-

լով թել թելի հետ՝ վար ինջած թելով ամմէն թել կրկապէր, ինչպէս կընէն թօռը։ Այս թելերն որ կինջնէին՝ թեզան կրձեւանար. և այսպէս քիչ ժամկին մէջ գործելով ամբնցուց տօպրակը. որ նման էր ձկնորսներուն պզտի ուռկանին։ Յետոյ ծայրերը վերցուց ծառերուն վրայէն՝ իրար կապեց. վերի ծայրը բաց թողուց՝ բերան ըլլաւ։ Այս այս հնարքով կատարեց տօպրակը, և բերանը հաստ չուան մը կապեց ու վրէն անցուց։ Այս բանին յաջողուիր շատ մեծ ուրախութիւն պատճառեց իրեն. անանկ որ խնդալուն գրեթէ բոլոր գիշերը չիքնացաւ (*)։

(*) Հարկաւորուն է որ ամէն բան աղուոր և ցանկալի կընէ. որչափ պզտիկ բան ըլլայ՝ երբոր հարկաւոր կըլլայ, խիստ փափաքելի է. այն բանն որ կայ՝ բան մը չերևնար. բայց երբոր չըլլար ու հարկաւոր կըլլայ՝ անատենը յարգը կըգիտցուի։ Ամէն բան ասանկ գովելի է. թէպէտ մարդուս աչքին բան չերևնար, բայց գտնըված ատենը որչափ սիրտ մաշած է։ Ահա Լոպէնսօնին գործքերէն կիմացուի որ ադամ և իր որդիքն ու թոռները ինչ հոգեր ընելով պէտք եղած բաները հնարեր են. ու անպատմելի ուրախութիւններ ըներ են. որ հիմա մեր աչքին բան մը չեն երևնար։ Այսպէս ալ գիտուններուն ամէն ուսման սկզբունքը գտեր են շատ մեծ հոգերով և ուխտեր ընելով. բայց հիմա ոգէներուն աչքին բան մը չերևնալէն 'ի զատ՝ կըծիծաղին անոնց ըրած հոգերուն վրան։

Ղ. Դիպուած.

Հետևեալ օրը Յոպէնսօն կանուխ լոյս չինծագած շուտմը ելաւ պտրստրվեցաւ, որ Ճամբայ ելլէ. տօպրակը վիզն անցուց և մէջքը չուան մը կապեց, կացինը մէջքը խօթեց թուրի տեղ. Հովանոցն ալ վրան առաւ սկսաւ կտրիճի պէս երթալ. նախ և առաջ իր ծառին քով գնաց՝ մէկ երկու ընկուզ փրցուց տօպրակը դրաւ իրեն կերակուր պատրաստեց. անկէ գնաց ծովուն քով մէկ քանի ոստրէ գտաւ ամանը դրաւ. երկու տեսակ կերակուր պահեց հարկաւորուն համար. ջրին քով նստաւ նախաճաշիկն ըրաւ. այն վազած ջրէն ալ աղէկ ջուր մը խմեց ու գնաց։

Այն առաւօտը շատ ուրախ անցուց. վո՞ւ կի երբոր արեգակը ծագեց իր Ճառագայթը ծովին եզերքէն՝ ծառերուն ծայրը ոսկիի պէս փայլեցան։ Այսիս բիւրաւոր թռչուններ զանազան մեծութիւն, և զարմանալի գուներով սկսան իրենց առաւօտեան երգերն երգել, որոնք կուրախանային արևին ելլելուն վրայ։ Դնալ անանկ պարզ մաքուր էր, որ կարծէիր թէ այն կեսին ստեղծեր է ՚ուծ ամէն բան. ծառերուն և ծաղիկներուն անոյշ հոտերն որ կըբուրէր, շատ սքանչելի էր։

Ոսպէնսօն զասոնք տեսնելով անանկ սիրտը ուրախութ՚ լեցվեցաւ, որ չէր դիմանար՝ կուզէր անդադար ՝ն ծ փառաւորել։ Ա՚հա Ճշմարտապէս հոս են ՝ն՝ այ ըսքանչելի գործքերը. ահա այս տեղս է կրսէր ստեղծողին բարի արարածները։ Վերջապէս չդիմացաւ իրեն ձայնն ալ թռչուններուն ձայնին յարմարցընելով՝ սկսաւ երգել այս առաւօտեան երգս։

Ա՛մենակալ՝ տիրող բոլորին,
կարգեա՛ զիմ գնացս՝ ՝ն՝ ուղիղ կարգին.
Դու միայն ուղղիչ՝ իմ կրից ներքին,
կենաց և մահու՝ աւուրց իմ վերջին։
Դեզ զքոյս նուէր՝ ընծայե՛ սիրտ իմ,
զայս Ճաճանչագեղ՝ զայս լոյս արեգին.
Ո՞ նորհս առ՚ի քէն՝ որ յիս վերբերին,
անդրէն ընծայեմ՝ քեզ տիրականին։
Ա՚կն ամենառատ՝ կեանք մահականին,
տո՛ւր ինձ տեսանել՝ զարարչիդ բարին.
Ձեռք ամենակալ՝ ցածուսցէ հեշտին,
պատիժ պատուհաս՝ ստեղծականին։
Ո՞վ ՝ն՝ որ ողորմած՝ ո՞ւր նպաստ ձեռին,
կանգնիչ անկելոյն՝ ցրիչ խաւարին.
Ինձ այսուհետև՝ դու միայն բաժին,
՚ի սայթաք շաւղայ՝ հեռի ընթացք իմ։
Ո՛հ տկարանայ՝ բաղուկ հզօրին,
հոգալ զպիտոյս՝ իմ մարմնականին.
Ա՛ւ ո՞ւր զլացաւ՝ դուք երկնաւորին,

բաշխել էակաց՝ բարիս պիտանին։
Ո՜հ՝ իմ վաստակ՝ հոգ տրտմականին,
՝ի խորոց սրտէ՝ առ քեզ վերբերին.
Կեանք իմ աւուրք իմ՝ առ սէր իմ փրկչին,
ըստ շաւղաց՝ ՝ՁԷՑ՝ Հ.ՔՆԱՂ սրբեսցին։

Ասպէնսօնին սրտին մէջ դեռ զաղանները ու վախ ըլլալով՝ չէր կրնար շատ առաջ երթալ. դիմացն ելած խիտ թուփերը, և անտառները կոտրտելով իրեն Ճամբայ կրբանար ուր որ կերթար. բայց այս տեղերս եղած ծառերը, բոլոր անպտուղ էին։ Ամբոր բաւական Ճամբայ քալեց ու ամենևին պիտուական բան մը չի տեսաւ, սիրտը նեղացաւ որ քաշած աշխատանքը փուչ եղաւ (*)։

Ատքը տեսաւ հեռուն բազմուն բոյսերու ծառի պէս բարձրացած, ուզեց որ մոտանց լաւ մը քննէ։ Ամոնք անանկ խիտ մէկզմէկու վրայ բուսած էին, որ կերևնար թէ անտառ է. նայեցաւ որ ոմանց վրայ կարմրագոյն ծաղիկ կայ, ոմանց վը-

(*) Այս կղզիները անմարդաբնակ ըլլալով անանկ ծառերը անտառ էին դարձեր, որ երթալու Ճամբայ չիկար. շատ կերպ կերպ ծառեր կային. ինչպէս է երկաթէ ծառն որ խիստ կարծր ըլլալով երկաթ չի բանիր, և երկաթի տեղ կըգործածվի. մէկ տեսակ ծառ մը ալ կար՝ որ փայտը քար կըկարիր։ Թոռ զանազան բոյսերը։

բան ալ ՀԵրմակ ծաղիկ. ոմանց ալ ծա-
ղիկին մանր խնձորներ կային կանանչ՝
կապլինի մեծութ։ Մէկ հատ մը փրցուց
խածաւ, տեսաւ որ չուտվիր. բարկանա-
լով քաշեց հանեց բոյսերը՝ կուզէր անդին
նետել. բայց զարմանալով տեսաւ ար-
մատներուն վրայ զանազան ձևով գուն-
տեր կախված, մէկէն հասկըցաւ, թէ
այն գունտերն էին այն բոյսին պտուղները,
և սկսաւ քննուի ընել. սակայն երբ
խածաւ՝ ակռան չի կտրեց. խիստ կարծր
և անհամ էր։ Լոպէնսօն շատմը պի-
տի ձգէր երթար. բայց մտածեց, որ
մէկ բանին օգուտը մէկէն չի հասկրնա-
լով պէտք չէ՛ բացարձակ անպիտան դա-
տել։ Ը.սոր համար քանիմը հատ անոնցմէ
տօպրակը դրաւ, ու սկսաւ Համբան եր-
թալ։

Ը.յս պտուղներն էին գետնիխնձոր
(էէր էլմասի), որ արմատին վրայ աՀԵ-
լով գունտ կըլլան։ Ու այս բոյսին բուն
տեղն է Ը.մերիկա. որ մէկ ֆռանսըզ մը
բերաւ վերի աշխարհքը աՀեցուց. ուստի
Լոպէնսօն ո՛չ տեսած էր, և ո՛չ կրՀանչ-
նար գետնիխնձորը. մ՚ա զի մինչև անա-
տենը դեռ Նէմցէստան չէր եկած այս
բոյսը, և Ը.մպուրկ քաղաքը չէր տնկած.
որովհետև 60 տարիէն աւելի չէ որ սոփո-
րուԹի եղաւ նէմցէստան ուտելու, իսկ

Պոպէնսօնին դիպուածը 150 տարիէն ա-
ւելի է։

Իսկ Պոպէնսօն միշտ առաջ կերթար
իր Ճամբան, բայց վախնալով կամաց ըզ-
դուշուբ կըքալէր. հովին ձայնէն ծառե-
րուն շարժելէն դող կելլէր սիրտը. որ
մէկէն ձեռքը կացինին կըտանէր՝ գալու
վտանգէն պաշտպանելու համար, և միշտ
կուրախանար, որ քաշած վախը պարապ
կելլէր։ Վերջապէս ջրի մը գլուխ հասաւ,
ուզեց որ Հոն ցորեկվան հացն ուտէ, մէկ
մեծ ծառի մը տակ նստաւ. երբոր զըւար-
Ճանալով կըհանգչէր, նայիս յանկարծ
հեռուէն ձայն մը լսեց՝ նորէն խռովեցաւ
սոսկաց. մէկէն դողալով չորս դին նայե-
ցաւ, որ շատ կենդանիներ միատեղ կու-
գային։ Ասոնք գազան չէին, հապա վայ-
րի անասուններ էին ոչխարի նման. ո-
րոնց կռնակին վրայ բարձր ըլլալով՝ ուղտի
կընմանէին. բայց ոչխարի մեծութիւն ու-
նէին (*)։

Պոպէնսօն տեսաւ թէ այս կենդանի-
ները իրեն կըմօտենան. շատ փափաքե-

(*) Այս կենդանին լամա կըսվի. որուն երկայնու-
թիւն է 5 ոտնաչափ, և բարձրութիւը 4. հասարակօրէն
2 ձագ կըձնի. և 2 սափնք ունի։ Բերու աշխարհքը
շատ կըլլայ. սպանելիները հոն չի գտցած բերուա-
ցիք ընտանեցուցեր էին լաման. վրան համէտ (սա-
մը) դնելով իշու կամ կովի պէս կըգործածէին բեռ
կըբերով. բուրդն ալ մանէին լաթ կըշինէին։ Սակէ

ցաւ , որ կարելի ըլլար մէկը զարնել և խորված միս մը ուտել. որովհետև երկար ատեն էր որ բերանը միս չէր դրած , անոր համար շատ ջանաց անոնց մէկը զարնելու : Լուսոի մտաւ ծառին տակը պահվեցաւ քարէ կացինը ձեռքը՝ յուսալով թէ մէկը անկէ մօտ կանցնի ու կացինով կըմեռցընէ : Կենդանիները մարդ տեսած չըլլալով՝ ծառին քովէն կանցնէին առանց վախի՝ կերթային ջուր խմելու . նայիս մէկ պզտի լաման մը մօտեցաւ ծառին քըսվեցաւ . Լոպէնսօն կացինով անանկ ուժով զարկաւ վրէն , որ մէկէն գետինն ընկաւ :

Լոպէտ առանց հարկաւորութիւն անասուն մեռցընելն է նշան խստասրտութիւն , որ գութ ունեցող մարդը չըներ . բայց անուանդ գտնելու համար պէտք է մեռցընել : Ա. հա այս խորհրդով Լոպէնսօն զարկաւ լաման . սակայն սկսաւ մտմըտալ , թէ Ի՞նչպէս եփէ ուտէ . որովհետև ամենևին բան մը չունէր . ո՛չ ամանն ունէր և ո՛չ կրակ , ո՛չ հրահան (չախմախ) կար՝ ո՛չ քար և ո՛չ խաւ . որ ճար ընէ

յայտ է թէ՝ բերուացիք ըլլան, մէքսիքոնացիք ըլլան վայրենի մարդիկ չէին . տուն տաճար և թագաւոր ունէին . քաղաքական էին , օրէնք ունէին : Բայց Ամերիկայեն ուրիշ աշխարհքները շատ լեռան մարդիկ կային , որ գաղանի նման մէկզմէկ կուտէին :

վառէ։ Այ երջապէս մտածէց որ երկու ջոր փայտ իրարու քսելով և շփելով տաքնայ ու կրակ ելլէ՝ ինչպէս լսած էր, թէ լեռան մարդիկ կընէն. և այս խորհրդով Լոպէնսօն շալկեց լաման կըտանէր իր քնակարանը։

Նամբուն վրայ եօթը ութը լէմոնի ծառեր տեսաւ որոնց տակը լեցուն հասած լէմոններ թափած էին (*). շատ ուրախանալով մէկիկ մէկիկ ժողվեց. այն տեղին նշան դրաւ որ չի կորսընցնէ. և զըւարճանալով գնաց իր տեղը։ Լաֆ և առաջ քերթեց լաման սուր քարով մը, որ դանակի տեղ կըգործածէր. և մորթը զգուշուք փռեց արեգակին մէջ, որ ջորնայ. վ՞ը զի գիտէր որ իրեն շատ պիտուական պիտի ըլլայ. որովհետև կօշիկները և գուլպաները սկըսեր էին մաշիլ, կըմըտածեր որ երբոր պատռին, այս կաշիէն իրեն ոտքի ամանշինէ ու պոպիկ չի քալէ. նաև կըվախնար, որ ձմեռվան մէջ չի մնի։ Այս պատճառաւ շատ կուրախանար, որ մորթը հագնելով կըտաքնայ ու ցրտէն չի մեռնիր. թէպէտ պէտք չէր

(*) Ամերիգայի տաք երկիրները շատ տեղ լէմոնի ծառեր գտան, որ բնական բուսած էին. անոր համար Լոպէնսօն երբոր հոնալ գտաւ շատ ուրախացաւ. վ՞ը զի այն խեղճութեան մէջ իրեն խիստ հարկաւոր էր լէմոնը։

այնչափ հոգ ընել ուր տեղ այնչափ ձմեռ-
չը ելլար այրեցած գօտիին տակն ելլալուն
համար. միայն երկու իրեք տիս շարու-
նակ անձրև կուգայ հոն։ Ալեքսանդր այս
բաներուն անտեղեակ ելլալով կը հոգար-

միսն ալ շամփուրն անցուց դրաւ նեցուկ-
ներուն վրայ։ Բայց սիրտը չի հանդչե-
ցաւ. վա՜ղ ի՜նչ բան եղաւ. կրակ չի
կայ, որ ամէնէն հարկաւոր էր. ուստի
չորցած ծառէ մը երկու փայտ կտրեց,
որ իրար քսելով կրակ հանէ. անանկ ու-
ժով շփելով կը քսէր, որ քրտինքը ջրի
պէս կը վազէր. բայց չի կրցաւ կրակ հա-
նել։ Երբեւ կի՝ երբ փայտը կը տաքնար,
որ ծուխ պիտի ելլէր, ինքը չարաչար հոգ-
նելով կը հարկադրէր՝ քանիմը ըռպէ կե-
նայ ուժ առնէ. ասով փայտը կը պաղէր,
և քաշած աշխատանքը պարապ կ'ելլէր (*)։

Այս պարագային մէջ խիստ լաւ հաս-
կըցաւ, թէ որչափ օգնականութիւն կը կըվաճ
էր առանձնական կենաց մէջ. և որչափ
մեծ բան է որ մարդկային ընկերութիւնը
իրարու օգնական դրված է։ Այսանի է
որ եթէ Լոպէնսոն մինակ չը ելլար և շա-
բունակվեր շփվիլը, հարկաւ կը վառէր
փայտը. սակայն այս միջահատութիւնը,
որ չէր կրնար չը ելլալ, անկարելի ըրաւ
գործքը։

Լոպէպէտ և լեռան մարդիկ մինակ ալ

(*) Զէլանտա կողմին բնակիչները փայտ մը կառ-
նէին ու չոր տախտակի մը վրայ ուժով կը կոխէին,
երբոր արագ արագ կը գարձընէին ձեռքով, մէկէն
կրակ կ'ելլէր. վա՜ղ ի՜նչ այս վայրենի ազգերը գիւրին
կրակ հանելու կերպը գիտեն. բայց Լոպէնսոն ան-
տեղեակ ելլալով չէր կրնար։

կրնան կրակ հանել, բայց անոնց ուժը խիստ սաստիկ է, քան եւրոպայի մարդիկ-
ներուն. նաև կերպը առեր են ընելու. որոնք երկու կտոր փայտ կառնեն զանա-
զան տեսակէ. մէկն է կակուղ փայտ, մէկալը կարծր. կարծր փայտը կակուղին
վրայ սաստիկ արագութիւնքսելով կրբռընկի. նաև երբեմն խորունկցընելով փայտը ծակ
կընեն. ուրիշ փայտ մը ալ մէջը կանցը-
նեն՝ շարունակ ձեռքով շուտ շուտ դար-
ձընելով կրսկրսի բռընկիլ։ Այս բանե-
րուն ամենեւին տեղեակ չըլլալով Ռո-
պէնսոն՝ չի կրցաւ կրակ հանել։

Ուստի տրտմելով վերցուց նետեց փայ-
տերը նստաւ իր խոտէ տեղին վրայ՝ սաս-
տիկ նեղուէն գլուխը թեւին կրթընցուց,
ու սրտանց հառաչելով շատ անգամ կը
նայեր խորվելու մնին վրայ. ու հում ըլ-
լալով չէր կրնար ուտել։ Այն միջոցը
ձմեռն ալ միտքն ընկաւ որ մօտ էր. կը-
հոգար թէ առանց կրակի ի՞նչ պիտի ընէ.
սրտին կսկրծուն չդիմացաւ վեր ցաթկեց
ելաւ, որ ժուռ գայ քիչմը սիրտը բացվի.
վե՞ զի տրտմութէն արիւնը դարձեր էր.
գնաց ջրին գլուխն որ քօքոյին ամանովը
պաղ ջուրմը խմէ. ջրին մէջ քիչմը լեմո-
նի ջուր սխմեց, որ իրեն լաւ դեղ մը ե-
ղաւ արիւնը պաղեցընելու, որում շատ
կարօտ էր այս հոգերուն մէջ։

Բայց սակայն փափաքն որ ունէր կտոր մը խորված միս ուտելու, Յովհաննէսին բերանին ջրերը կըվազցընէր. ուստի միտքը եկաւ. լսեր էր՝ թէ թաթար ազգն, որ մեզի նման մարդ են, երբոր միս կուզե ուտել, կըդնեն միսը իրենց ձիերուն թամբին (էյէրին) մէջ, ու ձին սաստիկ վազցընելով միսը կըտաքցընեն կեփեն (*):

Ինչպէս կըմտածէր թէ արդեօք ինքն ալ կրնայ մէկ միջոց մը գտնէ փորձելով: Ինչ շուտով լայն քար մը փընտրուեց գտաւ կայինին քարէն. ուրիշ քարմ՝ ալ անոր նման յարմարցուց. յետոյ կտոր մը միս դրաւ այս երկու քարին մէջ, ու սկսաւ զարնել անդադար իր քարէ գործիքովը. վեց րոպէ չի քշեց վրայի քարը տաքցաւ. և այնպէս զարնելով կէս ժամ չանցաւ՝ թէ՛ քարին տաքութէն, և թէ շարունակ զարնելէն անանկ կակըղցաւ միսն որ կրնար ուտուիլ:

Յայտնի է թէ խորվածի պէս համով չէր. բայց Յովհաննէսին առջին շատ գե-

(*) Թաթար ազգը մինչև հիմա միսը թերխաշ լաւ չեփած կուտէ. ուստի ձիուն քրտինքով և տաքութենով կակըղցած միսը կուտեն, որ արիւնը վրան ըլլալով համով կուգայ իրենց: Այսպէս են և Հապէշները, որոնք շատ անգամ հում կուտեն միսը: Վայրենի մարդիկ երբոր իրար կըզարնեն՝ կան որ հում կուտեն իրենց միսը:

ըսազանց կերակուր էր. որ այնչափ ատէն միս չէր կերած. ուստի հառաչելով ըսկըսաւ կանչել. ՈՒր էք իմ որկրամոլ ընկերներս. շատ անգամ համով եփած կերակուրները ձեզի ախորժելի չեն ըլլար, և ասպականած ձեր ախորժակին չկիսարմարելով անհամ կուգան պատուական կերակուրները. Թէ որ 8 օր միայն իմ տեղս ըլլայիք, շուտով գոհ կըլլայիք ինչոր ՈՒՇ ձեզի տալու ըլլար. շատ պիտի զգուշանայիք տրտունջմ՝ ընելու որ և իցէ կերակուրի համար՝ ապերախտ երևնալով ձեր ամենաբարի ստեղծողին, որ բոլոր աշխարհք կըկերակրէ։

Ա.յս իրեն կերակուրը աւելի համով ըլլալու համար քիչմը լեմոնի ջուր լեցուց մնին վրան. որ շատ ժամանակ էր անանկ համեղ կերակուր չէր կերած. բոլորով սրտով շնորհակալ ըլլալով ՈՒՅ տված բարիքին՝ անանկ կուտէր։

Կերակուրէն ետև սկսաւ մտածելով հնարք գտնել իրեն հարկաւորուները համար. որովհետև ձմեռը մօտ էր՝ ինչպէս որ կըզգար, ձմեռվան վախը միտքը ձգեց՝ որ մէկ քանի լամա զարնէ ու մորթովը տաքնայ. վա՛ զի այս կենդանին տկար ըլլալով դիւրին էր մեռցընել և առանց աշխատանաց իրեն հարկաւորուները հոգալ։ Ա.յս յուսով գնաց տեղը մտաւ պառկե-

ցաւ։ և անոյշ քնով բոլոր աւուր քաշած աշխատաքները մոռցաւ (*)։

Ը։ Դէպքաց։

Այն գիշեր Յովհաննոն աղէկ մը քնացաւ մինչև 'ի լոյս։ երբոր աչքը բացաւ տեսաւ թէ լոյս է՝ զարհուրեցաւ։ մէկէն վեր ելաւ դաշտը պիտի երթար լամա զարնելու համար։ բայց արդելվեցաւ մնաց անձրևի պատճառաւ։ մի՞ զի անանկ սաստիկ տարափ (սաղանախ) կուգար, որ ամենևին միջոց մը չունեցաւ դուրս ելլելու։ Ուսաի որոշեց որ անձրևն անցնի՝ հապա դուրս ելլէ։ սակայն անձրևը չի վերջացաւ։ մանաւանդ թէ աւելի սաստկացաւ հանդերձ կայծակով։ մինչ զի՝ իր տեղն որ առաջ մուրթ էր, լուսով լեցվեցաւ։ Եռքը որոտումն ալ սկսաւ այնպես ահագին որ չէր լսված (**)։ Արկիրը սոսկալի կըշարժէր, և լեռներուն արձագանգը շատ անգամ կրկնելով ահագին կըլսվէր,

(*) Ահա յայտնի եղաւ ճծային նախախնամութենն որ մարդուս պէտք եղած բաները ի՞նչպէս առատ ստեղծեր է ամէն տեղ, ու մարդը չիյտէ մինչև որ հարկաւորուն մէջ չինի։ Անոր համար ճծ հարկաւորուն մէջ կըձգէ մարդն՝ որ աղէկ ճանչնայ ստեղծողին տված բարիքը։

(**) Յովհաննոն օրագրութեն մէջ կըսէ՝ որ հոկտեմբերի 25 ին սկսաւ այս անձրևը գալ։ երբ զի այն էր

և այս որոտումը չի դադրեցաւ՝ միշտ կը-
գոռար երկինքը։

Որովհետև Յոպէնասոն անհմուտ ըլլա-
լով բան չէր տեսած, չիյտէր թէ բնական
բաներ են ասոնք. խիստ շատ կըդողար։
Ամենեին խելքին չէր անցներ թէ ա-
սանկ փոթորիկներն ալ այ բարիքն են, որ
օդը կըմաքրեն, բոյսերը լաւ կաճին դաշ-
տերու և պարտէզներու մէջ. և թէ որ-
չափ ուժ կուտան ծառերուն կենդանի-
ներուն և մարդկանց՝ չիյտէր։ Ամենանկ
վախի մէջ էր որ այրին մուրթ տեղը նստեր
էր ձեռքերն իրար կապած կիսամեռ կը-
դողար։ Սակայն անձրևը անդադար կու-
գար, փայլակը կըցոլար, և որոտումը կը-
գոռար սոսկալի. կէսօր եղաւ ամենեին
փոթորիկը չի դադրեցաւ (*)։

Այս վախերը Յոպէնասոնին ախորժա-
կը գոյեր էին բնաւ անօթուն էր վգար.

կիրները ժամանակ ունի՝ ամէն տարի միակերպ ատեն
ատեն սաստիկ անձրև կուգայ. և երբեմն սաստիկ
փոթորիկներ կելլեն։

(*) Այսպիսի մէտէորական փոփոխութիւնները օդին
մէջ կըպատճառին ծծմբային և բորակային նիւթե-
րէն։ Իբր զի՝ երբոր այս նիւթերը վառելով ելեքտրա-
կան շոգին թանձր ամպերէն դուրս կելլէ՝ որոտումը
կըլլայ. երբոր գետնին տակը բռնկելով տեղ չի գըտ-
ներ այն շոգին և նիւթը դուրս ելլելու՝ գետինը գո-
ղալով երկրաշարժութիւն կըլլայ. և երբ այն շոգին
բռնութիւն ամպին մէջէն կելլէ վառելով՝ տեղը մը կը
զարնէ, կըպատճառէ փայլակ և կայծակ. որ երբեմն

նաև սիրտը մեծ նեղուած մէջ էր, միտքը ահագին դժուար մտածմունքներով լեցուն էր. կը մտածէր թէ ատենն եկաւ՝ ահա ՀԱՅ մեղքս երեսս պիտի զարնէ. ահա՛ իր ամենագութ հայրական ձեռքը վրայէս վերցուց. ես ասանկ խեղճ պիտի կորսըվիմ առանց տեսնելու իմ ծնողացս երեսը։ Երբոր ասանկ նստեր էր հոն անհանգիստ և տրտում. տեսաւ որ փոթորիկը կը դադրի, անձրևն ու որոտումն ալ մեղմացաւ, կամաց կամաց հոգի առաւ. յուսահատութիւնը սրտէն ելաւ. միտքը դրաւ թէ ատենն է դուրս ելլելու. երբոր կացինը և տօպրակը առաւ պատրաստվեցաւ որ երթայ, նայիս յանկարծ երեսի վրայ ընկաւ խռոված խելք չի կար գլուխը. վա՜յ զի այն կեսին սարսափելի փայլակ մը փայլատակեց՝ երկիրը սաստիկ շարժելով. նաև ահագին կայծակ մը զարկաւ այրին վրայի ծառին. և անանկ որոտումով ջարդուբուրդ ըրաւ ծառն որ խեղճ Յովհաննոն խելքը կորուց, ու մեռելի պէս ընկաւ

ոսկին քսակին մէջ գինին տակառին մէջ կը խռովէ, ամանին բան չը ըլլար. վա՜յ զի այն շոգին միայն առանկ նիւթի կը վաղէ. տղան մօրը փորը բան չը ըլլար՝ մայրը կը զարնէ. որ միայն մօրը մարմինին մէջ մտնելով կը մեռցընէ։ Յովհաննոն չէր գիտեր թէ ծծմբային բոքակային և ձիւթային նիւթերը խմորելով կը վառին ու զասոնք կը պատճառեն. կարծէր թէ անմիջապէս վերէն ՀԱՅ խրկելով կուգէ պատժել զինքը։

մնաց դ Եանին վրայ Երկան ատեն։ Ի Երջապէս խելքը վրան Եկաւ հասկրցաւ թէ ողջ է, վեր Ելաւ. նախ տեսաւ որ ծառին մէկ կտորը այրին առաջն ընկած էր. որ կայծակը կոտրեր հոն էր ձգեր. ասալնոր խեղճութիւնը պատճառեց Ի՞օպէնսօնին. որ միտքը դրաւ թէ հարկաւ բոլոր ծառը կտոր կտոր եղած է, ես իմ չուանէ սանդուղս ուր պիտի հասատամ։

Ի՞յս միջոցս անձրևը բոլորովին կտրեցաւ, որոտումն ալ դադրեցաւ, երբոր պատրաստվելով դուրս Ելաւ ի՞նչ տեսաւ արդեօք դուրսը. և ի՞նչպէս երկինքը նայելով ամբ բերաւ միտքը, և այ իրեն ըրած բարութիւնները և սէրը աչքին առաջը գալով խիստ շատ ամչնցաւ, որ քիչ մը առաջ այնպէս յուսահատեր էր ամբային ողորմութիւնը վրայ։ Ի՞նչ կի՝ դուրս Ելաւ նայեցաւ որ կայծակը զարկած ծառին արմատը կրվառի. յանկարծ կրակն որ տեսաւ Ի՞օպէնսօն խելքը գլխէն թռուց, որն որ իրեն այնչափ հարկաւոր կրձանչնար։ Ի՞հա՛ այսպէս ամբային նախատեսութիւը մեծապէս զինքը հոգալով այս մեծ շնորհքն ալ ըրաւ իրեն. և անանկ ատեն՝ որ յուսահատելով կարծեր թէ այ ողորմութիւը իրմէ հեռացած է։ Ի՞ստի անպատմելի ուրախութիւ և երախտագիտութիւ թէ՝ երկինքը վերցուց բարձր ձայնով

ինորհակալ եղաւ երկնաւորին մարդասի-
րութիւնը, և քաղցր արտասուօք կը զարմա-
նար նախախնամութիւնը վրայ. որ զարհու-
րելի դիպուածներու մէջ ալ՝ միշտ հրաշալի
կը գործածէ իւր անհուն և սքանչելի ի-
մաստութիւնը. անդադար հիանալով կա-
զաղակեր. ով ի՞նչ է մարդ. ողորմելի
որդն երկրի քանի՞ կարձամիտ է. ով է
մարդն որ կը համարձակի տրտնջալ ՝ոյ
դէմ. որուն ո՛չ խէլք կը հասնի ո՛չ միտք։

Ի՞նչ ցնծութի՛ եղաւ Ղոպէնաօնին եր-
բոր առաւ վառեց կրակը. և ի՞նչ բերկ-
րութի՛ երբ սկսաւ գործածել. իրաւունք
ունէր որ այնչափ հոգ կը քաշէր այս նիւ-
թիս համար ասանկ անապատ կղզիի մէջ։
՝Այն օրը թողուց իրեն որսը. վո՞ զի կա-
մեցաւ որ շուտով կրակ վառէ ու եփէ իր
խորվելու միսն որ տակաւին շամփուրին
վրայ էր առջի օրվընէ։

Բայց այս կայծակին կրակը դեռ բոլոր
ծառը չէր երած. վարի դին կը վառէր,
ուր տեղէն որ կախած էր չուանէ սան-
դուղը. ուստի զգուշութի՛ սանդուղէն
վեր ելաւ կրակոտ փայտ մը կոտրեց ա-
ռաւ, մէկալ կողմէն վար ինջաւ պատէն.
և իր պատրաստած մնին առաջը լաւ կրակ
մը վառեց. ետքը վեր ելաւ կրակը մա-
րեց, որ մնացած ծառին արմատը չի վա-
ռի հատնի։

Ասոնք ընելէն ետև սկսաւ խոհարարու

պէս աղէց միսը ել կարելուն թէ։ Ընատե-
նը միսն ալ եփեցաւ. բայց Յովհաննսն երբ
ձեռքով փրցուց կտոր մը եփած մսէն բե-
բանը դրաւ չի պատմըվիր թէ ինչ բերկ-
րուն և ինչ համ զգայ. որ չորս շաբաթ
էր եփած կերակուր մը չէր կերած, և ա-
մենևին յոյս չունէր որ պիտի ասանկ կե-
րակուր ուտէր։ Ընկէ ետքը մնաց միայն
մտմըտալ՝ թէ ինչպէս ընէ որ կրակը չի
մարի. թէպէտ ցորեկը կրնար փայտ դնե-
լով վառ պահել. բայց մեծ հոգ ունէր
թէ գիշերը քնացած ատենը անձրև որ
գայ ինչ ընէ. իրեն բնակարանը այն-
չափ ընդարձակ չէր որ կրակը հոն վա-
ռէ. մուխն ալ մէկ դիէն զինքը պիտի
տանջէր։

Եւ այսպէս Յովհաննսն նորէն պաշար-
վեցաւ մնաց. որովհետև մարդուս բոլոր
եղած բաները հալալ ձեռքի կարօտ են.
ինքը միայն երկու ձեռք ունէր ամէն բա-
նի տեղ. մէկ գործիք մը չունէր որ բան
մը շինէ, և դիւրուն պիտանի գործքմը
ընէ։ Այս պատճառաւ տրտմուն կըհո-
գար որ սիրական կրակը չի մարելուն ճա-
ը գտնէ. երբեմն մտածելով ճակատը
կըշփէր. իբր թէ՝ կըջանար բռնուն նոր
խելք մը գուրս հանել ըղեղէն. և եր-
բեմն ձեռքերը վար ձգած ասդին անդին
կերթար բնակարանին քովերը կիյնէր

վոր • չիյտէր թէ ի՞նչ պէտք է ընել (*) ։

Հուսկ յետոյ յանկարծ դէպ 'ի ապառաժ լեռը նայեցաւ տեսաւ որ մէկ պզտիկ լեռ մը կայ՝ մէկ քովը կրնայ կրակ վառել, այն կետին միտքը վրան եկաւ պէտք եղած բաները մտածեց գտաւ ։ Ա՛ռ զի այն ապառաժին վրայ դէպ 'ի դուրս մեծ քար մը ելած էր հաստ լայն և երկայն՝ գետնէն բարձր մարդու հասակաւ • այս քարին տակը միշտ ցամաք էր մնացեր՝ իբր թէ տանիք (սաչախ) շինած էր վրան ։ Ուլիսէնսն տեսաւ թէ այն ապառաժին տակը ապահով կրակ վառելու տեղ կրնայ ըլլալ, և դիւրին կերպով վառարան մը ձեւանալ• միտքը դրաւ որ աշխատելով լաւ մը շինէ ։ Սկսաւ իրեն բրիչովը այն քարին տակը փորել, կուզէր որ երկու քովէն ալ պատեր շինէ այն մեծ քարին

(*) Տէս մարդկային կենաց խեղճութիւն որ կարծէր թէ փափաքած բանն որ գտնէ՝ այլ հանգիստ պիտի ըլլայ• չիյտէ թէ ինչ որ ընէ միշտ հոգալու բան կը գտնըվի ։ Շատ անգամ Ուլիսէնսն կարծէր թէ երջանիկ պիտի ըլլայ• բայց միշտ հոգը չի հատաւ• ի՞նչու որ ամէն մարդ պէտք է միշտ հոգալ քաղաքական կենաց համար• ուրեմն շատ ողորմելի կըլլար մարդ՝ եթէ ամէն մէկը առանձին տալիք ու իրաւու օգնուն չընէին ։ Ասոր համար կըսեն գիտունները թէ մէկ մարդուն ամէն օրուան պէտք եղած բաները՝ հազար ձեռքի կարօտ են, որ ըլլան• զորօրինակ կանեփին հունտը շապիկ ըլլալու համար տէս քանի՞ ձեռք պէտք է• թող ուրիշ բաները։

քարձրութիւնը այս կերպովս։ Որովհետև ուր որ երթար Պօպէնսօն և ինչ որ տեսներ՝ ուշադրութիւն նայելով ինքն իրեն կըսէր, թէ արդեօք կրնայ պիտուական ըլլալ այս բանը։ Առաջուց կղզիին մէկ քանի կողմերը տեսած էր կաւոտ հողեր. տեսած ատենը մտածեր էր թէ աղիւս (քերփիչ) շինէ, անով ալ պատ շինէ երբոր պէտք ըլլայ։ Արին տակը փորելէն ետև այս բանը միտքն ընկաւ. ուստի առաւ բրիչն ու դանակը գնաց կաւոտ տեղը սկսաւ փորել։ Սաստիկ անձրևը կոկըզցուցեր էր հողը, անոր համար հեշտ եղաւ հանել կաւը, և դանակովը քառակուսի ձևացընել։ Այսպէս լաւ մը պատրաստելէն ետև կարգաւ շարեց աղիւսները արեգակին մէջ որ չորնան. միտքը դրաւ մէկալ օրն ալ երթայ աշխատի. յետոյ դարձաւ իր բնակարանը մնացած խորվածն ուտելու համար. բայց բոլոր օրը աշխատանքի մէջ ըլլալով անանկ անօթեցեր էր որ չի կրնար ըլլալ։ Այն օրը ինքն իրեն ուզեց պատիւ ընել աւելի կերակուրով. սեղանը դրաւ մէկ քօքօ ընկուզմը, որ դեռ մնացեր էր քովը քանի մը հատ։

Այս անգամի կերակուրը փաւաւոր եղաւ. սակայն աչքն կըսէր Պօպէնսօն սըրտանց հաւաչելով, կէս մը ուրախ՝ կէս մը տրտում. աչքն իրաւի ձշմարիտ երջանիկ

կըլլայի թէ որ մէկ բարեկամմը ունե-
նայի հոս. միայն մէկ մարդ մը գտնէի՝
մեծ էր ինծի, թէ և ողորմելի մուրացկան
ալ ըլլար, միայն թէ ընկերուն ըներ ին-
ծի. մինակ մէկ հոգի մը ըլլար՝ որ հետը
խօսէի, և ըսածիս պատասխան տար ինչ-
պէս պէտք է։ Գէթ մէկ անասուն մը մէկ
շուն մը և մէկ կատու մը ունենայի մեծ
բաղդ կըսեպէի ինծի. որոնց վրայ նայե-
լով կուրախանայի. և սակայն այսպէս
խեղճ մինակ ըլլալովս ամէնէն ալ զրկը-
ված եմ, ինչպէս միս մինակ ստեղծած
ըլլայի աշխարհքիս վրայ։ Այսպէս խօսե-
լով շատ լացաւ։

Այս միջոցիս մէջ միտքն եկաւ առջի
ժամանակն որ ուրախանալով կըխաղար
իր եղբայրներուն և ընկերներուն հետ,
երբոր հետերնին վիճաբանութիւն և խօ-
սակցութիւն կընէր երբեմն։ Հա այս քաղցը
ընկերութիւը միտքը գալով դառն տրտմութիւ
լեցվեցաւ։ Ո՞ՀՆ կըսէր հիմա ամէն բան
ինծի գէշ կերևնայ, ուր մէկ բարեկամ-
մը կը խնդրեմ չեմ կրնար գտներ, որչափ
քիչ սիրով կըվարվի ուրիշներուն հետ.
հիմա հասկցայ որ մարդուս երջանկութիւը
բաղմութիւն ապրիլն է ընկերութեան մէջ։ Ո՞Հ
եթէ հիմա կրնայի նորէն մանուկ ըլլալ՝
որպիսի սիրով, ի՞նչպիսի ուրախութիւ և
քաղցրութիւ ընկերուն պիտի ընէի իմ եղ-

քայլներուս և ուրիշներուն հետ. քանի՞ սիրով պիտի համբերէի անոնց ըրած պակասութիւնը. իմ սէրս և դութս ամէն մարդկանց պիտի յայտնէի, ամէնքը պիտի պատուէի. ամէնուն ալ ծառայ պիտի ըլլայի։ Ո՞վ ա՜խ՝ ես ինչո՞ւ համար չգիտցայ յարգել բարեկամութիւն մեծուիը. որ այսպէս հեռացաւ իսմէ այս երանուիը. աւաղ որ այն երջանիկ օրերը ձեռքէս թռուցի։

Ասանկ տրտմութիւն աչքը վերցուց դէպ 'ի դուրս նայեցաւ. տեսաւ որ մամուկ մը բնակարանին դռանը մէկ կողմը ոստայն կիր բոյն էր շիներ, սկսաւ ուրախանալ թէ գոնէ կենդանի մը կայ քովս, և ամէն տեսակ կենդանիներէն բոլորովին զրկըված չեմ։ Միտքը դրաւ որ ամէն օր ճանճ բռնէ մամուկին տայ, ու բարեկամութիւն ընելով դրացի երևնայ իրեն, որ իրմէ վախ մը չունենայ, իրեն բարեկամն է. և որչափ կարելի էր ընտանի եղաւ հետը (*)։

(*) Մարդս ընկերական ստեղծվելով՝ բնական է որ իրար սիրեն և օգնական ըլլան. որչափ որ մեծ դժուարութիւն է մարդէ զրկըվիլ անօգնական ըլլալը, այնչափ ալ ինչ ըլլալը չիմացվիր մինչև՝ որ ընկերութիւն չի զրկըվի։ Հպարտութիւնն ու անճանաչիրութիւնը կըպատճառեն, որ մարդ մարդու նախանձելով ատէ. որ է մարդկութիւն դէմ գազանային բնութիւն. ուստի որչափ աւելի քաղաքական ըլլայ մարդ, այնչափ ա-

Երբոր առաւօտ եղաւ, օդը անձրևէն պաղշկած ըլլալով շատ զըւարճալի էր ամէն բան։ Ոսկէնսօն չուզեց մնալ պառկած, ըսելայ թէ ժամանակը կորսընցնելով օգտակար բանի հետ չըլլայ. առաւըրիչը աղիւս շինելու գնաց. բայց ըրիչը գետնին որ զարկաւ՝ կարծր բանի մը եկաւ՝ քիչ մնաց կըկոտրէր։ Երբոր փորեց գետնին մէջէն հանեց՝ զարմացաւ մնաց. տեսաւ որ մեծ կտոր մը զուտ ոսկի է։ Ինչափ մեծ էր որ եթէ կտրըվէր հազարաւոր ոսկի կըլլար. թէպէտ հարստաւ

ւելի ընկերսիրուն հոգին կըտիրէ։ Հին ատենի վայրենի մարդիկ լեռները բնակելով գազանի պէս իրար կուտէին. անոր համար փիլիսոփաները նախ և առաջ անոնց քաղաքականուն սորվեցուցին, որ մարդ մարդու ընկեր և օգնական ըլլալով աշխարհք շինվեցաւ։ Ցմանապէս հիմակվան լեռան մարդիկ քաղաքականուն չունենալով ընկերսիրուն համը չկրնան։ Ափրիկէ Ամերիգա ծառի վրայ կըպառկին. և գազանի նման իրար զարնեն կուտեն. որոնց քով ընկերական սէր չըլլալուն համար գազան կըսեպվին։ Հապա քանի՞ մեծ գազանութիւն է անոնց ըրածն որ ընկերութիւն մէջ մեծնալով՝ ամէն բան գիտեն և քաղաքականութիւնը լաւ կըհասկընան ու իրարու միա կուտեն, մէկմէկ կընախատեն. փոխանակ իրարու օգնելու և իրարու պակասութիւնը գոցելու ինչպէս որ ընկերութիւն օրէնքը կըպահանջէ, իրար կըխորտակեն ու կանտրգեն։ Ասանկներուն կըսեն իմաստունները թէ՝ կամ մարդու կերպարանքդ փոխէ գազան եղիր. և կամ քաղաքական մարդ եղիր եղբայրասէր։ Այսպիսիները Ոսկէնսօնին քովն ըլլային, աղէկ կըճանչնային ընկերսիրութիւնը. մինչ զի մամուկը իրենց մատրիմ բարեկամ կերևնար։

ցաւ Պօպէնսօն, բայց ի՞նչ շահ որ բանի մը չէր կրնար գալ հոն. չէր կրնար իրեն պէտք եղած բաները հոգալ, ո՛չ կրնար տուն շինել, ո՛չ կառք և ձիեր գնել, ո՛չ ծառաներ ունենալ, ո՛չ կենդանի, և ո՛չ կապիկ մը կրնար գնել. ուստի անանկ տեղ մը գտաւ ոսկին որ մարդ մը չիկար որ ցոյց տայ իրեն։

Եւ այս պատճառաւ Պօպէնսօն ուրախանալու տեղը այս գանձին վրայ, իբր ոչինչ բան մը նեղանալով վերուց նետեց. գնա՛ հողին տակը մտի՛ր ողորմելի հանք կըսէր. որ քեզի համար այնչափ մարդիկ զոհ կըլլան, քեզի ցանկանալով կըջարգըվին անարգութիւնք և չարչարանօք։ Ինչո՞ւա պէտք էս, ո՞հ թէ որ քու տեղդ կատոր մը երկաթ գտնէի շատ լաւ էր, որով կարելի էր թէ դանակ մը շինէի. երանի՞ թէ ինձի պիտուական ուրիշ բան ըլլայիր։ Եթէ քանի մը գամ, և մէկ գործիք մը տային ինձի, շատ սիրով կուտայի այս ոսկին։ Անանկ թողուց այն բոլոր ոսկին հողին մէջ ու մէյմալ չի նայեցաւ վրան որչափ որ անկէ անցաւ։

Պօպէնսօն նմանեցաւ Աղոբոսին աքաղաղին, որ մարգրիտ գտաւ ու մէկ դի նետեց ըսելով, թէ ալ աղէկ էր հատ մը գարի գտնէի քան այս մարգրիտը. ուստի ձգեց ոսկին դարձաւ իր բնակարանը.

բայց արեգակը ծովին մեջ մտնելով մարը կըմտնէր. լուսինն ալ անանկ աղուոր ծաղեր էր ծովուն վրայ, որ Լոպէնսօն ըզմայլելով գեղեցկութիւնը՝ չէր կրնար ձգել երթալ, երկար ատեն կեցեր կըզբաղուր. Հանար և նոյն գիշերը չէր ուզեր քնանալ։ Յետոյ կրակը նայեցաւ թէ լաւ կըվառի. քիչմ՚ ալ փայտ դրաւ որ չի մարի, գնաց պառկեցաւ (*)։

Լ. Դիպուած.

Որովհետև այս կղզին սաստիկ տաք կըլլար պէտք էր որ Լոպէնսօն կանուխ ելլէ գործքի հետ ըլլայ առտու իրիկուն. անոր համար արեգակը չելած գիշերանց ելաւ նորէն փայտ դրաւ կրակին վրայ. և կէս

(*) Եւրոպացիք քանի որ Ամերիգա չէին գացեր՝ այնչափ առատ էր հոն ոսկին և անարգ, որ շատ տեղ գետնի երեսը ոսկիի կոտրվանք կային, ու մարդ վրան չէր նայեր։ Ամերիգացիք երբոր տեսան թէ սպանեօլները այնպիսի ցանկութիւն կըժողվեն ոսկին, շատ կըզարմանային, կարծէին թէ ոսկին Եւրոպացոց կուռքն է, անոր համար այնչափ կըսիրեն։ Երբեմն Հայնայ գետին քով մէկ գերի մը նատեր բան կուռեր, դիպուածով գաւազանը գետինը խօթեց. տեսաւ որ կարծր բանի մը դպաւ, հողը հատրաւ՝ որ տակը մեծ կտոր մը ոսկի կայ սեղանի չափ. գերին ուրախութենէն սկսաւ պօռալ. եկան սպանեօլները թափեցան հոն հանեցին ոսկին, ու խոզ մը խորվեցին ոսկի սեղանին վրան դրին կերան. բայց Ամերիգայէն սպանիայի թագաւորին բերելու ատենը՝ նաւը ալէկոծուելով ընկղմեցաւ ոսկին ալ ծովը գնաց. որ 100 հօխայ կուգար կըսեն։

քօքօ ընկուղ կերաւ, որ առջի օրէն մնացեր էր. Եթէ ուզեց լամային մէջն շամփուրն անցընել խորվել. բայց միսը սաստիկ տաքէն հոտած ըլլալով նեռեց. և նոյն օրը առանց մսի անցուց։

Ընկէ Եթէ պատրաստվեցաւ որ կաւէն եղած տեղն երթայ. առաւ տոպրակը ձեռքը, տեսաւ թէ քանի մը գետնիխընձոր մնացեր է տակը, մտածեց որ տաք մոխիրին մէջ թաղէ՝ հասկընայ թէ եփելէն ետև ի՞նչպէս բան կըլլայ. թողուց անանկ՝ ինքը գնաց։ Մինչև կէսօր շատ աշխատանքով հոն պատրաստեց աղիւսը պէտք եղածին չափ վառարանին պատին համար։ Յետոյ գնաց ծովուն քով ոստրէ ժողվելու, թէպէտ խիստ քիչ գտաւ. բայց ուրիշ ուտելու բան մը գտաւ ուրախու�Ք, որ ոստրէէն շատ պատուական էր. վ՞ա՛ պի ծովուն քով գտաւ մէկ մեծ սոսկալի կրիայ (թօսպաղը) մը, որ 40 հօխայ կուգար. թէպէտ այս կենդանիին միսը չէր կերած. բայց լսեր էր թէ խիստ համով աւոդջարար է (*)։

(*) Ովկիանոսին մէջ անանկ մեծամեծ կրիաներ կըլլան, որ վրայի ամանը նաւի տեղ կըգործածեն. մէջը կըմտնեն ադին անդին կերթան։ Ճամբորդները տեսան մեծ կրիայ մը 300 լիպրէ ծանրութիւն։ Մեր մէջեցի Հ. Պօղոս վիգոը տեսաւ հնակատոանու ծովուն մէջ կրիայ մը անանկ անճոռնի մեծութիւն, որ աչքերը միայն սեղանի չափ մեծ կըփայլէին սոսկալի։

Պօպէնսօն կէրպով մը բռնեց կրիայն շալկեց՝ կամաց կամաց տարաւ իր բնակարանը, և կացինով քանի մը անգամ զարկաւ մեռցուց. ետքը հանեց միսը ամանին մէջէն կտոր մը կտրեց խորովելու համար. շամփուրը զարկաւ կրակը դրաւ որ եփի. հոգնելէն ախորժակն ալ խիստ բացվեր էր, բայց համբերեց որ միսը խորվի։

Երբոր շամփուրը կը դառնար սկսաւ մտածել թէ մեացած միսը ի՞նչ ընէ որ չապականի. որովհետև ո՛չ աղ ունէր ո՛չ աման. և գիտէր որ այն փափուկ միսը միւս օրը պիտի հոտի, որ 8 օր իրեն բաւական էր։ Յանկարծ միտքն ընկաւ թէ կրիային վրայի ամանը կրնայ իրեն ծառայել տաշտի տեղ. ես ո՞րչափ յիմար եմ եղեր կըսէր. չի կրցայ խելք ընել, թէ այս ամանին մէջ ծովու ջուր լեցընեմ, միսը մէջն որ դնեմ կրնայ պահվիլ ապականուելէ։ Այս գիւտին վրայ մեծապէս ուրախանալով կը դարձընէր խորվածը, մինչև որ լաւ մը եփեցաւ։ Երբոր Պօպէնսօն կտոր մը փափաքելով բերանը դրաւ կերաւ. ա՜հ ըսելով կը հառաչէր. ա՜ւը էր թէ կտոր մը հաց ունենայի ու այս մսին հետ ուտէի։ Ո՞րչափ անխելք էի մանկու�ատենս որ չէի Հանչնար թէ կը տոր մը չոր հացը ա՜յ մեծ պարգևն է։ Ինչպէս հացով չէի ուզեր ըլլալ՝ երբեմն

պանիր կարագ կուզէի, որ միատեղ ուտեմ. ոչ յիմարուես, հիմա կտոր մը սև հաց ալ չեմ կրնար գտնել, որ մեր պահապան շանը համար կըշինէինք. թէ որ կտոր մը այն հացէն գտնէի երանելի էի։

Երբեմն ասանկ մտածելով կըմաշէր սիրտը՝ միտքն ընկաւ մոխիրին մէջ թաղած գետնիխնձորները. տեսնամ կըսէր ի՞նչ եղան. բացաւ մոխիրն որ՝ այն քարի պէս պտուղները այնպես կակըղցեր էին անոյշ հոտով՝ ի՞նչպէս ուրախացաւ երբ բերանը դրաւ խնձորի պէս կերաւ. զարմանալի համով և ախորժելի եկաւ իրեն՝ որ ասոր նման համով բան չի կայ կըսէր։ Վա՜ղ ի առանց հացի մնալուն համար խիստ աղէկ եկաւ իրեն. որոշեց որ անկէ ետքը հացի տեղ գետնիխնձորը գործածէ։

Կերակուրը ուտելէն ետև քիչ մը պառկեցաւ իր տեղին վրայ, և խոհեմութիւն կը մտածեր թէ ի՞նչ բանի պիտի փակչի. քանի որ տաքը չէր կոխած պէտք էր աշխատիլ. իբր զի՝ ցորեկը խիստ տաք կըներ հոն։ Ընդհանք հիմա ի՞նչ ընեմ կըսէր. մինչև որ աղիւսները լաւ մը չի չորնան արևին մէջ՝ պատը չեմ կրնար շինել. ուրեմն աղէկ կըլլայ երթամ որսորդութիւն ընեմ, մէկ քանի լամա զարնեմ. բայց այնչափ միտը ի՞նչ պիտի ընեմ կըսէր.

թէ որ վառարանս լաւ շինեմ, կրնամ շատ բան չորցընելով պահել։

Այս խորհրդով ցանկեց եւաւ պառկած տեղէն գնաց կրակին քով, մտածեց որ անանկ կերպով շինէ խոհարանն որ ուզած բաներն ընէ։ Տեսաւ թէ մտքին բաները կրնան կատարուիլ, կըսէր թէ երկու ծակ պէտք է պատին երկու կողմը շինելու որ մէջը փայտ մը անցընեմ միսը կախելու համար որ չորնայ. ուրիշ տեղմ՝ ալ շինելու է ապուխտ ընելու համար։ Այս մտածմունքներով խիստ շատ զբաղեցաւ սիրտը. երբ պիտի ըլլայ որ կըսէր աղիւսները չորնան, որ շուտով գործքս կատարեմ. պէտք է սպասել որ արեւը լաւ մը չորցընէ. հապա հիմա կերակուրէն ետեւ ի՞նչ բանի հետ ըլլամ։ Երբոր այսպէս կըմտածէր ուրիշ խելք մը եկաւ իրեն, որ ամէն մտածածներէն շատ դերազանց էր. մինչեւ կըզարմանար թէ իրեն տգէտ միտքը ի՞նչպէս կրցաւ հնարել այս գիւտը։ Էր զի՝ միտք ըրաւ թէ մէկ քանի ողջ անասուն բռնէ դարմանէ, ու իրեն ընկեր ընելով անուշանէ և ընտանեցընէ։

Այց որովհետեւ մինչեւ անասունը լամայէն 'ի զատ այլ կենդանի չէր տեսած հոն, ջանք ըրաւ որ մէկ քանի լամա ողջ բռնէ պահէ. վո՞ զի հեզահոգի կենդանի ըլլալով դիւրին էր ողջ բռնել. թէպէտ

անկար Լոպէնսօնին շատ դժուար էր այս բանը. բայց երբոր մարդ բանի մը վրայ հոգնի կաշխատի՝ հարկաւ գլուխ կը հանէ, անկարելի բան մը չի կայ. ամէն բանին հնարքը գրեր է ուծ մարդկային կարողութիւնը մէջ։

Մինչ կրսէր թէ ես այսպիսի բաներու փորձ ըլլալով ամէնուն խրատ կրնամ տալ, թէ որչափ մեծ աշխատանքի և անհնարին բանի մէջ ըլլայ մարդ, ամենևին պէտք չէ յուսահատիլ թէ չի յաջողի. միայն դիտաւորութիւնը հաստատ պահելով անդադար ջանալու է մինչև որ ուծ յաջողէ. որով ամէն բան կրկատարելի երբոր բարի է վախճանը։ Մատ անգամ մէկ դժուար գործք մը՝ մէկ խելքէ դուրս տարակուսական մտմտուք մը՝ անանկ յաջողութիւն կը ելլայ գլուխ կելլէ որ առաջ անկարելի կերևնար։ Լուրեմն դէշ է դժուար բանի մէջ յուսահատիլ երբոր ծանր տարակուսանք առաջը կելլէ. հապա միշտ մտածելու է, թէ որչափ աւելի ջանանք դժուար գործք մը կատարելու համար, այնչափ աւելի ուրախութիւն կը ելլայ երբ կը մնայ։

Լ. Յոպէս Լոպէնսօն մտածելով կրջանար հնարք գտնել, յանկարծ ուծ միտքը բացաւ, գիւտ մը գտաւ, որ անով կրնար մէկ քանի լամա ողջ բռնել. վռ ալ մտա-

ծեց՝ որ չուան մը ոլորէ ու հանկուց ընե-
լով որոգայթ շինէ, և լամաներուն ան-
ցած տեղը ծառին տակը պահվի. եթէ
անոնցմէ մէկը մոտենայ հոն՝ չուանը վրան
նետէ գլուխն անցընէ։ Ուստի հաստատ
չուան մը շինեց, քիչ ատենին մէջ լմին-
ցուց որոգայթը. փորձեց տեսաւ որ ու-
զածէն աղէկ է։

Բայց որովհետև լամաներուն անցած
տեղը, ուսկից կերթային ջուր խմելու՝
հեռու էր. և չէր դիտեր թէ անասուն-
ները իրիկուան կանցնին. կէսօրն ալ մօտ
ըլլալով միտքը դրաւ թէ մէկալ օրը եր-
թայ. և նոյն օրը սկսաւ Ճամբու պաշարը
պատրաստել. նախ գնաց գետնիխնձոր
բուսած տեղը, ժողվեց տոպրակը լեցուց
բերաւ քանիմը հատ տաք մոխիրին մէջ
թաղեց, որ եփին. մնացածը հոն պահեց
հետևեալ օրուան համար։ Լտքը կտրեց
մեծկակ կտոր մը կրիային մէջն՝ իրիկուան
և առտուան համար, ծովու ջրով ալ լը-
ւաց, որ քովը պահեր էր։ Յետոյ փոս մը
փորեց՝ բան պահելու տեղ շինեց, և հոն
պահեց աղած կրիային միսը. նաև խոր-
ված մսին կէսն ալ հոն դրաւ իրիկուան ու-
տելու համար. փոսին վրան ալ Ճիւղերով
լաւ մը գոցեց։

Կերակուրէն ետև հանգիստ կեցաւ ա-
ռանց աշխատանաց. բայց զբօսանք ընելու

համար Ելաւ Ծովուն քով գնաց Ժուռ գա-
լու, ուր պաղուկ անոյշ հով մը կըփչէր,
որ քիչ մը արեգակին տաքը կըկտրէր։
Յոսկէնսօն ահագին ովկիանոսին վրայ նայ-
ելով կըզըւարճանար. որ Ծովին երեսը
մէկմէկու ետեւէն գալով մանր ալիքնե-
ը, աղուոր կերևնային։

Յանկարծ աչքը դարձուց Ծովուն այն
կողմը ցաւագին նայեցաւ, ուր իր հայրե-
նիքը կկայնի. անանկ սուր երևակայելով
միտքն ընկան սիրական ծնողքն, որ Ծուն-
կերը դողալով սկսաւ լալ դառն արտաս-
ւօք։ Արդեօք հիմա ի՞նչ կընեն՝ կըսէր
իմ խեղճ ծնողքս. արդեօք կապրի՞ն
վշտով և ցաւով, որ ես իրենց պատճառե-
ցի. ա՜հ ո՞վ գիտէ ի՞նչ դառնութիւն իրենց
օրը կանցընեն. քանի՞ խեղճ հառաչեն
կողքան, որ զաւակ մը չունին. ի՞նչ կըս-
կիծ է որ սիրական պզտի որդին մատնիչ
եղաւ իրենց, ու ձգեց զիրենք անդառ-
նալի հեռացաւ։ Ո՞վ բարի քաղցր հայրիկ,
և սիրելի գթած մայրիկ, ա՜հ ներեցէ՛ք
ինձի կաղաչեմ. թողութի՛ւն ըրէ՛ք ձեր ան-
բաղդ ողորմելի զաւկին, որ այսչափ ձեզ
վշտացուցի։

Դուն ալ ներէ՛ ինձի հա՛յր երկնաւոր.
մի միայն տէրս և թագաւորս, թողութի՛ւն
տո՛ւր մեղացս՝ իմ մինակ պաշտպան և ա-
պաւէնս։ Որէն ընկաւ երեսի վրայ՝

թեւերը վեր վերցուցած կաղաղակէր. ով ստեղծող թագաւոր՝ թափէ՛ վրաս երկնային օրհնութիւդ. շնորհէ՛ ծնողացս այն միխիթարութիւնն որ սահմաներ էիր ինձի համար՝ որուն ես վիս արժանի չըրի. վա՜ վի մեծապէս դառնացուցի սիրական ծնողքս և չարաչար վշտացուցի։ Ո՞հ ասկէ ետև բոլորով սրտով կընդունիմ ի՛նչ պատիժ և նեղութի՛ ինձի խրկէ անհուն իմաստութիդ իմ փրկութես համար. միայն թէ անմեղ ծնողքս բարի և երջանիկ ըլլան։ Ելիշմը ատեն ալ ծնկան վրայ կեցաւ լուռ, աչքերը արտասուալից խեղճութիւնքը վերցուցած։ Լտքը եւլաւ անկէ գնաց ծառի մը կեղեւին վրայ փորեց քարէ դանակովը հօրն ու մօրը անուններըը. և վրան ալ գրեց այս խօսքս. ՁԾ ՅԷՂ ՕՐՀՆԷ։ Յանին ալ այսպէս գրեց. ՆԵՐԵՑԷ՝ ՅԷՐ ԿՈՐԾ ՈՐԴՈՒՆ. յետոյ ջերմեռանդ սրտով պագաւ ծնողացն անունը, արտասուօքն ալ թրջեց։

Ընկէ ետև կղզիին զանազան տեղեր շատ ծառերու վրայ փորելով գրեց այս սիրական անուններըը այն բառերով։ Եւ այն ծառին վրան ալ գրեց որ շատ անգամ հոն կերթար աղօթք ընելու, ոնգ ղի յաշխարհս տեսնելով գիրը՝ չի մոռնայ ծնողքը (*)։

(*) Ռոպէնսոն այս գործքս՝ ոչ միայն սրտին կըսկիծուն կընէր, հապա բնութիւը երեն ընել կուտար. վա

Ահա ՅԾԱՅԻՆ նախախնամութիւնը առաջուց գիտնալով գալիքները լաւ կրճանչնայ ամէն մարդուս օգուտը, ամէն բան կըկարգաւորէ։ Ուստի այս խեղճ պարագաները տես թէ ինչպէս կակըղցուցին Ադամայ ինամին սիրտն որ ՅԾԱՊԱՇՏ ԸՆԼԱՅ, և առաքինի. կրնար ընլալ որ ուրիշ պարագաները սիրտը պաղեցընէին. հիմա որ այս կղզիին մէջ ասանկ հոգևոր է, ոչ գիտէ թէ հօրը տունն որ մնար՝ չար օրինակներ տեսնելով ինչպէս պիտի ապականէր։ Ուրեմն ՃՇՄԱՐԻՏ ԵՆ այս խօսքերս. ով որ բարձր է՝ պէտք է զգուշանալ որ չինի։ Ինչ որ կըխորհէ ՅԾ բարի է։

Երբոր Ադամայ ծովուն քով մէկ դիէն մէկալ դին ժուռ կուգար. մտածեց որ ծովը մտնէ լուացվի, լաթերն որ հանեց տեսաւ թէ միայն շապիկը մնացեր է. խիստ շատ տրտմելով խուռվեցաւ. վա՜ զի

զի ՅԾ ամէն մարդու սրտին մէջ գրերէ բնական օրէնք, թէ ՅՅՄԷ եաւ պէտք է ծնողքը սիրել պատուել. ով որ ասոր դէմ կընէ՝ մարդ չէ, և մարդկուէ դէմ կընէ. ուրեմն բարի ընլալու համար պարտական է ամէն զաւակ ծնողացն օրհնութիւնը առնել։ Ահա յայտնի եղաւ, թէ ամէն քաշածներէն ծանր եղաւ Ադամայ ծնողաց կսկիծը և անոնց համար ունեցած խիղճմտանքը։ Վա՜ զի ծնողքին քաղցրութիւնը ոչ չափ մեծ ընլալը կորսընցնելէն եաւ կիմացվի. բայց ինչ օգուտ. թող Ադամայ իրենց ուսուցիչ ընլայ, որ ծնողաց յարգութիւնը գիտնան քանի որ ձեռքերնին է. աղէկ պատուէն և օրհնութիւնին առնեն. թէ չէ՝ եոքի զղջումը օգուտ չունի։

երկար ատեն միշտ հագած էր լաթերը այնպիսի տաք տեղ, մինչև մաշելով թափեցան վրայէն. շապիկն ալ անանկ եղեր էր, որ սևցած աղտոտ քուռչ էր դարձեր։ Ուստի ծովը չմտած շապիկը լուաց ծառին վրայ փռեց, ու ցաթկեց ծովը մտաւ։

Որովհետև մանկութենէ ատենը լողալ սորվեր էր. հոս ալ լողալով կը զբաղուէր։ Ընդին ցամաք ելեղու մը կար դէպ 'ի ծովն երկնցած՝ գնաց հոն ելաւ, որ չէր տեսած. սակայն շատ լաւ եղաւ հոն երթալը. վասն զի մակընթացութենէ ատենը ծովը կրկոխէ այս ցամաք ելեղուն. երբոր ջուրը կը քաշվի՝ կը մնան հոն շատ կրիաներ՝ ոստրէներ՝ խեցի և այլն։ Ասպէնսօն թէպէտ անատենը շատ կարօտութիւն չունէր ասանկ բաներու, որ բաւական ուտելու բան ճարեր էր. սակայն շատ ուրախացաւ այս նոր գտած բաներուն վրան ալ։

Այս լողացած տեղը խիստ առատ էին ձկները, անանկ շատ որ կրնար ձեռքով ալ բռնել. թէ որ թօռ մը ունենար հազարաւոր կը բռնէր։ Իրաւի գործիք չունէր. բայց որովհետև ինչ բան որ ջանաց շինել՝ յաջողեցաւ, անոր համար միտքը դրաւ՝ թէ ժամանակով ձուկ բռնելու թօռ շինէ՝ որսորդուն ալ ընէ։ Այսպէս զբաղանալով ժամ մը մնաց ջրին մէջ եռքը ցամաքն ելաւ։ Երևին տաքութիւնը

չորցուցեր էր շապիկը. շատ ուրախացաւ թէ մէկ անգամմ՝ ալ Ջերմակ կտաւէ շապիկ հագայ։ Բայց վա՜ղ կի սովորուի ունէր որ ամէն բան մոռանէ. երբոր մտմըտաց թէ մէկ շապիկ մը ունիմ, պէտք է միշտ այն հագնիմ, ոչ հնարք կայ ուրիշ ունենալու, և ոչ յոյս նորոգելու։ Այս մտմըտուքով սիրտը կոտրեցաւ, ուրախութիւնը բոլորովին տրտմութիւն փոխուեցաւ։ Սակայն սիրտ առնելով լաթերը հագաւ, գարձաւ իր քնակարանը ասանկ երգելով. օրհնեա՛ անձն իմ զտէր յամենայն ժամ, և այլն։ Յետոյ իրիկուան կերակուրը կերաւ պառկեցաւ (*)։

(*) Ռոպէնսոնին Ճամբորդութիւնը և առջի գլխուն եկածները լսելով բարեկամ տղաքները՝ իրեն թուղթ կրգրեն, թէպէտ չիյայէն ուր ըլլալը. սակայն պատմիչը ձեւացընելով հոս է գրեր։

Սիրելի Ռոպէնսոն.

ա. Աշխարքիս գիպուածը բերաւ որ դուն պէսպէս նեղութեց մէջ կենելով համբերուն սորվիս. և բարի ըլլալով ամէն բարեկամներու և ծնողացդ ուրախութիւն ըլլաս։ Լաւ հասկրցար թէ հարկը օրչափ օգուտ կրբերէ մարդուս։ Ուստի սրտանց քեզ կողջունեմ. նոյնպէս ընկերներս ալ կրյարգեն սիրով. ամ օր կուզայ որ իրար կրտեսնենք, և տուելն սիրով կրմտերմանանք։ Ողջ լեր։

Ամստրդամ։ Ն. Ծ. Լիզէր։

Ը. Դիպուած.

Աղաւօտուն կանուխ Եղաւ Յովհաննէս պատրաստվեցաւ որսի երթալ, դրաւ ասպրակին մէջ քանի մը եփած գետնիխնձոր, կաղր մը խորված միս, որ փաթթեր էր աւերևնեբուն մէջ. յետոյ կապինը մէջքը խօթեց, շինած չուանն ալ մէջքը փաթթեց՝ որ լամա բռնելու համար որոգայթ պիտի ընէր. Հովանոցը ձեռքն առաւ ելա.

Պատուական Եղբայր.

Ք. Մենք ի՞նչ մեր կարեացը՝ միշտ կըբաղձանք քեզ երջանիկ տեսնել. մինչ զի՝ եթէ կարողուն ունենայի ամէն հարկաւորութիւդ կրհոգայի, որ դաս. սակայն դուն միշտ բարի կացութիւնդ մէջ եղիր, ինձ ողորմած է: Դաւ Լանա մարմնոյդ առողջուին ալ պահես որ չի հիւանդնաս. չիյտեմ ինչպէս ես. ինձ աղէկ ընէ. Լաւ գիտես որ սրտանց կըսիրեմ քեզ և հաւատարիմ բարեկամ եմ: Ո՛ղջ լեր սիրելի Յովհաննէս:

Ամպոսի: Ն. Ծ. Թէոդորոս:

Եղբայր իմ.

Ֆ. Մեծ տրտմուն բերին ինձի քաշած նեղուններդ օտարուն մէջ. թէ որ ծնողացդ տունը նստէիր՝ այդ բանները քեզի չէին պատահեր: Ինչ հետդ ըլլա որ շուտով դառնաս սիրական ծնողացդ գիրկը. նորէն կըսեմ. ինձ հետդ ըլլա. ողջ եղիր. միամիտ քեզ հաւատարիմ ընկեր:

Ամպոսի: Ն. Ծ. Նիկոլաս:

կըսաւ երթալ։ Բայց խիստ կանուխ ըլ-
լալուն ուզեց այս անգամ քիչմը պտըտե-
լով կղզին մէկալ դին ալ տեսնէ հասկը-
նայ։ Տեսաւ որ բոլոր ծառերուն մէջ լե-
ցուն թռչուններ էին զանազան գունով.
տեսաւ թութակներ զարմանալի գեղե-
ցիկ և նաշխուն։ Շատ փափաքեցաւ որ
ասոնցմէ քանի ընտանեցընէ որ իրեն ըն-

Մեծապատիւ Ռոպէնսոն.

Դ. Ցաւ է ինձ անգադար. կողքամ վրադ, որ
այսպէս հեռացար ամէնէս. լաւ գիտեմ թէ հիմա
սրչափ զղջացեր ես ըրած բանիդ համար. տէրը հետդ
ըլլա. ես բոլորով սրտով կըցանկամ որ ողջ առողջ
դառնաս ազնիւ ծնողացդ տունը։ Հանապազ յու-
սով ձայ ապաւինիս անպակաս, քեզ լաւ կըհոգայ ո-
ղորմածը ուր որ ըլլաս։ Ահա կրկին կըսեմ ողջ լեր
իմ սիրելի։

Ամպոսրի։ Ն. Ծ. Յովհաննէս։

Ազնիւ Ռոպէնսոն.

Ե. Գիտեմ թէ ինչպէս ես օտարուն մէջ. յայտնի
է թէ աշխարհքներուն ճոթը պէսպէս նեղուէց մէջ
ընկար. շատ կըբաղձայի գիտնալ, թէ որ կղզին մէջ
ճնացեր ես։ Այդ կողմերը շատ ոսկի կըգտնըվի.
թէ որ անոր համար գացիր նէ՝ գիտնաս որ ոսկին
մարդկուրթէ շահ չունի. որչափ շատ ոսկի ըլլայ, ոչ
բարի կրնայ ընել մարդը, և ոչ երջանիկ։ Շատ ա-
ղէկ էր խելքի և իմաստուրթէ եռանէն երթայիր քան
թէ ոսկիի։ Ողջ լեր։

Ամպոսրի։ Ն. Ծ. Եռրիկոս։

կերը ըլլան, բայց հնարքը չիկրցաւ գտնել. նաև բոյն մը չիգտաւ որ ձագերովը վերցըներ տաներ. ուստի հարկ եղաւ որ այս փափաքը ուրիշ ատենի ձգէ։

Այսոր տեղը ուրիշ զարմանալի բան մը գտաւ, որ թուխակէն շատ հարկաւոր էր. վո՞ւ չի եկաւ մէկ բլուրի մը վրայ ծովուն մօտ, վար նայեցաւ որ տակը խոռոչ փոս մը կար. հոն աչքին բան մը դպաւ՝ մէկէն ձեռքով ոտքով ճար ըրաւ հոն ինչաւ, տեսաւ որ աղ կայ՝ ահա անպատմելի ուրախութիւ՛ն լցվաւ, որ ոչ մարգրիտի հետ կը փոխեր և ոչ գոհարի։ Մինչև ատենը ծովուն ջուրը աղի տեղ կըգործածէր. բայց լեղի ըլլալուն համար դառն էր խիստ. և այս ջրով երկար չէր կրնար պահվիլ միսը. վո՞ւ չի երբ ծովուն ջուրը անշարժ տեղ մը կըկենայ շուտով կապականի։ Այսոր համար շատ մեծ բան եղաւ Ռոպէնսօնին աղը գտնելով. որ մէկէն լեցուց երկու ծոցը իր բնակարանը տանելու համար (*)։

(*) Աղը որչափ աւելի հարկաւոր է մարդուս, այնչափ աւելի զարմանալի է ճծային նախախնամութիւնն, որ այսչափ առատ ամէն տեղ ստեղծեր է. ոչ միայն լեռներէն քարի պէս կելլէ շատ տեղ, այլև ծովու ջրէն ալ կըշինեն վէնէտիկ՝ յունաստան և այլն։ Այսպէս եղեր էր Ռոպէնսօնին կղզիին մէջ. վո՞ւ դի տալիքներուն ջուրը ոյն խոռոչներուն մէջ լեցվելով՝ արեգակին տաքութի՛ւն ջուրը կըքաշվի աղը կըմնայ։

Լոպէնսօն դնաց հասաւ լամանէրուն անցնելու տեղը նայեցաւ որ բան չի կայ. դեռ կէսօր չէր եղած, նստաւ ծառի մը տակ կրսպասէր. հանեց աւսպրակէն պաշարը՝ խորված միսն ու պետնիխնձորը՝ երբոր աղը թաթխելով կուտէր ի՞նչ սքանչելի համ կառնէր. կերակուրին ետև լամանէրն երևցան հեռուէն. որ խաղալով ցաթկելով կուգային ջուր խմելու։ Լոպէնսօն մէկէնիմէկ ծառին ետևն անցաւ՝ որոգայթը ձեռքը պատրաստ կրսպասէր, որ մէկը անոնցմէ հոն մօտենայ։ Շատը եկան անցան առանց մօտենալու. ետքէն մէկն եկաւ երբոր հոն մօտեցաւ՝ յանկարծ նետեց որոգայթը լամային վրան, չուանը վիզն անցաւ բռնըվեցաւ կենդանին. Լոպէնսօն լաւ մը կապեց, ու խօթեց բոյսերուն մէջ, որ մէկալնոնք չի տեսնեն ու փախչին, և ձայնը առնելով վախնան։

Այս բռնած լաման էգ ըլլալով երկու պզտի ձագ ունէր, որ իրենց մօրմէն չի զատվեցան ետևէն գային. Լոպէնսօն տեսաւ որ իրմէն չէին փախչէր, շատ կուրախանար և սիրելով գիրկը կառնէր. ձագերն ալ մօրերուն սիրուն կըլլէին ձեռքը. իբր թէ կը խնդրէին որ թող տայ վիրենք մօրերնուն քով կենալ։ Լոպէնսօնին ուրախութիւնը անպատմելի եղաւ, որ բաղձանքին հասաւ. ուստի ամ զգուշութ

բռնեց լաման կրտանէր. թէպէտ կէնդանին վերվեր կրցաթէր չէր ուզեր երթալ. բայց քաշեց տարաւ կարձ ձամբայով իր բնակարանը. ձագերն ալ եւ տէրն գացին։

Հիմա դժուարութիւնը մնաց, թէ ինչպէս պիտի լաման պատէն անցընէ բնակարանը խօթէ. որ ամէն կողմէն ամուր գոցած էր. եթէ վերէն ժայռին վրայէն չուանով ինջեցընէր՝ կը վախնար որ չի խղդըվի կէնդանին։ Երջապէս բնակարանին քով ծառին կապեց լաման. և մտածեց թէ չորս դին բաներ անկէ ախոռ շինէ. մինչև որ յարմար եղանակ մը գտնէ ներս առնելու։ Այս գործքիս համար շատ ճիւղեր կտրեց և մանր ծառեր հանեց չորս դին անկեց. և իրար կապելով պատ ձեւացուց. լաման անոր մէջ մնաց ձագերովը, որոնք չիյտէին թէ բռնըված են. մօրերնուն կաթն ուտելով գեղեցիկ կըզբաղձանային։

Անանկ սքանչելի աղուոր կերևնային Ռօպէնսօնին, որ անդադար կենար ձագերուն վրայ կըզմայլեր, ու ամէն բանէն մեծ կըդներ անոնց ընկերութիւնը. իրեն կերևնար թէ՝ այլ մինակուն խեղճուն աղատեցաւ. նաև սրտին մէջի ցնծութիւնը անանկ ուժ զօրութիւն տվաւ իրեն, որ քիչ ատենին մէջ ախոռը շինեց լմընցուց.

գուռն ալ ձիւղերով լաւ մը գոյեց. ինչ զըարձուԹիւն եղաւ իրեն անատենը՝ չի պատմըվիր. անկէ ետքը իբրև տանուտէր քաջ և խոհեմ կըկառավարէր զանոնք։ Ընտարբեր լամաներուն հետ ընկերուԹի կընէր, իբր Թէ մարդ ըլլային, որ իրեն առջին այնպիսի անգին գանձ կերևնային. մինչև միտքը դրեր էր՝ Թէ շատ մեծ օգուտներ կրնայ հանել անոնցմէ։ Ու իրաւունք ունէր ասոնք մտածելու. վասն զի ժամանակով կրնար անոնց բուրդէն հագուստ շինել, և կաԹովը կրնար կոգի պանիր շինել։ Մանպէտ չիյտեր Թէ ինչ կերպով այս հեռու գործքերը կըկատարվին. բայց փորձելով տեղեակ եղեր էր, Թէ յուսահատուԹիւնը աղէկ չէ, պէտք է միշտ ջանալ. ինչ բան որ միտքը կը դներ՝ անձանձրոյԹ ետևէն ըլլալով կըկատարվեր։

Մօտէնաւնին հիմա մէկ բան մը պակաս մնաց, որ սրտին փափաքը կատարվի. վո՞ զի կը ցանկար որ լամաները իր բնակարանին մէջն ըլլան. որ սիրունները միշտ աչքին առաջն ըլլալով զըարձանայ անոնց հետ, և իրենց ընկերուԹիւն ընել սորվեցընէ։ Երկար ատեն կը հոգար Թէ ինչպէս կարենայ այս փափաքին հասնիլ։

Վերջապէս գիւտ մը գտաւ՝ որոշեց որ իր բնակարանին մէկ կողմը բանայ, ու քովէն ուրիշ ծառէ պատմինալ շինէ որ ա-

ւելի մեծնայ. լամանեբուն ալ բնակարան ըլլայ, իրեն ալ աղէկ ըլլայ։ Այս ոտ զի՝ ապահով կարենայ բնակիլ. մինչև որ չի լմընցուց այս նոր շրջապատը, չի բացաւ առաջվան պատն ալ ինաս մը չի գայ իրեն։ Զարմանալի եղաւ Յոսէնսօնին աշխատանքը. որ առանց հոգնելու քանիմը աւուր մէջ կատարեց գործքը։ Երբոր գըրաւ հոն լամանները՝ իրեք ընկերով տուն մը եղաւ. սրտին ուրախութէն չկրցեր թէ ի՞նչ ընէ։ Այաև չի ձգեց իր առջի ընկերն՝ որ մամուկն էր. միշտ կընայեր, ամէն օր ձանձ բռներ կուտար իրեն. մամուկն ալ տեսնելով թէ բարեկամուն կընէ հետը՝ Յոսէնսօն քովը մօտեցածին պէս վազեր կուգար բերնովը կառներ ձեռքէն ձանձը։ Այնպէս լաման իր ձագերովը շուտով ընտանի եղաւ Յոսէնսօնին. անանկ որ երբ կըզգային թէ պիտի գայ բնակարանը՝ ցաթկէլով դէմը կելլէին ու հոտվըտալով կընայէին թէ իրենց բան մը բերաւ։ Ամէն անգամ որ խոտ կամ տերև կուտար իրենց՝ ձեռքը լզելով իրը թէ շնորհակալ կըլլային։

Անկէ էտքը իրիկուն առտու ձագերը մօրմէն զատելով կըկթէր լաման՝ քօքոյին ամանները մէջ կըլեցրնէր և իրեն առանձնուելը պէտք եղածին չափ՝ կէս մը անանկ կուտէր, կէսմ՝ ալ մածուն կը-

շինէր։ Եւ որովհետև քօքօ ծառը այն-
չափ պիտուական էր իրեն, և մէկ հատմը
էր՝ կուզէր շատցընել. բայց չէր գիտեր թէ
ինչպէս ընէ։ Լսեր էր թէ պատուաստ
(աշ) կընեն ծառերը. սակայն չէր գիտեր ը-
նելու կերպը. անոր համար սիրտը ան-
հանգիստ կըհոգար։ Իւր անդամ կը-
սեր հառաչելով. հաղար ափսոս իմ ման-
կու�էս գեղեցիկ օրերուն, որ բան մը չեմ
սորված. մէ՛ղք այն առիթներուն որ զիս
չի կրթելով կորսընցուցի։ Ո՛հ եթէ
գիտնայի իմ շահս, փուճ բաներու ետևէ
ըլլալով չէի կորսընցներ ժամանակս (*)։

Եթէ խելքս օգտակար գիտութեանց
ետևէն ընէի, բան սորվել ջանայի, հի-
մա ունեցած խելքս ինձի լոյս կուտար.
ո՞հ երանի՞ թէ նորէն մանուկ ըլլայի, ու
խելացի բաներու ետևէն ըլլալով իմաս-
տուն մարդիկներէն բան սորվէի։(**). Ը-

(*) Հին փիլիսոփաները այնչափ մեծ կըդնէին ժա-
մանակն, որ մէկ րոպէն բոլոր աշխարհք կարժէ կը-
սէին. շատ մեծ յանցանք էր կտոր մը ժամանակ փու-
ճը անցընել. վասն զի շատ անդամ մէկ րոպէին մէջ
մեծամեծ գործքեր եղած են. շատ մարդ մէկ րոպէն
չի նայելով մեծ բանէ զրկըված է։ Անոր համար
տարիքն առած մարդիկ շատ կըցաւին անցած ժա-
մանակին վրայ. բայց անցնելէն ետև օգուտ չիկայ։

(**) Ամօթ անանկ տղոց, որ գիտուններուն քովէն
հեռու կըփախչին ու փուճ բաներու հետ կըլլան.
Ռոպէնսոն իրենց խրատ ըլլայ. որ փորձով հասակը-

ւեստ չէր մնար որ չի սորվէր։ արուեստաւոր մարդկանց եռեւէն կվազէր որ բանի տեղեակ ըլլամ։

Սակայն ասանկ պարապ տրտունջները ի՞նչ օգուտ կրնային ընել Լոպէնսօնին. որ ժամանակը անցուցեր էր, այս պակասունց դեղը հատեր էր։ Ա.ւելի հարկաւոր էր ջանք ընելով գիւտ հնարել կարօտը լեցընել, որ բան չգիտնալուն համար կըտանջըվէր. բայց ջանալով ասոր ալ ճարը հնարեց։ Ա՞ն պի անգէտ ըլլալով խելք բանեցուց, կտրեց մէկ երկու մատղաշ ծառերուն ծայրերէն. և մէջ տեղը բարակ ձղքեց՝ ու մէկ ճիւղ մը քօքոյէն պատուաստ (աշ) ըրաւ. ետքը փաթթեց բարակ տերևով պատուաստած տեղը. միշտ կըդիտէր թէ ե՞րբ կըծլի։ Շատ ջանցաւ ճիւղերն սկսան ծլիլ. անանկ որ պատուաստները քիչ ատենին մէջ աճելով քօքօ ծառի անտառ ձևացան։ Ա.հա նոր ուրախութիւն Լոպէնսօնին, և նոր առիթ աւելի ջերմեռանդ ըլլալու, նաև շնորհակալութիւն ընելու ՏԾային բարուէն՝ որ այն զարմանալի զօրութիւը և աճողական յատկութիւնը տվեր է բոյսերուն. որպէս

ցաւ որ եթէ խելացիներու հետ նստէր ելլէր՝ խելացի կըլլար. բայց անխելք բաներու հետ ըլլալով՝ անխելք մնաց. և եթէ պիտանի գրքեր կարդար, բան սորված կըլլար. ջնելուն համար ասանկ եղաւ։

զի կենդանի արարածք պակասութիւն մը չունենան պահվելու, և հանգիստ վիճակ ունենալու։

Իսկ լամաները մեծ ու պզտիկ անանկ ընտանի եղան, ինչպէս որ հոս շունն ու կատուն ընտանի են։ Սկսաւ նաև գործածել լաման հանգստուն համար վրան բեռ բարձընելով. որովհետև իրեն շատ դժուար էր բեռը շալկել բերել. երբոր կերթար բան բերելու, լամային կըբեռցընէր։ Բայց այս նոր շինած պատին քով շատ մանր ծառեր կային հոն ծակ մը թողուց դուռ շինեց, որ հապիւ մէկ լաման մը կըրնար անցնիլ։ Այս դուռը դրսէն չէր երևնար, ներսէն ալ լաւ մը հիւսելով դոցեց։

Հա գեղեցիկ տեսարան մը. երբ Իսոպէնսօն կըդառնար բնակարանը՝ լաման տիրոջմէն առաջ կըվազէր. վա՜ զի խիստ աղէկ սորվեցաւ ճամբան. և երբ կըմօտենար դռանը՝ կը կենար որ բեռը վրայէն ետ առնէ. յետոյ ցածնալով դռնէն ներս կըմտնէր։ Իսոպէնսօն ալ ետևէն կըմըտնէր։ Նատենը տեսնելիր, թէ ի՞նչ ուրախութի՞ն կըլլար ճագերուն՝ մօրերնուն հոտն որ կառնէին. որոնք իրենց զըւարճութիւնը յայտնելով վեր վար կըցատկէին կըխաղային. մէյմը մօրերնուն քով կըվազէին ուրախանալով, մէյմը Իսոպէնսօնին վրան

կերթային քսելով կըսիրեին։ Ընտալ մեծապէս կըզբաղանար անոնց ուրախութիւնը վրայ և կըգրկեր. ինչպէս հայր մը երկար ժամանակ հեռանալէն ետև զաւակներն որ տեսնէ՝ գիրկը կառնէ սիրելով կուրախանայ անոնց զբաղանքը (*)։

Իսկ Իւսդինոսն տեսաւ թէ շինած ա-

(*) Ըստ բնաբանից անասունները մէկ անկատար ճանաչում մը ունին. որ երբ մէկէն երախանք մը կըտեսնեն, չեն մոռնար՝ կըսիրեն. ինչպէս որ շատ զարմանալի օրինակներ կան. որ՝ Հին ատենը Անդրոկղոս անունով մէկ ծառայ մը Աֆրիկէ առիւծի մը կըպատահի. որուն ոտքը եղէգի կտոր մը մտած էր բաչաբար վիրաւորեր էր։ Այս մարդը առիւծին խեղճ ձայնին չդիմանալով գնաց քովը հանեց փուշը, վերքն ալ կապեց լաւցուց։ Ատեն անցաւ այս առիւծը բռնեցին ընծայ տարին Հռովմ։ Մարդն ալ Հռովմ գնաց. ու յանցանքով մը երբոր բռնեցին հրապարակին մէջ առիւծին առաջը ձգեցին որ պատռէ. նայիս առիւծը ճանչցաւ գնաց քովը սկսաւ լզելով սիրել իր բարերարը։ Զարմացան ամէնքը. բայց թագաւորը երբ պատճառն իմացաւ՝ ազատեց մարդը, առիւծն ալ զարգարեցին։ Այսպէս մէկ շուն մը ազատեց իր տէրը, որ Ալբեան լեռներուն վրայ ձիւնով պատած ըլլալով երբոր կերթար, քիչ մնաց սոսկալի բարձր տեղէմը վար պիտի իյնէր, շունը խածաւ լաթերէն թող չտվաւ որ առաջ երթայ. մարդը հասկըցաւ վտանգն, ու ետ կեցաւ ազատեցաւ։ Շատ մեծ բան էր և այն երախտապէտ շանը գործքը. երբ իր տէրը կամեցաւ գետը մտնել լըւացվիլ, չկրնար թէ ջրին մէջ կոկորդիլոս գազան կայ. բայց շունը զգաց, ու շատ անգամ տիրոջը լաթերէն խածաւ կըհանէր գետին վրան, թող չէր տար որ գետը մտնէ. երբ տեսաւ թէ տէրը լաթերը հանեց պիտի ջուրը նետվէր՝ շունը նախ ցաթիկեց ջուրը. մէկէն գազանը զինքն յափշտակեց, տէրն որ տեսաւ զարմանալով շանը գործքին վրայ՝ շուտով փախաւ անկէ։

ղիւանները լաւ չորցած էն, կրնար վառա-
ռանին պատը շինվիլ, ուղեց արևին տաքը
անցնելէն ետև շինել. ուստի նախ շինեց
տափակ քարէ ծեփիչ մը, կաւն ալ շաղ-
վեց պատրաստեց. նաև հաւատարչափ
կանոնմը շինեց, որ պատը շիտակ ելլէ։
Եւ այսպէս պատ շինելու ամէն հարկա-
ւոր պատրաստութիւնները լմընցնելէն
ետքը՝ աղիւսները բեռցուց լամային՝ բե-
ռաւ կրակ վառած տեղը. բայց թէ ինչ
կերպով բեռցուց, շատ զարմանալի բան
է։ Իբր վի միշտ կըմտածէր որ կողով
(սեփէթ) շինելը խիստ հարկաւոր է
իրեն. բայց մանկութեան ատենը ա-
նանկ անհոգ էր որ ամենևին մէկ բանի
մը ուշ չէր դրած թէ ինչպէս կը շինեն.
որ թէպէտ մեծ բան մը չէր, սակայն ին-
քը անհոգ ըլլալով կերպը չիյտէր, որ այս
հարկաւոր բանը կատարէ։ Եւ որովհետև
հովանոցն որ շինեց՝ մտմրտալով յաջողե-
ցաւ, անատենէն ետև միշտ բանի մը հետ
ըլլալով ժամանակը պարապ չէր անցըներ.
ուստի սկսաւ մտածել կողով շինելուն
վրայ, մինչև փորձելով ջանալով կերպը
գտաւ, հաստատ կողով մը շինեց. ետքը
մէյմ՝ ալ շինեց՝ երկուս ըրաւ իրար կա-
պեց չուանով՝ լամային վրայ դրաւ, որ
երկու կողմէն կըկախվէին։

Ահա այս կերպով բոլոր աղիւսները

կրեց բերաւ հոն, և սկսաւ վառարանին պատը շինել. առաջ մէկ կողմը շինեց, մէկալն ալ սկսաւ բարձրացնել. բայց նոյն գիշերը դիպուած մը պատահեցաւ իրեն որ խելքը գլխէն տարաւ։ Այսն զի ցորեկը աշխատանքէն հոգնած ըլլալով՝ երիկունը գնաց տեղը հանգիստ պառկեցաւ. լամաներ ալ ոտքին տակը պառկած էին. լուսինը գեղեցիկ պայծառ ծագեր էր. օդը մաքուր պարզ. հով բան չըլլալով ձայն ձուն չի կար։ Ալօպէնսօն անոյշ կը քնանար. և ինչպէս որ սովորութիւն ունէր՝ երազին մէջ սիրական ծնողքը տեսաւ. երբոր մօտեցաւ իրենց, յանկարծակի որոտում մը եկաւ անանկ ահագին սոսկալի, որ ուչ եղեր է և ուչ լսված է. ինչպէս պիտի պատմենք հետևեալ դիպուածին մէջ։

Ա. Դիպուած.

Ինչպէս ըսինք՝ Ալօպէնսօն երբոր անոյշ քունին մէջ սիրական ծնողքը կըտեսներ, օդը պարզ աղուր, լուսինը պայծառ, յանկարծ գետնաշարժուն մը պատահեցաւ անանկ ահեղ սոսկալի՝ որ չէ լսված. նախ ահագին որոտում մը եղաւ կարգէ դուրս. զարմանալի փոթորիկներ գոչում ներ մէկէն լսվեցան. երկինքը կրակի

պէս փայլատակելով կայծակ կը հանէր։ Ալսպէնսօն գողալով արթնցաւ վեր ցատկեց՝ չէր գիտէր թէ ի՞նչ եղաւ և ի՞նչ պիտի ըլլայ։ Այն կէտին մէջ գետինը սոսկալի կը շարժէր. ահռելի որոտում մը գետնին տակէն լսվեցաւ. իսկ զարհուրելի փոթորիկն որ եղաւ ծառերը և ժայռերը շրջեց. մինչև ծովուն անդունդին տակէն ալ գոռալու ձայներ կելլէր աշխարհք կը դողացընէր. կարծէիր թէ բոլոր տարերքը իրարու հետ կռիւ կընէին. և կերևնար թէ ամէն բան պիտի կործանի (*)։

Ալսպէնսօն յանկարծակի զասոնք լսելով կիսամեռ դուրս ցատկեց բնակարանէն սկսաւ խենդի պէս փախչիլ. լամանները ալ վախերնուն ետևէն կը փախչէին։ Հազիւ թէ անկէ դուրս էին ելեր, լեռան մէկ կտորը փրթաւ ընկաւ Ալսպէնսօնին պառկած տեղը. որ սաստիկ վախուն թրջուելի պէս կը վազէր. նմանապէս լամանները ալ խառնված կը փախչէին։ Որեն առջի մտածմունքն եղաւ վազել ելլել մօտ եղած լեռանը վրայ. որուն վրայ դուրս

(*) Ալսպէնսօն օրագրուէը մէջ կըսէ, թէ ծովուն խառվելը ցամաքէն աւելի էր. անանկ գոռալու ձայներով կելեբար ահագին ովկիանոսն որ՝ վախէս լեզուս կապվեցաւ, միայն այսչափ աղօթք կրնայի ընել, թէ Տէր ողորմէ՛ ինծի։

դաշտավայր էր լեցուն ծառերով։ Երբեմն կըվազէր խիստ վախնալու բան մը տեսաւ. մէ՞ զի լեռան մէկ դին բերան մը բացուած էր մէջէն կելլէր մուխ՝ բոց՝ մոխիր՝ քար։ Նաև կրակի նման հալած նիւթ մը կըվազէր, որ կըսուի լաւա (*)։

Ո՞րով կրցաւ փախչիլ հեռանալ անկէ, որովհետև լաւանիւթը բորբոքած գետի նման կըվազէր. և մեծամեծ քարեր մէկ դին մէկալ դին կարկուտի պէս կընետուին։ Երբեմն միւս կողմը կըփախչէր ուրիշ նոր վտանգ մը առաջն ելաւ. որ էր սարսափելի փոթորիկ մը, որ ամէն

(*) Երկու երեք տարի հրաբուղխ լեռներ կան եղելա, մէկը Նաբոլի Վեսուվ անունով, մէկալը Էթնա սիկիլեա կղզին. որ հին առենէն 'ի վեր միշտ թանձր մուխ և բոց կելլէ բերաններէն. վասն զի մէջի նիւթերը կըվառին երբեմն անանկ սաստիկ որ դեռի պէս բերնէն կելլեն կըվազեն։ 1693 ին Էտնա լեռը սուսկալի բռընկեցաւ, անանկ մեծ երկրաշարժութիւն ըրաւ, որ 90 հազար մարդ մեռցուց սիկիլեայի մէջ։ Նմանապէս Վեսուվ լեռն ալ երբեմն բռընկելով շատ մեռաս կուտայ Նաբոլիին. երբեմն սաստիկ բռընկելով մէջի նիւթը՝ ահագին ձայներ կըլսուին բերնէն. և երբեմն մինչև 200 հոխայ ծանրութիւն քարեր կընետէ դուրս հեռուն։ Նաև հրեղէն գետ կըվազէ, ինչպէս եղաւ 1794 ին. որ մինչև ծովը վազեց գնաց։ Այս նիւթը փորձեցին Քիմիականները տեսան՝ որ պաղելով ու արջասպէ բաղադրած է։ 1707 Սանդուրին կղզին քով նոր կղզի մը ծովուն մէջ բուսաւ. գեշերը բոց կելեւնար՝ ցորեկը մուխ. ջուրը երբեմն կանանչ կելեւնար, երբեմն կարմիր, ուր 40 օրան մէջ մէկ ժայռ մը աճեցաւ, ու նորէն հալեցաւ կորաւ։

կողմանէ փչելով պաշարեց խեղճը։ Այս փոթորիկը բոլոր ամպերն իրար բերաւ ժողվեց. մինչև ծանրանալով սկսաւ անանկ մէկ ջրհեղեղ անձրև մը, որ քիչ ատենին մէջ բոլոր կղզին ջուրը կոխեց լիք մը եղաւ։ Ոսպէնսօն եւաւ ծառին վրան շատ նեղութիւն քաշելով ազատեցաւ վտանգէն, և խեղճ լամանները անձրևը քշեց տարաւ. երբոր խեղճութիւն կըկանչէին Ոսպէնսօնին սիրտը կըհալէր։ Հապա ինչանայ որ դանոնք ալ ազատէ. բայց դեռ նման ջուրերը առին տարին։

Գեռնաշարժութիւը քիչմը ատեն ալ շարունակեց, անկէ ետև մէկէն դադրեցաւ բոլորովին. անձրևը և փոթորիկը անցան. հրաբուղխին բերնէն եւած նիւթը կտրեցաւ բան չէր վազեր. ետքը երկինքն ալ բացվեցաւ, բոլոր ջրերը քաշվեցան կէս ժամին մէջ (*)։

(*) Որովհետև գեռանին տակը մեծ մեծ խոռոչներ ծակեր կան լեցուն օդով և գոլորշիով. ուր կըգտնվին գիւրավառ նիւթեր, ցր ծծումբ, բորակ, ձիւթ, ևն։ Այս նիւթերը խոնաւութիւ խմորելով տաքնան կըբռընկին. ինչպէս երաց քարին վրայ ջուր լեցընես կըբռընկի կիր (քիրէճ) կըլլայ, մուխ կըհանէ. այսպէս կըլլայ երբոր ջուրը հողին անցնելով այս նիւթերը կըտաքցընէ. որոնք տաքնալով կըբռընկին, գոլորշի կըհանեն. նաև այն ծակերուն մէջի եղած օդն ալ տարածվելով տաքէն կըշատանայ՝ անանկ սատիկ որ տեղ կուգէ դուրս ելլելու. ասով վեր վար կըշարժէ գետինը, գեռնաշարժութիւն կըլլայ. մինչև որ մէկ կողմէն պատռէ դուրս ելլէ

Աւոպէնսօն նոյն գիշերը ծառին վրայ կըդողար վախուն. առտուան դէմ ծառէն վար ինչաւ խառուած յուսահատած այս թշուառուհեց վրայ, որ գլխէն անցան. այնչափ որ չէր կրնար միտքը վրան ժողվել և շնորհակալուն ընել այս նոր ազատուհեը համար, որ այսչափ մեծ վտանգներէն կեանքն ազատեցաւ։ Աչը գն՝ միտքը գըրեր էր թէ գետնաշարժուհը աւրեր կործաներ է իր բնակարանը ամէն բանով. և սիրական լամաներ ալ ջրերուն մէջ խղդըված են. ուստի անպատմելի ցաւով կըկսկըծար, որ բոլոր բաները կորան և մտքին մէջ դրած բաներն ալ անցան գացին։

Ասուած տեղը նայեցաւ, որ հրաբուղխին բոցը ցածցեր էր՝ միայն սև մուխ մը կելլեր բերնէն. անկէ ետքը այս լեռը հրաբուղխ եղաւ։ Աւոպէնսօն զատնք տեսնելով ինչպէս տարակուսանաց մէջ էր. սոսկալով կըդողար թէ նորէն գետնաշարժուհիւն ըլլայ. սրտին հոգն ու տրտմուհիը աւելի ծանրացան. միշտ աչքին առաջն էին այն սաստանուհիները.

գոլորշին կամ բուրնկած նիւթը. որ երբեմն այնչափ կըդիպվին որ լեռան պէս կըլլան, և քարի տեղ կըգործածվին։ Թէ որ խոնաւ տեղ մը փորելով փոս շինես, ու մէջը ծծումբ և երկաթի խարտոց լեցընես. այս նիւթը կըսկըսի խմորելով տաքնալ և ինքնիրեն բուրնկիլ։

անմիխիթար սրտով էր ուղեր վեր նայելու. այլ թողուց իր մի միայն ապաւէն ստեղծողը. հանապազ միտքը հաստատեր էր գալու չարիքներուն վրայ. վո՞ զի կարծէր թէ միշտ պիտի ըլլան անպակաս (*):

Հալեցաւ մաշեցաւ ողորմելին անհանգիստ տագնապելով. և այն ծառին կըրթընած կըհառաջէր կողբար տառապանքով: Պ. յոպէս անմխիթար մնաց հոն բոլոր այն գիշեր, մինչև արշալոյսը բացվելով լոյս ծագեց: Պ. ռաւօտուն՝ արեգակը գեղեցիկ ծագեր էր չորս դին. երբոր ամէն բան աղուոր երևնալով կըծիծաղեր, խեղճ Պ. օպէնսօն խաւար տրտմութեամ մէջ ծառին կրթընած կեցեր էր: Պ. մենևին աչքը քուն չէր մոռած. անանկ խռոված էր, որ հազար անգամ ցաւագին սրտով կըհառաջէր, թէ ո՞հ ի՞նչ եղաւ ինծի:

Հուսկ յետոյ սկսաւ առաջ երթալ կլորտըկելով, որպէս թէ երազի մէջ ըլլար. բայց դէպ՝ ի ընակարանն երթալու ատենը երբոր տեսաւ սիրական լամանները ողջ առողջ դիմացն ելան, ուրախութենէն խելքը գլխէն գնաց:

Ամէկէն չի հաւատաց աչքին տեսուածը,

(*) Ջրհեղեղէն ետև մարդիկ միշտ դողի մէջ էին Պ. օպէնսօնին նման. քանի որ անձրև կուգար դող կելլեին՝ ըսելով թէ ջրհեղեղ ըլլայ. անոր համար ամ նշան դրաւ ծիրանի գօտին, որ տեսնելով հասկընան թէ ալիտի դադրի անձրևը:

կարծէր թէ սուտ է. բայց շուտով վրայ եկաւ։ Լամանէրն ալ վինքն որ տեսան վազեցին վրան սկսան ձեռքը լպել. և հանդարտ ցաթիկելով կուրախանային իրենց տիրոջը հետ։

Աստղենաւնին սիրտն որ մինչև անատենը տրտմութիւն քար կարեր էր, մէկէնիմէկ արթնցաւ. լամանէրուն վրան որ նայեցաւ, աչքը վեր վերցուց երկինքը, ուրախութենէն սկսաւ լալ. նաև ուծային բարիքը միտքը բերելով զգջացաւ ըրած յուսահատութեանը համար։ Երկար ատեն արցունքն երեսն'ի վար կըվազեին։ Նկէ ետքը լամանները սիրելով առաւ հետը գնաց՝ նայելու թէ ի՞նչ եղաւ բնակարանը։

Կերևնայ թէ ջուրն առաւ լամանները քշեց՝ մէկ բլուրի մը վրայ հանեց. ուր քիչ ջուր ըլլալով ցամաքը մնացին կենդանիները ազատեցան. ետքը փոթորիկն որ անցաւ դարձան եկան սորված տեղերնին։ Աստղենաւն գնաց բնակարանին առջին. զարմանալով տեսաւ թէ ինչպէս ինքը կըկարծէր՝ անանկ չարաչար չէր կործանած. իրաւ բնակարանին վրայի քարը վար էր ընկած, ու քովի հողերը մէջն էին լեցված. բայց անկարելի չէր այն աւերակները դուրս հանել, ու նորոգել այս կործանումը. մանաւանդ որ անատենը աւելի կըմեծնար բնակարանը և

առաջվանէն աղէկ բնակելու տեղ կըլ-
լար։

Ը. յս բաներուն վրայ լաւ մտածելով Պօղէոսն հասկըցաւ թէ ՝ուծային նա-խախնամութիւնը զինքը սիրելուն համար խրկեց այս դիպուածները, չէ թէ պատու-հասելու համար։ Այլ զի՝ մօտէն քննեց նայեցաւ, որ բնակարանին վրայի այն մեծ քարը չորս գինն փլթթած հողէ էր դարձեր, հարկ էր որ օր մը ինքն իրեն վար իյնի Պօղէոսին վրայ։ Ը. հա ամենաբա-ին իւր անհուն ողորմութիւնը խնայելով Պօղէոսին, որ չըլլայ թէ գիշեր ատեն այն քարին տակը մնայ չարաչար մեռնի ո-ղորմելին, այս դիպուածը տվաւ։

Ուրեմն յայտնի է թէ իմաստուին ՝ոյ առաջուց կարդաւորեր էր որ այս մարդս երկար տպրի. և աշխարհքս ստեղծած ա-տենը այնպէս բարեկարգեց՝ որ այս ժա-մանակիս պահվի այս բանը և այս երկրա-շարժուիը։ Գետնին տակէն ելած որո-տումին ձայնը, նաև գետնին երերալը՝ իբր թէ ձայն տալով Պօղէոսին՝ խռո-վեցին որ փախչի ազատի. թէ որ առանց ձայնի ըլլար գետնաշարժուիը, յայտնի է թէ չէր կրնար արթընալ Պօղէոսն. անտարակոյս քարը վրան փլչելով չարա-չար կըմեռցըներ։

Ը. հա տես թէ ՝ուծ ինչպէս կըհոգայ

մարդը՝ նաև անանկ ատէն որ կարծէր թէ ողորմութիւնը հեռացեր է իրմէն. քանի՞ զարմանալի կերպով ազատեցաւ Յոպէնսօն. իբր թէ մասնաւորապէս իրկեց ՚ուծ այս դիպուածն որ Յոպէնսօն առաջուց իմանալով այն մեծ վտանգէն ազատի։ Ուստի այս բանէս ամէն մարդ օրինակ առնելով՝ ամէն առթի մէջ պէտք է միշտ արթուն ըլլալ ՚ուծային ձայնին, որ այսպիսի դիպուածներով կըխրատէ մարդը՝ զգոյշ կենալ. և որչափ տրտմական պատահմունք ըլլան, պէտք է գիտնալ նախ թէ միշտ մարդուս մեծ կերևնայ չեկած թշուառութիւնը քան թէ իրօք պատահածը. երկրորդ թէ ամէն չարիքն ու պատուհասներն՝ որ ՚ուծ կրեր կէ, բարի վախճանաւ մեզի օգուտ կըկարգին. և միշտ մեզի աղէկութի՛ մը գալու համար կըպատահին, ինչպէս որ յայտնի կըլնէ այս ՀՇմարտութիւնը հետևեալ ոտանաւորս։

Խոնարհեալ ընկալցուք՝ զբարիս գերաբուն,
յենարան մեր միայն՝ վեհ բազուկ բարձրելոյն.
Պարզեսցուք զաչս մեր՝ 'ի զննել նըրբագոյն,
զազգարար վիւր շնորհ՝ և զաւ նա մեք դարձուն։

Պատուհաս երկրաւոր՝ զոր տայ մեզ երկ-
նաւորն,
բարեբեր շնորհաձիր՝ վասն մեր բեղմնա-
ւոր.
Լոեւ գառն են այն փուշք՝ և սրչափ
ահաւոր,
են աղբիւրք նոր սիրոյ՝ և խնամոյ նո-
ր բանոր։

Յ. Դեպաւած.

Դօսիենսօն սովորութիւն ունէր որ ամէն բանին ետևէն աղօթք ընէ. ուստի մի կէն ծնկան վրայ եկաւ՝ սկսաւ շնորհակալ ըլլալ ոյ այս նոր աղատուեր համար։ Ընկէ ետև սկսաւ աշխատիլ, որ իր բնակարանին աւրածները շինէ. թէպէտ քիչ աշխատանքով հողերն ու փլածները վերցուց, բայց այն մեծ քարը չի կրցաւ վերցընել. որ երկու կտոր էր եղած. մէկ մարդուն ուժը բաւական չէր որ կոտրտելով փշրէ։

Շատ ջանաց որ գէթ պզտի կտորը հրելով դուրս ձգէ՝ չի կրցաւ. վասն զի իր կարողութիւնն շատ վեր էր գործքը։ Այս անյաջող ջանքը նորէն խեղճին սիրտը կոտրեց միշտ կրմտմրտար թէ ի՞նչպէս պիտի ըլլայ ետքը։ Շատ հոգ ընելէն ետև յանկարծ միտքն ընկաւ լծակ գործիքը. որով ծանր բաները կրշարժեն աշ-

խատաւոր մարդիկ. որովհետև մանկուն ատենը տեսեր էր՝ թէ բանվորները երբ ծանր բան մը կուզէին շարժել, մեծ փայտ մը տակն անցընելով բանի մը վրայ կը դընէին՝ ծայրէն կոխածնուն պէս կը շարժեր. ինքն ալ մեծ փայտ մը կառնէց լծակ շինելց քարին տակը խօթելց, պզտի քարմ՝ ալ քովը դրաւ, վրան կը թնցուց լծակը. ետքը փայտին ճոթէն կոխածին պէս՝ քարը շարժեցաւ տեղէն։ Եւ այսպէս կէս ժամին մէջ յաջողուած կլորելով երկու քարն ալ դուրս ձգեց անկէ, որ չորս մարդ չէին կրնար տեղէն շարժել։ Ուստի մեծապէս ուրախացաւ տեսնելով թէ ոչ միայն առաջվանէն ընդարձակ եղաւ բնակարանը, այլև աւելի ապահով եղաւ ամէն կողմէն. վասն զի թէ՛ պատերն ըլլան, և թէ առէգը՝ միակտոր մէկ քարմ՝ էր եղեր. ոչ փթթած քար մը կար և ոչ ճեղք մը։

Եւ լաւ գնաց Հրաբուղէս տեղը, տեսաւ որ մէկ սև մուխ մը կելլէր. շատ զարմացաւ դուրս ելած նիւթին վրայ, որ ամէն գի վազեր կերթար. երկար ատեն տաք մնալով՝ մինչև հեռուն կը վազեր։ Այս զարհուրելի երևոյթը հեռուէն կը դիտեր. այնչափ սոսկալի էր Հրաբուղէս բերանն որ վախուն չի կրցաւ առաջ երթալ։ Յետոյ տեսաւ թէ այն հրեղէն

նիւթը դէպ՝ի գետնի խնձորին տեղը վա-
զեր էր. վախցաւ որ չըլլայ թէ այն բոյսե-
րը ապականին. չի կրցաւ հանգիստ ըլլալ՝
մինչև որ չի գնաց հոն. որոնց միջոցաւ մը
չէր եղած։ Այս բանին վրայ՝ միտքը դը-
րաւ թէ ամէն դի գետնի խնձոր տնկէ
շատցընէ. որ չըլլայ թէ օր մը ասանկ զար-
հուրելի դիպուածով մը բոլորովին կորսը-
վին։ Սակայն ձմեռը խիստ մօտ ըլլալով
տարակուսեցաւ թէ չէն բռներ. ոչ գի-
տէ կըսեր, կրնայ ըլլալ որ ասաւ այն տե-
սակ բոյսերին ըլլայ, որոնք ձմեռնալ կը-
դիմանան. ուստի այս խորհրդով սկսաւ
գետինը փորել։ Այլց զարմանալին այն
եղաւ, որ այս սոսկալի դիպուածը՝ ուրիշ
մեծ աղէկութիւն մը պատճառեց. վասն զի
հրաբուղխ բերնէն շատ բան դուրս ցաթ-
կէլէն՝ լզատ, շատ երած քարեր ալ դուրս
եկան, որ կիր (քիրէճ) էին եղեր. թէ-
պէտ հասարակօրէն փռան մէջ երելով
քարը կիր կըդառնայ. բայց այն լեռը՝
փռան նման մէջի քարերը երելով կիր
ըրաւ ու դուրս նետեց։

Յոպէնսօն գետինը փորելով փոս մը
շինեց երած քարերը ժողվեց մէջը լե-
ցուց. վրան ալ ջուր թափելով կիրը մա-
րեց, ինչպէս որմնադիրները կընեն. ետ-
քը քիչմը աւազ բերաւ միատեղ շաղվեց,
ու յաջողութիւն ուզած բանը շինեց անով։

Իսկ հրաբուղխին մուխը դադրելէն ետև Յուսթինոսն մտեցաւ բերանին քով տեսաւ թէ լավա նիւթը անանկ պաղեր էր մէջն որ ամենևին մուխ չէր ելլեր. հասկըցաւ որ տակի կրակը բոլորովին մարած է. և վախնալու բան չէ մնացեր։ Լսկէ սիրտ առաւ ու ձմեռվան պէտք եղած բաները սկսաւ հոգալ։ Ուստի նախ գնաց լամա որսալու. մինչև ուրթը հատ բռնեց առաջվան կերպովը. մէկ արու լամա մը պահեց, որ ընկեր ըլլայ իրեն լամաներուն, մէկալ ները բոլոր մորթեց, միսը չորցուց ապուխտ շինեց. նախ քանիմը օր աղը պաւկեցուց. ետքը հանեց վառարանին մէջ մուխը կախեց որ չորնան. ինչպէս որ տեսեր էր իր մօրմէն պզտիկուէ ատենը։

Յետպէտ Յուսթինոսն իրեն պէտք եղածին չափ պաշար ձարեր էր. բայց վախնալով չըլլայ թէ ձմեռը սաստիկ և երկար ըլլայ՝ կուզէր աւելի բան ունենալ։ Պ՚իտքը դրաւ որ մէկ քանի լամաներ ալ բռնէ. բայց չի յաջողեցաւ. ինչու որ կենդանիները կգացին իրենց վտանգը, կըզգուշանային ծառին մօտենալու։

Ուստի պէտք եղաւ որ ուրիշ նոր եղանակ մը գտնէ զանոնք բռնելու. ինչպէս որ հարկը իրեն յաջողեց՝ ասոր ալ հնարքը գտնել։ Կըգիտեր որ որչափ անգամ լամաները ջրին քով կըմօտենային՝ վախ

մը կուգար իրենց խրտելով արագ կը-
փախչէին ծառին քովէն պզտի լեռան վը-
րայ։ Այս լեռին մէկալ կողմը պատած
էր մանր ծառերով. քովէն ապառաժ մը
վեր ելած էր շիտակ պատի պէս, բարձր
երկու գրկաչափ. դիտեց որ լամաները
սաստիկ կըցաթկէին վերէն վար ան ժայ-
ռերուն մէջ։ Այս դիտողուիը կատարե-
լէն ետև՝ փորեց այն տեղը խորունկցուց,
անանկ որ լամաները երբոր պիտի ցաթ-
կէին՝ փոսին մէջ կիյնային։ Ասոր օր ու
կէս աշխատելով փոսը լմընցուց ու վրան
գոցեց։ Միւս օրը տեսաւ որ լամաները
ցաթկելով երկու լամա բռնըվեցան. շատ
ուրախացաւ։

Ասոնց միսն ալ ջորնալու դնելէն ետև,
այսչափ ապրուստին վրայ նայելով կըւար-
ձանալու տեղը՝ նորէն սկսաւ հոգ ընել.
որ ուրիշ տեղ մը ձարէ վանոնք դնելու
ձմեռը. ոչ պէս եթէ դժբաղդուիք երկրա-
շարժուի ըլլայ՝ տեղ մը ունենայ։ Անանկ
մտածելով կըդիտէր. տեսաւ որ բնակա-
րանին քով լեռան մէկ կտորը ելած էր.
տեղը երկու գրկաչափ խորունկցած ըլ-
լալով այր (մաղարա) մը ձևացած էր. որ
բաւական լայն ըլլալով պատ շինեց՝ուրիշ
բնակարան մը եղաւ մէկալին քով այնչափ
լաւ, որչափ որ կրնար հնարել արուեստը։

Հիմա մնաց Յոսէֆնսօնին ընելու իրեք

բան. որով կարենայ բոլորովին նախատես ըլլալ ձմեռվան ամէն բանին։ Պէտք է նախ և առաջ խոտ ձարել լամանեբուն համար. երկրորդ՝ փայտ ժողվել վառելու համար. երրորդ՝ գետնի խնձոր հանել նոր բնակարանին մէջը պահելու համար։ Շատ խոտ քաղէց բերաւ իրարու վրայ դնէց կարդով՝ ինչպէս գեղացիները կը շարեն ծառիպէս. խիստ ուժով կրկոխէր իրարու վրայ, որ անձրև չէր կրնար մէջն անցնիլ. սակայն անփորձ ըլլալով քաշած աշխատանքը փուճ եղաւ։ Որովհետև հոգ չըրաւ նախ խոտերը լաւ չորցընելու, երբոր այնպէս թաց իրարու վրայ կոխեց, սկսաւ խոտը տաքնալ մուխ ելլել. մինչև սկսաւ երիլ։ Հօպէնսօն առանկ բան լսած չը ելլալով խիստ շատ զարմացաւ. վ՞ա զի գեղացիներուն վերաբերեալ բան է։ Լաստի անստեղը լաւ հասկըցաւ, թէ որչափ օգտակար է ամէն բանի տեղեակ ըլլալ. և որչափ կարելի է՝ ամէն բան գիտնալ մանկուէ ատենը. վ՞ա զի չիյտէ թէ որ բանին կարօտ պիտի ըլլայ ժամանակով. և ի՞նչ բաներ պիտի ընէ։

Այս պատճառաւ տոկայ երբոր տեսաւ թէ խոտերուն մէջէն մուխ կելլէ։ Հաև աւելի մեծ եղաւ զարմանքը ձեռքն որ խօթեց խոտին մէջ, նայեցաւ որ կե-

բէր խոտը։ Միտքը չէր հասնիր թէ այս կրակը ինչպէս պատճառեցաւ. և ուստի կրակը այն խոտերուն մէջ մտաւ։ Ուստի սկսաւ խոտերը հետ առնել. կրնայէր որ տեղ մը կրակ չի կայ ու սաստիկ տաք և թաց է, զարմանքով պաշարվեցաւ։ Երբեմն միտքը գրաւ թէ միայն թացութիւն է ասոր պատճառը. բայց չէր կրնար գիտնալ թէ ինչպէս կըլլայ։

Ա՛ռ զի այս բանը կըպատճառի ֆիզիկական խմորմանէ. որ ներքին ոգիքը խոտին թացութեան արթննալով, կըտաքցընեն նիւթը. ինչպէս կըլլայ խմորը, նաև գինին՝ երբ ներքին մասունքը կամ ոգիքը շարժելով կըպճպըճան։

Ուստի հարկադրեցաւ որ այն խոտերը վերցընէ լաւ մը չորցընէ. աղէկ չորնալէն ետև նորէն դէպ շինեց՝ վրան ալ անանկ լաւ գոցեց որ մեր տանիքներուն պէս ոչ անձրև կանցներ և ոչ հով։ Ետևեալ օրը այնչափ չոր փայտ ժողվեց, որչափ որ հարկաւոր էր իրեն. ետքը գետնի խնձորներն ալ հողէն հանեց բերաւ համբարանոցը. որով բաւական կերակուր պատրաստեց իրեն ձմեռվան համար։ Ընկէ ետև սիրտը հանգչեցաւ, այլ հոգ չէր ըներ թէ ծանր ձմեռ ըլլայ նէ ինչ պիտի ընեմ։

Դրեթէ հոկտեմբերին ամիսը լմընցեր

էր՝ բան մը չեղաւ. Թէպէտ ինքը շատ կը հոգար՝ թէ ձմեռը կրկոխէ։ Յուրտին տեղը անձրև քերաւ եղանակը. և այնչափ շատ կուգար, որ կարծէիր թէ օդը ջուր փոխված է. չիյտեր թէ ի՞նչ ընէ. վա՞ղ մի 15 օր բնակարանէն չելաւ՝ դուրսը ոտք չի կոխեց. որ երթար համբարանոցը նայիր, նաև ջուր խոտ քերիր լամանեռուն. մինչև հարկադրեցաւ որ այն միջոցին մէջ իրը բանտարգել հոն մնայ (*)։

Ինչ թէ ի՞նչպէս ծանր և երկար եկաւ իրեն այն եղանակը. գործք մը չունէր որ ընէր. շատ մեծ նեղուն կրքաշէր միս մինակ և անգործ. թէ որ կարելի ըլլար իրեն գիրք մը տալ, կամ քիչմը թուղթ և կաղամար, անկէ մեծ բան չէր կրնար ըլլալ։ Շատ անգամ հառաչելով կըսէր ու կուլար, թէ որչափ մեծ յիմարուն ըրած եմ մանկուն ատենս որ անհոգ եղայ, չի սորվեցայ ուսումնականուն, և օգտակար բաներ. միայն դատարկութե՛ն ետևէն եղայ զըւարճալի բանի մը պէս. ո՜հ հիմա ի՞նչ գիրք որ ըլլայ՝ ինձի անգին գանձի տեղ կանցնի. մէկ թերթ թուղթն ու գրիչը

(*) Այս կղզիներուն մէջ հարաւային և հիւսիսային հովերը յաճախ և սաստիկ փչելով ոչ միայն միշտ օդը կըխռովին, այլև շատ անգամ անձրևներ կըլլան մանանկ սաստիկ որ ջուր կըկոխէ. մանաւանդ հոկտեմբերին և նոյեմբերին։

հիմա իմ առջիս թագաւորութիւն մը կարժէ։

Այս ճանճրացուցիչ ժամանակիս մէջ հարկը ստիպեց զինքն որ աշխատանքի եւեւէ ըլլայ բան շինէ. որ մինչև անա տենը չէր մտածեր. ուստի միտքը դրաւ որ կաւէ ամաններ շինէ իրեն գործածուելու համար. և անով հանգիստ վիճակ ունենայ։ Անպէտ անձրևը միշտ կուգար, բայց մը տիկ չըրաւ. գնաց վազելով կաւ (չամուռ) բերաւ ու սկսաւ բրուտի պէս աշխատելով պտուկ և ուրիշ ամաններ շինել։ Այս գործքը մէկէն լաւ չի յաջողեցաւ. շինած ամաններուն շատը անպիտան եղաւ. բայց ուրիշ գործք մը չունենալուն համար, զըւարճուելու պատճառաւ կաշխատեր. շատ անգամ կըներ կաւրէր պակասաւոր ըլլալուն համար։ Այսպէս քանի մը օր անցուց այս զըւարճալի աշխատանքով մինչև ճամբան գտաւ՝ ուզած ամաններըը շինեց կատարեց խիստ գեղեցիկ. ետքը շարեց զանոնք վառարանին մէջ կըրակէն հեռու, որ քիչ քիչ չորնան։ Անկէ ետև զանազան ձևով և մեծութիւն պըտուկներ, փաուչեր շինեց, և որչափ որ շատ բան շինեց. այնչափ լաւ սորվեցաւ շինել։ Անձրևը անդադար կըշարունակեր. Ռոպէնսոն հարկադրեցաւ ուրիշ գործք մը մտածել, որ արտին նեղութիւնը

անցնի։ Լուսոյ սկսաւ ձկնորսի թօռ շինել. որ խիստ օգտակար էր իրեն ձուկ բռնելու համար։ Այս գործքս ալ աղէկ յաջողուեր կատարեցաւ։ Ան զի թէպէտ շատ աշխատեցաւ, շատ անդամ փորձելով վերջապէս կերպը սորվեցաւ՝ թելերը իրար կապելու, և այնչափ յաջողութիւն կոլորեր կըհիւսեր թելերը փայտէ գործիքով մը, որ քարէ դանակով շիներ էր. մինչև գեղեցիկ կատարեց թօռը՝ ձկնորսներուն նման. որով ձուկ կըբռնեն։ Ան ատենը միտքն ընկաւ որ փորձելով շինէ մէկ աղեղ (օգ՝ եայ) մը. իրաւի երկար ատեն ասոր վրայ մտածելով շատ սիրտ մաշեց. վն զի գիտեր թէ որչափ հարկաւոր էր իրեն. կրնար անով լամաներ ալ զարնել թռչուններ ալ. նաև կրնար զինքը պաշտպանել, թէ որ լեռան մարդիկ վրան հասնէին օր մը։ Ասոր համար սիրտը կըհալեր որ շուտով կատարէ։ Լուսոյ անհամբերութիւն անձրևին մէջէն վազեց գնաց յարմար փայտ գտնելու։ Այնչափ փայտերուն մէջէն ուղած փայտը չի գտաւ աղեղ շինելու հմար. իբր զի՝ անանկ փայտ կուզեր որ ըլլայ ամուր և կակուղ. մինչև կարենայ ծռիլ և դառնալ առջի վիճակը առաձգութիւն։

Այլ հուսկ յետոյ գտաւ ուզած փայտը՝ սկսաւ շինել. ափսոս որ շնորքով դա-

նակ մը չունէր , որ ուզածին պէս շինէ . քանի անգամ զարնելով չէր կրնար կըտրել : Այս գործքիս վրայ շատ աշխատելով չարչարվեցաւ մինչև իրիկուն . բայց ամենևին չի յուսահատեցաւ , ուրթ օր լըման հոդնեցաւ . անանկ զարմանալի էր համբերությունն՝ որ չէ տեսված : Սակայն ինչերորդ օրը լմընցաւ աղեղը ուզածին պէս , որ շատ ուրախացաւ : Իմա մնաց իրեն մէկ լար մը և նետ մը ձարել : Եվ որ լամանները մորթած ատենը միտքն եկած ըլլար , կառնէր աղիքները կոլորեր լար կըշինէր . ինչպէս հոս օչխարինը կընեն : Որովհետև չի կար՝ չուան մը ոլորեց կապեց աղեղին լմընցուց : Ինաց սուր երկաթ մը գտնել մախաթի նման, որ նետին ծայրը անցընէ . թէ որ մէկը տար իրեն , ի՞նչ որ ուզէր կուտար . բայց ուր պիտի գտնէր : Ուստի այրին դառանը քով կեցեր կըմտմըտար , թէ ի՞նչ բան կրնայ ըլլալ, որ երկրթին տեղը բռնէ : Որբոր անգին գնաց մէկէն աչքին դպաւ այն գտած ոսկին , որ անպիտան բանի մը պէս մէկ դի ձգած էր . իրեն դժուար եկաւ , սկսաւ բարկութիւն պօռալ . գնա՛ կորիր աչքիս առջևէն՝ կըսէր , գարշելի՛ հանք , գնա՛ կորիր . շատ աղէկ էր որ երկաթ ըլլայիր , աշխարհք քեզ մեծ բանի տեղ դրեր է . բայց իմ առջևս անանկ ոչ.

ինչ ես, որ և ոչ արժանի կըսեպեմ քեզի նայելու։ Բ. Հա ասանկ Լեոպէնսօն շատ բան մտածելով ասոր ալ հնարքը գտաւ. վո՛ զի յանկարծ միտքն ընկաւ, ըսեր էր՝ թէ լեռան մարդիկ ձկան փշով կըշինեն իրենց նետը. և երբեմն սուր քարերով. որոնց ծայրը անցընելով՝ երկրթի տեղ կըբռնէ։ Բ. սանկ մտածելէն ետև ուզեց որ տէգ (մլրախ) մը շինէ։

Ղ. ազէց ծովուն քով գնաց, և հոն գըտաւ մեծամեծ ձկան փշեր, ինչպէս կըփափաքէր. և գնաց սուր քարեր ալ գտաւ. ետքը կտրեց երկայն և շիտակ ճող (սըրըխ) մը տէգին համար. անկէ ետև դարձաւ տեղը. վո՛ զի անձրևը մինչև ոսկորներն անցաւ։

Գ. իչ ատենին մէջ աղէգն ալ կատարեցաւ տէգն ալ. տէգին ծայրը մէկ սուր երկայն քար մը անցուց. և նետին ծայրը՝ ձկան մեծ փուշ մը անցուց. մէկալ ծայրն ալ քանիմը փետուր խօթեց, որ աղէկ երթայ։

Դ. ըբոր փորձեց աղէղը՝ տեսաւ որ յաջող է, շատ ուրախացաւ. թէպէտ երկաթ չըլլալուն համար պակասաւոր էր, բայց յաջողութիւն զարկաւ անով թռչուն, և ուրիշ մանր կենդանիներ։ Ե. Էր տարակուսեր, թէ կրնայ զարնել նաև լեռան մարդիկ թէ որ իրեն մօտենային. ուստի

տեղին վրայ աչ շատ ուրախանալով գոհ եղաւ։

Լոսկենսօն տեսաւ թէ շինած ամաններ-ը բաւական չորցած են, ուզեց գործա-ծել. նախ դրաւ պտուկին մէջ լամային փորէն ելած եղերը հալելու համար. որ ձրագու ընէ ու մոմի տեղ վառէ։ Այլ շատ սիրտը կոտրեցաւ՝ տեսնելով թէ ե-ղը հալածին պէս ամանէն անցաւ կաթ կաթ կըվազէր. անանկ որ ամանին մէջ բան չի մնաց. հասկըցաւ որ ո՛չ եղը բանէ պիտի գայ, և ո՛չ ամանը. նորէն սկսաւ խառվելով տրտմիլ։

Տրտմութէ պաշարվեցաւ Լոսկենսօն, որ քիչ մը առաջ մեծ ուրախութէ մէջ էր թէ այն իրիկունը ձրագ պիտի վառէ ու լուսով կերակուր պիտի ուտէ։ Այս ու-բախալի յոյսը շուտով ոչնչացաւ. թէպետ աղէկ սորվեր էր համբերութի ընել, որ չի յուսահատեցաւ. մանաւանդ փորձով գի-տէր թէ մէկ բանը անկատար ձգելն աղէկ չէ. այլ որչափ կարելի է՝ պէտք է կատա-րել։ Ուստի նստաւ քնակարանին մէկ կողմը սկսաւ մտմըտալ. որ սովորաբար բան մտացած ատենը հոն կընստէր, ու ձակատը կըշփէր։ Ինչ են կըսէր Եւրոպա շինած ամաններըը, ուրիշ բան չէն բայց եթէ կաւ. ինչու՞ այնչափ կարծր են, որ չեն ծծեր մէջինը։ Իրաւ այն կըպատճառ

ուի ապակի (սրուէն ,) որ զանազան նիւ-
թերով խառնած ըլլալով կրակին մէջ
կը թրծի . ուրեմն ես ալ որ կրակը դնեմ
թրծեմ՝ կրնայ այնպես կարծրանալ։ Օ այս
ըսելով վառարանին մէջ մեծ կրակ մը վա-
ռեց շուտով . երբոր լաւ մը բոցն ելաւ՝
դրաւ ամանը բոցին մէջ . դրածին պէս
ձայն մը ելաւ ճաթեցաւ ամանը ։

Հօպէնաօն երբոր լսեց այս ձայնը՝ տա-
րակուսելով ըսաց , չըլլայ թէ ճաթի ա-
մանը . ինչպէս կըպատահէր ձմեռվան մէջ՝
շուշայով պատ ջուր որ կը դնէինք կրակին
վրայ՝ մէկէն կը ճաթէր ։ Երդեօք ասա՞նկ
եղաւ . կարծեմ թէ այսպէս ըլլալով ճա-
թեցաւ . ուրեմն պէտք է նախ լաւ մը չոր-
ցընել ամանը , անկէ ետքը կրակին մէջ
դնել ։

Յոսիսի մտածմունքներով կուրա-
խանար ու կըսէր . ո՛հ ի՞նչ մեծ բան է
մարդկային մտաց ուժն , որ ամէն պիտուա-
կան բան կըսորվեցընէ ։ Սանկ նոր փոր-
ձեր ընելով առանց ճաթելու թրծեց ա-
մանը կատարեց ։ Ինքիրեն կըսէր թէ կը-
բակը շատ է , վախնամ թէ չըլլար . պէտք
էր փուռ մը շինել . վա՜ պի բոց շատ ելլե-
լով կը ճաթեցընէր ամանը ։ Յս խոր-
հրդով ելաւ փուռ մը շինեց . բայց շատ
մեծ աշխատանք քաշեց , և քիչ ատենին
մէջ չեղաւ ։ Ինձուն ալ միշտ կըշարու-

նակէր, որ երկու ամիս անցաւ ետքը երկինքը բացվեցաւ։

Այնաւանը մտածեց Ռօպէնսօն թէ աստ ձմեռն է կաւ. բայց կընայէր որ ձմեռն անցեր է, գարունը մօտեցեր է. իբր զի՝ հոկտեմբերի վերջն ըլլալով ձմեռվան ըսկիզբն էր. բայց կըտեսնէր որ գարնան պէս բոյսերը և խոտերը ծաղկած են. ծառերը սկսեր են ծլիլ կանանչիլ։ Այս բանին իրաւի խելքը չէր հասնէր. բայց աչքով կըտեսնէր։ Ուրեմն այս ինծի մէկ կտակ մը թող ըլլայ կըսէր. այն բանն որ չէ եղած ու չեմ կրնար իմանալ, պէտք չէ որ մէկէն ուրանամ և դատաստան կարեմ թէ չի կրնար ըլլալ (*)։

(*) Ռօպէնսօն եւրոպայի վրայ երթալով կարծէր թէ հոկտեմբերին վերջը ձմեռ կըսկըսի. չէր գիտեր թէ այն կղզին անանկ ատոնցանի տակ էր՝ որ գրեթէ երկու ամիս ձմեռ կընէ թեթև ցր հոկտեմբերին ու նոյեմբերին. անկէ ետև գարուն կուգայ. ինչպէս շատ տեղ ալ կայ, որ երբ հոս ձմեռ է հոն ամառ է. երբ հոս ամառ է հոն ձմեռ է. հոս գիշեր է հոն ցորեկ է. հոս ցորեկ է հոն գիշեր է. վերջ զի աշխարհքիս տակն ըլլալով ամէն բան հակառակ կըլլայ. թէպէտ մեր գլուխն ալ երկինքը կընայի, անոնց գլուխն ալ, բայց մեզի նայելով անոնք գլխիվար կըքալեն, անոնց նայելով՝ մենք գլխիվար կըքալենք։ Այս աշխարհագրական ծանօթութենց ոչէկ տեղեակ ըլլալով Ռօպէնսօն կըզարմանար չի տեսած բաներուն վրան. և ինք զինքը կըխրատեր, թէ այն բանն որ չէ եղած իրեն, մէկէն դատաստան չի կարէ, թէ չի կրնար ըլլալ. հապա ամէն բանին ետքը գիտելով տեղեակ ըլլայ։

ԺԸ. Դեպք.

Դրեթէ Յովհաննէսին ամէն բանը լման էր. գէտնիմնձոր ունէր որ հացի տեղ կըբռնէր. շինած թօռովը ձուկ կըբռնէր. աղ՝ լէմոն ունէր. լամայի միս և կրիայի միս ունէր. նաև ոսարէ ալ կըժողվէր. լամաներէն կաթ մածուն կըպատրաստէր. եռքը կարագ պանիր ալ շինէց կաթէն։ Ահա այս բաներըը վայլէլով շնորհակալ կըլլար ՝ոյ. սակայն կէս կեանքը կուտար թէ որ նաև մը գտնըվէր ու զինքը տանէր իր քաղցր հայրենիքը։ Այ՝ զի ամենևին բան մը չէր երևնար աչքին, էրբոր կըմտածէր թէ զրկըված է մարդկային ընկերութէնէ և բարեկամներէն. որով միայն երջանիկ կրնայ ըլլալ մարդ իրարու հետ կենակցելով (*)։

Սիրական ծնողացմէ և ազգականներէն հեռու ըլլալով այնչափ տրտում էր,

(*) Այնչափ մեծ է հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնն, որ մինչև որոշեցին թէ ամէն մարդ պարտական է իր կեանքը տալու իրեն ազգին և հայրենեացը համար. հին ատենը ով որ իր ազգին և հայրենեացը երախտիքմը բան մը թէ որ ըրած չըլլար՝ մարդ չէին սեպեր և քաղաքացիի կարգ չէին դներ. անոր համար իրենց ազգը միշտ կըմեծնար, և աղէկ բաներով կըծաղկէր. երանի՞ թէ այս բանս մեր ազգին մէջ ըլլար, ու ասոր հակառակը չըլլար։

որ յուսահատեր էր թէ այլ ջղիտի տեսանէ զանոնք. անանկ պիտի կորսըվի զուրկ ամ մարդկանց, և հեռու ամէն աշխարհքէն։ Ո՛հ քանի՞ ողբալի էր խեղճին վիճակը. ի՞նչ ուրախութի՛ն կրնար պատճառել այն առատութի՛ն որ ունէր. ի՞նչ օգուտ կրնար ընել իրեն այն վիճակին մէջ՝ թէ և աշխարհքին մեծութի՛ն ունենար. թէ որ միայն մէկ օր մը մինակ մնայ մարդ առանց ընկերու

Այս տարակուսանքն ալ աւելցաւ իր կարօտանացը վրայ, որով միշտ սիրտը կը-հալէր ծնողացը տեսնելէ համար, և մարդ-կային ընկերութենէ համար. ուստի բոլոր սրտովը կը հառաչէր որչափ որ ծովուն քով կը մօտենար. և ի՛նչ որ լալագին աչքով կը նայէր ահագին ովկիանոսին վրան, ու-րիշ բան չէր տեսներ, բայց միայն ջուր ու երկինք։

Լաւ շատ անգամ սուտ յուսով սիրտը դոզ կը հաներ. վա՜ղ ի ծովուն եզերտին վրայ հեռուէն երբեմն մանր ամպեր կը-տեսնէր, երևակայութի՛ւն կարծէր թէ նաւ է լեցուն հովով կուգայ. երկար ատեն սպասելով կը նայէր որ յոյսը փուչ կը-լար. ա՜հ ի՞նչ ողբ, և ի՞նչ արտասունք կը թափէր աչքէն. ապա վերջին յուսահա-տութի՛ւն կուգար կը փակվէր բնակարանին մէջ տրտում։ Մէ՛ն ինչեր ցորեկ աղօթք կը-նէր որ նաւ մը խրկէ ՝ուծ զինքն ազատէ. բայց անդադար ասալ կը սէր. Ցե՛ր չէ իմ կամքս, հապա միշտ քու կամքդ ըլլայ։ Մէ՛ն զի՝ լաւ հասկըցեր էր թէ ՝ուծ ամենա-բարին մեզմէ աղէկ գիտէ մեր բարին, ու անանկ կը անօրինէ. թէ որ իմ երկնաւոր հօրս կամքն է կը սէր՝ որ զիս հոս ասանկ

տաքէն չէի կրնար դուրս ելլել. ուստի անձրևէն է՝ և այս տաքն որ կոխեց՝ այն ճանճերը անանկ կատ-զեցան որ չարաչար կը խայթէին։

թողու, արդար է իր դատաստանը. որուն չի հասնիր միտքս, ուրեմն ինձի կըվայլէ որ աղօթք ընեմ ազատութեան համար, թէ որ ինձի օգուտ կարդէր է ճշմարտին իմաստութիւնը։

Սակայն կըվախնար որ չըլլայ թէ անկէ նաւ անցած ատենը ինքը ծովուն քով չի գտնըվի. կամ թէ անանկ ատեն նաւ դայ կղզիին քով երկաթ նետէ, որ ինքը հեռուն գացած ըլլայ. ասոր համար կըմտածէր որ նշան մը դնէ այն ցամաք լեզուին վրայ. անանկ որ որչափ նաւ անցնի՝ հասկընայ թէ հոն մարդ կայ։ Աստի երկայն փայտ մը տնկեց. վրան ալ կախեց իր մաշած շապիկը, որ այլ չէր հագնըվէր։ Ընկէ ետքը կամեցաւ որ տնկած փայտին վրայ մակագրութիւն ընէլով իմացընէ գլխուն եկածը. ուրիշ հնարք չունէր, միայն քարէ դանակով փորելով գրեց. բայց մտածեց թէ կրնայ ըլլալ որ ուրիշ ազգերը չի հասկընան ինկիլիզերէն և ֆռանսըզերէն. անոր համար լատիներէն քանի մը խօսք միտքը կար, գրեց փայտին վրայ. որովհետև լատինին լեզուն ընդհանուր ըլլալով ամէն ազգ կըհասկընար։ Ռոպէնսոն կը յուսար որ ամէն նաւի մէջ կրնայ լատինի լեզու հասկըցող գտվիլ, գրած բանը միայն այս իրեք խօսքս էր. ՕԳՆԷՑԷ ԽԷՂՃ ՌՕՊԷՆՍՈՆԻՆ։

Ամենէն մեծ նեղութիւն այն էր՝ որ ոչ գուլպա ունէր, և ոչ ոտքի աման. վա՜յ զի մաշեր կտոր կտոր էին եղեր. Ճանճերն ալ չարաչար խայթելով կը տանջէին խեղճը. որ ցաւէն չէր գիտեր թէ ուր երթայ։ Անանկ ուռած էին խայթուածով երեսները ձեռքերն ու ոտքերը, մանաւանդ այն անձրևներէն ետև մարդերը շատնալով՝ մինչև բնական տեսքը աւրած էր։ Շատ անգամ մէկ դի նստեր կը մտածէր որ՝ ձար գտնէ բոլոր մարմինը գոյելու. հնարքը չէր կրնար գտնել. վա՜յ զի գործիքի պակասութիւն ունենալով և հարկաւոր բաներուն անգէտ ըլլալով՝ միշտ կարօտութեան մէջ էր։

Առաջուց կարծէր թէ լամաներուն մորթով կրնայ դիւրին կերպով հագուստ շինել հագնիլ. սակայն լամային կաշին հաստ և կարծր էր. նաև չէր գիտեր թէ կաշի շինողները ի՞նչպէս կը հակըզցնեն, ոչ թեալ ունէր՝ ոչ գերձան. ուստի պաշարվեցաւ մնաց, թէ ի՞նչպէս հագուստ շինէ իրեն։ Սակայն հարկը խիստ բունադատեց զինքը. այնպիսի մեծ նեղութիւն ունէր որ՝ ոչ ցորեկը կը հանգչէր և ոչ գիշերը քունը կը լլար Ճանճերուն ձեռքէն, որ չարաչար կը խայթէին խեղճը (*). ուստի հար-

(*) Յիմար մարդիկ կը զարմանան թէ ասանկ փոքր սակաւ կենդանիները ինչու համար այդ ստեղծեր է։

կագրեցաւ որ խելք բանեցընելով ճամբ բայ գտնէ, ու անանկ խեղճութեամբ չի տանջվի։

Վերջապէս Լոսկենսօն չդիմացաւ լաւ մային կաշին առաւ դանակովը ձևեց՝ կըտոր մը հանեց հողաթափի համար. և ուրիշ կտոր մը հանեց գուլպա շինելու համար, թէպէտ չի կրցաւ կարել. միայն չուանով փաթթեց լաւ մը կապեց ոտքին վրայ. որ բուրդը ներս ըլլալով սաստիկ տաքութիւն ոտքը կերեր. նաև քալելու ատենը չարաչար կընեղեր. սակայն այս նեղութիւնը աւելի սիրով կըքաշեր քան ճանճերուն վերքը։

Ուրիշ կտորմ՝ ալ կտրեց կաշիէն, որ քիչ մը փոս և կարծր ըլլալով՝ երեսին ամանն շինեց. երկու ծակ բացաւ աչքերուն համար. մէկ ծակմ՝ ալ բացաւ բերնին համար։ Ոտքը շատ աշխատանքով մէկալ լաթերն ալ ձևեց կատարեց։ Որաւ շատ աշխատանք կըքաշեր այս բաներն ընելու,

Գիտէն թէ նախ ամէն բան վախճան ունի. որ տիեզերիս մէջ խիստ հարկաւոր են դեղի համար, կամ ուրիշ վախճանաւ որ չգիտենք։ Երկրորդ՝ ամ իւր բաբուքը անանկ ստեղծեց արարածներն որ իրար սնուցանեն. եթէ այս կարգը չըլլար, ստեղծած կենդանիներուն կէսը չէին մնար. և խոտեղէններն ալ խիստ քիչ պիտի ըլլային՝ այն քիչ կենդանիներուն համար։ Ահա այս պատճառաւ բոլոր երկիր լեցուն է կենդանիներով գետինը ջուրն ու օդը, որ կայառալով ամին և ստեղծողին մեծութիւնը յայտնեն։

սակայն համբերութիւն շարունակելով ամէն բան գլուխ կը տանէր։ Եւ այս կերպով Յովհաննէս ուզած բաները շինեց լմընցուց ուրախութիւն։ Հանեց վրայի Ճիւպպէն, որ մաշեր կէսն էր մնացեր։ Հագաւ կաշիէ լաթերը։ բայց այն հին Ճիւպպէն Եւրոպային պահեց որ մեծ օրերը, և ծնողաց տօնին օրերը հագնի։ վասն զի ծնողաց անուանին օրը հանդիսաւոր տօնի պէս կը տօնէր (*)։

Յովհաննէս այն լաթերը հագնելով խիստ սոսկալի կերևնար։ որ ոտքէն մինչև գլուխը մորթ էր հագած, անանկ մազոտ որ ոչնի կը լմանէր։ գլուխն ալ դրեր էր մորթէ շինած երկայն գլխանոց մը։ քարէ կացինը մէջքն էր զարկած։ տոպրակն ու աղեղը կռնակը։ աջ ձեռքը երկայն տէգը։ ձախ ձեռքը հովանոցը։ որ տերևներով շինած էր։

Ո՞տմրատ թէ ինչ այլակերպ կերևնար։ եթէ մէկը տեսնէր զայն անանկ հագուստով՝ անհնարին էր թէ մարդ կարծէր։ ուստի երբոր ջրին մէջ նայելով

(*) Յովհաննէս կը պատմէ թէ երբոր հետևեալ տարուան սեպտեմբերի 30 եղաւ։ որովհետև նոյն օրը ոտքս ցամաքը կոխեցի։ ասոր համար նոյն օրը տարեգլուխ ըլլալով ինձի՝ ծոմ կեցայ բոլոր աղօթքով անցուցի օրս։ խոստովանեցայ մեղքերս առաջի Աստուծոյ։ և այսպէս ամէն տարի այն օրը նոր կը պահէի։

տեսաւ Աստուածն իր այլատարազ պատ-
կերքը՝ ծիծաղելէն կըմարէր։

Այս բաներն անցնելէն ետև նորէն
սկսաւ ամաններ շինել. շինած փուռը ու-
զածին պէս կատարէց, մէջը կրակ վառէց
տաքցուց, ու փորձեր կընէր, որ վէռնիճ
կամ (սրռ) տայ. շինած ամաններըը դրաւ
փուռը, կամաց կամաց կրակը շատցուց.
անանկ որ փուռանը ամէն դին կրակ դարձաւ։
Այս սոսկալի կրակը մինչև իրիկուն
քշեց. անկէ ետև կամաց մը կրակը քիչ-
ցուց։ Աստքը պտուկ մը դուրս հանեց
փուռէն՝ նայեցաւ որ ուզածին պէս չէ ե-
զած տրտմեցաւ. մէկալոնք ալ հանեց տե-
սաւ որ լաւ չէն եփած։

Անոնց մէջէն ամանմը ձեռքն առաւ
դիտեց, որ քար դարձեր էր, զարմանա-
լով ուրախացաւ. և իրեն մեծ տարակու-
սանք եղաւ, ինքն իրեն կըսէր թէ ի՞նչ
պատճառ կրնայ ըլլալ որ մինակ այս մէկ
ամանը այսպէս ըլլայ, ու մէկալոնք չըլ-
լան. որովհետև ամէնն ալ մէկ հողէ շի-
նեցի, և մէկ փուռան մէջ եփեցան։ Խիստ
շատ մտածեց այս բանիս վրայ. բայց չէ
կրցաւ պատճառ մը գտնել։ Աստքը մտմը-
տալով միտքն ընկաւ թէ այն ամանին մէջ
քիչ մը աղ կար երբոր փուռը գրաւ. սիր-
տը հանդչեցաւ որ այս աղէն ասանկ ա-
պակիացաւ (սրռ) եղաւ ամանին մէջ։

Իրաւ Յոսեփնսօն դիպուածով գտաւ այս բանս. բայց Եւրոպա շատոնց է որ աղը կը գործածեն ապակի կամ վէնիճ տալու համար. շատ բան կայ որ մէջը աղ խառնելով ապակի կը դառնայ։ Ուրեմն պէտք էր աղի ջրով ամանները լուալ, և քիչ մը աղ ձգել մէջը. ահա դիւրին ապակի կը դառնային ամանները։ Ուստի հետեւեալ օրը փորձմ՝ ըրաւ այսպէս. երբոր սաստիկ կը վառէր փուռը քանի մը ամանաղի ջրով շփեց. ուրիշ ամաններուն մէջ աղ դրաւ. այս երկու փորձով զանոնք փուռը դրաւ։ Այս աշխատանքին մէջ խեղճ Յոսեփնսօնին վրայ հիւանդութիւն մը եկաւ. գլուխն ու սիրտը կը ցաւէին. բոլոր մարմինը թուլցաւ. անանկ որ իմացաւ թէ գէշ տրամադրութիւն մէջ է, շատ պիտի ծանրընայ։ Պէվ երկնի և երկրի ստեղծող՝ կրսէր, ինչ պիտի ըլլայ իմ վերջս. ինչպէս պիտի ընեմ երբոր չի կրնամ տեղէս շարժիլ. չունիմ օգնական որ հոգայ զիս օգնէ տկարութիւնս. չի կայ բարեկամ որ մահուան քրտինքս սրբէ, ու կաթ մը ջուր տայ բերանս. ո՜հ ո՜ւմ իմ ո՜ւմ. ես ի՞նչ պիտի ըլլամ։ Անանկ ոտքի վրայ կեցած երբ կը խօսէր, նայիս մէկէն ընկաւ գետինը. մարելիք եկաւ վրան։ Այս միջոցիս մէջ անանկ ջերմեռանդութիւն անանկ տաքութիւն եկաւ սրտին որ չի պատ-

մըվիր. հաստատ յուսով և որդիական սիրով ՝ այ ապաւինեցաւ. երկնաւոր հօրն ողորմութիւնը զրաւ յոյսն որ ամէն տեղ ներկայ է և բարերար։

Որոլոր մարդկային օգնականութէ զրկըված ըլլալով՝ նաև աշխարհքէն զրկըվիլը բաւական չեղաւ խեղճին, իր բնական ուժէն ալ զրկըվեցաւ. որ մինչև անատեանը ունէր, որպէս զի խեղճութիւն չի կորսըվի. ուստի անկէ ետև մնաց իրեն օգնական և միխիթարիչ ՝ն՝ միայն. ուրիշ տեղէ ՝նար մը չունէր բոլոր աշխարհքիս մէջ։ Որետնին վրայ ընկած զարհուրելի մտածմունքներով կըտանջըվէր. ձեռքերն իրար կապած՝ ոչ կրնար խօսիլ, և ոչ միխիթարական բան մը մտածել. հապա աչքերը միայն երկինքը տնկած այսչափ կրնար երբեմն զուրցել. ՝ն՝ ՝ն՝ ողորմած, սրտանց հառաչելով (*)։

Սակայն սրտին տագնապը թող չի տըվաւ որ ասանկ մնայ հոն. այլ ստիպեց որ ելաւ բոլոր պէտք ըլլալու բաները ժողը-

(*) Որոպէնսօն օրագրութիւնը մէջ երկար կըպատմէ այս ողորմելի վիճակը. որ յունիսի ամսուն պատահեցաւ կըսէ, յունիսի 19ին սկսաւ մինչև 27 օրը քշեց անտանելի նեղութիւն։ Կաև տաքութիւն մէջ զարհուրելի բաներ կըտեսնէի կըսէ, որ չի պատմըվիր. թէպէտ սաստիկ տաքութիւնը շատ օր չի քշեց։ Կերևնայ թէ այս հիւանդութիւնը օդին տաքութէն պատահեցաւ։

վեց բերան պառկած տեղին քով շարեց որչափ կարելի էր. որպես զի մէկէն կարօտութեան մէջ չինի երբեմն հիւանդութիւնը բոլորովին ձգէ զինքը։ Հապա թէ կրցաւ քօքօ ընկուզին ամանովը քիչ մը ջուր բերել. ընկաւ տեղին մէջ հոգնուի առաւ. Եաքը եկաւ քանի մը գետնիկնձոր բերաւ քովը, և 4 հատ լեմոն, որ պահեր էր. անկէ ետև այլ ուժը հատաւ ընկաւ այն տրտմալի անկողնին վրան մնաց։

Եթէ ՝այ կամքն ըլլար յանկարծ հոգին առնել, մեծ ուրախութիւն կուտար կեանքը. բայց չէր համարձակեր այս բանը խնդրել ստեղծողէն. կըվախնար որ ՝այ դէմ կըլլայ։ Արիթէ էս ՝այ ստեղծած ծառան չե՞մ կրսեր. միթէ այն չէ՞ իմ սիրական հայրս, իմ ամենակարող և իմաստուն ՝արս. հապա ի՞նչպէս յանդգնիմ առաջարկել իրեն այն բանն որ ինձի պիտի ընէ իր բարի կամքը։ Ա.յո՝ այն ինքը ամենէն աղէկ գիտէ ինձի պէտք եղած բանը. լաւ գիտեալով իմ շահս՝ աղէկ կընէ ամենակարող ՝ածս, բարի ստեղծողս։ Ա՛վ հոգիս մի՛ խռովիր, հանդիստ եղիր. դարձիր առ ՝ած այս ողբալի վիճակիդ մէջ. դարձիր առ ՝ած փրկիչն աշխարհի. այն քեզ կըհանի թէ՛ ողջութեդ մէջ, և թէ մահուանդ։

Ա.յս խօսքերէս ետև հոգի առաւ, ե-

լաւ ծնկան վրայ բոլորով սրտով ՝ոյ աղաղակ ըրաւ այսպէս։ Դէպի յանձներ եմ զիս ո՞վ հայր իմ երկնաւոր. միայն քու հայրական գթութեդ յանձներ եմ զիս. ինչպէս որ կամքդ է, այնպէս ըրէ՛ ինձի. ինչ որ ինձի խրկես՝ ջերմեռանդ սրտով կը քաշեմ. միայն թէ կարողութի տո՛ւր որ քաշեմ։ Ո՛հ հայր սիրելի շնորհէ՛ ինձի խնդիրքս. տո՛ւր համբերութի այս խեղճութես մէջ. հաստատուն յոյս մը տո՛ւր որ ողորմութեդ ապաւինիմ։ Լսո՛ւր աղաչանացս. լսէ՛ մինակ այս խնդիրքը քու ողորմելի ծառայիդ, որ այսպէս կը տառապիմ։ Լսո՛ւր ինձ վա՜ սիրոյ ողորմութե՛ քո։

Այս միջոցիս մէջ մտելով սոսկալի գոչ մը եկաւ վրան. որ թէպէտ ծածկըվեցաւ լամային մորթովը, բայց ամենևին չի տաքցաւ. այս պաղութիը լման երկու ժամ քշեց. անկէ ետև տաքութի սկսաւ. անանկ տաքութի՝ որ կարծէիր թէ կը բռնկի, որ բոլոր երակներուն մէջ տարածվեցաւ. մինչև Լուսնոծին սիրտը կեր-ը կինջներ նեբսի սաստիկ տաքութէն. ինչպէս որ կը լայ շատ վազող մարդկանց։ Այս ողորմելի վիճակին մէջ այնչափ տըկարացաւ, որ հազիւ թէ քօքոյին ամանը կրնար բերանը տանիլ, որ կաթ մը ջուր խմէ, ու լեզուին կրակը մարէ։

Դուսկ յետոյ սկսաւ քրտնիլ անանկ

շատ որ ջուր կտրեցաւ, այս քրտինքը մէկ ժամէն աւելի քշեց. բայց իրեն շատ օգուտ ըրաւ և ուժ մը բերաւ։ Այն միջոցին մէջ միտքն ընկաւ իր վառարանին կրակը. գիտէր որ պիտի մարի թէ որ փայտ չի դնէ. ուստի սիրտը չդիմացաւ եկաւ չորս ոտքով քանի մը կտոր փայտ մէջը ձգեց, որ մինչև միւս օրը երթայ. որովհետև իրիկուն էր եղեր։

Այնէն առաւել տրտմալին այն գիշերն եղաւ Լոսկնաօնին. վա՜ղ մինչև՛ի լոյս տաքն ու պաղը ետևէ ետև շարունակեց՝ մէյ մը կըգողար, մէյ մը կըբուրնկէր. նաև սոսկալի գլխու ցաւ մը ունեցաւ որ աչքը չի կրցաւ գոցել։ Այսուվ խիստ շատ տկարացաւ այն գիշերը. անանկ որ հազիւ կըշարժէր։ Առաւօտուն քիչ մը վրայ եկաւ. գետինը քսվելով ձորով կըրցաւ քանի մը փայտ կրակը ձգել՝ որ չի մարի (*)։

Լսակ իրիկվան դէմ հիւանդուելը նորէն սաստկացաւ. ուզեց որ երթայ կրակը հո-

(*) Բնական է մարդուս, որ իր քաղաքական կեանքը պահելու համար միշտ կըջանայ պէտք եղած բաները հոգալ ուրչափ մեծ թշուառուէ մէջ ըլլայ. նաև եռքի շունչը հանի՝ կընայի որ պակաս բան չի մնայ. անոր համար ծերերը մինչև եռքը կըջանան ամէն բան պատրաստ ունենալ. շատը կայ որ ունեցած բաները կըվախնայ գործածել, թէ օր մը պէտք կըլլայ. իրեն համար կըպահէ ու չի վայելեր։

գայ՝ չի կրցաւ. ուստի հարկադրեցաւ որ ամէն բան թողու՝մեռնելու պատրաստութիւն տեսնէ։ Եպիսկոպոսն դիշեր առջի դիշերվան պէս շատ չի տագնապեցաւ, բայց հասկրցաւ թէ վաւերանին կրակը մարեցաւ. տեսաւ որ քովի ջուրն ալ հոտեցաւ. հոգով տրտմութիւն խառնվելով ուղղմելին՝ հիւանդութիւնը կատղեցաւ. անանկ որ Եւսեբիոսն պառկած տեղն ալ չէր կրնար շարժիլ. ուստի միտքը դրաւ թէ այլ մահը մօտ է իրեն, պիտի մեռնի ապատի։ Այս ուրախութիւնը միայն շատ զինքը զօրացուց, որ պատրաստուի տեսնէ այս անդառնալի ճամբորդութեանն, ու ջերմեռանդ աղօթքներով երթայ աշխարհքէս ապատի։

Արտանց լաւ ղղջում ընելով նախ մեղքերուն թողութի խնդրեց. ետքը շնորհակալ եղաւ այ տված բարութեցը համար, որ անանկ անարժանին շնորհեր էր։ Այց մասնաւորապէս շնորհակալ եղաւ տված նեղութեցը վրայ. որով զինքը կուզեր հոգևորապէս շակել, լաւ գիտնալով թէ ուրչափ իրեն օգտակար էին այն նեղութիւնները։

Յետոյ աղօթք ըրաւ ծնողացը համար, որ բարութի գտնեն, ու մխիթարվին ապա և ապա իւր անմահ հոգին յանձնեց ողորմած ձեռքը երկնաւոր հօրը։ Անկէ ետև

եր կնցաւ կրսպասէր մահուան հանդերձ մխիթարանքով. իրեն անանկ կուգար որ մահը մօտեցեր է. վա՜ղ չի տագնապը խիստ եւ ելցաւ. կուրծքը խժալով կելլեր կինջ-ներ, և շնչառութիւնը քիչ քիչ դժուարցաւ։ Ո՛հ կրսէր ահա հասաւ ետքի բոպէն կեանքիս. որուն միշտ կրսպասէի։ Այսիս յանկարծ այլալութիւն մը սիրտը մտաւ որ չէր տեսած կենացը մէջ. մէկէն շունչը բրունբլեցաւ. գլուխը ծռեց անշնչացաւ մնաց անկդայ։

ՅՈՒՆ. Ղեպեաց.

Ինչպէս ըսինք, Ոսկենսանին վրայ այն մեծ այլայլուին որ եկաւ՝ գլուխը կախեց անցաւ առանց շարժելու. մինչ չի աւելի մօտ էր մահուան՝ քան թէ կենաց։ Սակայն շատ չանցաւ այս թմրութէն մէկ-նիմէկ արթնցաւ. նորէն խելքը գլուխն եկաւ, ու ներսէն խորունկ հառաչանքով մը շունչ առաւ։ Ինչքը բացաւ չորս դին կընայէր որ հասկընայ թէ ո՞ւր է։ Այրայ գալով սկսաւ տարակուսիլ թէ ի՞նչպէս ողջ պիտի մնայ այն աստիճան խեղճութիւնը մէջ. բայց մէկէն այս տարակուսանքը մաքէն, հանեց ու սկսաւ քաշածները մտաածելով տրտմիլ. որուն մեռնիլը ապրելէն անոյշ կուգար։

Մեպէտ խիստ մեծ տկարութիւն մէջ էր, սակայն մասնաւոր սաստիկ ցաւ մը չունէր։ Այն սարսափելի տաքութիւն մէջ աղէկ քրտինք մը եկաւ վրան, որ շատ առողջարար էր. անոր համար աղէկ ծածկրվեցաւ լամանելրուն մորթով. կէս ժամ անցնելէն ետև քրտինքը դադրեցաւ ինքն ալ շատ հանգստացաւ։ Այլ ծարաւ կրպապակէր՝ ջուր կուզէր որ ծարաւն անցրնէ. ջուր չէր մնացեր քովը, նայեցաւ որ քանի մը լեմոն կար, մէկ հատը բերանն առաւ մեծ դրժուարութիւնէ կճեպը փրցուց՝ ջուրը ծծելով ծարաւն անցուց սիրտը պաղըշկեցաւ, և էտքը անոյշ քուն մը եկաւ վրան, մինչև՝ի լոյս աղէկ քնացաւ. ու մարմինէն անդադար արտաշնչուն կըլլար (*)։

Երբոր քունէն արթնցաւ Պոպէնսօն, շատ սիրտը հանդարտ ըլլալով մեծապէս ուրախացաւ առջի օրուան քաշածները մոռանալով։ Այ՜ զի հիւանդուն կատարելապէս դադրած էր. տկարութիւն՝ի զատ բան մը չունէր։ Շատ չանցաւ ախորժակն

(*) Մարդուս մարմինէն ելած շոգիները՝ արտաշընչութիւն կըսվին. որով մարմինը իր ծակոտիքներէն իրը շունչ առնելով առողջ կրպահվի. որովհետև մարդուս կաշին անհամար ծակեր ունի, մէկ գիշերվան մէջ հօխայէն աւելի գոլորշիք կելլէ. երբոր այս ծակոտիքը կոգոցվին՝ հարկաւ հիւանդուն կրպատճառի. և հիւանդը վատնդի մէջ կիյնի։ Անոր համար որչափ որ աւելի արտաշնչուն կելլեր Պոպէնսօնին մարմինէն, այնչափ շատ առողջուն գտաւ։ Տես ՃեմՀ 202։

ալ բացվեցաւ. առաւ եփած խնձոր մը լեմոնին ջուրը վրան սխմեց որ սիրտը պաղըշցնէ՝ քիչ մը կերաւ։

Երկու օր լամաները անանկ մնացեր էին անտեր. ոտքին տակը պառկած խեղճ կընայէին իրեն. և կերևնար թէ կուզեն հասկընալ արդեօք պիտի ըռընտնայ իրենց ետը։ Այս կենդանիները ուղտի նման ըլլալով՝ երկար ատեն առանց ջուր խմելու կըդիմանան. թէ որ ասանկ չըլլային՝ շատոնց մեռած էին առանց ջրի։

Իսկ Յոսէնսոն աւելի տկար ըլլալով՝ ձար չուներ որ երթէ պանոնք նայի ջուր խմցընէ. վա՜ զի ասոնք ընելու ատեն կուզեր։ Սակայն առջի բռնած լամանն որ դուռանը մօտ կըկենար՝ տիրոջը քով մօտեցաւ. անալ տկար ուժովը ամանը կըդներ քիչ մը կաթ կըկթեր լամային։ Այս թաղէ կաթը շատ օգտակար ըլլալով որչափ որ կըխմեր աւելի առողջութիւն կըգտներ։

Այն օրը հանգիստ քնացաւ լաւ մը. մինչև որ արևը մարը չի մտաւ չարթնցաւ։ Երբոր արթնցաւ՝ ախորժակը խիստ բացեր, ուտելու բան կուզեր. ուստի քանի մը եփած գետնախնձոր առաւ լեմոնի ջրով կերաւ՝ բաւական եղաւ իրեն. նորէն քնացաւ։

Այս քունը որչափ որ շատ քշեց՝ հանգիստ առաւ Յոսէնսոն, և առողջութիւն

գանելով անանկ ուժ եկաւ վրան, որ միւս
օրը կրցաւ վեր ելլել. և սկսաւ փորձ ընե-
լով քանի մը քայլ առնել գլորելով։ Յա-
զիւ կրցաւ երթալ մինչև բակը. և հոն
աչքը վերցուց երկինքը տեսաւ որ արե-
գակին ճառագայթը ծառին տերևներէն
անցնելով երեսին զարկաւ. ահա անոր
անոյշ տաքութիւնն հոգի առաւ ողջանց է-
կաւ վրան. կարծեց թէ նորէն աշխարհք
եկաւ. ուստի սկսաւ պօռալ. ո՞վ աղբիւր
յաւիտենական կենաց ՝ուծ իմ և կեանք.
փառք քեզ անվախճան. որ զիս այս ան-
գամ ալ արժանի ըրիր որ արեգական լոյս
տեսնեմ, որ սքանչելի լուսովը աշխարհք
կը լուսաւորէ։ Շնորհակալ եմ որ զիս
չի ձգեցիր, ուր բոլոր աշխարհք զիս ձը-
գեր է. փառք քեզ, որ իմ կեանքս նո-
րէն ինձի շնորհեցիր։ Իրաւի՝ պարտական
եմ որ բոլոր կեանքս քեզի նուիրեմ իմ
ուղղութես համար. և կենացս մէջ բոպէ
մը չի թողում որ անցնի առանց շնորհա-
կալ ըլլալու. ոչ զի՝ամ ժամ պատրաստ
ըլլամ թեւաւորիլ թռչիլ յաւիտենակա-
նութեան մէջ, ուր ամէն մարդ պիտի առնէ
իր վարձքը, և ամէն գործոց հատուցում
պիտի ըլլայ թէ՛ բարի և թէ՛ չար։

Ն. Յակոբոս Ոսկինսոն Ջերմեռանդ մտա-
ծողականներ ընելէն ետև՝ սկսաւ բնական
ստեղծված բաներուն վրան ալ զարմա-

նալ. Երբեմն աչքը վերցըներ երկնից անչափ տարածումը կրգիտեր. Երբեմն նոր կանանչցած ծառերուն, և աղուոր աղուոր ծաղկած թուփերուն վրայ կընայեր. և երբեմն սիրական լամանեերուն վրայ նայելով կրխնամեր. որոնք բոլորտիքը շարված իբր թէ կուրախանային իրեն առողջութիւնը վրայ։ Պօպէնսօն ասոնք դիտելով խիստ շատ սիրտը շարժեցաւ քաղցրութիւնէ. ինչպէս որ Ճամբորդ մը երկար ատեն հեռանալէն ետև կուգայ իր ընտանեաց քով կըհանգչի, որչափ մեծ ուրախութիւն կունենայ. նմանապէս ինքն ալ ադեկ Ճանչնալով այս մեծ բարիքները և գմայլելով սկսաւ քաղցր գրուարթութիւն արտասուել։ Որչափ անգամ՝ որ դուրս ելլալով օդ կառներ, և կաթին ու ջուրը իրար խառնելով կրխմեր, այնչափ աւելի սիրտը կրբացվեր և առողջութիւն կրգտներ։ Շատ չանցաւ առջի ուժը գտաւ. մինչև սկսաւ իր առաջվան գործքերն ընել։ Ալ՝ և առաջ գնայ նոր շինած ամանները նայել՝ թէ ինչ եղան փռանը մէջ, ուստի երբոր փուռը բացաւ, շատ մեծ ուրախութիւն եղաւ իրեն. վա՜ղ մի տեսաւ որ բոլոր ամանները անանկ լաւ թրծելով քարացեր էին՝ որ վարպետ բրուտ մը անկէ աղեկ չէր կրնար ընել. բոլորովին զբաւարձանալով այս յաջողութիւնը վրայ՝ մուռ-

ցաւ նայելու թէ վառարանին կրակը ինչ
եղաւ։

Յետոյ եկաւ գնաց վառարանին քով.
երբոր տեսաւ թէ կրակը մարած է՝ մե-
ծապէս տրտմեցաւ. հառաչելով գլուխը
ծռած մէյ մը ամաններուն վրան կընայէր,
մէյ մը փռանը վրան։ Սակայն զինքը բըռ-
նելով չափաւորեց տրտմութիւնը, որչափ կա-
րելի էր՝ շատ չէր կսկիծար. և այսպէս խօ-
սելով կըմխիթարվէր. նոյն ատենին նա-
խախնամութիւն որ զիս հոգալով առաջ այն
կրակը տվաւ ինձի, երբ որ ուզենայ իր
ձեռքն է կրնայ նորէն տալ. եթէ ինքը
պատշաճ դատի, ես զուրկ չեմ մնար։

Այսու Անտոնիոսն փորձած էր որ հոն
ձմեռ չըլլալուն համար ցրտէն վախ չու-
նէր. առանց կրակի կրնար ըլլար։ Այ-
թիպտոս մանկուէն'ի վեր սորված էր ե-
փած կերակուր՝ և միս ուտելու. բայց
նայեցաւ որ կրնայ միս և եփած բան չու-
տել առանց մեծ դժուարութեան. միայն կաթ
և պտուղ ուտելով կրնար ապրիլ։ Ընկէ
ետև միտքը դրաւ որ շինած ամաններուն
մէջ կաթ լեցրնէ, կարագ շինէ ու գետ-
նիինձորին հետ միատեղ ուտէ. որ հա-
մով ըլլայ։ Տեսաւ որ փայտէ աման շինել
անկարելի էր. փորձեց թէ արդեօք հողէ
շինած մեծ ամանին մէջ կրնա՞յ շինել.
ուստի որչափ որ պէտք էր կաթը լեցուց

մէջը. նաև շինեց տափակ փայտ մը, ըս-
կըսաւ ասով զարնել կաթը. և այնչափ
անդադար վեր վար շարժեց, որ մինչև ե-
ղը վրան ելաւ, թանը զատվեցաւ. ետքը
ժողվեց եղը քիչմը աղով խառնեց։

Այսպէս ահա այս ուզած բանն ալ կա-
տարվեցաւ. բայց երբոր այս գտած ձար-
տարուեը վրայ պիտի ուրախանար, միտքն
ընկաւ թէ կրակ չըլլալով գետնիմնձոր
չէր կրնար եփեր, որ եղով ուտէ. առանց
կրակի անհնարին էր որ ձարը գտնէ։
Ուստի կարագ եղը առանց հացի, և ու-
րիշ բանի ինչո՞ւ պէտք էր։ Այս պատճա-
ռաւ սրտին նեղուէն մէկ դի նետեց կա-
ղագն ու սկսաւ նորէն տրտմիլ խեղճուք։
Հա՛ դարձեալ կարօտութիւն մէջ զինքը
կըտեսնէր ինչպէս որ առաջ էր։ Որաւի՝
ոստրէները՝ կաթը՝ քօքօ ընկուզը, և չոր-
ցուցած միսը կրնային ծառայել իրեն կե-
ղակուրի տեղ. սակայն կըմտածէր որ
դիպուածով մը կրնան ասոնք ալ ձեռքէն
երթալ։ Ուստի այսպէս խորհելով
գէշ եղաւ անանկ՝ որ չէր կրնար բան մտա-
ծելով հնարք մը գտնել, և իւր տրտմելի
վիճակը բարեկարգել։

Ուստի յուսահատելով կըսեր թէ հի-
մա ի՞նչ ընելու է. թէպէտ առանց գոր-
ծիքի միայն երկու ձեռքով այնչափ բա-
ներ ըրեր էր. սակայն սիրտը կոտրելով

իրեն կուգար որ ուրիշ բան պէտք չէ ը-
նել. հապա դատարկութիւն և քնանալով
մնացած կեանքն անցընէ։ Բան զայս ո-
զորմելի վիճակ չէր կրնար ըլլալ Յովհան-
նէսին, որ ամէն բանէ սիրտը կտրեցաւ.
մէ՛ զի արդէն անանկ սորված էր աշխատե-
լու, որ չէր կրնար դատարկ կենալ առանց
օգտակար աշխատանաց։ Բսալ կըմտմը-
տար յաճախ, թէ մեծ յանցանք է պա-
ղատպ ժամանակն անցընել այն առանձնու-
թիւն մէջ զուրկ ամ օգնականութիւն՝ որ ջա-
նալով կարենայ բոլոր հարկաւորութիւնը կա-
տարել. մանաւանդ կըսէր, որ շարունակ
աշխատանքն է մայր ամ առաքինութիւնց.
և սովորական ծուլութիւն է աղբիւր ամէն
չարեաց։ Շատ աղէկ կըմտածէր զասունք.
մէ՛ զի դատարկութիւնը վնասն այս խեղճութեց
մէջ ձգէր էր. արդարև խիստ հարկաւոր
է որ մանկուն ատենը կըրթըվին տղաք,
և սորված ըլլան միշտ աշխատելու. որ ա-
մէն բանէն աւելի հարկաւոր է. վասն զի
դատարկութիւնը որոգայթ է մանկանց, որ
գէշ կըլլան, և անզգամներուն ձեռքն
իյնելով կըկորսըվին։

Բնբաղդ Յովհաննէս այսպէս մտածե-
լով սկսաւ մէկ դին մէկալ դին երթալ
կղզիին մէջ. ոչ զի կարենայ բանմը գտնել
աշխատելու, որ ապատի դատարկութէ։

Ուստի ամէն բան ձգեց սկսաւ գիշերը

ցորեկ մամլոտալ թէ ի՞նչպէս կրնայ պղտի նաւ մը շինել. վ՞ի՞ զի խիստ մեծ նեղուն կը քաշէր մինակուն թէն. մանաւանդ կրակ կը մարելէն ետև։ Ի՞նդադար հոգալով կը ջանար, որ այս ձամբայով կարենայ ազատիլ խեղճուն թէ. և կը յուսար որ Ի՞մերիգայի ցամաք երկիրը մօտ է հոն. թէ որ պղտի նաւ մը շինելու ըլլայ, կարելի է որ ասդին անդին ծովին մէջ շրջելով ցամաք գտնէ, մարդ տեսնէ։ Ի՞ոլոր այս մտածմունքներով պաշարված էր. ասանկ մոմլոտուքով օրմը ելաւ գնայ յարմար ծառ մը փնտրուելու, որ կարենայ մէջը փորելով նաւակ (ջանրխ) շինէ։

Կղզին մէջ ասդին անդին շրջելով էր տեսած տեղերն ալ գնայ, շատ նոր ծառեր տեսաւ. որոնց վ՞ր պտուղ ալ կար. կը փորձէր թէ կրնայ ուտել։ Գտաւ հոն բոյսեր, որ ցորենի գլուխ կապած էին ասանկ աղէկ, որ ամէն մէկին վրայ 200 հատ ցորեն կար, գեղեցիկ շարված իրարու քով բուստի (մէրճանի) նման։ Զարմանալով կուրախանար որ հայ շինէ. բայց ի՞նչպէս պիտի ալիւր ընէր, ու էփէր առանց կրակի։ Սակայն քանիմը հասկ փրցուց բերաւ որ բնակարանին քով ցանէ. ի՞նչ գիտնամ կըսէր ինքնիրեն, կրնայ ըլլալ որ ետքը կարենամ ձար մը գտնելով օգուտ հանել։

Ռիչմը առաջ գնաց նոր ծառ մը տեսաւ, որուն վրայ կախված էին խոշոր ոձեղներով պտուղներ. մէկ հատը բացաւ մէջը գտաւ 60 հատ նուշ մանաւոր տեսակով. որ Թէպէտ իրեն ախորժելի չէկաւ համը, սակայն քանիմը հատ տոպրակին մէջ դրաւ աւելի հասածներէն. որ էին քաքաոյի պտուղ, որով կըշինեն չիքոլաթ (*):

Նուսակ յետոյ հասաւ մեծ ծառի մը քով, որ ամենևին չէր ճանչնար. պտուղները քաքաոյէն խոշոր էին, բայց կձեպ չունէր. բոլորը միս էր խիստ համով։ Այս ծառը շատ նման էր վերինին. որ միակերպ վարէն վէր բարձրացած էր, ու ծայրը միայն քանիմը տերևներ բուսած էին պսակի ձևով. որ հացի ծառ կըսվի Եղեր, ինչպէս Էտքէն հասկըցաւ. մ'ա՞ զի այս պըտուղներէն հացի պէս կըշինեն կուտեն (**)։

(*) Չիքոլաթ խմելիքը այս պտուղով կըշինեն. որ մանր նուշի նման կըլլայ։ Այս պտուղները Եւրոպա բերին շաքարով շինեցին չիքոլաթը. որ Եւրոպացիք խիստ կըսիրեն։ Ռոպէնսոն չի հասկըցաւ ինչ ըլլալը. վասն զի կրակ չունէր որ բոհրէր ու եփէր. կարելի էր թէ համն հասկընար ինչ ըլլալը։

(**) Ամերիգացիք այս ծառին պտուղը ժողվէին ջրով կեփէին. ու պաղելէն ետև կտոր կտոր կուտէին, որ հացի տեղ կըբռնէր։ Այս ծառը արմատէն վեր միակերպ երկան ըլլալով՝ շատ յարմար էր նաւ շինելու. որ կերևնայ թէ հին ատենն ալ ասանկ մէջը փորելով կըշինէին նաւը։

Լաւոյկենսոն նայեցաւ որ ծառին արմատն վերը քիչմը փորած փոս էր՝ մէկէն միտքն ընկաւ թէ իր մտացած նաւին համար խիստ յարմար էր. եթէ կտրէր վար ձգէր ու մէջը բաւական փորէր։ Սակայն այսպիսի ահագին ծառը կտրել, և այս օգտակար բանը շինել սոսկալի աշխատանք կուզէր. մեծ տարակուսանաց մէջ ընկաւ։ Շատ երկար մտածելէն ետև առանց որոշելու դարձաւ իր տեղը. միայն նշան դնելով լաւ դիտեց տեղն որ չի կորսընցնէ։

Գալու ատենը Ճամբան գտաւ իր շատոնցվան փափաքած թուրթակ թռչունին բոյնը. վո՞ զի տեսաւ ծառի մը վրայ բոյնը՝ մէջը ձագերով. կամաց մը ելաւ ձեռքն երկնցուց բունին մէջ ու բռնեց. բայց մեծցած և թևերն եկած ըլլալով թռան. մէկը միայն ամենէն տկար ըլլալով կրցաւ բռնել. այնչափ ուրախացաւ վրան որ իբր թէ գանձ մը գտաւ։ Վո՞ զի կըյուսար թէ այս թուրթակին խօսիլ սորվեցընէ, ու դէթ անկէ մարդու ձայն առնէ, և խօսք մը լսէ։ Նու այսպէս հետը կենակցելով և խաղալով կուրախանար։

Իրաւի՝ այս բանը մեզի թեթև տղայութի մը կուգայ, որ թուրթակին խառնակ խօսքը իրեն այնչափ մեծ կերևնար. սակայն թէ որ մենք Լաւոյկենսոնին տեղն ըլլայինք, անատենը լաւ կըհասկընայինք

թէ ի՞նչ մեծ խեղճութիւն է զուրկ ըլլալ մարդկային ընկերութենէն. և ի՞նչ մեծ բան է մարդկային ընկերութիւնն՝ որ կրվայելենք ու չկայանենք մեծութիւնը. նաև որչափ մեծ բերկրութիւն կըլլար մեզի թուրթակին ընկերութիւնը։

Վերջապէս Յոսէնսօն հասաւ իր բնակարանը, շուտով մէկ վանդակ (խաֆէս) մը շինեց թուրթակին ու մէջը դրաւ կախեց իր պառկած տեղին քով. և մեծապէս ուրախանալով պառկեցաւ. ոչ թէ նոր բարեկամ մը եկեր էր իրեն այն իրիկունը։

ԺԳ. Գլուխ.

Բոլոր նոյն գիշեր Յոսէնսօնին մտքին մէջ շինելու նաւը կըդառնար. անանկ որ չի կրցաւ աչքը գոցել։ Ի՞նչա կըմտածէր թէ արդեօք ծառը կտրէ՞ թէ չի կտրէ. վերզի տարակուսած էր որ չի կրնար նաւը շինել։ Ի՞նչմը կըմտածէր ծառը կտրէ աշխատի, մէյմ՞ ալ կըմտածէր որ զանց առնէ պարապ տեղը չաշխատի ու չըլլալու բանին ձեռք չի զարնէ։ Նաև որովհետև ծառին վրայ պտուղները կային՝ կափսոսար կտրելու. բայց նաւին օգուտը մտածելով աւելի կուզէր կտրել, որ անով միայն կրնար երթալ մարդ գտնել, ու այն անա-

պատ մինակուն՝ ազատիլ։ Թէպէտ այն չափ մեծ ծառը կտրել ու մէջը փորելով նաւ շինելը սոսկալի դժուար և հեռու բան էր իբր անկարելի. որ քարէ կայինէն՝ի դատ բան մը չունէր. սակայն շարունակ աշխատելով համբերութիւն կը յուսար որ գլուխ տանի գործը։

Հօպէնսօն բոլոր գիշերը այսպէս մտածմունքով անցուց. ամէն ընելու բաները աչքին առաջը բերաւ մտածեց. որովհետև որոշեր էր որ մէկ բանը մինչև որ առաջ լաւ չի մտածէ՝ ամենևին չըսկըսի։ Յուսկ յետոյ բանը բերաւ այս պատճառին վրայ կապեց, թէ անխելքութիւն է քիչ և սառոյգ շահը ձգել մեծ և անստոյգ շահին համար։ Նատենը միտքն ընկաւ շանը առաջը. որ լոզալով երբ կանցներ գետէն կտոր մը միս բերանը՝ ջրին մէջ տեսնելով շուքը՝ ձգեց բերնին միսը։ Արձեալ՝ միտքը բերաւ երկրագործներուն գործքը. որոնք կըցանեն այն ցորենն որ ուտելու էին. բայց բերաններուն կըկտրեն որ ցանեն ու աւելի շահին և շատ ցորեն ունենան։ Իրաւի՝ կըսէր շանը գործքն էր յիմարական, որ շուքին ետևէն վազեց՝ պարապ ելաւ. սակայն երկրագործներուն ըրած գործքն է խոհեմութիւն և յոյսն է բանաւոր. և շատ անգամ ալ աւելի կըշահին. թէպէտ կրնայ ըլլալ որ գիպուա-

ծով կորսըվի երբեմն, և մնաս գայ։

Ուրեմն պէտք է որ ես այս երկրորդ դիպուածին հետևիմ շարունակ համբերուելք ջանամ աշխատիմ. որ կարենամ յուսալ թէ վերջապէս կըշինեմ այս ծառէն մէկ նաւ մը։ Այս բանը յաջողելէն ետև յոյս մեծ ունիմ՝ թէ անապատ կղզիս ալ կելլեմ կազատիմ. և ասով կարելի է որ մարդ ալ գտնեմ։

Այս փափաքելի դատմունքը անանկ Ռոպէնսոնին սիրտը շարժելով միտքը դարձուց, որ մէկէնիմէկ պաւկած տեղէն վեր ցատկեց՝ կացինն առաւ ծառին վրայ վազեց սկսաւ կտրել։ Ինպիսի սոսկալի աշխատանաց ձեռք զարկաւ, ու չարաչար կըտանջըվեր դիմանալով, որ ուրիշն ըլլար՝ հազար անգամ յուսահատեր էր. մինչև առջի անգամ զարնելուն՝ կացինը ձեռքէն կընետեր. մը զի ոչչափ համբերող մարդ ըլլար՝ այս աշխատանքը ոչ միայն անխելքութի կըդատեր. այլև անկարելի (*)։

Այց որովհետև Ռոպէնսոն իրեն ան-

(*) Այս ծառը Ամերիկայի մէջ շատ տեղ կըգտնըվի. որ մինչև 50 ոտնաչափ կըբարձրանայ՝ հատատ 5 ոտնաչափ, ասկէ Ամերիկացիք կըշինէին Քանոտ ըսած նաւակը, որով ասոնն անոնն կերթային։ Սակայն այս կղզին կաւուտ ըլլալով ծառերը կարծր էին. անոր համար Ռոպէնսոն շատ կըտանջըվեր այս ծառը կորելու։

փոփոխ օրէնք մը հաստատեր էր, որ միտ-
քը գրած բանը շուտով չի ձգէ՝ եթէ մեծ
դժուարութիւն ալ առաջն ելլէ. ինչպէս որ
այս գործքին մէջ յայտնի ըրաւ։ Սէպէտ
կրկին անգամ աւելի դժուար ըլլար այս
աշխատանքը, ամենևին չպիտի թուլնար
սիրտը։ Աստի առտուանց մինչև կէսօր
շարունակ կաշխատեր. և բիւր անգամ
կացինը կը զարներ՝ հազիւ թէ կտոր մը
տեղ կը կտրեր։ Սակայն կը մտածէր թէ
ուրչափ մեծ աշխատանք և շատ ժամանակ
կուզէր այն ահագին ծառը կտրելու. և
ետքը նաև շինելու։

Սակայն որ այս գործքը շատ տարի-
ներ ու կարօտ էր. հարկաւոր էր նաև իր-
ենն որ ժամանակը կարգի դնէ, ու անանկ
բաժնէ ատենն որ չի յուսահատի։ Ա՞ռ զի
փորձը սորվեցուցեր էր իրեն, թէ աշխա-
տաւոր կեանքին խիստ հարկաւոր է կար-
գը. որ միակերպ ատենի մէջ ամէն բան
ընելով՝ գործքը առաջ կերթայ շարունակ։

Ա՞հա Սոպէնսօն ասանկ բաժներ էր
ժամանակը. առտուանց կանուխ տեղէն
կելլէր շիտակ աղբիւրը կերթար երեսը
ձեռքն ու ոտքը կը լուար. սրբըվելու բան
մը չունենալուն համար քիչմը կը կենար
որ ցամքի. ետքը կուգար լաթերը կը հագ-
նէր. կելլէր բնակարանին վրայի լեռան
վրայ, ու աչքը ուրիշ տեղ չի տարած ըզ-

մայլելով կընայէր միակերպ Հորիզոնին աղուորութիւնը վրայ (*) ։

Այս բնութիւն սքանչելի տեսարանը աւանակ սիրտը կըբորբոքէր որ երեսը հողին տալով երկրպագութիւն կընէր ստեղծողին մեծաւ խոնարհութիւն . և շնորհակալութիւն ընելով փառք կուտար այ զասոնք ստեղծելուն համար . նաև ծնողացն համար ալ աղօթք կընէր , օգնութիւն կըխնդրէր . որոնք թէպէտ ձգէր էր , բայց ամենևին չէր մոռցած ։ Աղօթքը կատարելէն ետև կուգար լամանները կըկթէր կընայէր որոնք քիչ քիչ շատցած էին . կթած կաթէն քիչմը կուտէր նախաճաշիկ կընէր . մնացածը կըպահէր ։ Հա օրուան առջի ժամը ասանկ կանցընէր ։ Անկէ ետև կերթար ծովուն քով ոտրէ կըժողվէր՝ թէ որ ջուրը քաշված ըլլար , ոտ վի յորեկվան կերակուր ճարէ իրեն . թէ չէ՝ բոլոր

(*) Հորիզոնը հոռմի բառ ըլլալով՝ մեր մէջ Եղերք կըսվի , որ է աշխարքիս եզերքը . անկէ կըսկըսի երկինքը . նաև արեգակն ու աստղերը եզերքէն կելլեն կըմտնեն ։ Իսկ Իոպէնասնին կղզին ծովուն մէջ տեղն ըլլալով՝ ամէն դին եզերքը կերևնար , որ ըսել է թէ կէս երկինքը ամէն դիէն կերևնար ։ Մանաւանդ առտուները արեգակն որ կըսկըսէր ելլել . ճառագայթն ալ օդը լուսաւորելով անանկ գեղեցիկ կերևնար հորիզոնն , որ Իոպէնասն կըզմայլէր կըմնար ճծային մեծվայելչութիւնը վրայ . որ այնչափ սքանչելի մեծ տարածութիւնը ստեղծեր է . և այսպէս սիրտը շարժելով փառաբանութիւն կընէր այ ջերմեռանդութիւն ։

պէտք էղած բաներըը կառնէր շիտակ կերթար ծառին քով կաշխատէր, որ կտրէ նաւ շինէ. լամաներն ալ հետը կերթային ծառին քովերը խոտ կարածէին։

Օրս ժամ անցնելէն ետև, որ չափաւանց տաքը կրկոխէր. պէտք էր որ գործքը ձգէ ու նորէն ծովուն քով երթայ ոստրէ ժողվէ, թէ որ առտուանց չէր ժողված։ Եւ ետև ծովը մտնէր կրլուացվէր օրը երկու անգամ. ետքը լամաները կառնէր կը քաշվէր բնակարանին մէջ։ Երկրորդ անգամ կրկթէր ու պանիր շինելու պատրաստուն կրտեսնէր. որով իրեն չափաւոր կերակուր կունենար. որ էր պանիր հանդերձ կաթով՝ ոստրէ և քօքօ։ Ոստոնք ուտելով գոհ կրլլար. իբր զի՝ տաք երկիր ըլլալով շատ բան չէր կրնար ուտել. ցուրտ երկիր ըլլար անոր կրկինը պէտք էր ուտել, որ կշտանայ։ Օրէպէտ մանկաւէն սորված ըլլալով միս ուտելու փափաք ունէր. բայց մահացուցանելով զինքը ասանկ կանցրնէր։ Սեղանին վրայ կրխաղար թուրթակին հետ. բան կերցրնելով հետը կրխօսէր. շատ անգամ մէկ խօսքը կրկրկնէր որ սորվի ու խօսի։

Օրպէնսօն կերակուրէն ետև ժամ մը կրհանգչէր ծառերուն շուքը, լամաներն ու թուրթակն ալ իրեն քով. որոնց հետ խաղալով խօսելով կրզբաղձանար. ինչ-

պէս մէկը տղոց հետ կըխօսի կարծելով թէ կըհասկընան. երբեմն հարկաւոր կըվ լար որ ուրիշին բան հարցընէ, անատենը անասուններուն հետ խօսելով կըհարցընէր. որոնք չորս դին շարված էին. միտքը վրան չըլլալով՝ իրեն կուգար թէ կենդանիները բան կըհասկընան։

Որ մը թուլթակը Խօլ բառը արտաբերեց. երբոր Ասպէնսօն լսեց ուրախուէն շփոթեցաւ. մարդու ձայն կարծելով չէր տեր թէ ինչ ընէ. մինչև մուցաւ կղզին և լաման՝ թուլթակը՝ մարդովը յափշտակեցաւ կարծեր թէ մարդկանց մէջ է։ Երբոր պէս միտքը վրան եկաւ տեսաւ որ տակաւին այն տրտմալի մենակութիւնը մէջ է՝ ըսկըսաւ հառաչելով լալ. և խեղճ ընելով ըսել. Աղորմելի Ասպէնսօն։ Այեցաւ արեգակին դառնալը դիտեց որ կէսօրէն երկու ժամ անցեր էր, դարձաւ ծառին քով սկսաւ աշխատիլ։ Ինչ երկու ժամ անդադար կաշխատեր. ետքը կերթար ծովուն քով խրիկվան դէմ կըլլըացվեր, և ոտարէ կըժողվեր։ Անցած ժամանակն ալ կանցընէր պարտէզը փորելով և բան տնկելով. երբեմն մահիզ ըսված ցորենը կըցանէր, և երբեմն գետնիխնձոր. յուսալով թէ օր մը կրակ կըձարէ ու զանոնք կեփէ։ Երբեմն պատուասատ (աշ) կընէր հացի ծառէն. և երբեմն մանր ծառերուն

ջուր կուտար. երբեմն ցանկ կամ (չիթ) կըշիներ պարտեզին, և երբեմն Հիւղերը կտրելով կըխնամէր տնկած բաներըը. նաև բակին չորս դին մանր ծառեր տնկեր կընայեր որ Հիւղերն երկրննայ ու իրար բերէ կապէ, կամարի պէս շինէ վրան։

Այս բաներն ընելէն ետև եթէ ժամանակ ունենար կրթուիթ (թալիմ) կընէր. աղեղով նշան կառնէր նետ կընետեր. որ եթէ գազան մը տեսնէ չի վախնալով զինքը պաշտպանէ։ Այսանկ կըրթուիթ ընելով, այնպէս լաւ նշան կառնէր որ հեռուէն ալ շիտակ կըզարնէր։

Իրիկվան կերթար նորէն լամաները կըկթեր, ու ետքը կերակուր կըպատրաստեր. իրիկունը կերակուր կուտեր լուսինին կամ աստղերուն լուսովը։ Երբը իրիկվան աղօթքն ընելով մտածական մը կընէր իրեն վրայ. և երբեմն բնակարանին վրայ կելլեր՝ աստղերուն գեղեցկութիւնը վրայ կըզմայլեր, ու ճծային մեծութիւնը կըմտածէր. երբեմն ալ ծովուն քով կերթար ժուռ կուգար որ իրիկվան հովը առնելով պաղըշկի։

Պառկելու չի գացած ինքն իրեն կըհարցըներ, թէ այսօր ի՞նչպէս անցուցիր. ստեղծողին այսչափ բարիքը վայելեցիր՝ արդեօք միտքդ բերի՞ր բարերար պարգևօղը, արդեօք սիրտդ շարժեցա՞ւ սիրել

և հնորհակալ ըլլալ ողորմածին։ Հշխատանքիդ և նեղուելդ մէջ յոյսդ բոլորովին տվիր ոյ. զբաղուելդ մէջ մոռցար ոած։ Եւ չար խորհուրդները մոքէդ հեռացուցիր, որ սատանան միտքդ կըբերէր։ Անկարգ ցանկութեց հետևեցար, որ կըշարժէին սիրտդ։ Որդեօք ի՞նչ բարի գործք ըրիր այսօր։ Հօպէնսօն այս մտածականներն ընելով երբոր խիղճմտանք մը չէր ունենար՝ անանկ հոգին կըքաղցրանար, որ կըսկըսէր ջերմեռանդ երգեր ընել, և փառաւորել զոած, որ զինքը առաքինութեան ճամբան է դրեր կատարեալ ըլլալու։ Այս ընդհակառակն՝ երբոր կըտեսնէր որ բարութիւն մը չէ ըրած, և նոյն օրն աղէկ չէ անցուցեր. խիստ շատ կըվշտանար որ օրը կորսընցուցեր է. ինչպէս պէտք է՝ բարի դիտաւորութիւնները չէ կատարած, ու աղէկ ոածպաշտութիւն չէ ըրած։ Ինչպէս առաջ պատմեցինք թէ ծառերուն վրայ օրացուցի պէս օր ամիս կընշանէր. թէ որ պակասութիւն ըներ՝ խաչ մը կըգրէր նոյն օրուան ծառին վրայ. որ էր նշան ըրած պակասուէը. ոնգի ամէն օր աչքին առաջն ըլլալով մէյմ՝ալ չընէ։ Հա՛ այսպէս Հօպէնսօն կըջանար զինքն ուղղել և օրէօր աղէկ ըլլալ. որ ամէն մարդու բարի օրինակ կրնայ ըլլալ. և ասոր վարքին նայելով պարտա-

կան։ Եւ մարդիկ աղէկ մտածական ընե-
լով առաքինի ըլլալ և ուծապաշտ. անդա-
դար աշխատելով զանձը մահացուցանել.
օրէօր հոգևոր և ջերմեռանդ ըլլալ՝ մինչև
որ հոգին քաղցրանայ երջանկութ. ինչպէս
որ քաղցրացեր էր մաքուր խիղճմտանքով
Ալոպէնսօնին հոգին։

Ժ. Գ. Գլուխ.

Ամէն դիպուածին մէջ տեղովը պատմե-
մեցինք Ալոպէնսօնին վարքը, թէ ի՞նչ
կարգով ժամանակը կանցընէր աշխատան-
քի մէջ։ Ամհա իրեք տարի միակերպ այս
կարգով գնաց առանց փոփոխելու։ Ա-
սանկ շարունակ աշխատելով, արդեօք շի-
նած նաւը ո՞րչափ առաջ տարաւ այնչափ
ատենին մէջ. ոչ որմելին չի կրցաւ ծա-
ռին կէսը կտրել. իրեն կերևնար թէ
գէթ չորս տարի ալ պէտք էր որ միայն
ծառը կտրէ վար ձգէ՝ այսպէս շարունակ
աշխատելով։ Սակայն աքանչելի երկայն-
մտութ ամենևին չի յուսահատեցաւ
մէկ օր մը ետ չի կեցաւ աշխատանքէն. ոչ
երբէք կուզէր և ո՛չ կրնար պարապ կենալ։

Օր մը սկսաւ մտմտալ, թէ այսչափ
տարի է ես այս կղզին կըբնակիմ, մինչև
հիմա խիստ քիչ տեղը տեսեր եմ, ի՞նչ
ամօթ բան է ըսելով ինքն իրեն երեսը

կըզարնէր՝ վատասիրտ վախկոտութիւն, որ մէկ ծայրէն մէկալ ծայրը չէր կրնար երթալ ժուռ գալ. թէ որ վախկոտ չըլլայ՝ կըսէր, կարելի էր թէ շատ օգտակար բաներ ալ կրնայի գտնել ժուռ գալով (*):

Այս մտածմունքս այնչափ զօրացաւ, որ մտքին մէջ որոշեց թէ ամենևին չուշանայ, առաւօտանց կանուխ Համբայ ելլէ: Այն օրը Յոպէնսօն Համբային ամէն պատրաստութիւնը տեսաւ. հետևեալ օրը ուտելու բաները լամային վրայ բեռցուց, որ իրեք օրուան պաշար էր. զինքերն ալ վրան առնելէն ետև ոտքային նախախնամութիւնէ զինքն յանձնեց կտրիճու

տեղ զանազան ծառեր դտաւ. Թէպէտ շատը չէր Ճանչնար. բայց պտուղներով լեցուն էին, որ առողջարար և պատուական սնունդ իրեն կրնային ըլլալ. ինչպէս որ եաքին փորձեց հասկրցաւ։ Այս ծառերուն մէջն էր Թղթաբեր ծառը, որուն կեղևը լաւ Թուղթ կըշինեն, և օդաթիդք ամաւվան լաթ կըշինեն (*)։

Լոպէնսօն առջի դիշերը ծառի մը վրայ անցուց, որպես զի գազաններէն ապահով ըլլայ, և առաւօտանց կանուխ Ճամբայ ելաւ։ Մի մը առաջ երթալէն ետև՝ տեսաւ որ աւելի հարաւային կողմն է կղզին ու երկիրը բոլոր աւազ էր։ Հոն ցամաքը լեզուի պէս դէպ 'ի ծովն երկնցած էր. երբոր գնաց հոն մէկէն զարհուրելով ելեսին գոյնը փոխուեցաւ. դողալով սկսաւ ջրոս դին նայել. վերջապէս վախուն պաղեցաւ մնաց, կարծես թէ յանկարծակի եկաւ. վո՜ զի աւազին վրայ տեսաւ մարդու ոտքի նշաններ։

Իրաւ պէտք էր ուրախանալ որ մարդու

(*) Օդաթիդք են բնակիչք Դաթիդի կղզին արևելեան կողմը ովկիանոսին. այս ժողովուրդքը թէպետ վայրենի են, բայց գիտեն բարակ բաներ գործել զանազան ծառերէն. որ կըսվին թթենի չինաց, հայի ծառ ևն։ Պատմիչը կըսէ՝ թէ ասանկ գործած հագուստ մը տեսայ ինկիլթէռա։ Այս ծառերը Ղին և Ճեաբոն ալ կըգտվին. բնակիչները լաւ Թուղթ կըշինեն։ Տե՛ս աշխարհագր. հատ. գ. ասի"։

նշան տեսաւ. սակայն գիտէր թէ մարդու պէս մարդու ոտքի նշան չէր, որ բնականաբար իրարու ընկեր և ցաւակից կըլլայ քաղաքականութիւն. հապա գազանի նման վայրենի մարդկանց նշան էր. լաւ հասկըցաւ թէ գարախպ կղզիներուն մարդակեր մարդիկն էին, որոնց անունը միայն կըսարսեցընէր մարդը՝ որ այն ժամանակը իրարու միս ուտելով կապրէին(*)։

Պօպէնսօն թէ որ սովորութի ըրած ըլլար մեծ վտանգներու մէջ աւելի խոհեմութիւն բանեցընելու, չէր այնչափ զարհուրելիր դողալով. նաև այսպէս արիւնը պաղած չէր մնար, սրտոտ կըլլար։ Եւ որ մարդ ամէն օր զինքը կրթելով ջանք ընէ՝ հոգին ալ զօրաւոր կըլլայ մարմինն ալ։ Լաւ զի մարմինը զօրաւոր պահելու համար պէտք է որ վարքը կանոնաւոր պարկեշտ և աշխատաւոր ըլլայ. նմանապէս պէտք է հոգին ալ անարատ պահել հաստատուն բարեպաշտութիւն։ Ասով մարդ քանի կերթայ կըզօրանայ ձախորդ վիճա-

(*) Գարախպներն էին գազանաբարոյ ժողովուրդ այն կղզիներուն մէջ, որոնց աչքը խոշոր սև ու գուրս ելած էր. մարմիններն ուժով՝ երենք կառղած յանդուգն էին, որ թշնամուքէ միշտ մէկզմէկ բռնէին կըտանէին անբնակ տեղը կուտէին։ Հիմա այս մարդիկներէն չի մնացին այն տեղերը, վե զի սպանեալները տիրեցին եւ կամաց կամաց բոլորը ջնջեցին. հիմա բոլոր եւրոպացիք են անոնց տեղը. թէպէտ նէրսէրը կրնան գտվիլ։

կին մէջ, ու որչափ մեծ վտանգ ըլլայ աչ-
քին առաջը՝ կարհամարհէ, վո՛ւ զի նեբքին
ուժը և խիղճմտանքին մաքրութիւնը բոլոր
խռովութիւնը կըփարատէ. ամենակալ երկ-
նաւորին օգնութիւն ալ կըհասնի, անանկ
որ՝ շուտով մեծամեծ չարիքը բարին կը-
դառնան։

Ինչպէս որ կերևնայ, Յովսեփնսօն այն
աստիճանը հաստատ յոյս և զօրութիւ դեռ
չէր ստացեր կատարեալ ճշդապաշտութիւ ա-
ռանց բանէ մը վախնալու. որոնց զի հան-
դիսատ երջանիկ կեանք ունենար։

Յիսպէտ բնական է որ չի կարծըվաճ
նոր բանը մարդուս վախ և սոսկում կըբե-
րէ, բայց պէտք է միշտ արիանալ և ոյ ա-
պաւինելով ձեռքէն եկածն ընել։ Կըզար-
մանամ թէ ի՞նչ սոսկալի զարհուրանաց
մէջ ընկաւ յանկարծակի վախկոտ Յով-
սէփնսօնը մէկ քանի ոտքի նշան տեսնելով,
անանկ որ չորս դին կընայեր դողալով.
ամէն մէկ տերևին շարժմունքէն կըսար-
սափեր. վախէն չիյտեր թէ ի՞նչ ընէ, և
ո՞ւր երթայ։ Կ՚երջապէս սիրտ ըրաւ, ըս-
կըսաւ փախչիլ, բայց կարծէր թէ մէկը
եռևէն ընկեր է. չէր համարձակիր որ
դլուխը դարձընէ ու մէկ անգամ մը ետին
նայի։ Այիս մէկէն կապվեցաւ ծնայ. իր
վախը աւելի սաստկանալով զինքը խռով-
վեց։ Կ՚ասն զի առաջն ելաւ մէկ փոս մը.

մէջը նայեցաւ, որ կրակ վառած էր ու նոր մարած էր կրակը. փոսին քովերը տեսաւ որ մարդու ոսկորներ ձգած էին. ձեռքեր, ոտքեր, և գլուխներ. որ բնութիւնէ դէմ կերակուրի մնացորդ էին. անոր համար մեծ սոսկում բերին Ոսպէնսոնին։

Այս բանը գարախպ կղզիին մարդակերներն էին ըրած. որոնց մարդ ըսելու չէ, հապա գազան մարդակերպ. որ թէպէտ մարդ են, բայց բոլորովին կատաղի գազան են, ոչ մարդկութիւն գիտեն, ոչ գութ ունին. ամենևին իրարու խնայել չգիտեն. բռնածներուն պէս իրենց թշնամին մորթեն կուտեն։ Որովհետև Ոսպէնսոնին ատենը Անդիլեան կղզիներուն բնակիչներն՝ որ գարախպ կըսվին, բոլորը մարդակեր էին, ինչպէս վերն ըսինք. որոնք երբոր թշնամիներէն մէկը գերի կըբռնէին մէկ զարհուրելի տօն մը կըկատարէին, պար բռնէին կըխաղային հաչելու ձայներ հանելով նստէին կուտէին։

Հա ամենասոսկալի բան. ամէն մարդ պէտք է մտածել, թէ ես ալ անոնց մէջն ստեղծուած ըլլայի՝ անոնց նման պիտի վայրենի մարդակեր ըլլայի. ոչ հաւատ պիտի ունենայի, ոչ օրէնք, անամօթ, մերկ վայրենի ըլլայի պիտի։ Որոնք կերթային անտառները երեսնին և մարմիններին զա-

նազան գունեերով կընդերկէին և աւելի կարմիր գունով. ականջներուն, և քիթերուն ծայրը կրծակէին ու մէջը փեռուրներ, և ծովու ժամունք կրեսոթէին զարդի համար։ Ով որ անոնց մէջ ըլլայինք՝ մենք ալ այս բաները պիտի ընէինք. պէտք է ամենեցնալով հնորհակալ ըլլանք այ հազար բերան, որ ասանկ տեղ, այսպիսի մարդկուն մէջ ստեղծեր է, և բարի ծնողաց զաւակ ըրեր է. որ մանկուն քաղաքավար են և բարեպաշտ. վայ անոնց որ մարդ են ու անտառներուն մէջ գազանային կեանք կանցընեն (*)։

Ուստի Ովսէնսօն աչքը անդին դարձուց այս զարհուրելի տեսարանէն, սրբոտադող մը վրան գալով սարսափեցաւ. թէ բնութիւնը իրեն օգնուի չընէր, հոն պիտի լմներ մնար. վախուն մէկէն սիրտը եատ եկաւ հոն, ու քիչ մը ուժ առաւ սկսաւ փախչիլ արագուրը. անանկ որ հազիւ թէ իր լաման կրնար եռեւէն հասնիլ. վա՜ զի այս հաւատարիմ կենդանին կրնայ որ եատ չի մնայ, անդադար եռեւէն կըվազեր։

(*) Հիմա ամերիկայի մէջ շատ չի մնացին այս վայրենի մարդիկներէն. բայց ներա տեղը անտառներու մէջ կրգտնըվին, մանաւանդ նոր զելանտա կղզին։ Դաւ ամերիկէի ներսերն ալ շատ կան ասոնց նման մարդակեր ու մարդիկ. որ մսագործներուն խանութները մարդու միս կրծախեն. վա՜ զի գերի կառնեն, քիչ-քիչ մորթեն կրծախեն կտոր կտոր։

Բ. յս վախը անանկ խռովեց Ավգինոսինն սիրտն, որ մուցաւ լաման. ու կենդանիին ոտքին ձայնն որ կառնէր, կարծեր թէ մարդակեր մարդիկ եռեւէն կըվազեն։ Բանի գնայ վախը զօրացաւ այնչափ որ՝ որպէս զի միտքը դրած վայրենի մարդիկ չըլլայ թէ իրեն հասնին, ուզեց թեթեւնալ, որ աւելի արագ փախչի. ձգեց ձեռքի տեգը, աղեղն, ու կայլինը, որոնք որ անատեանը իրեն պէտք էին. ուրիշ բան չէր մտածեր, միայն փախչի եռեւի եկողներէն ազատի, որ էր իր լաման։ Բ. մենեւին չէր նայեր թէ ո՞ւր կերթայ. և ո՛չ կուզէր հասկընալ գացած Համբան՝ միայն կըցանկար որ միշտ վազէ ազատի. իր ուզածն այս էր. ուրիշ բան չիյտեր թէ ո՞ւր է և ո՞ւր կերթայ։ Լման ժամանակը վազեց. ուրիշ բան չէր ըրած՝ բայց եթէ քսորակ Համբորդուն մը ըրեր էր, անանկ որ չըգիտնալով՝ նայիս նորէն եկաւ հասաւ հոն ուսկից որ սկսեր էր փախչիլ։

Դարձեալ զարհուրեցաւ ողորմելին, նորէն խռովեցաւ. որ շփոթելուն չի Համեցաւ տեղը, միտքը վրան չեկաւ որ գիտնայ թէ առաջվան տեղն է, ուսկից որ փոխած էր. այլ կարծեց ուրիշ տեղ է մարդակերներուն, որ ոսկորներ թողուցեր էին հոն ալ, ուստի նորէն սկսաւ նոյն արագութիւն փախչիլ. նորէն առաջվան Համ-

բան սկսաւ վազել, մինչև որ ուժը հատաւ տկարացաւ. վերջապէս անզգայ ընկաւ գետինը. լաման ալ եկաւ հոն հասաւ ետևէն. քովը չոքեցաւ, որ հոգնութիւն առնէ։ Ոխպաւածը բերաւ որ զէնքերը նետած տեղն ընկաւ Ոսպէնսօն։ Երբոր աչքը բացաւ տեսաւ որ զէնքերը հոն են Ճամբուն վրայ ձգած. կարծեց թէ երազ կըտեսնէ, և երազին մէջ այս բաները գլխուն եկան. որովհետև ամենևին խելքը չէր հասներ թէ այն բաները ի՞նչպէս հոն եկան, և ի՞նչպես ինքը հոն գտնըվեցաւ. ահա վախը այսչափ չարաչար խռովեր էր հոգին, և խելքը տարեր էր։

Ոտքի վեր ելաւ, քիչ մը վախը խռովութիւնը անցաւ՝ խելքը գլուխն եկաւ չի թողուց զէնքերը. շուտ մը վազեց առաւ, միտքը դրաւ՝ որ այլ չի ձգէ այն հարկաւոր գործիքը, որով միայն զինքը կրնայ պաշտպանելու։ Նանակ տկարացեր էր որ չէր կրնար առաջվան պէս վազել, թէպետ և կըվախնար։ Ոսլորովին ախորժակը գոյլեցաւ, նոյն օրը բան մը չի կրցաւ ուտել, շարունակ կերթար. մէկ անգամ մը միայն ջրին քով կայնեցաւ ջուր մը խմեց։ Կըյուսար որ նոյն օրը կրնայ հասնիլ իր բնակարանը, բայց անկարելի եղաւ. իրիկուն որ եղաւ հասաւ այն տեղն որ քանիմը մը հեռու էր իր բնակարանէն, որուն

անունը դրեր էր գեղ. անանկ տեղմ՚էր, որ ծառերը չորս դին պատած էին ընդարձակ և զբաղարձալի. մինչև այս դաշտը ջամանեբուն արածելու տեղ էր ըրեր. մ՚ա զի ուրիշ տեղերէն շատ աղէկ էր հոն խոտը (*):

Նախընթաց տարին ամառվան շատ գիշերը հոս կըպառկէր. մ՚ա զի մթեղնեբուն ձեռքէն չէր դիմանար հոս կըփախչէր. ասոր համար այս տեղին անունը գեղ էր դրեր: Անանկ ուժը տկարացեր էր, որ անկարելի եղաւ այլ առաջ երթալու: Ինչ և իցէ որոշեց որ հոն անցընէ այն գիշերը, հոգնութի՚ առնէ. սակայն խռոված ըլլալուն մէկէն պառկեցաւ որ քնանայ:

Հազիւ թէ քունը աչքն առեր էր, նորէն անանկ վախ մը եղաւ իրեն, որ հոգին բերանը եկաւ: Ասն զի յանկարծ ձայն մը եկաւ վերէն, որ որոշ կըկանչէր.

(*) Ռոմէնսոն օրագրուն մէջ կըպատմէ այս տեղը ինչպէս գտնելը: Յուլիսին 15 ին կըսէ երբոր Էլայ եղած տեղէս քանի մը մղոն առաջ գացի տեսայ՝ գեղեցիկ դաշտ մը բոլոր ծառերով, և ծաղիկներով զարդարած. գտայ հոն ծխախոտի բոյս, ղէմոնի ծառեր, և շաքարի եղեգներ. կերևնար թէ հոն միշտ գարուն է: Այնչափ գեղեցիկ էր այս դաշտն որ որոշեցի հոն փոխադրել իմ բնակարանս, բայց մոռացեցի թէ առջի բնակարանս ծովին մօտ ըլլալով կարելի է որ նաւ մը գայ զիս գտնէ: Ծառերով բնակարան մը չունեցի ինձի հոն. որ երբեմն երբեմն ետը դեղ երթալու պէս կերթայի հոն կընստէի:

Յովհաննես, խե՛ղճ Յովհաննես՝ ո՞ւր ես, և ի՞նչպէս եկար հոս։ Ա՞ւելի՛ն վեր եւաւ Յովհաննես բոլորովին գողալով. չկրցեր թէ ի՞նչ պիտի ըլլայ։ Կեցաւ նայեցաւ, նորէն այն ձայնը եկաւ իրեն. աչքը չորս դին կը դարձընէր ամէն կողմը կը նայէր թէ ուսկի՞ց է չէր հասկընար։ Ա՞ի՛ զի սովորութի՛ւն է վախկոտներուն, երբոր արտաքոյ կարգի բան մը կը լսեն՝ իրենք զի՛ր-ենք կը կորսընցնեն, չեն կրնար պատճառ գտնել։ Յովհաննես ուշադրութիւն որ նայեցաւ, հասկըցաւ որ այն ձայնը երկինքէն չէ՝ հապա իրեն թուրթակին ձայնն է, որ հոն ծառի մը վրայ նստած էր. որովհետև այս թռչունը ձանձրացեր էր մինակութենէ. երբոր հոն հասաւ Յովհաննես փնտռռելով գտաւ եկաւ նոյն ծառին վրայ նստաւ. և շատ անգամ այս խօսքերս տիրոջմէն լսած ըլլալով սկսաւ ինքն ալ խօսիլ։

Երբոր Յովհաննես պատճառը հասկըցաւ սկսաւ ուրախանալով փոյլ կանչել, նայիս թուրթակը թռաւ տիրոջը քովն եկաւ, սկսան իրար սիրել. թռչունը անդադար կը կանչէր, Յովհաննես, խե՛ղճ Յովհաննես՝ ո՞ւր ես։ Իսկ Յովհաննես գրեթէ այն գիշեր չի քնացաւ սրտին խռովութէն. միշտ աչքին առաջն էին այն ոսկորներն՝ որ տեսաւ զարհուրելով. միշտ կը-ջանար որ երևակայութէն դուրս հանէ այս

վախերը. բայց բոլորովին երևակայուելը խառուած ըլլալով անդադար աչքին առաջը կուգային. իբր թէ Ռոսկէնսօնին միտքը գոյլաց ըլլալով մութ խաւարով մը այն գիշեր զանազան բաներ կերևակայէր, ու խելքէ դուրս բաներ կըմտածէր, որ զինքը ապահով ընէ։

Այս միտքը դրաւ որ առաւօտուն բոլոր շինած բաները աւրէ. և այնչափ աշխատանքով ըրած բաներուն մէկը չի թողու։ Ցնկած ծառերը կտրէ, շինած տեղերը և պարտէզը աւրէ. լամանները թողտայ որ երթան, և իր բնակարանն ալ քանդէ. վ՚ը զի կուզէր որ նշան մը չի մնայ ու չգիտցուի թէ հոն մարդ կըբնակի. որպէս զի թէ որ վայրենի մարդիկ յանկարծ այն կողմերն ալ դան, չիմանան որ մարդ կայ հոն։ Այս միայն ապահով ըլլամ կըսէր, ասոնք ամէնը իմ փրկութիւնս համար զոհ թողը ըլլան (*)։

(*) Մարդկային կիրքը անկարելի բաներ մտածել կուտայ. մինչև մարդ շփոթելով օգտակար բաները կըձգէ ինասակար բաներ կընէ. անանկ բաներ կընէ որ քիչ մը առաջ ուրիշին վրայ տեսնելով կըխնտար. և շատ աշխատանքով ձեռք ձգած բաները՝ցրուէ կըկորսընցնէ։ Եւ որ մեծն է, տարիներով աշխատելով ստացած աղէկ անունը մէկ բոպէին մէջ սորկի մը կընէ չար կրիցը հեռուելով. ուրեմն ամէն բանէն աւելի մարդս պէտք է իր կրիցմէ վախնայ. վ՚ զի անկէ մեծ թշնամի չի կայ իրեն. որ միտքը խաւարելով թող չի տար հասկընալ թէ ինչ կընէ, ինչպէս եղաւ Ռոսկէնսօնին։

ԺԱ. Դէպուած.

Ռաակ մը կայ թէ գիշերը մոմբարուք կբէէ. ինչպէս որ Յոպէնսօնին գլխուն եկաւ, որ անցած գիշեր վախուն խելքէ դուրս բաներ մտածելով կրտանջըվեր մինչև 'ի լոյս։ Ռաւօտուն լոյսն որ ծագեց՝ իրեն մտքին խաւար մտմրտուքն ալ փարատեց վեր ելաւ. խելքը վրան եկաւ, ու վախը գնաց սրտէն, անատենը ամէն բան տարբեր տեսաւ. գիշերվան այնչափ մտածած բաներն որ իրեն խելքին շատ հարկաւոր երևցեր էին, տեսաւ որ խիստ յիմար և անպիտան խորհուրդներ էին։ Վերջապէս բոլոր այն մտածմունքները ձգեց, որ սաստիկ վախնալէն առաջ եկած էին. սկսաւ մարդու պէս պէտք եղած բաները մտածել խոհեմութիւն։

Հա այս բանը մեծ խրատ ըլլայ մարդուս, որ մտքէն անցած բանը մէկէնիմէկ չընէ. հապա որչափ կարելի է ուշացընելով միւս օրուան ձգէ, ու լաւ մտածէ, ետքը։ Յոպէնսօն հասկըցաւ որ առջի աւուր քաշած վախը անցաւ. ես այսչափ ատեն է հոս եմ կըսեր, մէկ վայրենի մարդ մը չի մօտեցաւ բնակարանիս քով. ուրեմն յայտ է թէ անոնք այս կղզիին մէջ չեն բնակիր. հապա հաւանական է թէ ուրիշ

կղզի կրբնակին. ու ոմանք երբեմն այս տեղերը կուգան, որ իրենց ըրած յաղթուները վրայ ուրախանալով գազանային ոճնախմբուի մը կատարեն։ Ու ինչպէս կերևնայ միայն հարաւային կողմը կղզիս կրմօտենան, ու առանց առաջ երթալու և ուրիշ բանի հետաքրքրուի ընելու կը դառնան իրենց տեղը։ Ուստի ասալ ՝ածայ ին սքանչելի կարգադրուին է կրսէր, որ այս կողմը եկայ ընկայ, ուր քիչ բարեբեր ըլլալուն համար, իմ կեանքս ապահով կըլլայ. վ՚ զի մարդակերները չեն մօտենար հոս (*)։

Ուսպէնսօն այսպէս խօսելով իրեն սիրտ կուտար. ես ի՞նչու պիտի յուսահատիմ, մինթէ նոյն ամենակարող նախախնամութիւնը չի՞ կրնար զիս պահել ամէն փորձանքներէն. որ մինչև հիմա՛ լ աւելի մեծ վտանգներէն յայտնապէս ազատեց իւր անհուն ողորմութիւնը։ Ասանկ խօսելով ինք զինք կրնախատեր սաստիկ, որ ՝այ ողորմութիւնը վրայ յուսահատեր էր այնչափ։ Ուստի մեծապէս զղջանալով ընկաւ

(*) Վայրենի մարդիկ սովորութիւն ունէին, որ երբ թշնամիներէն մէկը գերի կրնէին. նախ բաց տեղը կելլէին, բռնած գերին կրմորթէին խաղալով խնդալով կուտէին. ետքը կելլէին պար կրխաղային հաչելու ձայներ հանելով, և զարհուրելի շարժմունքներով։

ստեղծողին առջին՝ ներում խնդրեց այս նոր սխալանացը։

Ընկէ ետև սիրտը զօրացաւ՝ եկաւ այն տեղէն քաջուքը իր բնակարանը կերթար։ բայց Ճամբան նոր բան մը միտքն ընկաւ՝ որոշէց որ ընէ։ Որ զի ուզէց որ ինքն իրեն բարեպաշտական կանոններ դնէ։ որ աւելի ապահովուի և համարձակութի ունենայ այ առջին։ Եւ այս բանը խիստ հարկաւոր և բանաւոր էր։ որովհետև պարտք է որ ամէն մարդ հաստատ յուսով ապաւինի ՀԾային նախախնամութէը։ հաւատալով թէ երբոր իր վարքը այ օրինացը յարմար է, ոչ երբէք ՀԾ կրթողու անանկ մարդը կարօտութեան մէջ։ Այց պէտք է որ մարդն ալ անհոգուի չընէ։ իր ձեռքէն եկածն ալ ընէ, ինչ որ կը Ճանչնայ հարկաւոր մարդկային բարուե և երջանկութէ համար։ Ա՞ զի ՀԾ ամենաբարին անոր համար մարդուս տվեր է խելք և այնչափ հոգևոր և մարմնաւոր կատարելուն։ ոնգ զի պէտք եղած ատենը գործածէ զանոնք՝ երջանիկ և առաքինի ըլլալու համար։

Ասպէնասն երբոր հասաւ իր բնակարանը, առջի գործքն եղաւ՝ որ միջոց տեղ մը շատ ծառեր տնկէ։ որպես զի պատնէշի պէս իրարու մօտ անտառ ձևանան բնակարանին առջին։ այս մտքով՝ որ եթէ

մէկը հեռուէն գալու ըլլայ անտառը գո-
ցէ՝ գինքը չի տեսնէ եկողը։ Եւ այսպէս
ահա երկու հազար ծառեր անկեց կար-
գաւ. բոլորը այն տեսակ ծառերէն տրն-
կեց, որ գիտէր թէ քիչ ատենին մէջ
կըմեծնան. որչափ կարելի էր՝ ջանաց շի-
տակ անկել. բայց չուզեց որ համեմատ և
արուեստաւոր երևնան. որպէս զի բնա-
կան անտառ ըլլան, մարդու շինած չերևնան։

Եւ քաջը որոշեց որ գետնին տակէն Համ-
բայ մը բանայ իր բնակարանէն մինչև լե-
ռան մէկալ կողմը. որ եթէ թշնամին-
ը բնակարանէն վեր եկէն, փախչելու
Համբայ ունենայ։ Որպէս տոսկալի դըժ-
ւար և երկար աշխատանք էր այս բանը,
բայց անձին ապահովութիւնը համար սկսաւ
չարաչար աշխատիլ. և այս բաներուն հետ
ըլլալով թողուց նաև շինելը։ Բայց այս
գետնի տակի Համբան շինելու համար
տեղ տեղ հորեր բացաւ, ինչպէս որ կը-
նեն հանքերուն (մատիններուն) մէջ բա-
նուորները. նախ հոր կըփորեն, (*) ետքը

(*) Հանքի մէջ բանուորները նախ վերէն վար հոր կըբանան ջուր կըդտնեն. անկէ ետքը կըսկըսին Համբայ բանալ, ու շարունակելով կերթան ուրիշ հոր կըբանան. մինչև որ հանքին երակը գտնեն։ Թէ որ ասանկ չընեն, ու հաստատ հոր չի գտնեն, վերի հողը կըփլչի։ Որպէսզի ասանկ ըլլաւ։

հորիզոնաբար ձամբայ փորելով առաջ կերթան։

Հօպէնսօն այսպէս փորելով լեռան մէկալ դին անցաւ, որչափ որ կը փորէր միշտ կը ջանար հողը դուրս հանելով իրարու վրայ դնելով պզտի բերդ մը շինել։ Այս բերդին միջոցը 8 ոտնաչափ էր, իսկ բարձրութիւնը 10 ոտնաչափ. տեղ տեղ սանդուղ կը շինէր ելլելու ինջնելու համար. տեղ տեղ ալ ծակ կը ձգէր որ կարենայ դուրս նայել. կարելի է թէ կրսէր օր մը պէտք կը լայ հոն մտնել թշնամեայ ձեռքէն։

Կարծէր թէ յանկարծ թշնամի մը անկէ անցնի, կրնար ապահով հոն փակվիլ. բայց թէ որ թշնամին երկար ատեն կենար զինքը հոն պաշարեր, անկարելի էր դիմանալ։ Իր ջանքը անոր համար էր՝ որ եթէ պատահական բան մը գլխուն գայ՝ հոն փախչի. և հոն ստրուստ պահելով անօթի չի մեռնի։ Այս պատճառաւ որոշեց որ միշտ պատրաստ ունենայ քանի մը օրուան ուտելու բան, պանիր, մածուն, պտուղ, ծովի ժժմունք, որոնք օրէ օր կրնորոգէր. ցորեան առջի օրուանը կուտէր, նորէն տեղը կը դնէր։

Այս միջոցը ուրիշ բանիմ՝ ալ ձեռք չարկաւ. բայց տեսաւ որ լմընալու բան չէ, թողուց։ Իբր չի միտքը դրաւ որ ձամ-

բայ մը բանայ ու այն վազած ջուրը բերէ իրեն բակին մէջ աղբիւր շինէ. որ եթէ ներս փակվի առանց ջրի չի մնայ։ Բայց նայեցաւ որ ուզած բանը շատ ատենի կը կարօտի, ձգեց. ա՛լ աւելի կուզեր երթալ իր նաւը շինել, քանի թէ ասանկ բանի հետ ըլլալ։

Բանի մը տարի ասանկ զգուշութեամբ երթալով երևելի դիպուած մը չի պատահեցաւ։ Մէկ առաւօտ մը օդը գեղեցիկ ըլլալով կաշխատեր իր նաւը շինելու համար, տեսաւ որ շատ մուխ կելլէ հեռու տեղէ մը. մէկէն վախ եկաւ իրեն. ետքը հետաքրքրուելով գալով ուզեց հասկընալ թէ ինչ է։ Ուստի ելաւ քովի լեռանը վրայ դիտեց՝ որ իմանայ այն ծուխին պատճառը. բայց սոսկայ՝ երբոր տեսաւ ծովին քով հինգ վեց պզտի նաւեր կապած. 30 հոգի լեռան մարդիկ, անանկ ահագին՝ որ գազանի ձայներ հանելով պարը կը խաղային կրակին չորս դին (*)։

(*) Ռոպէնսոն կըսէ թէ 18 ամիս կը դիտէի որ վայրենիներուն ձեռքէն մարդ մը ազատեմ, առտու մը տեսայ որ 6 քանոգ մօտեցան հեռուն. մարդակերները դուրս ելան կրակ վառեցին, ու պատրաստուեցին տեսան տօնախմբուելու. մէկ նաւէն երկու գերի հանեցին. նայիս երեք հոգի մէկ գերին մորթեցին փայտէ դանակով, կտրտեցին մարմինը շարեցին, մէկ դիէն կուտէին ու կը խաղային, մէկալ գերին միջոց գտնելով կապը փրցուց ու սկսաւ փախչիլ դէպ 'ի իմ բնակարանս։

Ալոպէնեան թէպէտ միշտ կրկնակա-
ծէր, թէ օր մը պիտի տեսնէ այս բանը։
բայց այն աստիճանը չի վախցաւ, որ զին-
քը կորսնցընէ։ այլ ուժ առնելով զօրա-
ցաւ, մէկէն այ ողորմելը ապաւինելով
վստահութիւն լեռնէն վար ինչաւ և շուտ մը
զէնքերը վրան առաւ, երկնաւորէն օգ-
նութիւն խնդրելով առաջադրեց որ մինչև
Էտքի շունչը պաշտպանէ զինքը։ Ն.յո
մաքով զօրացաւ ուծպաշտութիւն։ և այն-
չափ քաջութիւն առաւ, որ Էլաւ նորէն լե-
ռանը վրայ սկսաւ աղէկ մը դիտել թըշ-
նամիները։

Մէկէն բարկանալով սարսափեցաւ։
վասն զի որոշ տեսաւ որ երկու ողորմելի
գերի կապած էին կրակին մօտ, որ կե-
բևնար թէ պիտի մորթէին։ Այսիս եր-
կու հոգի էկան տարին մէկը մորթեցին
կուտէին, ու խաղալով երբոր իրենց գա-
զանային ուզնախմբութիւնը կընէին՝ մէկալ
գերին ողորմելաբար խեղճ կընայեր ըն-
կերոջը չարաչար մահուանը վրայ, ու կըս-
պասէր որ զինքն ալ տանին ուտեն։ բայց
նայեցաւ որ բոլոր վայրենի մարդիկ թա-
փեցան ընկերոջը վրան, ու ոսկորները
կրծելու հետ էին, և մէկը այն գերիին
վրայ չէր նայեր, միայն իրենց գազանային
գործքին հետ կըխաղային։ Խեղճ գերին
յուսալով թէ կրնամ անմոց ձեռքէն

փախչիմ աղատիմ, սկսաւ վազել սաստիկ արագութեամբ դէպ 'ի Լոպէնսօնին կողմը։

Լոպէնսօն զայն որ տեսաւ, ուրախութեամբ ու յոյսը, վախն ու սրտադողը իրար խառնըվեցան, երեսին գոյնը դարձաւ. մէյմը մոխիր կտրեցաւ, մէյմ՝ ալ կրակի պէս կարմրեցաւ։ Սրտին մէջ կիմանար յոյս, և ուրախանի, բայց տեսնելով թէ գերին էտևէն ընկեր կուգան՝ աւելի սարսափեցաւ. վա՜ զի ամէնքը շիտակ իր վրայ կուգային վազելով. ողորմելի գերին անանկ սաստիկ կըվազեր, եկաւ անանկ տեղմ՝ որ ծովը նեռս էր մըտեր դէպ 'ի ցամաքը, հարկադրեցաւ գերին որ ջուրը նետվի, լողալով ասդին անցնի. թշնամիներին ալ երկու հոգի ջուրը նետվեցան էտևէն կուգային. մէկալոնք էտ դարձան գացին իրենց տօնը կատարելու։ Լոպէնսօն տեսաւ թէ այն երկուքը այնչափ լաւ չէին կրնար լողալ գերին պէս, որ բռնել կուզէին. իսկ գերին եկաւ ցամաքն ելաւ սկսաւ վազել, բայց թշնամիները դեռ ծովին կէսն էին։ Այն կէտին Լոպէնսօն անանկ զօրացաւ և սիրտը շարժեցաւ որ ո՛չ երբեք եղեր էր իրեն։

Աչքերին կրակ կըցաթիկեր, սիրտը կերեր որ երթայ օգնուի հասնի գերին. առաւ ձեռքը իր տեղն, ու մէկ կինիմէկ լեռ-

նէն վար ցաթկէց, ու կայծակի պէս անտաւէն դուրս ելաւ. երկուքին մէջը մընաց. սկսաւ պօռալ գերիին թէ կայնէ՛ կայնէ՛ մի՛ փախչիր։ Դարձաւ խեղճը տեսաւ մէկ զարհուրելի մարդ մը բոլոր մորթով ծածկած, վախուն կարծեց թէ երկնային հոգի է, պաշարվեցաւ տարակուսելով, ոտքն լինի՞, թէ փախչի։ Յօպէնսօն թևերը բացաւ նշան տվաւ իրեն, թէ գինքը պիտի պաշտպանէ թշնամիներէն. և ինքը դարձաւ վազեց անոնց վրայ. վայրենիները իրարմէ հեռու ըլլալով Յօպէնսօն տեգովը զարկաւ մէկը պառկեցուց։

Մէկալ ընկերը 100 քայլ հեռուն ըլլալով կայնեցաւ հանեց իր աղեղը պատրաստեց ու նետեց Յօպէնսօնին սրտին զարկաւ. բայց ոչ տվաւ որ լամային կաշին հագած ըլլալով վահանի պէս դէմ դրաւ, ամենևին չանցաւ. ուստի Յօպէնսօն անխոց մնաց։ Դաև ժամանակ չի տըվաւ որ թշնամին նորէն աղեղը նետէ, վրան վազեց և չարաչար վիրաւորեց։

Դաջն Յօպէնսօն թշնամին ձգելէն ետև դարձաւ դէպ 'ի գերիին կողմը, որուն թէպէտ ապատիչ եղաւ, բայց խեղճը ուրախութէ, ու վախին մէջ ըլլալով անշարժ մնացեր էր չէր կրնար առաջ գալ. չիյտեր թէ արդեօք կեանքը պիտի պաշ-

խէ՛ իրեն, թէ պիտի զարնէ սպաննէ զինքը այս անծանօթ էակը։ Սակայն Պօպէնսօն կանչէց զինքը քովը, նշան տվաւ որ իրեն մօտենայ։

Մէկէն հնազանդեցաւ գերին՝ թէպտ կասկածելով կամաց կամաց կուգար, ու աղաչելու կերպերով մը կըմօտենար իրեն։ Պօպէնսօն բարեկամուէ նշաններ տալով խեղճին սէր կըցցընէր, որ չի վախնայ իրեն քով գայ։ Լսկաւ մօտեցաւ գերին. բայց ամէն մէկ տասը քայլ առնելուն գետինը կիյնէր, երկրպագուէ կընէր շնորհակալուէ ընելով, և յարգուէ տալով։ Այս առաւ մտքէն Պօպէնսօն, բացաւ երեսը ծիծաղերես մարդավարուքէ և բարեկամական սէր երևցընելով։ Ընդանկ որ տեսաւ գերին առանց յապաղելու վազեց եկաւ աջստոյին քով գետինն ընկաւ երկրպագութիւն ընտաւ, ու բռնեց Պօպէնսօնին ոտքը վզին վրայ դըրաւ. հասկըցընելու համար թէ կուզէ իրեն գերին ըլլալ։ Ոտկ քաջն Պօպէնսօն՝ որ աւելի կարօտ էր բարեկամի, քան թէ գերիի. մէկէն ձեռքը տվաւ անոր ու բարեկամուքէ վեր վերցուց, և որչափ կարելի էր ուզեց իրեն հասկցընել նշաններով, թէ ամէն կերպով զինքը բարեկամ պիտի ընէ իրեն և սիրելի բարեկամ։ Բայց նայինք այն վայրենի մարդն ի՞նչ եղաւ,

որ Պօպէնսօն զարկեր գէտինն էր ձգեր։

Բայց մարդը չէր մեռած, նայիս Էլաւ քիչմը խոտ հանէց դրաւ վէրքին վրայ, որ արիւնը կտրի. Պօպէնսօն ցոյց տվաւ գերին՝ թէ տես ի՞նչ կրնէ թշնամիդ. ան ալ սկսաւ աղաչելով բաներ զուրցել, որոնն լէզուն չէր հասկրնար. և անանկ նոր բան կերևնար իրեն, որ կարծէր թէ մարդու խօսք չէ. շատ տարի անցաւ, ականջը չի սորվեցաւ անոր ձայնին։

Գերին տեսաւ որ չի հասկրցաւ Պօպէնսօն, աչքը դրաւ կայինին վրայ. մատովը կրցցըներ, և նշաններով հասկրցուց որ կրփափաքի կայինը առնէ ու երթայ թշնամին մեռցրնէ։ Բայց Պօպէնսօն որ ո՛չ երբեք մարդու արիւն մտած էր. բայց ակամայ կամօք տվաւ կայինը գերին, ու ինքը աչքը անդին դարձուց, որ չի տեսնէ. իսկ գերին կայծակի պէս հասաւ թշնամին վրը, մէյմը զարկածին պէս գլուխը կտրեց. և ուրախանալով դարձաւ եկաւ որ վրէժխնդիր ըլլալով սիրտը հանգչեցաւ։ Ընկէ ետև հաղար անգամ կերպ կերպ շարժմունքներով, և խաղալով եկաւ Պօպէնսօնին ոտքին տակը ձգեց իբրև յաղթանակ՝ կայինն ու կտրած գլուխը արիւնթաթախ։ Պօպէնսօն նշաններով հասկրցուց որ թշնամին աղէկը առնէ, ու միատեղ երթայ։ Գե-

ին առաւ աղէղը. անանկ յաջողութիւն նշան կառնէր որ գնաց մէկալ թշնամին ալ աւաղին վրայ գտաւ, աղէղը լարեց նետածին պէս անալ զարկաւ սատկեցուց։ Այս բանը Պօպէնսօն գերին առաջ հասկցուցեր էր որ նայի զգուշանայ չըլլայ թէ անոնց նշանը հոն մնայ, որ մէկալնք ալ չի գան տեսնեն, կասկած ունէր որ կուգան, բայց անանկ արագութիւն գերին ըրաւ լըմնցուց որ քառորդ ժամուն մէջ երկու թշնամիին մարմինն ալ աւաղին մէջ թաղեց որ նշաննին չի մնաց։ Անկէ ետև դարձան իրենց տեղը (*)։

Յ. Օ. Դէպուած.

Պօպէնսօն նորէն տարակուսանայ մէջ ընկաւ, չիյտեր թէ գլխուն ի՞նչ պիտի գայ թշնամիներէն. ուստի միշտ անհանգիստ ըլլալով կելլէր լեռանը վրան անդադար կըդիտէր վայրենի մարդիկն, որ

(*) Թէպէտ ճծային և բնական օրէնքը արգիլեր է մարդասպանութիւնը, բայց ամէն մարդ պարտական է իր կեանքը պահելու, որչափ որ ճծ տվեր է։ Ուստի երբոր մէկը կուզէ քեզ մեռցընել, պէտք է որ կեանքդ պահելու համար զայն մեռցընես, որ դուն ազատես, եթէ ուրիշ ճամբայ չի կայ ազատելու։ Ասանկ առեն արդարութիւն դէմ չըլլար. սակայն եթէ ուրիշ կողմանէ կրնայ պաշտպանել կամ փախչելով և կամ ուրիշ արգելքով, անտեսնը թշնամին մեռցընելը մարդասպանութիւն կըլլայ այ օրէնքին դէմ։

կըխաղային. ծովուն քով։ Շատ մեծ վախ ուներ թէ այն գազանային հարկիքը կատարելին եւ կելլեն կուգան երկու ընկերները փնտրելու համար. որ իրենք ուտելու հետ ըլլալով անոնք գերին եւ անէն գային։ Եթէ գային այն կողմերը նայելու՝ հարկաւ կըտեսնէին Ալսպէնսօնին ընակարանը. և միաբան ամէնքը վրանին թափելով Ալսպէնսօնն ալ կըմեռցընէին իրեն գերին ալ. ահա այս բանը միշտ կըմտածէր։

Այս մտմտուքներով անանկ սիրտը խռոված էր, որ լեռանը վրայէն, և ծառի մը եռանէն աչքը տնկէր միշտ վայրենի մարդիկներուն կընայէր թէ ի՞նչ կընեն. իսկ անոնք սարսափելի ոռնալու ձայներ հանելով պար կըխաղային. և զարհուրելի աղաղակներով կուրախանային այն գարշելի տօնախմբութեանը համար։ Ուստի Ալսպէնսօն միտքը դրաւ որ ուրիշ ձամբայ չէ կայ՝ այ ապաւինելէն 'ի զատ. միտքը վեր վերցուց, երկնաւոր հօրը ապաւինեցաւ, որ կազատի անմեղներուն։

Այն կետին սիրտը զօրանալով քաջութիւն մը եկաւ վրան. միտքը դրաւ որ եթէ գան այն կողմերը՝ չէ փախչի դէմ դնէ։ Այլ անոնց աչքին չերևնալու համար ծառերուն եռանէն սողալով վար ինջաւ, ու իր ամանդուղէն վեր եկաւ, նշան տվաւ

գերիին որ իրեն ետեւէն երթայ. երկուքը միատեղ ինջան բնակարանին մէջ. գերին երբոր տեսաւ բնակարանին մէջի եղած կարգը, և պիտանի բանները, զարմացաւ մնաց, որ անանկ բան չէր տեսած. որպէս թէ մէկ գեղացի մը բնաւ քաղաք չի տեսած ըլլայ, ու մէկէն զինքը մեծ պալատի մը մէջ գտնէ ուրչափ կըզարմանայ. ասոր նման պաղեցաւ գերին։ Ոսպէնսօն պէսպէս նշաններով հասկըցուց գերիին իր տարակուսանքն որ վայրենի մարդիկներէն կըկասկածէր, թէ վրանին կուգան։

Ասալ իմացուց թէ պատրաստ եմ, մինչև 'ի մահ զիս պաշտպանելու, և քանի որ ողջ եմ կըծեծկըվիմ. գերին հասկըցաւ այս խօսքերս ամէն պարագայով և ինքն ալ զանազան նշաններով հասկըցուց իրեն սիրտը. կացինը վեր բռնեց, և բարկանալով առաւ տեգը բռնեց թշնամեայ կողմը. ոգ թէ թշնամիները պատերազմի կըհրաւիրէր։ Ասաւ կուզէր հասկըցընել ազատիչ Ոսպէնսօնին, թէ ամ կերպով պատրաստ է զինքը պաշտպանելու քսյուրբ։ Ոսպէնսօն ուրախանալով գովեց անոր քաջասրտութիւնը, տեգը ձեռքը տվաւ, և աղեղը վրան կախելով զինեց, ու դրաւ զինքը պահապան այն շինած շրջապատին մէջ. որ անկէ դիտէ, թէ մարդ

կերևնայ դաշտին մէջ, որ տնկած ծառերուն մէկալ դին էր։

Դրեթէ մէկ ժամն ետև յանկարծ լսեցին հեռուէն զարհուրելի աղաղակ մը որ իրար կանչելով կը ժողվվէին վայրենի մարդիկ։ Նայիս Ռօպէնսօն ու գերին պատրաստվեցան պատերազմ ընելու, և իրարու երես նայելով և զանազան նշանով մէկմէկու սիրտ տալին, որ քաջուբ դէմ դնելով պաշտպանեն իրենց անձը։ Աղաղակը դադրեցաւ. նայիս նորէն աղաղակը լսվեցաւ աւելի մօտէն և աւելի սաստիկ. ետքը նորէն ձայներին կտրեցին։ Դարձեալ սկսան անանկ սարսափելի ձայներ հանել, որ լեռներէն արձագանգի ձայներ կուգար։ Երդէն այս երկու քաջ զօրաւորները պատրաստ էին, և իրենց աղեղը քաշած էր։ Գերին կատարեալ կատաղի մարդ դարձաւ. աչքերէն արիւն կը կաթէր. սրտին քաջութիւնը երեսէն կերևնար. միակերպ ծառերուն մէջէն դիտեր կընայէր աղաղակ եղած տեղը։

Ռօպէնսօն ասանկ պատրաստ միշտ կը դիտեր թէ ի՞նչ կընեն վայրենիները, որ մինչև իրիկուն միակերպկ ընայէին անոնց՝ ինքն ու գերին. բայց թշնամիներէն մարդ մը չի տեսան, և ձայն մը չի լսվեցաւ երկար ատեն. ուստի հաւանական կերևնար

թէ վայրենիները չուզեցին հեռուն երթալ փնտրռել իրենց ընկերները. Ելան նաւը մնան տեղերնին դացին։ Այս մտքով ասոնք ալ ձգեցին զէնքերնին և Ռոպէնսոն եկաւ ուտելու բան ձարել։ Որովհետև այն օրն որ Ռոպէնսոնին այսչափ երևելի դիպուածները պատահեցան ուրբաթ էր, ուզեց որ ասոր յիշատակը չի մոռցուի, և ուրիշ դիպուածներէն որոշվի. անոր համար ազատած գերիին անունը Ուրբաթ դրաւ։

Մինչև այս կէտս Ռոպէնսոն ժամանակ չէր ունեցեր ուշադրութիւն գերիին վրայ նայելու, տեսաւ որ էր շնորքով պատանի մը իբր քսան տարեկան, մարմինը սևագոյն, մազերը սև ու երկայն, քիթը կարճ, բայց այնչափ տափակ չէր, պուկունքը բարակ, ակռաները ճերմակ ոսկորի պէս, անկաճը քանի մը ծովու ժժմունք և փետուր անյուցեր էր զարդարանքի համար, ամենևին լաթ չէր հագած։

Ռոպէնսոն թէպէտ խիստ անօթի էր, բայց պարկեշտութիւն համար ուզեց որ նախ անոր մերկութիւնը ծածկէ. ուստի լամային մորթէն հագուստ մը շինեց հագցուց գերիին. անկէ ետև կանչեց քոմն որ կերակուր ուտեն։ Նաև մոտեցաւ իրեն շատ զանազան ձևերով շնորհակալութիւն կընէր, գլուխ ծռելով յարգութիւն կուտար, ընկաւ

ոտքը երկրպագութիւն ըրաւ։ քունեց աղա-
տողին ոտքը իր վզին վրայ դրաւ ինչպէս
որ առաջուց ալ ըրեր էր։ Իսկ Ոսպէնսօն որովհետև այնչափ ատենէն՝ի վեր կը-
փափաքէր մէկ մարդ մը տեսնելու։ որ-
չափ որ գերիին վրան կընայէր սիրտը ու-
րախութիւն կըլեցվէր, ու անդադար բարե-
կամական սէր կըցցնէր Ուրբաթին։ Սա-
կայն չէր գիտեր թէ ինչ բնութիւն տէր է։ իրեն
կերևնար թէ խոհեմ մարդ է։ ուզեց ա-
նանկ վիճակի մը մէջ պահել զայն պատ-
ուաւոր հպատակութիւն՝ որ ապահով ըլլայ,
և պատշաճ մեծարանքն անկէ ընդունի,
ինչպէս որ պարտական էր իրեն։ քիչ մը
ատենէն ետև Թագաւորի պէս մեծութիւն
կընէր։ Գերիին հասկըցուց նշաններով
թէ զինքը միշտ պիտի պաշտպանէ, բայց
կատարեալ հնազանդութիւն կըպահանջէ
իրմէն, և ինչ որ իրեն հրամէ, պէտք է
որ կատարէ։ և ի՞նչ բան որ իրեն արգիլէ
իր տէրն ու Թագաւորը առանձնական հա-
ճութիւնը համար, պէտք է որ զգուշանայ։

Այս պատուիրաններուն նշաններով տը-
ված ատենը գերին ալ այս խօսքս կըսա-
սէր՝ Այո։ Ոսպէնսօնին միտքն ընկաւ
որ լսած էր շատոնց, թէ Մերիգային լե-
ռան մարդիկը իրենց գլխաւորին այս ա-
նունը կուտան։ Ուստի նշանին աւելի այս
խօսքով իրարու բան կըհասկըցընէին, ան-

կէ։ Եւ զԵրին երբոր կիմանար որ բան մը կուզէ իր տէրը՝ ինքնաչ հնազանդուէ ցցընելու համար՝ քանի մը անգամ բարձր ձայնով կըկրկնէր այս Բաղէ բառը, նորէն Յովհաննոնին ոտքն իյնելով։

Եւ ուզէց հասկրցընել թէ Յովհաննոնին թագաւորական իշխանութիւնը որչափ զօրութիւն ունէր։ տէգը ձեռքը տվաւ, ու ծայրը իր սրտին վրայ դրաւ։ Եւ անով կիմացընէր թէ իր տէրը իշխանութիւն ունի կեանքին վրան ալ՝ մահուան վրան ալ։ Իսկ Յովհաննոն ինքնագլուխ իշխանութիւն ձեռքը անոր վրան կըդնէր պաշտպանելու համար։ Նոկէ Եւ նորէն հրաման տվաւ որ քովը նստի կերակուր ուտէ։ Իսկ զԵրին զայն պատուելու համար՝ զետինը նստաւ, տէրը խոտէ շինած նստարանին վրայ նըստեցուց։

Հա ասոնց բանն էր մէկ պատկերը մը աշխարհքիս թագաւորութեց սկզբնաւորութիւնը։ Վա՛ զի այն մարդիկներն ոչ ուրիշներէն աւելի գիտուն էին, աւելի սրտոտ և զօրաւոր էին, անոնք կըլլային առջի թագաւորը, և առջի կառավարիչը մէկ տերութիւն մը։ Աւելի տկարներն ու աղքատները ապստամբ մարդկանց անիրաւութեան տակն ըլլալով, որոնք առջի ժամանակը աւելի շատ էին քան թէ հիմա, այս բռնաւորներուն զրկանքէն ազատելու հա-

մար , կրկնդրէին պաշտպանուի և օգնու-
թի զօրեղներէն : Այս պաշտպանութիւնը
փոխարէն կրկոստանային կատարելապէս
հպատակ ըլլալ անոնց , և տարուէ տարի
տուրք տալու իրենց պտուղէն և ոչխար-
ներէն . անանկ որ՝ պաշտպանութի ընօղ
իշխանները անոնց տուրքովը իրենց ապ-
բուստը հոգալով ժողովուրդը կրկարօղա-
նային. թշնամիներէն ապահով ընելու :
Այս տարեկան տուրքը կոչվեցաւ բեռն
ժողովրդեան որ կրպարտաւորէին հպա-
տակները թագաւորին տալու : Այսպէս
է սկիզբը , և հեղինակութիւնը իւրա-
քանչիւր թագաւորուն է տիրութի , և
այսպէս է հնազանդուի և պարտք հպա-
տակաց :

Ուստի ահա Անտիոքոս Հիմարտապէս
թագաւոր եղաւ . մի՞ զի այն կղզին էր ի-
րեն թագաւորութիւը , լամանները ու պը-
տուղները էին իր գանձը . Ուրբաթն էր
իր հպատակը թէպէտ մէկ հոգիմը էր ,
բայց շատ մեծ յարգ ունէր անոր առջին :
Ֆութակն էր իրեն մէկ հատիկ պալատա-
կանը , թէպէտ անպիտան անասուն էր :
Այս գերապանց թագաւորը շատ անգամ
կրկոնարհէր իրեն գերիին այնչափ , որ-
չափ որ արժանապատուութիւը կրնար իրեն
թոյլ տալ : Կերակուրին ետև ուզեց Ան-
տիոքոս շնորքով կարգադրել ամէն

բանն որ պառկելու համար պէտք էր։

Անչափ խոհեմ մտացի էր Ուրբաթ-դերին, որ քիչ ժամանակին մէջ ամէն բան կընէր հաւատարմութիւն բոլորովին իրեն հպատակելով, իբր գլխաւոր պաշտօնեայ, զօրապետ, խորհրդական, և սենեկապետ։

Սակայն խոհեմութիւն չի համարեց Ռոպէնսոն առջի բերանը իր բնակարանին մէջ առնել դերին, հրամայեց որ երթայ համբարանոցին մէջ պառկի, ուր բան կըդներ։ Ո՞ զի մեծ անխոհեմութիւն կըլլար, թէ որ չի փորձած լեռան մարդը այնչափ հաւատարիմ դնել, մինչև մէկ տեղի մէջ պառկիլ, և քնանալով իր կեանքը անոր հաւատալ, նաև բնակարանին ծածուկ ճամբան յայտնել։ Ուստի հրամեց Ուրբաթին՝ որ խոտէ տեղ մը շինէ իրեն համբարանոցին մէջ, ու հոն պառկի. որովհետև Ռոպէնսոն միշտ խոհեմութիւն զգուշութիւն ընելով բոլոր վէնքերը իրեն քով կըպահէր։

Ա՛չ երբեք անարժան կըհամարէր որ խոնարհական գործքեր ընելով բարի օրինակ տայ իր հպատակին. թէպէտ մարդուս վարմանք կուգայ թէ մէկ մարդով ինչ կըլլայ։

Այս պատճառաւ Ռոպէնսոնին վարքը սշխարհքի խրատ եղաւ։ Որ ինքնիշխան

ըլլալով բոլոր կղզիին, և բայարձակ տէր կենայ և մահու գերիին ու լամանեերուն, էր խորշիր, միշտ կըխոնարհիր գերիին առջին ծառայական գործքեր ընելով լամանները կընայէր, ջուր կուտար, կաթ կըկթէր, և գերիին ընելու գործքը ինքը կընէր, որ սիրտը հանգչելով հոգ չունենայ։ Իսկ Ռուբբաթ գերին կըտեսնէր որ տէրը լամանեերուն կաթը կըկթէ, կըպարմանար թէ ի՞նչ պիտի ընէ. որովհետև ամենևին խելքը չէր հասներ թէ կենդանիին կաթը ասանկ պատուական սնունդ է, վ՚ը զն ոչ երբէք բերանը դրած էր. երբոր Ռոպէնսոնին ասիպելովը քիչ մը խմեց՝ զըարձանալով կըզարմանար, թէ ի՞նչ աղէկ բան է։ Այս աշխատանքը լմընցնելէն ետև, որ բոլոր օրը հոգնեցան, երկուսն ալ ուզեցին հանգչիլ։ Ռոպէնսոն հրամեց գերիին որ երթայ տեղը շնորհակալութիւն ընելով գէպ՚ի երկինքն ու պառկի որ զինքը այնչափ վտանգներէն ազատեր էր, և անանկ մարդու ձեռք ձգեր էր, որ իրեն թէ՛ ընկեր է և թէ՛ բարեկամ (*)։

(*) Թէպէտ այս գերին կռապաշտ էր, սակայն Ռոպէնսոն հասկըցուց իրեն որ ամէն բան ՀԱԾ է ընողը. և ամէն մարդ պարտական է ստեղծողին երախտիքը ճանչնալ և շնորհակալութիւն ընել գէպ՚ի երկինքը նայելով։ Այսպէս Ռոպէնսոն հիմնակուց սկսաւ գերիին ՀԱԾպաշտութիւն սորվեցընել. որ

Յոլ. Գլուխ.

Յայտնի է թէ որչափ մեծ բան է մարդկային ընկերութիւնը, և որչափ մեծ բարիք կրծագին անկէ. պէտք է զարմանալով շնորհակալ ըլլալ ստեղծողին որ բնապէս մարդուս սրտին մէջ դրեր է ընկերական հոգի ունենալ և իրարու օգնել՝ չէ թէ գազանիպէս իրարու միս ուտել։ Պօպէնսօնին առջի գործքն եղաւ, որ միւս օրը առնէ ընկերը երթայ վայրենիներուն պար խաղած տեղերը տեսնէ. ուր առջի օրը այն սատանայական տօնը կատարեցին։

Ամբան երթալու ատենը հանդիպեցան այն տեղին ուր որ երկու վայրենի մարդիկ թաղված էին, գերին խնդրեց Պօպէնսօնէն որ իրեն հրաման տայ, անոնց մարմինը հանէ ուզածին չափ ուտէ, որ աւելի սիրտը պաղի։ Պօպէնսօն սաստելով հասկրցուց, թէ այդ բանը զարհուրելի ատելուն և անգթութիւն է որ կուզես ընել. վերջուց տեղը սպառնացաւ իրեն թէ կըզարնեմ թէ որ այդպիսի կերակուր ուտես ասկէ ետև։ Գերին վախնալով զգուշացաւ տիրոջը կամքին դէմ ընել. սակայն կըզարմանար թէ ինչու համար

կամաց կամաց խիստ հոգէւոր մարդ եղաւ ու զարմանալի։

թող չի տար ուտելու թշնամիներուն միան, որ մանկութէն 'ի վեր սրտին մէջ ատելութի կար անոնց վրայ։ Հասան պարխաղաղ տեղը, երբոր տեսան գետինը արիւնով ներկած, մարդու ոսկորներ աղին անդին ձգած. Լոպէնսօն անանկ զարհուրեցաւ, որ աչքը մէկալ դին դարձընելով հրամեց գերիին որ շուտով փոս մը բանայ ու թաղէ բարբարոսական կերակուրին մնացորդը։

Գերին այս հրամանը կատարելու ատենը՝ Լոպէնսօն մարած կրակը խառնելով, կընայէր թէ կրնայ կրակ գտնել. տեսաւ որ բոլորը մարած է, շատ վշտացաւ. վ՚ո զի փափաքելով ընկերը գտնելէն ետև ուրիշ բանի չէր ցանկար կրակէն 'ի զատ։ Լաստի գլուխը կախեր տրտմութի կրակին վրայ կընայէր, որ բոլորովին մարած էր։ Գերին զինքը այսպէս տրտում տեսնելով շատ նշաններով կըհարցընէր. բայց Լոպէնսօն չի հասկըցաւ. վերջապէս առաւ կացինը ձեռքն ու կայծակի պէս վազեց անտառը. տէրը մինակ ձգեց, որ ամենևին չի հասկընալով անոր միտքը կըզարմանար։

Լոպէնսօն սկսաւ շփոթիլ և զարհուրելով վախնալ այս ի՞նչ բան եղաւ՝ կըսէր. արդեօք ապերախտ գերիս զիս ձգեց գնաց՝ ալ չպիտի՛ բերէ կացինս. չըլլայ

թէ նենգուէ երթայ բնակարանս առնէ նստի, ու վիս անկէ հալածէ բռնութէ. վախնամ թէ անօրէնը կերթայ զիս իր քաղաքացի լեռան մարդկանց կըմատնէ։ Անանկ սարսափելով դառնացաւ, որ առաւ տէգը ընկաւ գերին ետևէն, որ գտնէ ու պատուհասէ ապերախտն, որ չերթայ միտքը դրած մատնութիւնը կատարէ։ Երբոր շփոթելով կերթար՝ տեսաւ որ գերին վազելով կուգայ։ Ասպէնսօն սոսկալով մնաց հոն՝ չի կրցաւ առաջ երթալ. վէ՞ զի տեսաւ որ մատնիչ ըսած գերին, ձեռքը չոր խոտեր առեր կուգար. նայիս խոտը մնալով բոց ելաւ շուտ մը, գերինվար ձգեց կրակն, ու չոր ծառի ճիւղեր և խոտեր վրան դնելով աղէկ կրակ մը վառեց հոն. Ասպէնսօն կրակին վրայ նայելով շատ կուրախանար, ու կըզարմանար գերին ըրած բանին վրայ։ Ասոր ուրախութէն զինքը չի կրցաւ բռնել, ցաթկեց ելաւ գերին վիզը փաթթելեցաւ, ու սիրով գրկեց զինքն ու շատ անգամ նեղում խնդրեց, որ անիրաւութէ դատեր էր։ Իսկ գերին՝ անտառն որ մտաւ մէկէն երկու չոր ճիւղ կտրեց, ու անհնարին աբագութէ և ուժով իրար կըքսեր անանկ՝ որ քիչ ատենին մէջ բռընկեցաւ. ու իր քովը պատրաստ չորցած խոտ կար, մէջը փաթթեց բերաւ. և սաստիկ վազելուն

հովը զարկաւ բոց հանեց. ինչպէս որ ըսինք Լոպէնսօն ուրախութենէն պաղեցաւ մնաց՝ տեսնելով թէ իր կասկածը պարապ ելլէ. լէն 'ի զատ կրակ ալ գտաւ, որ այնչափ ատենէն 'ի վեր զրկըված էր. որուն այնչափ կըփափաքէր։ Բոցին շարժմունքնե. րուն վրայ նայելով կըզմայլէր. ետքը կրակոտ փայտ մը առաւ ելաւ գնաց բնակարանը գերիին հետ։

Բնակարանին քով շուտով մեծ կրակ մը վառեց. կրակին բոլորը գետնիկնձոր շարեց. գնաց լամանները ուն մէջէն մէկ ձագ մը բերաւ մորթեց. կտրեց կտոր մը շամփուրն անցուց տվաւ գերիին որ դարձընէ։ Լփիելէն եաև կտոր մը կտրեց, ու մէկ քանի գետնիկնձոր ալ հանեց կըձգեց. ետքը առաւ մայիզ հունտէն երկու քարի մէջ մանրելով իբր թէ ալիւր ըրաւ. պըտուկը լեցուց ջրով կրակը դրաւ որ եփի ապուր ըլլայ. վա՜ղն ուրթը տարի էր բերանը չէր դրած, անոր համար մեծապէս կըփափաքէր։

Լոկ գերին կըտեսնէր այս պատրաստուելները, բայց խելքը չէր հասնիր թէ ինչու համար կըլլան. թէպէտ այսչափ միայն գիտէր, թէ միսը կըխորվէն. իսկ մէկալ բաները ամենևին չիյտէր, չէր գիտէր թէ ջուրը ինչու համար պտուկին մէջ դրեր կեփէ։ Լոպէնսօն եկաւ բնակարա-

նը մտաւ, գերին ձգեց որ եփելու բաներ-
ը նայի զգուշութիւն. բայց գերին կը զար-
մանար ջրին պչպչալուն վրայ թէ ինչ-
պէս կեփի։ Նոքը տեսաւ որ ջուրը վեր
ելլելով յանկարծ ամանէն դուրս թափե-
ցաւ, այս բանին անգէտ ըլլալով կարծեց
թէ ամանին տակը կենդանի մը կայ, որ
այս բանս կընէ. ուստի ջուրը սառնակ դուրս
չի թափելուն համար ձեռքը պտուկին
մէջ խօթեց, որ կենդանին բռնէ. բայց
անանկ խեղճ ընելով աղաղակ մը հանեց,
որ բոլոր բնակարանը գոռաց։

Ասպէնաօն այս ձայնէն անանկ զարհուր-
եցաւ, որ չկրցաւ թէ ինչ եղաւ դուրսը.
այն կէտին ուրիշ բան միտքը չեկաւ, բայց
եթէ վայրենի մարդիկ եկան կոխեցին, և
Ուրբաթ գերին բռնեցին։ Ուստի վախն
ու քնական սէրն, որ ունէր գերին պաշտ-
պանելու՝ իրար խառնըվեցան, ստիպեցաւ
ծածուկ Ճամբայէն փախչելով ազատիլ.
բայց մտածեց որ մարդկութիւն չէր իր գե-
րին կամ ընկերը ձգէ թշնամիներուն ձեռ-
քըն ու փախչի։ Ասոր համար այս խոր-
հուրդը ձգեց, ու մէկէն ղէնքերն առաւ
ելաւ բնակարանէն դուրս, միտքը դրաւ
թէ պէտք որ ըլլայ մինչև բոլոր արիւնը
թափէ. միայն թէ այս անգամաչ ազատէ
գերին մարդակերը թշնամիներուն ձեռ-
քէն։ Բայց երբոր կացինը ձեռքը դուրս

ցանկեց, տեսաւ որ գերին մինակ կըպօ-
ռայ կաղաղակէ, ինչպէս զարմացաւ մնաց,
չիմացեր թէ ինչ զուրցէ։ Բիչ մը մտմը-
տալէն ետև՝ հասկըցաւ թէ գերին ձեռ-
քըն երեսլուն համար կըպօռայ։

Ասպէնսօն սիրտ տվաւ իրեն որ ձայնը
կտրէ. սակայն տարիէն ետև երբ որ ըս-
կըսաւ գերիին խօսքերը և բնութիւնը հաս-
կընալ, անատենը իմացաւ, որ այնչափ
սոսկալի աղաղակը չէ թէ միայն ցաւուն
համար էր, հապա աւելի երևակայական
զարհուրանացը համար։ Ասն զի լեռան
մարդիկ հաւատք և կրթութիւն չունենալ-
նուն համար, սովորութիւն ունին բան մը
պատահածին պէս պատճառը չգիտնալով
սոսկալի կայլայլին։ Ուստի այս ողորմելի
աւելորդապաշտ հեթանոս գերին ալ միշտ
միտքը դրած էր թէ մէկ աներևոյթ հո-
գի մը կայ՝ որ ասանկ ամէն բան կընէ. ո-
րոնց որ պատճառը չէր կրնար հասկընալ։
Այս հոգին ինքնիրեն բան չընէր կըսէր,
այլ միշտ մէկ մարդու մը հրամանով կընէ
ասանկ բաները, որուն հրամանին տակն
է։ Եւ այն մարդուն տակը շատ հոգիներ
կան, որոնց կըհրամայէ. որ է կախարդ
կնիկ մարդ մը կըսէր։ Զորօրինակ՝ թէ
որ լեռան մարդկանց մէկ անասունը յան-
կարծ հիւանդնար, որուն պատճառը չը-
գիտնալով մէկէն կաւատային թէ կախարդ

կնիկը կախարդելով անասունը հիւանդ-
ցուց, կամ թէ չար հոգին ասանկ ըրաւ (*) ։

Իրաւի՝ շատ միամիտ ժողովուրդ ալ կայ
որ աւելորդապաշտութեան մէջ են իրենց
քուրմերուն չարութենէն, որ ժողովուրդին
միտքը ասանկ աւելորդապաշտութիւն պաշտ-
ուեր են, որպէս զի կախարդութիւն ընելով
ստակնին առնեն. շատ անգամ կըկէղծա-
ւորին թէ կրնանչնանք պատճառն, ու
կըխոստանան թէ ոճային անունով կա-
խարդութիւը կաւրենք՝ բռնադատելով չար
հոգին որ թող տայ ։ Ը.հա ասանկ սուտ
խօսքերը ստրկով կըծախեն ռամիկ ժողո-
վուրդին ։ Այսիս հիւանդութիւը ընտկանա-
բար կըդադրի, անոնք կուրախանան թէ
մեք լաւցուցինք, և միամիտ ժողովուրդը
կըխաբեն թէ մեր աբեռատովը յաջողե-
ցաւ ։ Շատ մարդիկ կան մինչև հիմա,
որոնց միտքը ասանկ աւելորդապաշտութիւ
խաւարած ըլլալով՝ կախարդութիւ կաւտան
ու կըհետևին ։

Ը.սկէ կըհետևի թէ այն վայրենի լե-
ռան մարդիկ ի՞նչպէս աւելորդապաշ-

(*) Մինչև հիմա ոչ վայրենի մարդիկ այս մտքին
վրայ են, հապա ամէն տեղաց հասատ մարդիկ կար-
ծեն՝ թէ խելքերնին չի հասած ծանր բանը չար հո-
գին կընէ, կամ չար ժամանակին մէջ ըլլալով կըլլայ.
անոր համար կըսեն թէ չար ոհոմի է։ Ահա ա-
սանկ աւելորդապաշտութիւ շատ անխելք մարդիկ
ժանտամահին պատճառը չգիտանալով՝ կարծեն թէ

տուք մեծ կը համարին ասանկ բաները. մինչ զի որչափ որ զարմանալի բան իրենց հանդիպի, երբ իրենց խեղճ միտքը չի կրնար ըմբռնել, մէկէն կընծայեն չար հոգիներուն որ կընեն. ահա այսպէս եղաւ և Ուրբաթ գերիին ալ։ Ա՛ռ զի ոչ լսէր էր և ոչ փորձով գիտէր թէ՝ ջուրը տաքնալով կը պղջղջայ, և բնաւ չէր փորձած ձեռքը տաք ջուրը խօթելու. ուստի չը-գիտնալով թէ ձեռքին կսկիծը ասկէ պատճառէցաւ, որ ջրին մէջ խօթելով մէկէն երեցաւ, հաստատ հաւատաց թէ կախարդ չար հոգին ցաւցուց. բայց ասաւ միտքը դրաւ թէ Ուսպէնասն այն չար հոգիին տէրն է։

Ուրեմն երբոր մէկը չի տեսած բանը կը տեսնէ, որ խելքէ դուրս կերևնայ, կամ արուեստաւոր մարդու հանդիպելով զանազան բաներ կընէ առջին, որ անկարելի կերևնան. զորօրինակ թուջունին գը-լուխը կտրեն կը փակցընեն ետ, ասանկ բաները կախարդութի սեպելով սատանայական չի կարծէ լեռան մարդիկներուն պէս։ Այ թէ անանկ բաները խելքէ դուրս են, հապա խելքը կարճ և հաստ

չար հոգի է. ուստի անոյշ բաներ կը դնեն, որ այն չար հոգին իրենց չի դպչի։ Բայց թէ որ ասոր վրայ անդրադառնան՝ ոչինչ ամենևին իրենց անխելքութեանը վրայ հասկընալով ժանտամահին պատճառը։

ըլլալով ասանկ արեւստներին դուրս է. թէ որ խելքը բարակ և կրթած ըլլար՝ այնչափ չէր զարմանար, ու ամէն բանին պատճառը կըգըտնէր։

Ինչպէս ըսինք՝ Ալոպէնսոն անանկ զարմացաւ մնաց, որ առջի բերանը չի կրցաւ բան մը կուրցել և մխիթարել գերին, նաև շամփուրը ձեռքն առնելով միսը գարձընել. իսկ գերին զարհուրելով միակերպ պտուկին վրայ կընայեր հետաքրքրութիւն։ Եւ որովհետև Ալոպէնսոնը երկնաւոր հոգիի մը տեղ էր դրեր՝ դողալով և մեծարանքով միայն երեսը կընայեր։

Ալոպէնսոն ասանկ ահաւոր երևնալուն պատճառը՝ մէյմը մարմինին ճերմակութիւնն էր, մէյմ՝ ալ երկայն մօրուքն էր. որ գերին կըտեսնէր թէ ամենևին իրենց չի նմանիր ոչ գոյնը և ոչ մօրուքը. որովհետև Ամերիկացիք մօրուք չունին, ու երկար ատեն անցնելէն ետև քիչ մը կըբուսնի. անալ շուտ մը կածիլեն։

Բայց այս միջոցիս մէջ ապուրն ու գետնախնձորը եփեցան, դքալ չըլլալուն համար Ալոպէնսոն ապուրը լեցուց քօքոյին ամաններուն մէջ, որպէս զի խահվէի պէս քիչ քիչ խմէ, իսկ գերին ամենևին չի մօտեցաւ ու բերանը չի դրաւ ապուրը, կարծելով թէ կախարդած դեղ է։ Նաև սոսկալով Ալոպէնսոնին կընայեր, որ այն-

չափ փափաքանօք կուտէր. իսկ դերին ա-
խորժանօք կերաւ միայն խորված մնէն ու
դեռնիխնձորէն։

Ընչափ քաղցր և ախորժելի եկաւ Ա-
պէնսօնին այս կերակուրն, որ այնչափ
տարի չէր կերած. բոլոր քաշած նեղու-
թիւնները մոռցաւ, և կարծեց որ չէ թէ ա-
նապատ կղզին մէջ է, հապա բազմաժո-
ղով մեծ քաղաքի մը մէջն է։ Ինանկ որ
ոտծային նախախնամութիւնը անկարծելի
դիպուածով մը մէկ ռոպէին մէջ այնչափ
տարուան փափաքը լցուց, և սրտին վերքը
փարատեց. շատ անգամ մեզ ալ այսպէս
կընէ, բայց մեր զգայուելը չի համբերե-
լով մէկ նեղուի մը տեսածին պէս կըցու-
սահատի, իբր անդարմանելի։ Իսկ Ա-
պէնսօն այս երջանիկ կէտին մէջ կարծեր
թէ ամէն բարիքը կատարեալ ունի կը-
վայելէ, և բոլոր սրտովը շնորհակալ կըլ-
լար ոյ։

Կերակուրը լմընցաւ՝ Ապէնսօն մէկ
դի քաշվեցաւ որ ուղէկ մտածական ընէ
այս երջանիկ դիպուածներուն վրայ, որ
յանկարծ այսպէս փոխվեցաւ վիճակը.
ամէն բան իրեն զըւարճալի կերևնար, ո-
րովհետև մինակ չէր՝ ընկեր մը ունէր.
թէպէտ չէր կրնար խօսակցութիւն ընել,
բայց այսչափ ընկերութիւն ալ շատ մեծ
բան էր. և շատ մեծ միխիթարութիւն էր, որ

կրնար իրեն մեծապէս օգնութիւն հասնիլ։ Նաև կրակ ունեցաւ, որ կրնար լաւ առողջ կերակուր ուտել ինչ բան որ ուզէր։ Սրսեր ինքնիրեն թէ ի՞նչ բան կայ հիմա, որ կարենայ իմ հանգստութիւնս աւրել, և թող չի տալ որ երջանիկ ապրիմ։ ահա՛ ասկէ ետև կըզարձնամ խաղաղութիւն այսչափ բարուեց մէջ, որ ամ ինծի պարգևեց։ Ահա՛ լեցուն պտուղ, և այսչափ անասուններ, որ սեղանս ամէն կերակուրով կըլեցընեն։ Ասկէ ետքը մտնամ անցածներն, որ այնչափ տանջըվեցայ, և այնչափ տարի անապատիս մէջ կեանքս մաշեցի։ Ահա դերիս ուժով և զօրաւոր իմ տեղս կաշխատի։ Սանկ մտածելով և ինքնիրեն խօսելով նայիս յանկարծ միտքը փոխվեցաւ։ Ի՞նչ, թէ որ այս ամէն աղէկութիւնները մէկէն անցնին ես ի՞նչ պիտի ընեմ կըսեր. եթէ դերիս մեռնի, և կրակս մարի նորէն, ես ի՞նչպէս կըլլամ։ Այս խորհուրդը բոլորովին սիրտն այլայլելով արիւնը պաղեցուց։

Անաւանդ եթէ զըւարձուք թոյլ և հանգիստ կեանքի սորվիմ, ետքը ի՞նչպէս պիտի դիմանամ նեղութեց և խիստ աշխատանաց մէջ, թէ որ գլխուս բան մը գայ ըսելով՝ տրտմեցաւ։ Կսաւ սրտանց հառաչել, թէ ի՞նչ օգուտ եղաւ, որ առաջ-

վան տկար և պակասաւոր վարքս շտկեցի կրթութիւնքս. և դիպուածներուն բռնութիւնքն այնչափ աշխատաւոր և պարկեշտ ըլլալս ինչու պէտք եղաւ, երբոր հիմա պիտի ըլլամ ուտելու խմելու ետևէ առանց աշխատանաց. որով քաջութիւնս ալ կերթայ՝ առողջութիւնս ալ. հոգիս ալ պիտի տկարանայ մարմինս ալ։ Ամենևին ոչ չուզեր առանկ բան։ Այս խօսքս ըսած ատենը ցաթկեց եղաւ սկսաւ բակին մէջ երթալ գալ։ Այս միջոցիս մէջ գերին ժողվեց սեղանն, ու մնացած կերակուրը պահեց. և տիրոջը հրամանով գնաց լամանները կթելու։

Ուսոլենսօն նորէն սկսաւ խօսիլ. թէ որ աշխատանքէ փախչիմ կանոներս ձըգեմ՝ շուտով կավրիմ, և վիճակս գէշ կըլլայ. ձեռքերս որչափ որ անգործ մնան, ես կըլլամ անշնորհք և անպիտան մարդ մը։ Ուստի ընկաւ երեսի վրայ երկրպագութիւն ընելով աղաչեց՝ այ, որ թող չի տայ զինքը. փրկէ անանկ անկարգութեց, և անանկ զինքը պահէ պարկեշտ և խոհեմ։

Պէտք է որ կրսեր նորէն երդում ընեմ ստեղծողիս առջին. որպէս զի միշտ ըլլամ պահեցող և պարկեշտ, կերակուրս պարզ՝ այնչափ որ զիս առողջ պահէ, առանց որկրամոլութեան, թէպէտ և շատ բաներ ունե-

նամ, և մեծապէս առատուն մէջ ըլլամ։ Եւ պէտք է որ նոյն աշխատանքով իմ կեանքս անցընեմ. թէպտև այնչափ հարկաւոր չըլլայ ինծի։ Ամէն շաբթըվան մէկ օրը՝ չէփած կերակուրներ ուտեմ. ինչպէս որ մինչև հիմա անանկ պաղ կերակուրներով ապրեցայ. և ամէն ամսուն եռքի օրը անանկ առանձնանամ ինչպէս որ եղայ առջի օրն, որ հոս ոտք կոխեցի. նոյն օրը կըխրկեմ գերիս դաշտը 24 ժամ հոն թողմնայ։

Այս առաքինական առաջադրութիւնս ընելէն ետև սիրտը քաղցրանալով բերկրեցաւ, և հանգչեցաւ. որովհետև մարդուս հոգին աշխատանքով և առաքինութիւն կատարեալ կըլլայ, լաւ կըհասկընար թէ ո՛րչափ բարիք յառաջ կուգան այս կամաւոր ձգնուէս, որ առաջադրեց։

Սիրտը հեռացընելով հեշտալի բերկրութեց, խիղճը աւելի մաքուր և պարզ եղաւ։ Սակայն իր փորձովը խիստ լաւ գիտէր մարդկային մտաց անհաստատութիւնը. անոր համար խիստ հարկաւոր կիմանար անանկ զգուշութիւն մը ունենալու ընդդեմ բնական փոփոխականութեան։ Ուստի ուզեց որ տեղ մը գրէ նշանել այս խրատը, որպէս զի շատ անգամ տեսնէ. մանաւանդ թէ ամէն օր մէկ քանի անգամ կարդայ այս գովելի առաջադրութիւնը։ Որ սոր հմի կա-

ցինով փորեց բնակարանին դռանը վրան այս երկու խօսքս. Աշխատուն, Պահեցողուն (*):

ԺԸ. Դէպաւած.

Ընդ Ոսկէնսօնին ըրած առաջադրութիւնը շատ մեծ խրատ է մահայուցման. և ամէն բանէն աւելի զարմանալու գործք է, որ առաքինական վարքը չի թուլնալու հմար՝ բոլոր ունեցած առատութիւնը և հանգիստը ձգեց, ու իր առջի ճգնաւորական վարքը չի փոխեց։ Ահա օրինակ ամէն մարդու, որ բարի վախճանի համար պէտք է կամքը կոտրել, առաքինութիւն հետևելով ամենևին չար սովորութիւնմը չունենալ։

Սով կըլլայ կատարեալ մարդ՝ ինչպէս որ եղաւ Ոսկէնսօն. որ ամէն նեղութիւն

(*) Ոսկէնսօն փորձով գիտէր թէ որչափ վնասակար ախտ են դատարկութիւնն ու որկրամոլութիւնը. անոր համար սրտին մէջ գրեց աշխատուն ու պահեցողութիւն, որ ամէն մարդու հարկաւոր դեղ են. վասն զի առանց սոնց անհնար է առաքինի կեանք ունենալ, հարկաւ ախտաւոր կըլլայ մարդ. որովհետև ամէն չարեաց սկիզբը թուլութէն առաջ կուգայ։ Ոսկէնսօն տեսաւ որ ամէն հանգստութիւն ունի, սաստիկ վախցաւ, չըլլայ թէ թուլնալով՝ առաքինութիւնը կորսընցնէ ախտաւոր ըլլայ։ Ահա սոսոր համար կըսեն գիտունները, թէ որչափ որ մարմինը կըգիրանայ, հոգին կըտկարանայ. և որչափ որ մարմինը կըտկարանայ՝ հոգին կըզօրանայ։

քաշելէն ետև, և ամէն կերպով կամքը կոտրելէն ետև անանկ վիճակի մէջ դրաւ զինքն, որ քանի որ այն կղզին ոտք էր կոխեր այնպիսի երջանիկ կեանք չէր ունեցեր։ Մի այն մէկ անհանգստութիւն մը մնայ իրեն, որ կըվախնար՝ չըլլայ թէ վայրենի մարդիկ յանկարծ դառնան դան իրենց երկու ընկերները փնտրուելու հմար. նաև հաւանական կերևնար որ եթէ դան, նորէն մարդասպանութիւն և վտանգ պիտի ըլլայ. վա՜ զի պէտք էր կռիւ ընելով ծեծկըվիլ և կատաղութիւն իրարու արիւն թափել և իրար չարաչար մեռցընել։

Այս կասկածս բռնադատեց որ նորէն աշխատին իրենց ապահովութիւնը համար, ոնգ զի եթէ հանդիպի՝ կարենան կիրենք պաշտպանելու։ Ճատոնցմէ կուզէր Ռոպէնսօն իրեն բնակարանը աւելի ամրացընել. բայց որովհետև մինակ էր, անկարելի էր այս բանը կատարել։ Հիմա որ ընկեր ունեցաւ, միտքը հաստատեց որ կրնայ կատարել այս գործը։ Ուստի ելաւ լեռանը վրան, որ նայի՝ թէ ի՞նչ կերպ կրնայ ամրցընել. նայեցաւ դիտեց ամէն տեղ, որոշեց որ ծառէ պատին չորս դին փորէ խորունկ ու լայն խրամ (խէնտէկ) բանայ, և մէջ տեղը շինէ մէկ ամուր պատնէշ մը. նաև ասալ միտքը դրաւ որ այն վազած ջուրը երկուս բաժնէ.

մէկ մասը խրամին մէջ թող տայ և մէկ մասն ալ բակին մէջ վազցնէ. որպէս զի թէ որ պաշարվի առանց ջրի չի մնայ։

Այս խորհուրդը և շինելու բաները դերիին հասկցնելու համար շատ մեծ դժուարութիւններ կը քաշէր. սակայն ելան դային ծովին քով. հոն որչափ խեցիներ կային՝ որ կրնային գետինը փորել, բոլորը ժողվեցին բերին, ու երկուսն ալ ըսկըսան աշխատիլ։ Յայտնի է թէ այս գործքը դիւրին բան չէ. մ՚ա զի պէտք էր որ փոսը 8 ոտք բարձր և լայն ըլլար, որ խրենց օգուտ ըներ. իսկ շրջապատը սի-տի ըլլար 100 ոտք։ Ու սակայն այս զարհուրելի աշխատանքիս համար երկրթէ գործիք մը չուներ, ո՛չ բրիչ, և ոչ թիր ուներ. մանաւանդ թէ 400 ցիցեր պէտք էր պատնէշին համար, որ կտրելու և շինելու էր ջանոնք մէկ քարէ կացինով մը. ուստի շատ մեծ աշխատալի էր այս ջանքը։ Ի՞նչ էր ջապէս ջուրը հոն վազցնելու հմար պէտք էր Համբայ մը փորել. ուր տեղ տեղ արգելներ և բարձր տեղեր ըլլալով հարկաւ Հղքելու էր որ ջուրը անցնի։

Այս բոլոր դժուարութիւնները ամենևին սիրտը չի պաղեցուցին Ռօպէնսօնին, որ սկսեր էր դերիին հետ աշխատիլ. իբր զի՝ աշխատասէր և չափաւոր վարքը ամէն դժուար բան իրեն դիւրին կընէր. և ա-

նանկ քաջուն մը ստացեր էր, որ ամենևին դատարկ չէր կրնար կենալ, ոչ հեշտութեն գիտեր, և ոչ թուլուն. որչափ որ ծանր և դժուար բանի մը ձեռք զարներ՝ միշտ այս խօսքերս կըսեր. Ը. սպասիր՝ և շարունակեցիր: Ուստի ոչ երբեք թուլացաւ իր գործքեն, որ դժուար կերևնար՝ թէ կարենայ գլուխ տանել:

Ը. յս կերպով երկուքը միատեղ կաշխատեին ուրախութեամբ առտուանց մինչև իրիկուն. որ անանկ անյարմար գործիքով ամեն օր առաջ կըտանէին գործքը զարմանալի կերպով մը: Ը. ծ ողորմեցաւ որ 2 ամիս անցաւ, վայրենիներեն մարդ մը չերևցաւ. վերջ զի հակառակ հովի մը շարունակ փչելով՝ արգիլեց որ այն կղզին չի կրցան գալ: Ուստի բոլոր այս ժամանակիս մէջ աշխատանքի հետ էին. վասն զի հարկ չէղաւ որ բանի մը համար զգուշութեն ընելով գործքը ձգեն:

Ոսպինսոն այս աշխատանքիս մէջ՝ կըջանար որ գերիին քիչ քիչ նէմիէի լեզուն սորվեցընէ. շատ կըփափաքէր որ այս լեզուով հետը խօսի. իսկ գերին այնչափ մեծ ջանք ունէր, որ քիչ ժամանակին մէջ շատ խօսք սորվեցաւ: Ա արպետն ալ աւելի ախորժելով՝ սկսաւ այլևայլ ճամբայով գպրատան կարգով սորվեցընել. ամեն անգամ որ բան պէտք կըլլար՝ կը-

դներ գերին առջին ու անունը կուտար։ Բայց երբ անանկ խօսք կըլլար՝ որ չէր կրնար ցցընել անոր, զանազան շարժմունքներով կիմացընէր. անանկ որ գերին կրնար հասկընալ։

Այս եղանակով աշկերտը 6 ամսվան մէջ սկսաւ նէմցէի լեզուով բաւական հասկըցնել պէտք եղած բաները։ Հա ասալ նոր երջանկութիւն մը եղաւ Յոպէնսօնին. որ մինչև անատէնը գերին հետ անլեզու մունջի պէս ընկերուն կընէր. բայց հիմա կրնար մտքին խորհուրդը յայտնել, և բարեկամու

զի ով որ մոտենար փոսին, մէկէն կընայ-
ին զարնել թէ՛ աղեղով, և թէ՛ տեգով.
ուստի հասկըցան, որ բաւականապէս ա-
պահով եղած էն։

Օր մը Յոպէնսօն ու գերին գայլին
ծովուն մօտ բարձր քարիմը վրան ելան,
ուր տեղայ կընային ծովուն վրայէն հե-
ռուն տեսնել. յանկարծ մէկ քանի կղզիներ
տեսան, որ հեռուէն ամպի պէս կերևե-
նային. գերին աչքը տնկեց դէպ՝ ի այն
կողմը կընայեր։ Այլիս մէկէնիմէկ ցաթ-
կեց այլայլելով՝ վար վեր ընկաւ. անանկ
նորաձև շարժմունքներով որ Յոպէնսօն
կարծեց թէ յանկարծակի կատաղութի մը
եկաւ վրան։ Օրացի՛ր, զօրացի՛ր կը-
կանչէր միշտ ցաթկըտելով։ Յոպէնսօն
իրեն հարցուց, թէ ի՞նչ համար ասանկ
գէմն անցած այլայլեցար։

Պատասխանեց թէ ահա՛ իմ քաղաքս.
ահա՛ իմ ազգիս ընակարանը։ Յոպէս
ուրախութէն շփոթած էր։ Իր դէմքը աչ-
քերը և շարժուածքը յայտնի կընէր հայ-
րենասիրութին ու քաղաքը տեսնելու փա-
փաքը։ Յոպէնսօնին ախորժելի եկաւ
այս գործքը, և Ճշմարիտը խօսելով գո-
վելի բան էր. որ փորձելով հասկըցաւ
թէ գերին որչափ կըսիրէր իրեն հայրե-
նիքն, ու իր ծնողքը։ Սակայն Յոպէն-
սօն վախցաւ, որ չըլլայ թէ օր մը առիթ

գանէ ու ձգէ զինքը գառնայ իր հայրենիքը։ Ուստի հասկընալու համար կամեցաւ Պօպէնսօն փորձել անոր սիրտը. և եաքը այս խօսակցութիւնները ըրաւ. որով կրնայ հասկցուիլ թէ ո՞րչափ գերազանց բնութիւն էր գերին։

Հարցուց Պօպէնսօն թէ կըփափաքիս հայրենիքդ երթալու, և անոնց հետ ապրելու։ Գերին ալ պատասխան տվաւ, թէ ո՞հ ո՞ւր էր, շատ կըցանկայի տեսնելու։ Կրկնեց Պօպէնսօն արդեօք անոնց քով երթայիր նորէն մարդու միս պիտի ուտէիր։ Ըսաց գերին՝ թէ Հշմարիտ կըսեմ որ չէի՝ ուտեր, ես անոնց կըսորվեցընէի որ վայրենի չի մնան. հապա կաթ ու ոչխարի միս ուտեն, և ամենևին մարդու միս չուտեն։ Պօպէնսօն ըսաց, կրնաս քանօթ նաւ մը շինել. և երկիրդ երթալ։ Հրամերես ըսաց։ Նաւ ըսաց՝ խիստ լաւ. շինէ՛ մէկ նաւ մը ինչպէս որ կուզես. բայց ինչու համար աչքդ գետինը կընայի տրտում։ Նոր համար ըսաց, որ կըտեսնեմ թէ տերս բարկացած է ինծի, վո՞ զի կուզէ զիս խրկել. բայց գիտնաս երբոր դուն հետս չես, ամենևին չեմ երթար։ Պօպէնսօն ալ ըսաց, թէ քու ազգդ զիս թշնամի տեղ դնե ով չըլլայ թէ բռնեն ուտեն զիս. քա՛ւ ընցի ըսաւ գերին։ Յետոյ դարձաւ ըսաց գերիին, թէ ինչու հա-

մար կը ջարդէս կայինով այս կողմի բոյ-
սերը. և ի՞նչ պատճառաւ գլուխդ ծռած
ես տրտում, ի՞նչ կուզես որ ընեմ։ Ն.ն
ալ ըսաց, թէ որ սպաննես զիս աւելի
կուզեմ մեռնիլ, քան թէ քեզմէ զատ-
ւիլ։ Ն.սանկ ըսելով աչքէն շատ արտա-
սունք թափեց, որ Յոպէնսօն չը լսայ թէ
ձամբայ տայ իրեն։ Յոպէնսօնին սիրտը
գալարելով գրկեց գերին ու ըսաց. մի՛
լար իմ սիրական Յուրբաթս, մեծ է իմ
սերս քու վրադ՝ որ չուզեցիր իսմէ զատ-
ւիլ. ես այս խօսքս քեզ փորձելու հա-
մար զուրցեցի, որպէս զի հասկընամ թէ
քու բարեկամութիւդ իմինիս հաւասա՞ր է։
Ն.յս սիրուն քաղցր արցունքներդ որ կը-
թափես, իմ բարեսրտուէս պտուղն են։
Ն.հա նորէն քեզ կընդունիմ սիրով. ար-
ցունքնիս սրբենք, և իրար չի ձգենք ա-
մենևին։

Ն.յս տրտմալի խօսքերը փոխելու հա-
մար սկսաւ նորէն խօսք բանալ նաւակին
վրայ, ու զանազան խնդիրներ ըրաւ. վեր-
ջապէս բռնեց գերիին ձեռքէն տարաւ
կտրած ծառը ցցուց, որ այնչափ տարի
աշխատելով կըփորեր։ Գերին երբոր տե-
սաւ սկսաւ կամաց մը խնդալ. որ այնչափ
տարիներուն մէջ անանկ քիչ էր փորեր,
որ չորս մատ չի կար։ Յոպէնսօն հարցուց
թէ այս աշխատանքէն ի՞նչ հասկըցար.

գերին ալ պատասխան տվաւ. թէ կը-
տեսնեմ որ շատ ժամանակ կորսընցուցեր
ես գրեթէ պարապ տեղը. որովհետև
կրնայիր այս ծառը քիչ օրւան մէջ կրա-
կով շատ դիւրին փորել։ Ը.յս բանն որ
լսեց Լոպէնսօն՝ուրախութենէն խելքը գլլ-
խէն գնաց. իրեն անանկ կուգար՝ որ նա-
ւը լմընցաւ, ու ծովուն մէջ ժուռ կու-
գայ. և երջանիկ Ճամբորդութիւն ցամաք
հասաւ, ու Եւրոպացոց հետ խօսակցե-
լով կըզբաղանայ։ Ը.յս խորհուրդ-
ներն անցնելէն ետև, որոշեց որ առտը-
վանց կանուխ սկըսի գործքն առաջ տա-
նիլ։

Լոպէտ գործքին Ճամբան գտան,
բայց չէր տեսը թէ կրնայ գլուխ ելլել. կամ
թէ կրնայ անով Ճամբորդութիւն ընել,
վասն զի ապագային միշտ անստոյգ ըլլա-
լով շատ փոփոխութեանց տակ է որ շատ
անգամ պարապ կըհանէ մարդուս յոյսը։
Ընդադար կըտեսնենք որ անյաջող կըմը-
նայ մեր հաստատ յոյսը, անոր համար
միշտ պէտք է իմաստութիւն սպասել և
պատրաստ կենալ ասանկ դիպուածներու
մէջ։ Լոպէնսօն այսպիսի բաները շատ
անգամ փորձած ըլլալով՝ ամէն բան յանձ-
նեց ուծա ին նախախնամութեան ու դարձաւ
իր բնակարանը. որովհետև լաւ գիտեր,
թէ երկնաւոր հայրը իմաստութիւն կըկա-

ռալարէ ինչպես որ իրեն հաճոյ է, և խիստ ալէկ կը ճանչնայ իրեն օգտակար բարի-քը։ Ուստի պէտք է որ ասանկ պարագաներու մէջ մենք ալ այսպէս մտածենք (*)։

ՅՈՒՈ. ԴԻՊԱԾ.

Ղուլի դիպուածէն յայտնի եղաւ, որ շատ բան կը պատահի աշխարհքիս մէջ, որ պէս-պէս արդելքներով կը խափանի, ու ճամբան չի գանըվելով երկար ատեն անկատար կը մնայ. սակայն մէկ պզտիկ գիւտ մը քիչ աշխատանքով և քիչ ժամանակի մէջ գլուխ կը տանի, որ տարիներով մարդու մը միտք չէր եկած. ինչպէս եղաւ Ռոպէնսոնին. որ այնչափ տարի հոգին հանեց աշխատելով ծառը փորելու համար, և հիմա մէկ լեռան մարդ մը ա-

(*) Ռոպէնսոն օրագրութեան մէջ կըսէ, որ օր մը հարցուցի գերիս թէ ինչպէս բռնըվեցար. ըսաց թէ թշնամիներս բազմութիւն ըլլալով մէկէն վրանս թափվեցան. թէպէտ շատ ծեծկըվելով դէմ դրինք, բայց գլուխ չեկրցանք ելլել։ Հարցուցի թէ դուք ալ ձեր թշնամիները կուտէ՞ք. հապա ըսաց՝ մենք ալ ուրչափ որ կրբռնէինք, կրբերէինք այս կղզին միւս կողմը կուտէինք. մէկ օր մը շատ բազմութիւն եկանք 20 մարդ կայինք, 2 կնիկ և մէկ տղայ մը կերանք տօնախմբութիւն, թէպէտ ես պզտիկ էի՝ հետերնին բերին զիս։ Քսան թիւը չիյտեր համրել. մանր քարեր շարելով հաշկցուց Ռոպէնսոնին։

նանկ լոյս մը տվաւ իրեն, որ կարծեց թէ նաւը լմընցած է ու քաղքէ քաղաք կը պտըտի։

Այց շատ քան աւ կըլլայ, որ գործքը կարգի դրած ատենը արգելք մը կըպատահի ու անկատար կըթողու. ինչպէս՝ երբ Լոպէնսօն եղաւ միւս օրն որ նաւը փոքրել տայ գերիին, նայիս յանկարծ անձրև մը սկսաւ այնպէս սաստիկ՝ որ քանի այն կղզին եկած էր դիտելով տեսեր էր որ տարին երկու անգամ անանկ սաստիկ անձրև կուգայ հոն՝ միշտ գիշերահաւասարին ատենը (*)։ Այս անձրևային եղանակը հասարակօրէն երկու ամիս կըքշէր. այս միջոցիս մէջ շարունակ անձրևելով՝ անկարելի եղաւ որ գործքի ձեռք զարնեն։ Բաւական փորձեր էր որ խիստ ինասակար էր առողջութիւն այս անձրևին ատենը դուրս ելլել թրջիլ. ուստի բրուտնադատեցան որ նաւը ձգեն և ուրիշ գործք մը հնարեն առանց դուրս ելլելու։

Որչափ մեծ երջանկութիւն էր Լոպէնսօնին, որ այս տրտում անձրևոտ եղանակին երկար գիշերները կրակ լոյս և ընկեր ու-

(*) Գիշերահաւասար կըլլայ տարին երկու անգամ, մէյմը մարտի 9ին, մէյմ՚ ալ սեպտեմբերի 10ին երբոր արեգակը այն կենդանակերպներուն տակը կըմտնէ, որ գիշեր ցորեկ հաւասար կըլլայ. վասն զի հաւասար ժամանակ կանցընէ արևը թէ աշխարհքիս վրան և թէ տակը։

նեցաւ, որ միատեղ կաշխատէր, և խօսակցուն ընելով սրտին նեղութիւնը կըփարատէր։ Բաւական որ այս տրտմալի գիշերներին մինակ կանցընէր անգործ և մութ տեղը, հիմա ընկերոջը հետ նստած կրակին և լուսին քով կաշխատի ուրախութիւն ամենևին ձանձրուն մը չունենալով։

Լեռան մարդիկ որչափ գիւրին կերպով բաներ կըշինէին, Հոպէնսօն սորվեցաւ գերիէն. և շատ բան ալ ինքն անոր սորվեցուց, որ ամենևին մտքէն չէր անցած։ Եւ այսպէս երկուան ալ իրենց ճանաչմունքը, և ուշիմութիւնը կատարելագործեցին փոխնիփոխը իրարու լոյս տալով՝ շատ մանտրըմանտրը գործքեր շինեցին այս միջոցիս մէջ. որ եթէ մինակ ըլլային անկարելի էր որ կարենային մէկը շինել։ Նատենը ոչ միայն հասկըցան, այլև յայտնի տեսան թէ որչափ օգտակար մեծ բան է մարդկանց ընկերութիւնը և միաբանական կեանքը կենակցութիւն բարեկամական սիրով. և որչափ դառն է բաժանումը՝ ամէն մէկը ասդին անդին ցրվելով գազանի նման (*)։

(*) Բաժանումը և անմիաբանութիւնը ամենայն պատիժ տվաւ մարդուս աշխարհաշինութիւն ատենը. բայց հիմա մարդիկ ատելութիւն պաշարվելով աւելի կըյաժարին անմիաբան ըլլալ և իրար ատել, քան թէ սիրով կենակցիլ, որ է ընդդէմ բնութեան։

Ամբաթ գերին ծառի կեղևներին գի-
տեր հիւսել բարակ ալնիւ փսիաղ (խը-
սիր՝) որ կտաւի նման պատուական հա-
գուստ կըլլար։ Աղպենսօն ալ հետը գոր-
ծելով շատ նիւթ պատրաստեցին հիւսե-
լու. որ բաւական եղաւ երկուսին ալ հա-
գուստ շինելու։ Ի՞նչ մեծ հանգստուն
եղաւ Աղպենսօնին երբոր այն կաշի
կոշտ լաթերը ձգեց՝ որ հարկադրեր էր
մինչև նոյն օրը հագնելու, ու գործած
բարակ լաթ հագաւ։

Գերին նաև. Ճարտարութիւն ունէր քո-
քոյին թելերին ալ թել մանել, և ու-
րիշ ծառերին ալ չուան շինել Աղպեն-
սօնին շինածէն աղէկ։ Շատ դիւրին
կերպով կըմաներ գիշերները. մինչ զի ա-
սանկ աշխատելով գիշերներն իրենց խիստ
կարճ կերևային. թէ որ այս չըլլար՝
շատ ծանր պիտի գար իրենց։

Սանկ նստուկ աշխատանքի մէջ ըլ-
լալով՝ Աղպենսօն ջանաց որ գերիին մըտ-
քին ծուռ և հեթանոսական խաւար խոր-
հրդները ցրվէ, ու անոնց տեղը կամաց
կամաց բարի խորհրդներ, և ճշմարտու-
թիւն սկզբունքներ հաստատէ՝ ինչպէս որ
իրեն կըվայլեր. իսկ թէ ի՞նչպիսի թանձր
տգիտուն և վարհուրելի մութ մէջ ըն-
կըղմած էր վայրենի գերին հաւատքի կոչ-
մանէ, ահա այս յետագայ տրամախօսու-

թէս կիմացվի, որ իրարու հետ ըրին։ Պօպէնսօն հարցուց, թէ ըսէ՛ ինձի սի՛ ըելի. գիտէս ալէկ, ո՞վ է որ ստեղծեց այս ծուին ու ցամաքը, կենդանիները, նաև քեզ։ Պերին ալ պատասխան տվաւ թէ Թուփան ստեղծեց այս ամէն բանը։ Ո՞վ է ըսաց՝ Թուփան։ Ը այն, որ որոտում կընէ երկինքը. ցիխստ շատ տարեց ծերմը նէ, որ ամէն բանէն առաջ կենդանի ըլլալով ստեղծեց կայծակը. նաև արեգակէն լուսնէն և աստղերէն շատ առաջ է. անանկ որ ամէն ստեղծածները իրեն կրկանչէն ու կաղաղակեն օ։

Կրկնեց Պօպէնսօն. թէ մեռնելէն եաև ո՞ւր կերթան քու ընկերներդ։ Պատասխանեց թէ կերթան Թուփանին քով. որ կրբնակի բարձր լեռներուն վրան։ Ը այն բարձր լեռներուն վրայ ըսաց՝ ո՞վ է տեսեր զայն։ Որ այն Օվօքաքէ քահանաները կըտեսնեն, որ իշխանութիւն ունին հոն ելլելու (*). և Թուփանին կանչե-

(*) Այս վայրենիները օրէնք ածպաշտուն չունենալով սոսկալի առասպելներով խաւարած էր մըտքերնին. բայց կաւտային որ մէկ գերագոյն ծեր մը կայ Թուփան անունով, որ աշխարհքը ստեղծեր է. բարիներուն աղէկութիւն կուտայ, գեղերուն ալ գեղջուկ։ Իսկ իրենց քուրմերը Օվօքաքէ անունով կերթան Թուփանին քով, ու հետը խօսելով կուգան օրէնք կրդնեն, և գուշակութիւններ կընեն։ Ահա ասանկ հեթանոսական առասպելներով գերին պաշարված ըլլալով կրպատմէ Պօպէնսօնին իր հաւատքը։

լու օ։ Եւ ամէն բան անոր կը հարցը-
նեն, անկէ խորհուրդ կառնեն, և յետոյ
ինչ որ անկէ լսեն, մեզի բերեն կիմացը-
նեն։ Յոհաննէս ըսաց, թէ անոնք որ
մոռնալէն ետև կերթան թուփանին քով,
երանութիւն մէջ կը կարարձանան։ Ի՞նչ ը-
սաց. անտարակոյս կը փառաւորին, որ
թշնամիները չի բերենք մեռուցին կերան։

Յոհաննէս այս հեթանոսական մոլո-
րութիւններս որ լսեց ականջները գոցեց.
անկէ ետև պարզապէս ետևէն եղաւ՝ որ
դերիին միտքը սրբելով բարի խորհուրդ-
ներ տայ. և ստեղծողին ծանօթութիւնը
տալով հանդերձեալ կեանքը սորվեցընէ։
Եւ հասկըցուց իրեն, թէ ՝ծ է գերա-
գոյն էակ մոքէ դուրս. ամենակարող,
ամենիմաստ, և ամենաբարի. որ ինչպէս
ստեղծեր է, անանկ ալ կը կառավարէ և
կը պահէ ամէն բան. որ չունի ամենևին
սկիզբն, ամէն տեղ ներկայ ըլլալով ամե-
նուն միտքը և խորհուրդը կը տեսնէ. ա-
մէն խօսք կը լսէ, և ամէն գործք կը դի-
տէ. ամէն տեսակ բարիով լի է, և ամէն
չար կատէ։ Ինչ հոս և թէ հանդերձեալը
միայն զանոնք կը փառաւորէ երանութիւն,
որ կը ջանան օրէ օր բարի ըլլալու (*)։

(*) Ռոպէնսոն կը պատմէ թէ օր մը հարցուցի
Ուրբաթին թէ դուք ինչ կը հաւատաք. անալ ըսաց
թէ ծեր մը կայ, որ աստղերէն առաջ է. ամէն բան

Ուրբաթ գերին այս գերապանց և մեծ թարական վարդապետութիւնը լսելով՝ ուշադրութիւն և մեծ յարգութիւն մտքին մէջ խորունկ տպաւորեց։ Հոգէնսօնին սորվեցընելու բարի նախանձը, հաւասար էր աշկերտին ջերմեռանդ մտադրութիւնը. որ անանկ ցանկալով կըսորվէր, որ շուտ մը ամէն բան հասկըցաւ, և լուսաւորեալ հաւատքին գլխաւոր ճշմարտութիւնը սորվեցաւ. ինչպէս որ վարպետը ջանայ իրեն սորվեցընել։

Ա. հա անկէ ետև երանելի եղաւ գերին՝ որ իր տեղէն եկաւ այս կղզին ընկաւ ՝ծածպաշտութեն սորվեցաւ. և այս մտածականը խորհելով միտք առաւ՝ թէ ՝ծածային նախախնամութիւնը յայտներ էր իրեն վրայ մեծ ողորմութիւնը, զինքը թշնամիներուն ձեռքը ձգելով. որովհետև այս դիպուածն որ չըլլար, ո՞ր պիտի տեսնէր Հոգէնսօնը. ուրեմն կըսէր ես միշտ խաւար կռապաշտութեան մէջ պիտի մնայի, չպիտի ճանչնայի

ըրաւ, և ամէն բան գիտէ. նաև ամէն ազգ ասոր կըկանչեն ՕՀ. որ իրենց լեզուով յարգուն կընշանակէ. ով որ մեռնի ասոր քով կերթայ։ Ես աւ ինչ որ իրեն կըսորվեցընէի սիրով կընդունէր. բայց ինչպէս կըլլայ որ կըսէր ՝ծծ արևէն վեր ըլլայ, ու մեր բանը լսէ. մեր ՝ծծը բարձր լեռներուն վրայ կընստի, կերթանք մեր ծերերուն բերնովը բան կըհարցընենք ու պատասխան կառնենք։ Ես իրեն հասկըցուցի որ այն սատանայ է։ Ուստի 3 տարի միշտ սորվեցընելով կատարեալ քրիստոնեայ եղաւ։

աս տէրս, ամենակարող բարի ստեղծողս։ Ընկէ եռքը Ոսպէնսոն կրջանար միշտ աղօթք ընել գերին առջին. մինչև մէկ սքանչելի տեսարան մը եղաւ ջերմեռանդուն. որպիսի ուրախութիւն և սիրով տիրոջը աղօթքին խօսքերը կրկրկնէր։

Եւ այս այսպէս երկուսնալ անանկ երջանիկ վարք ունէին, որ բոլորովին մէկ սիրտ էին, և միայն մարմինով բաժնըված էին։ Իսկ անձրևային տրտում եղանակը անցաւ առանց ձանձրուի մը իմանալու։ Սկսաւ երկինքը բացվիլ. հովերը դադրեցան և հողմաբեր ամպերը ցրվեցան։ Ոսպէնսոն և գերին դուրս ելան օդին մէջ, գարնան քաղցր հոտն առին. նաև ուժ առնելով՝ շատ զօրացան. ուստի վազեցին ուրախանալով գացին իրենց ցանկալի գործքին ձեռք զարկին, որ անձրևէն առաջ որոշեր էին։

Գերին իբր ճարտարապետ մը նաւին սկսաւ կրակով փորել ծառին կոճը. անանկ դիւրին և յաջող կրնէր, որ Ոսպէնսոն կրբռնադատեր իր անձին տարտամուեր վրայ տրտնջալու, որ ամենևին մտքէն չէր անցած այս ճարտարուիրը. սակայն միխիթարվելով այսպէս կրսէր ինքնիրեն. թէ որ միտքս ալ գար այս բանը, ինչ օգուտ, որ կրակ չունէի։

Նաւին շինելը անանկ աղէկ առաջ

կերթար օրէ օր, մինչև անկարելի կերևնայ պատմուելը. վասն զի Ոսպէնսօնին այնչափ տարիներով աշխատածը, գերիին օգնութիւնը կատարեցաւ երկու ամսվան մէջ։ Ուստի ուրիշ բան չի մնայ ընելու, բայց եթէ առագաստ (եղլէն) մը որ գերին սկսաւ շինել. և թիերն որ Ոսպէնսօն վրան առաւ շինելու։

Ամենեսեան գիւրին բան չէր առագաստին շինելը, որ ոչ գործիք կար և ոչ բան կար, չիյտեր թէ ի՞նչպէս պիտի գործէ՝ կտաւի պէս բան մը շինէ. բայց ինչպէս վերն ըսինք թէ ծառին կեղևը աբեստով մը կըհիւսէր, ու գործելով կտաւի պէս կըշինէր. տեսեր էր, որ լեռան մարդիկ ասանկ կըշինէին նաւերուն առագաստը. ուստի այս կերպով սկսաւ առագաստը շինել։ Ոսպէնսօն ալ սկսաւ թիերը շինել. երկուսն ալ կըջանային շուտով կատարել իրենց գործքը։

Սակայն այս նաւակը ցամաքն էր գերանի վրայ կեցած. պէտք էր որ ծովը տանէին. բայց իրենց ուժը բաւական չէր։ Մեծ դժուարութիւն մնայ նաւը ջրին մօտեցընել, որ դժբաղդութիւնը քանի մը մղոն հեռու էր ծովէն. հիմա պաշարվեցան մնային թէ ի՞նչպէս ընեն. ոչ հրելով կրնային տեղէն շարժել, և ոչ քաշելով. նաւին ծանրութիւնը իրենց կարողութենէն

շատ վեր էր։ Լոպէնսօն կըմտածէր որ ըծակով հրե, ինչպէս որ երկրաշարժու-թիւն ատենը այն մեծ քարը հրելով դուրս ձգեց բնակարանէն. սակայն տեսաւ որ անանկ դժուար կըլլար այս կերպով ընելն, որ ամիսներ կուզէր ծուլուն մօտեցընել։ Ուրիշ Ճամբայ մը յաջողութիւն միտքն ընկաւ, որով Եւրոպա բեռնակիրները ծանր բաները կըտանին, որ է պատուտակ (պօ-Ճըռվստ)։ Ասոնք կըլոր հաստ գերաններ հաստատեցին տեղ տեղ. չուաններով նաւը կապեցին այն փայտին ու սկսան ուրիշ երկայն փայտով մը հաստ գերանը դարձընել. նայիս դիւրութիւն սկսաւ դառնալ գործիքը, և անով նաւն ալ առաջ կուգար։ Լոպէնսօն երբոր տեսաւ թէ նաւը առաջ կըքաշէ՝ ուրախութէն չէյտէր ինչ ընէ, որ երկու օրէն ետև ծովին քով հասաւ. բայց այս ուրախութիւնը կըկնապատիկ աւելի եղաւ՝ երբ նաւը ծովին վրայ երթալով, յայտնի եղաւ որ յաջող Ճամբայ պիտի ընէ։

Ը. Հա ամէն բան կատարեալ է. հիմա մնայ որ կերակուրի պատրաստուի տեսնեն ու Ճամբայ ելլեն. իրենց պէտք եղածին չափ պատրաստեցին, սակայն ուր պէտք էր երթալ չէյտէին։ Ուրբաթ գերին կըփափաքէր որ իր եղած կղզին երթան. Լոպէնսօն կուզէր որ Ը. մերիգայի

ցամաքն ելլէն. ուր կը յուսար թէ կամ սպանեալ գտնէ, կամ ուրիշ Եւրոպայի։

Գերիին կղզին շատ հեռու չէր, մէկ քանի մղոն կը քաշէր. իսկ ցամաքը քառապատիկ աւելի հեռու էր։ Թէ չի տակ այ կղզին երթային, ցամաքէն աւելի կը հեռանային ու Համբուն վտանգը կեւելցընէին։ Գերին նաւարկութիւն աւեստին անտեղեակ ըլլալով հեռու Համբայ ընել չէր յիշտեր. միայն իր կղզին հաղիւ կրնար երթալ։ Ամենեին չէր յիշտեր թէ Ամերիգայի ցամաքն ի՞նչ Համբայով երթալու է. նմանապէս Աւոպէնսօն ալ նաւապետութիւն չգիտնալուն համար՝ անտեղեակ էր այս Համբորդութիւն ընելու։

Վերջապէս անստուգութիւը առիթ տրվաւ Աւոպէնսօնին, որ երթայ աւելի քաղաքական մարդիկ փնտրուէ. բոլոր գրութեարութիւնները և գերիին աղաչանքը մէկ դի ձգեց, ու որոշեց որ միւս օրը պատրաստվի Համբայ ելլել. ուստի յաջողհով մը եղածին պէս՝ առագաստը բանան, ու յանձնելով դէպ՝ի այն կողմն երթան, ուր գերին կարծիք ունէր թէ մօտ տեղ ցամաք կը գտնըվի։ Այս հոս երկան կըլլայ պատմել. յետագայ դիպուածին մէջ կը պատմենք (*)։

(*) Հայրենեաց քաղցրութիւը դուրս երթալով աշէկ կիմացվի. ինչպէս եղաւ Ուրբաթին՝ որ բնական

Ի. Դիպուած.

Ահա եկաւ ժամանակն որ Յովհաննէս Թողու այսչափ տարուան քնակարանը, գերիին հետ միատեղ նաւը մտնէ երթայ յաջող հովով, որ սկսաւ անոյշ փչել։ Ահա այսպէս է մարդուս փոփոխական վիճակը, որ միակերպ չի կրնար մնալ. շատ մարդիկ իրարու հետ անանկ սաստիկ սիրով կըկապվին, որ կարծես թէ յաւիտեան չպիտի զատվին, կընայիս քիչ ժամանակին մէջ պզտի բանով մը անանկ ատելի կըլլան, որ մէկմէկու անունն չենուզեր տալ։

Շատ մարդիկ տեղի մը վրայ անանկ սեր կըձգեն, որ կերևնայ թէ մինչև վերջը այնպէս պիտի մնան. բայց քիչմը կանցնի բոլորովին կըփոխվին։ Շատ անգամ ծանր նեղուած մէջ ըլլալով անանկ կըյուսահատին, որ կարծեն թէ յաւիտեան այն վիշտը պիտի քաշեն, նայիս օրերը կանցնի, այն նեղութին ալ կըմոռցըվի. ինչպէս որ եղաւ Յովհաննէսին, որ ամէն

Է. սակայն մարդուս պէտք է որ ուր որ երթայ աղէկ անուն ձգէ, և ուր որ ըլլայ՝ առաքինական վարքով ստեղծողին ձեռքին տակն ըլլայ. վա՜ղ ի՞նչ օգուտ, երբոր մէկը ամարդուք անարգանք կըլլայ իր հայրենեացը. անանկ վարք պէտք է ունենալ որ գովածանք ըլլայ ամենուն։

պատրաստութիւնը տեսնելէն ետև՝ երբոր պիտի ձգէր բնակարանը երթար, ելաւ բնակարանին վրայ կեցաւ, սկսաւ դիտելով չորս դին նայիլ և մտածելով տրտմիլ։ Այս միջոցիս մէջ միտքն ընկան բոլոր քաշած բաները այն մինակութեան մէջ, և ուծոյին նախախնամութիւներ՝ որ տեսած էր. սկսաւ խորունկ մտածել, թէ ինչ զարմանալի կերպով ուծ գինքը հոն ձգեց, ու ամենևին ողորմութիւնը չի հեռացուց իրմէն։ Այս մտածականը անանկ շարժեց սիրտն, որ ուրախալի արտասունք մը աչքէն գետի պէս կըվազեր։ Աչքը վերցուց դէպ 'ի երկինքն ու բազկատարած ջերմեռանդ աղօթքով աղաղակեց առ ամենակարող տէրը։

Ո՞վ հայր երկնաւոր, ո՜ւ սրտի իմոյ. ի՞նչպէս կրնամ շնորհակալ ըլլալ անչափ բարերարութեցդ, որ մինչև հիմա ինձի ըրիր։ Անկարելի է որ խօսքով կարենամ յայտնել սրտիս բորբոքը. կըթողում չեմ կրնար ուրիշներուն յայտնել իղձս. միայն բերանս հողին տալով առաջդ կիյնիմ, հողերուն մէջ խառնըվելով կոչընչանամ առջիդ։ Բայց որովհետև քեզի ամէն բան յայտնի է, ամենատես աչքդ թո՛ղ կարդա՛ սրտիս վրայ գրած անպատմելի շնորհացդ երախտագիտութիւնը։ Ահա այն սիրտն է որ դուն ստեղծեցիր միայն քեզ

սիրելու և քեզի փափաքելու համար։ Այս սիրտը շատ անգամ կըվշտանայ, շատ անգամ ալ կըմխիթարվի քեզմով։ Ով ստեղծող՝ ահա այս սիրտը միայն քեզի կընծայեմ անչափ բարերարութեդ համար. ընդունի՛ ամբողջ և կատարելագործի՛։ Ով երկնաւոր հայր, ա՛ռ զիս ամենակալ թևերուդ տակը. ուր տեղն որ ես զիս վստահութիւն յանձներ եմ, և կարգադրի՛ ինծի՝ ինչ որ հայրական կամացդ հաճոյ է։

Այս ո՛չ երբեք առաքինութիւն Համբայէն դուրս կելլեմ, որուն մէջ դրաւ զիս քու բարութիւդ. և ո՛չ բնաւ առաքինութի՛ կըթուընամ։ Ահա բոլորովին քեզ եմ ապաւինեալ, դուն զիս կառավարի՛ բարեսէր իմաստութեամբդ. հնազանդ եմ կամացդ, ուր որ ինծի առաջնորդես։ Միամիտ քեզ վստահանալով աներկիւղ կըմանեմ նորէն պէսպէս վտանգներու մէջ, միայն թէ անարեւոյթ պաշտպանութիւդ ինծի հետ ըլլայ։ Դ՝թա՛ իմ անմահ հոգւոյս, և մխիթարի՛ որ զօրանայ փորձութեան մէջ, որ անպակաս են. նաև պահի՛ սիրտս տկարութի՛ անհամբերութի՛ և ապերախտութի՛ ոմվ երանական և յաւիտենական քաղցրութիւն հոգւոյս, արարի՛ զիս իմ պաշտպան իմ և ամ ինչ ոնծ։

Ասպէնսօնին այս ջերմեռանդ խոկու-

մը, անանկ ձմլէց սիրտն՝ որ երեսը գետինը քսելով միայն կուլար. Հուսկ յետոյ ծածուկ մխիթարուն մը եկաւ վերէն սիրտը զօրացուց, վեր ելաւ նորէն իր տեղերուն վրան նայեցաւ. վասն զի նոյն միջոցը խիստ քաղցր եղան իրեն, որ պիտի ձգեր երթար առանց դառնալու. խեղճին աչքերը թաց և տրտում անդադար տընկած ծառերուն վրայ կընայէր ողորմագին, որ իրեն այնչափ օգտակար էին. դառնար կընայէր ըրած բաներուն վրայ, որ ձեռքին աշխատանքով և ձակտին քրտինքովն ըրեր էր։

Այս տրտմութեամբ միջ ամէն տեսած բանը իրեն խիստ սիրելի կերևնար, որսնցմէ պիտի զատվեր. ի՞նչ եղաւ սիրտը երբվար ինչաւ տեսաւ որ սիրական լամանները խոտ կուտէին։ Եվ որ մէկէն աչքը անդին չի դարձընէր իր սիրական կենդանիներէն, միտքը կըփոխվեր չէր երթար։ Երջապէս իր քաջութիւնը յաղթեց այս կսկիծներուն ու զօրացաւ. թեւերը բացաւ տեսած բաներուն վրայ ոնգ թէ կուզէր ամէն բան գրկել. ինա՛ք բարով կանչեց բարձր ձայնով. ինա՛ք բարով, որ վկա՛յ էք իմ քաշած նեղութեանս։ Երջին անգամ ալ ինա՛ք բարով ըսաց՝ լալով սկսաւ երթալ, ու աչքը նորէն երկինքը դարձուց, հեռացաւ անկէ. բայց միշտ դէպ

'ի հոն կընայէր. երթալու ատենը տեսաւ իր հաւատարիմ սիրական Պօղ թուղթակը որ ծառէ ծառ թռչելով ետևէն կուգար։ Սիրտը չդիմացաւ, թևը երկնցուց ձեռք ըրաւ անուշը տալով կանչեց, որ հետը տանի. նայիս նոյն կէտին թռչունը հոն հասաւ տիրոջը ձեռքին վրայ նստաւ. և շուտ մը թևին վրայէն քաշելով եկաւ թիկունքին վրայ նստաւ։ Պօպէնսօն գնաց նաւին եղած տեղը հասաւ, ուր Ուրբաթ դերին ամէն բան պատրաստած կըսպասեր իրեն անհամբերութիւն։

Ուստի առանց ուշանալու նաւը մտան նոյեմբերի 30ին. ինն երորդ տարին էր որ Պօպէնսօն այն անմարդաբնակ կղզին եկաւ։ Ռագասատը բացին՝ Ճամբայ ելան. հովը պաղ և յաջող, ու երկինքը պարզ էր. բայց հապիւ թէ քանի մը մղոն հեռացան նայիս ծովուն մէջ ապառաժի մը հանդիպեցան, որ ջրին մէջէն շղթայի պէս ետևէ ետև բուսած էին. որ կղզիին մէկ սարէն սկսած մինչև ինը մղոն կերթար ծովուն մէջ։ Այսպէս որ վտանգաւոր էր սոնց մէջէն անցնիլ, հարկադրեցան նաւը դարձընել ուրիշ կողմը. որպէս զի պտըտելով կարենան անցնիլ այս ժայռերէն։

Այս վտանգաւոր տեղերէն անցնելուն պէս՝ սկսաւ հովը սաստկանալ, և նաւը ա-

նանկ առաջ կերթար, ոմն թէ շատ առա-
գաստներ բացած ըլլար. մինչև վախնա-
լով առագաստը ցածցուցին, վ՚ը զի կը-
վախնային՝ որ չըլլայ թէ սաստիկ հովը զի-
րենք յափշտակէ. բայց այս զգուշութիւնը
օգուտ չըրաւ. որովհետև նաւը նոյն ա-
ղաղութիւնը սաստիկ կըվազէր ալիքներուն
վրայէն. ուստի հասկըցան որ հոսանքի
(ախընտրի) մէջ էին (*):

Իրաւի Ոսկէնոսն անխոհեմութիւն և
յանդգնութիւն զինքը փորձանքի մէջ էր
ձգեց, այլ ուծային թոյլտրութիւն այս
վտանգն ալ գլխուն եկաւ. կըմխիթարվէր՝ թէ ուրեմն ՝այ վճիռն է որ ես ամէն
տեղ բոլորովին իրեն յանձնեմ զիս:

Շատ աշխատեցան որ թիով կարենան
ելլել՝ այն ջրերէն բայց ձար չեղաւ. վ՚ը
զի ջրին բռնութիւնը զիրենք յափշտակեց
կայծակի պէս կըտաներ. անանկ հեռա-
ցան, որ իրենց կղզին կորսընցուցին:
Կերևնար թէ անկարելի էր այս վտան-

(*) Ծովին տակը խորտուբորտ ըլլալուն շատ լեռ-
ներ կըգտվին. յայտնի է թէ ջուրը բնապէս կըվազէ
դէպ՚ի ցած տեղը լեռներուն մէջ պտըտելով. ասկէ
կըլլայ հոսանք և պտոյտք ծովու, որուն մէջ շատ
անգամ վտանգ կըպատահի. ինչպէս եղաւ Ոսկէն-
սոնին՝ որ այսպիսի հոսանքի մէջ ըլլալով չկրցաւ թէ
ուր կերթայ. բայց այս հոսանքը աւելի մակընթա-
ցութիւն պատճառած էր. վ՚ը զի ջուրը ածելով դէպ
՚ի այն կողմը գետիպէս կըվազէր:

գէն ապատիլ. որովհետև կէս ժամին մէջ այնչափ գայլին որ բարձր լեռան գլուխն ալ չի կրցան տեսնել։ Ուստի եթէ այս հոսանքը դադրէր, չէին կրնար գառնալ երթալ իրենց կղզին. վա՜ղ ալ այնչափ հեռուն ըլլալով կողմնացոյց (փուսուլա) չունէին, որ նաւը շտկելով Ճամբան դտնէին (*)։

Ուսպէնսօն կողմնացոյց չունենալով անկարելի էր, որ կարենար դտնել իր կղզին, երբ չէր երևնար։ Ինչափ մեծ վախու մէջ էին խեղճերը. կրնայէին որ ահագին ովկիանոսին մէջ Ճոթ ցամաք չի-կայ, ուտելու բաներնին խիստ քիչ. քանի գայս յուսահատելու և սոսկալի բան ի՞նչ կրնար ըլլալ։ Ընատեանը յայտնի եղաւ որ Ճշմարիտ բարեպաշտութիւնն ու մաքուր խիղճմտանքը եղաւ Ուսպէնսօնին մէկ անգին դանձ մը այն փորձանքին մէջ, որ այն դառն միջոցին մէջ առանց յուսահատութիւնէ՝ այ ապաւինեցաւ. թէ որ ասանկ չըլլար ի՞նչպէս կրնար համբերել այսպիսի ծանր փորձանաց. շատոնց յուսահա-

(*) Կողմնացոյց գործիքին մէջ գրած է 32 հովերը և կիսահովերը, նաև աշխարհքին չորս կողմը. մէջ տեղը կայ ասեղ մը՝ վրան գրած շրջական մագնիսը, որ միշտ դէպ 'ի հիւսիս կընայի. ուստի նաւը որ կողմը դառնայ կամ հովը որ կեռէն փչէ՝ կըցայտնէ. սաոր գործածութիւնը Ժդերորդ դարուն սկսաւ։ Տես Ճեմ. 138։

տելով զինքն սպաններ էր, որ շուտով ա-
զատի սարսափելի վտանգէն՝ և անօթի
մեռնելէն։

Իսկ գերին տիրոջմէն աւելի փորձ ա-
ռաքինի լըլլալուն համար, ընկաւ վերջին
յուսահատութեան մէջ. մինչև չի կրցաւ այլ
աշխատիլ՝ բացարձակապէս սիրտը կոտրե-
լով ձգեց թիերն ու սկսաւ խեղճութիւն
Ալոպէկնսօնին երեսը նայիլ յուսահատ
կերպով. և անոր հասկըցուց թէ իյնինք
ծովն որ մէկէն մեռնինք յանկարծակի,
ու այս վշտալի դառնութենց ազատինք, որ
մեզ կըսպառնայ։

Ալոպէկնսօն մէկէն սաստեց խեղճ ընե-
լով, և ուզեց քաջալերել սիրտը. ետքը
անոյշ խօսքով երեսը զարկաւ անոր տկա-
րութիւն՝ որ ուծային նախախնամութէն
յոյսը կտրեր էր, որ ամէն բան լաւ կը-
կարգադրէ։ Լաւ քիչ խօսքով միտքը
ձգեց բոլոր մխիթարական խօսքերն որ
ըսած էր իրեն առաջուց։ Ով՝ կըսէր
աշխարհքիս վրայ եղած ամէն բաներըն նաև
մենք ալ ՝այ ձեռքին մէջն ենք։ Ինքը չէ՞
ովկիանոս ծովին ստեղծողը։ Ինչ չի՞
կրնար հիմա հրամայել այս ալիքներուն,
որուն մէջ չարաչար կըվտանգինք, և մեզ
մէկ ապահով տեղ մը ձգել։ Ուն կը-
մտածես ծովը խաղցըվել, որ ազատիս ան-
դառնալի վնասէն՝ որ քու վրադ դրված է։

խելքդ գլուխդ ժողվէ անմիտ պատանի, գիտցիր որ հոգիդ անմահ պիտի մնայ յաւիտեանս յաւիտենից անսահման իշխանութիւն տակը երկնաւորին. և չի կրնար հասնիլ երջանկութիւն ասանկ անհնազանդ ըլլալով անոր իշխանութիւնը. նաև դէմ դնելով բնական կարգաց՝ կուզես խորտակել բռնութիւնքդ այն կապերը, որով հոգին մարմնին հետ կապած է։

Ա. յս փրկարար խրատներս անանկ դրպան Աւրբաթ գերիին սրտին՝ որ սկսաւ ամենչնաչ իր տկարութիւնը վրայ. մէկէն երկուսն ալ թիւերը ձեռք առին սկսան անդադար քաշել. թէպէտ ամենևին յոյս մը չի կար, թէ կարենան ազատիլ։ Աւ. պէնսօն կըսէր, մենք որչափ որ հոգինիս վրանիս է՝ ջանանք մեր պարտքն ընել մեզ փրկելու համար. սակայն եթէ Ճարերնիս հատնի, թող մեռնինք մխիթարվելով թէ երկնաւորին կամքը այս է. նայէ՛ սիրելի եղբայր՝ անոր կամքն է ամենաբարի և ամենագէտ, անանկ՝ որ մեզի պէս անմիտ խեղճերուն խելքն ու միտքը չի հասնիր։

Սակ հոսանքին արագութիւնը միակերպ ըլլալով շարունակ յափշտակէր կըտանէր նաւը, այնչափ որ առաջ միայն բարձր տեղերը և լեռներուն ծայրերը կերևային, անոնք ալ կորան. ուստի ալ յոյս չի մնաց ազատելու։ Այդ սակայն երբոր մարդ-

կային հնարքը Ճարը կը հատնի, ու անբաղդներուն կորուստը կը մնտեենայ, անատեները կը հասնի ամենակարողին ձեռքն, որ բոլոր աշխարհք կը կառավարէ. և մարդն որ պիտի այն կէտին կորսըվէր, մէկէն կը փրկի անանկ զարմանալի եղանակով, որ ամենևին մտքէն ալ չէր անցած. ինչպէս որ այս դիպուածիս մէջ յայտնի երևցաւ։

Պօպէնսօն բոլորովին յուսահատած էր՝ թէ պիտի կարենայ ազատիլ մնտակայ մահուանէ. բայց չարաչար աշխատելով անանկ հոգնեցաւ որ հարկադրեցաւ ձգել թիերը. նայիս մէկէն տեսաւ որ հոսանքին վազելը դադրեցաւ, մը զի նաւակը այնչափ արագ չէր երթար և ջուրը առաջվան պէս խառնիխուռն չէր։ Եւ դիտեց՝ որ ծովուն երեսը այս հոսանքին ջուրը երկուս բաժնած էր անհաւասար. մեծ մասը արագ կը վազէր դէպ՝ ի հիւսիս, և մէկալը այնչափ արագ չէր, որ դէպ՝ ի հարաւ կը խոտորէր, որուն մէջ մնած էր նաւը։

Այս բանս որ տեսաւ զըւարճանալով կանչեց գերիին քաջալերէ՛ ուրախ եղիր, ա՛ծ կուզէ որ մենք չի մեռնինք. նաև շուտ մը անոր հասկըցուց թէ իր յոյսը ա՛յ է հաստատեր. անատենը երկուսը միատեղ ուրախութիւնք ձեռք առին թիերը կը քաշէին, որ հոգնելէն ձգեր էին։

Օրանալով սիրտ առին քաղցր յուսով, որ մեռնելէն պահվեցան. Եթէ Ձիդը թափելով ելան հոսանքին մէջէն, և զլուարձուք հասկրցան որ քաշած նեղութինին, և ջանքը պարապ չեղաւ Եթէ ելաւ։ Պօպէնսօն՝ որ սորված էր ամէն բան խորունկ քննելով դիտել և ուշադիր ըլլալ, նայեցաւ՝ որ հովը կրնայ իրենց յաջող ծառայել. բացաւ առագաստը հովին տվաւ, ու երկու մանր առագաստներն ալ բացաւ, որ շուտով կարենայ ելլել այն տեղերէն ու մտնել խաղաղ ծովուն մէջ։

Պ՝երին ուրախութէն չկրցեր թէ ինչ ընէ. նայիս ցաթկեց փաթթըվեցաւ տիրոջը. իսկ տէրը աղաչեց, որ չափաւորէ ուրախութիը այն միջոցին մէջ, մինչև բոլորովին ազատին անկէ. մ՚ի՞ վի շատ աշխատանքի կարօտ էին, որ բոլորովին ազատ ըլլան վտանգէն ու դառնան իրենց կղզին։ Երջապէս ելան այն գէշ ջրերուն մէջէն մտան խաղաղ ծովը. սակայն իրենց կղզին անանկ հեռացաւ որ հազիւ թէ սև կէտի նման հորիզոնին ճոթը կերևնար։ Որոնք անդադար թիւ քաշելով, և յաջող հովը գործածելով առաջ կերթային, որ դէպ՚ի արևելեան կողմը կղզին կըտանէր նաւը յաջողուք ուր որ շտկեր էին. նայիս մէկէն տեսան կղզին քանի մը

լեռները։ Երթանք սիրելի կըսէր Ռոսպէնսոն. որ նաւին առաջը նստեր էր, կռնակին կողմն էր կդալին. երթանք բարեկամ, ահա մեր քաշած նեղութեց վերջ եղաւ։ Ասկէ ետև մեզի չի վայլեր տեղերթալ. դառնանք մեր բնակարանը նըստինք։ Այս խոսքս չի լմընցուցած, նայիս յանկարծ նաւը անանկ սարսեցաւ որ թիները ձեռքերէն ելան, ու իրենք ալ ընկան նաւուն դոգը. մէկէն ալիքները նաւուն մէջ գալով ջուրը ծածկեց զիրենք, մինչև մնացին ողորմելիները անշարժ. որ ինչ կերպ ըլլալը հետևեալ դիպուածով կիմացվի (*)։

ԻԱ. Դիպուած.

Ռոսպէնսոն առջի վտանգէն հաղիւ ազատեր էր, նորէն ընկաւ ուրիշ վտանգի մէջ, որ առաջինէն շատ ծանր էր. վա՜ղ ի նաւակը մէկէնիմէկ ցամաքը նստաւ մնաց անշարժ ալիքները մէջը կըլլեցվէին. եթէ

(*) Ահա Ռոսպէնսոնին ճծպաշտութե՛ յոյսը այս վտանգէս ալ զիրենք ազատեց, որ ո՛չ երբէք ամընչցուցեր էր զինքը. վա՜ղ ի թէ հաստատ յոյսը չի կորսընցընէ մարդը, որչափ մեծ վտանգի մէջ լինի՝ այ ապաւինելով չի շփոթիր թերահաւատութի՛ն. ուստի մեծ մխիթարութի՛ն է վշտացելոց Ռոսպէնսոնին այս դիպուածը, որուն նմանելով պէտք է ապաւինիլ այ ամէն նեղութեց մէջ։

իրաւ քարի վրայ հեծած ըլլար, անտարա-
կոյս կըկորսըվէին։ Պօղէնսօն շուտ մը
Թիտվը փորձեց նայելու, որ ջրին բարձ-
րութիւնը երկու ոտքէն աւելի չէր. ուստի
յօժարութիւն յանձնեց ծովուն մէջ։ Նտև-
ին ալ գերին ջուրը մտաւ. ու իրարու սիրտ
տալով կընայէին Թէ ի՞նչ պիտի ըլլայ.
Էտքը տեսան՝ որ նաւը չէ Թէ քարի վրայ
էր, հապա աւազի վրայ խրած էր. եր-
կուքն ալ իրենց ուժը միացընելով կըհը-
րէին գէպ 'ի ջրին խորունկ գին, որ հա-
նեն անկէ. հուսկ յետոյ աշխատելով նա-
ւը վտանգէն ազատեցին յաջողութիւն։ Նա-
ւուն մէջի ջուրը պարպեցին, որ լեցուն
ըլլալով շատ աշխատեցան մինչև որ Թիտվ
և ափոշին ջուրը դուրս Թափեցին։ Նա-
քէն որոշեցին որ աւելի զգուշութիւն երթա-
լու համար՝ միայն Թի քաշեն առանց առա-
գաստի, ոչ վի ազատութիւն կարենան նաւը
շտկել ուզածներնուն պէս։ Նաւը դարձ-
ուցին գէպ 'ի յամաք լեզուն՝ որ քովէն
անցնին, յուսալով Թէ շուտով կըմտնեն
նայ, սակայն 4 ժամ դարձին չի կրցան
վախճանին հասնիլ, որ շատ երկնցած էր
հիւսիսէն հարաւ։ Պօղէնսօն տեսաւ ո-
րոշեց որ 9 տարի առաջ հոն այն սոսկա-
լի աղէկոծուն՝ քաշեր և հոն ծոփն էր ընկ-
կած, և նոյն աւազն էր որ առջի անգամ
նաւը խրեցաւ աղէկոծութիւն։ Ետ՝ որով-

հետև Յովհաննէսին գտնուած տեղը հանդարտ էր ծովը, հանգիստ կրնար առաջ երթալ. ուստի թէ քաշելով ջանացին, որ կղզին հասնին, որ կերևնար թէ շատ հեռուն չէ։ Յուսկիւտոյ հասաւ նաւը Յովհաննէսին կղզին, արեգակը ծագեր էր լեռներուն ծայրը. Էլան ցամաքը հանդչեցան, թէպէտ անհնարին հոգնած էին. բայց անանկ սոսկալի վտանգէն ազատելնուն համար՝ շնորհակալ ըլլալով կուրախանային։ Յոլոր այս օրը երկուքն ալ բան չէին կերած նաւուն մէջ, մինչև որ ցամաքն Էլան. անոր համար իրենց բնակարանը չի գացած նստեցան հետերնին առած պաշարը կերան։ Կերակուրէն ետև տարին նաւը ծոցի կիր (խոյի) մը մէջ կապեցին, ու նաւուն մէջ դրած բաները աւին բնակարանը գացին։

Յովհաննէս ու գերին պառկեցան, բայց գերին մէկէն խորունկ քուն մտաւ. իսկ Յովհաննէս Ջերմեռանդ սրտով շնորհակալ կըլլար ամ այս նոր պարգևացս վրայ, որ ըրաւ իրենց. ետքը ինքն ալ պառկեցաւ քնացաւ։

Այս օրը նախաճաշիկն ընելու ատենը ընկերոջն ըսաց, թէ պատրաստ եղիր որ միատեղ նորէն Ճամբայ ելլենք երկրորդ փորձմ՝ ալ ընենք։ Ոչ, ըսաց գերին։ Կրկնեց Յովհաննէս թէ ուրեմն

դուն միտքդ դրէրեաս որ ինձի հետ միա-
տեղ կեանքդ անցընես այս կղզիին մէջ,
ու տեղ մը չերթաս։ Իրամերեաս ըսաւ.
միայն թէ հայրս հոս ըլլար։ Այր ունիս
որ ըսաւ։ Կրնայ ըլլալ որ ըսաց ես բռնը-
վելէս ետև մեռած ըլլայ։

Այս միջոցիս մէջ Ուրբաթ գերիին
սիրտն եկաւ, անանկ կսկըծաց որ կերա-
կուրը ձեռքէն ձգեց, ու սկսաւ աղբիւրի
պէս արտասունք թափել սաստիկ լալով։
Ռոպէնսոն չի կրցաւ ինք զինքը բռնել
ծնողքը միտքը գալով. ուստի երկունքը
միատեղ սրտերնին ցաւելով իրենց ծնո-
ղացը վրան՝ լացին երկան ատեն առանց
խօսելու։ Նոքը Ռոպէնսոն ըսաց. մի՛
լար սիրելի՛ Ուրբաթ, քու հայրդ պէտք է
որ ողջ ըլլայ, շուտով կերթանք կըգըտ-
նենք ու հոս կըբերենք։

Ընչափ մեծ եղաւ գերիին ուրախութիւնը
այս բանս որ լսեց, խելքը գլխէն գնաց,
չի կրցաւ իր աղաղակը բռնել, զանա-
զան շարժմունքներով Ռոպէնսոնին ոտ-
քը փաթթըվեցաւ, և չուզեց թող տալ.
նաև սրտին հառաչանքը թող չէր իտար՝
որ բան մը խօսի։

Ինչ զարմանալի բան էր որդիական
սէրը այս վայրենի մարդուս, որ հօրմէն
ոչ կրթութիւն մը առած էր, և ոչ օգտա-
կար բան մը սորված էր. միայն իրեն ծնե-

լուն պատճառն էր հայրը անանկ ողորմելի վիճակի մէջ. սակայն ընութիւնը իրեն սորվեցուցեր էր, որ այմէ եւս ծնողքը սիրէ, անոր համար այսչափ կողբար։ Այսպա՛ ոչչափ մեծ ամօթ է մեր մանկանց, որ այսչափ իրենց ծնողաց բարիքը տեսեր են, այսչափ կրթուած աւեր են, ու վայրենի մարդու մը չափ ծնողայը վրայ գութ չունին։

Իրա՛ւ որ ա՜ծ ամէն մարդու սրտին վրայ գրեր է սէր և երախտագիտութիւն ունենալ ծնողաց վրայ. ո՜հ քանի սոսկալի հրէշ է՝ թէ որ ասանկ քաղաքական մարդկանց մէջ այսպիսի տմարդութիւն ըլլայ, որ ծնողքնին չեն պատուեր. և ասով այն բնական օրէնքը սրտին մէջէն կաւրեն, ամենևին գութ մը չունենալով ծնողաց վրան. մանաւանդ թէ վիշտ և նեղութիւն տալով անոնց։ Արդարև ասանկ հրէշաւոր դաշաններուն քովէն պէտք է փախչիլ. վասն զի այս բանս ժանտախտ է ընկերութիւն, և մեծ մահացու մեղք. անանկ որ շատ չի ուշացըներ, շուտով ա՜յ ահեղ պատիժը կը թափէ գլխուն։

Արբոր գերիին ուրախական այլայլութիւնը քիչ մը անցաւ, Լեսպէնսօն հարցուց թէ կրնա՞ս նաւը մինչև ձեր եղած կղզին տանել. ուզեց ապահով ըլլալ, որ երթալու ատենը մէկ վտանգ մը չի հանդի-

պի , ինչպէս առաջ պատահեցաւ ։ Ուրբ-
բաթ գերին հաստատեց , թէ այնչափ
լաւ գիտեմ այս Ճամբան որ վստահութիւն
գիշերն ալ կրնամ երթալ . վո՜ զի շատ
անգամ եկեր գացեր եմ կրսէր այս կողզին իմ քաղաքացիներուս հետ՝ տօնախմբութիւն կատարելու մեր յաղթութիւնը համար , որ շատ անգամ պատահած է ։

Հարցուց Ասպէնսօն թէ ուրեմն դուն ալ ուրիշ վայրենի մարդկանց պէս կընէիր , որոնք թշնամիները բռնեն կուտեն ։ Պատասխանեց գերին , թէ ասոր տարակոյս չի կայ ։ Դուն ալ քու բաժինդ կառնէիր ըսաց . Հրամերես ըսաւ , բայց վայ ինձ , չիյտեի թէ մեղք է ։ Հարցուց թէ այս կղզիին որ կողմը կելլէիք հասարակօրէն ։ Մենք միշտ հարաւային կողմը կելլէինք՝ ըսաց . վո՜ զի այն տեղը ամենևին մօտ էր մեր տեղին ուսկից որ կուգայինք . նաև շատ քօքոյի ծառ կըգտնէինք հոն ։

Ասպէնսօն զարմանալով իմացաւ այդ ոգորմութիւնը . որուն միշտ պարտական էր շնորհակալ ըլլալ , և փառաբանել արարիչն՝ որ զինքը հիւսիսային կողմը բերեր ձգեր էր . որովհետև թէ որ հարաւային դին եղած ըլլար , շուտով կերակուր կըլլար վայրենի մարդկանց ։ Ընատենը Ասպէնսօն խօսք տվաւ գերիին թէ ետքէն

կերթանք հայրդ փնտրելնք կրգտնենք։ Եւ անոր հասկրցուց որ մէկէն այս բանը չեմ կրնար ընել. վասն զի այս եղանակս մասնաւորապէս պարտէզները փորելու և բան տնկելու ատեն է. ուստի ժամանակ չունէր ձգել անկէ հեռանալ։

Այսպէս երկուքը միատեղ սկսան աշխատիլ գետինը փորել մէկզմէկէ աւելի ջանալով։ Իսկ պարապ ատենը կաշխատէին որ գործիքնին աւելի կատարելագործեն։ Ալոպէնսօնին համբերութիւնն ու ճարտարմտութիւնը միակերպ զարմանալի ըլլալով, դիւտ հնարեց ու երկրագործի գործիք մը շինեց, թէպտև ուրիշ բան չունէր, բայց եթէ սուր քար մը ունէր, որով կրծակէր այս գործիքը՝ ակռաներ անցընելու համար. այս գործիքը օգտակար համարեց, որ ժամանակով կրնար իրենց պէտք ըլլալ։ Պէրին ալ իր կողմանէ սուր քարով մը շինեց երկու բրիչ, անանկ կարծր փայտէ՝ որ երկաթի տեղ կրբռնէր (*)։

Ալոպէնսօն ոչ միայն կրհոգար իրեն պէտք եղած բաները, այլև կրմտմրտար որ իր բնակարանը քիչ քիչ զարդարէ։

(*) Վայրենիները երկաթէ բան շինել չգիտեն. անոր համար ատեղծողը այն երկիրները անանկ ծառեր բուսուցեր է՝ որ փայտերը խիստ կարծր ըլլալով, երկաթ գործիքի տեղ կրբռնեն. գրեթէ երկրագործներուն ամէն բանը անկէ է։

Զ. որ նման միշտ աշխարքիս մէջի բանե-
ըը առաջ եկան ու արուեստներըը հնարե-
ցին։ Զ. Յոպէս աշխարքիս մարդիկ պար-
տաւորեցան ուրիշ բան չի մտածել, քայց
եթէ անանկ միջոցներ գտնել, որով կա-
րենան ազէկ ապրիլ ապահովու ք. չունէին
կամք անանկ արուեստներ ծաղկեցընել,
որ կը ծառայեն միօրինակ գեղեցկացընե-
լու շրջակայ առարկաներըը, կամ թէ հեշ-
տութիւն անանկ բան խնդրել, որ իրենց
ու անասնոց մէջ հաստատակ են։

Սակայն հազիւ թէ մարդիկ իրենց ա-
պահովութիւնն ու ապրուստը հոգացին,
նաև խնդրեցին նախ հարկաւոր բաներըը,
ետևէն քերկրական բաներն ալ հնարե-
ցին, և օգտակարին հետ գեղեցիկն ալ
սահմանեցին։ Զ. յս կերպով նախ և ա-
ռաջ ամէն բան գտնըվեցաւ, ետքը կա-
տարելագործեցաւ, Հարստարապետութիը,
քանդակագործութիը, պատկերահանու-
թիը, և այլ ամ արուեստներն որ կը Հանչ-
նանք պղպոկան արուեստի անունով (*)։

(*) Արուեստն է կատարելութի մտաց արուեստաւո-
ըին, որ ուզած բաներըը կանոնով կը շինէ։ Բայց հին
ատենէն 'ի վեր երկուս կը բաժնըվի արուեստը, Ազ-
պոկան և Մեխենական։ Ազատականը առաջ ազնուա-
կաններըը միայն կը տարվէին. որ են՝ Քերականութի,
Բանաստեղծութի, Երաժշտութի, Բժշկութի, Նկար-
չութի են։ Իսկ մեքենականը՝ ծառաներուն գործքն
ըլլալով Ծառայական ալ կը տվեր, որ է Հիւսնութի,
Դարբնութի, Երկրագործութի. են։ Տես Ճեմա". II։

Լոպէնսօն սկսաւ զարդարել և գեղեցկացընել իր պարտէզը, պէսպէս ձևեր և քառակուսիներ կտրեց. աղէկ մը կարգաւորելէն ետև, լայն ճամբաներ բացաւ՝ չուանով չափեց, ծառատունկներով պէս-պէս բաներ շինեց խուցի նման, կենդանիի նման, ևն։

Ամէն մէկ պարտէզին մէջ զանազան բաներ տնկեց։ Ամսոնց մէջը լիմոնի ծառեր ալ աճեցուց, որ ամէնէն օգտակար ըլլալով ասդին անդին կղզիին մէջ բուսած էին։ Շատ մատղաշ ծառերու վրը հացի ծառի ճիւղեր պատուաստեր էր. որուն ուրիշ մէկ տեսակն ալ տեղ մը գտեր էր՝ հոն աճեցուց։

Գերին այս գործողութեցս վրայ զարմանալով հաստատեց, թէ չեմ կրնար իմ զարմանքս յայտնել. և խելքս չի հասնիր՝ թէ ի՞նչպէս կըլլայ այս պատուաստն ու կաճի. թէ որ Լոպէնսօնը չի ցցներ չի յայտներ իրեն՝ ամենևին չէր հաւատար։

Յետոյ գետնիխնձոր, և շատ մաքիզ ցանեց՝ լաւ աճեցան. և ինչպէս որ երկիրս առանց մշակութեան էր հաւանականապէս, և առանց փորելու վարուցան կըլլար աշխարհքիս ստեղծված ատենը, այսպէս հոն ալ ինչ որ կրցաներ, ուզածէն աւելի կըբազմանար, ու քիչ աշխատանքով առատապէս կըպտղաբերեր իրենց։

Երբեմն երբեմն թո�ը կառներ ձուկ բռնելու կերթար. գերին ալ անձրև եկած ատենը ձուկ կըբռնէր։ Ճատ անգամ այնչափ շատ ձուկ կըբռնէին, որ չէին կրնար ուտել, մնացածը թող կուտային որ երթան. վո՛ւ զի աւելորդ տեղը աղէկ չէ՝ ոչ պարգևը գործածել կըսէր գիտնական Սոպէնսօն, և պէտք եղածէն աւելի բռնելն է գարշելի անգթուի. որ պարապ տեղը այնչափ կենդանի կըմեռցընեն, որոնք մարդու զէն մը չունին. նաև պէտք եղածէն աւելի բան մը չենք կրնար գործածել առանց մեղադրուե։

Ձուկ բռնելէն ետև հասարակօրէն կըլողային. Սոպէնսօն խիստ կըզարմանար գերին վրայ, որ ձկան պէս ծովուն տակ կըմտնէր կելլ՛ը. հոն բարձր ապառաժ մը կար, կելլէր ծայրէն կընետուէր ծովը և ժամանակ մը ջրին տակը կըմնար, մէկէն ջրէն դուրս կելլէր գանազան շարժմունքներով՝ երբեմն կռնակին վրայ կըպառկէր, երբեմն ալիքներուն հետ կըխաղար. անանկ անկարծելի բաներ կընէր, որ տրը զարմանք կը.քաշէր։ Սոպէնսօն մտածելով՝ կըզարմանար մարդուս բնական յաջողութիւնը վրայ. որ ամէն կերպ բան ընելու կըյարմարի, երբոր փոյթ կունենայ մանկուե ատենը ինքզինք կրթելու։

Նրբեմն զբաղանալու համար որսորդութիւն կընէին. գերին շատ յաջող կը-գործածէր աղեղն ու տէգը, լամայի ձագեր և թռչուններ կըպարներ իրենց պէտք եղածին չափ. վե՞ զի ինչպէս ըսինք՝ Ոսպէնսօն գաղանական անգթութիւն կըսեպէր միայն զբաղուելու համար կենդանի մեռցընել անօգուտ տեղը։ Ոսպէնսօնին գերազանցուելը գերին վրայ՝ էր խելքին և ճարտարմտութիւնը կոչմանէ. նմանապէս գերին ալ անկէ շատ պակաս չէր խելքով. ունէր ալէկ ճարպիկութիւն, և օգտակար արուեստ, որ ետրը մինչև անատենը չէր գիտէր. ոսկորէ բաներ շինել գիտէր, քարէ և խեցիներէ զանազան պիտանի գործիքներ կընէր. շատ յաջող էր փայտէ և տախտակէ բաներ հնարելու, անանկ ճարպիկ էր և գեղեցիկ կըշիներ՝ որ կարծէիր թէ երկրթէ գործիքներով շինած են. զորօրինակ պատահմամբ գըտաւ թելի ոսկոր մը, առաւ շինեց քերիչ (ըռէնտէ). գտաւ մէկ ճիւղ մը բուստի (մէրճանի), գործիք ըրաւ. խեցի գտաւ, դանակ շինեց. կարծրացած ձկան կաշի մը գտաւ, խարտոց շինեց։ Ա. Հա այս օգտակար գործիքներով յաջողութիւն շինեց տան պիտանի բաներ մեծ ու պզտիկ, որ աւելի հանգիստ եղաւ իրենց վիճակը ամէն բան հնարելով։

Գերին սորվեցուց Լոպէնսօնին աբ-
ւեսատ մը, որ ծառի պրտուղներէն հաց շի-
նէ, որ խիստ հարկաւոր էր. վ՚ե՞ պի հացի
համ ունէր, ու հացի պէս սնունդ կու-
տար, վայրենի մարդիկ առանց պատրաստ-
ուած այս հացը շինեն կուտեն. բայց Լո-
պէնսօն ամսան մը կրտաքցընէր, ու վրան
կէփէր զգուշութիւն, որ կատարեալ հաց
կը դառնար։

Յետոյ սորվեցաւ գերին քաքաւոյին
պտուղը եփել, որ առաջ գտեր էր. այս
պտուղները բոհրելով կըլլար մէկ հա-
մով բան մը սննդարար։ Լոպէնսօն՝ որ
միշտ բան փորձել կըսիրէր, այս բոհրած
պտուղներն առաւ երկու տափակ քարի
մէջ դրաւ մանրեց ալիւր ըրաւ, ետքը կա-
թով եփեց. երբոր կերաւ՝ տեսաւ որ էլ-
քօլաթ է, անպատմելի ուրախացաւ։

Եւ այսպէս օրէ օր յայտնեցան Լոպէն-
սօնին նոր նոր դիպուածներ, որով իր հար-
կաւոր և օգտակար բաները կըլեցընէր։
Սակայն իր սովորութիւնը չէր փոխեր. միշտ
կըմտածեր որ քիչով շատանայ, և պարզ
բաներ ուտէ չափաւոր։

Ընկէ ետև երկուքը միատեղ կղզին
հեռու տեղերը կերթային կըպտըտէին,
շատ անգամ բոլոր կղզին կըշրջէին. մա-
նաւանդ որ հովը դէմ ըլլալով վայրենի
մարդիկ չէին կրնար հոն մօտենալ. ուս-

տի առիթ գտնելով շատ նոր բաներ տե-
սան՝ որ իրենց օգտակար կրնար ըլլալ։

Երբ պարտէզին աշխատանքը լմննցաւ.
օր դրին որ Ճամբայ ելլեն երթան գերիին
հայրը գտնեն. սակայն որչափ որ երթա-
լու ատենը մօտեցաւ, այնչափ ալ Սոպէն-
սօնին մտմլտուքը սաստկացաւ։ Եթէ
այս վայրենի մարդիկ վնաս թշնամիի տեղ
դնեն կըսէր, կիմ թէ քեզ չի Ճանչնալով
կերակուր ըլլանք գալան մարդկանց,
ի՞նչպէս պիտի ըլլայ. ամենևին չէր կը-
նար գերիին վրայ վստահանալով այս կաս-
կածները մէկ դի դնել։

Սակ գերին ամ կերպ երդումով հաս-
տատեց, թէ այդ ամէն կասկածներն էն
պարզ երևակայութի. որովհետև աղէկ կը-
Ճանչնար իրեն քաղաքացիները, երդում
կընէր՝ թէ անհնարին է որ ծուռ նային
մէկի մը որ իրենց թշնամի չէ։ Սոպէնսօն
լաւ հաւանեցաւ թէ գերին իրեն ասանկ
հաստատուք չէր վկայեր, թէ որ փոքրիկ
տարակոյս մը ունենար. ուստի բոլոր ու-
նեցած կասկածանքը նետեց, ու գերիին
հաւատարմութը վրայ կապվեցաւ, և բա-
լի հաւատքով որոշեց միւս օրը առաղաս-
տը բանալ Ճամբայ ելլել։

Այս խորհուրդով նաւակն որ ցամքը
քաշեր էին, ջուրը ձգեցին. և նոյն իրի-
կունը գետնիխնձորներ եփեցին, և ու-

ըիշ պաշարներ պատրաստեցին գրեթէ 8
օրուան բան։ Ասերին յայտնեց՝ թէ այս
պարագային մէջ Ձամբու համար ուրիշ
կերակուր ալ կրնամ պատրաստել։ Սոր-
վեցուց տիրոջը նոր կերպով բոլորը միա-
տեղ խորվելու մէկ լամայի ձագ մը քիչ
ժամանակին մէջ, որով միսը աւելի կա-
կուղ և համով կըլլար։

Այս բանիս համար գետինը փոս մը
բացաւ երկու ոտնաչափ խորունկ, և մէջը
լեցուց չոր փայտեր և տափակ քարեր,
կրակ վառեց, ու վրան կախեց լաման. կը-
րակին վառելովը և բոցովը կատարելապէս
մաշերը խանձեց. յետոյ քերեց վրան խե-
ցիով՝ անանկ մաքրեց, որ կարծէիր թէ
տաք ջրի մէջ խաշած մաքրած է։ Ետքն
խեցիով լամային փորը բացաւ պարպեց։
Այսչափ ատենիս մէջ կրակն ալ հասաւ,
ու փոսը չորս դին տաքցաւ, մէջի քա-
րերն ալ կրակ դարձան։ Ետքը մէկ
դի քաշեց կրակներն ու քարերը, որչափ
որ պէտք էր փուին տակը գոցելու համար
թողուց։ Այս քարերուն վրայ քօքոյին
տերևներէն շարեց, լամանն ալ վրան դրաւ՝
ուրիշ տերևներով ալ վրան գոցեց շու-
տով, և մնացած քարերնալ վրան լեցուց,
բոլորն եղաւ գետնի թոնիր մը։

Բանի մը ժամ անցնելէն ետև հանեց
լամանն այն թոնիրին մէջէն. Ասոպենսան

որ կերաւ զարմացաւ համին վրայ. վո՞ւ զի անանկ կակուղ անանկ պատուական համեղ էր միսն՝ որ չի կրնար ըլլալ։ Եւ այսպէս այս կերպը սորվելով շատ անգամ ասանկ կեփէր (*)։

ԻԲ. Դէպքաց.

Ոսպէնսօն և գերին ամէն բաներնին պատրաստելէն ետև՝ պառկեցան քնացան, կէս ժամ անցաւ՝ Ոսպէնսօն մէկէնիմէկ արթընցաւ. ահաւոր կայծակին ձայնէն, որ փայլատակեց զարկաւ նոյն կէտին մէջ։ Որոտման ձայնները սոսկալի կըլլային, գետնաշարժու�մէկ դիէն, փայլակն ու ալէկոծութիւնը մէկալ դիէն։ Ոսպէնսօն ձայն տալով գերիին կըսէր, է՛լ նայէ՛։ Բ.էքը բացաւ գերին՝ նայ ուծ ըսելով. ի՞նչ պիտի ըլլայինք կըսէր, թէ որ ծովուն վրայ գտնվէինք։

Այս միջոցս հեռուէն լսեցին թնդանօթի ձայները. գերին կարծէց թէ որոտում է, իսկ Ոսպէնսօն հաստատ հաս-

(*) Օդաթդ կղզին բնակիչները երեսնց շները ասանկ կեփէին կուտէին, երբոր հոն գացին ինկիլիզները կերան այն մսէն. որ խիստ համով ըլլալով՝ շատ զարմացան։ Վո՞ւ զի անոնց շները միս չեն ուտեր, հապա պտուղ կուտեն. անոր համար մսին համն ալ շատ տարբեր է մեր աշխարհքի մսէն, և հարկաւորապէս համով կըլլայ։

կըցաւ թէ թնդանօթի ձայն է. ուրա-
խանալով մէկէն ելաւ վառարանին քով
վազեց, ընկերոջն ալ ըսաց որ եռեւէն
երթայ. քաշեց մէկ վառած փայտ մը ա-
ռաւ ու չուանէ սանդուղէն վէր ելաւ.
գերին ալ եռեւէն ելաւ, բայց չկրցին թէ
տիրոջը միտքը ի՞նչ է։ Պօղէնսօն պատ-
րաստվեցաւ մեծ կրակ մը վառելու լեռա-
նը վրան, որ նշան տայ ծովէն եղողներուն.
որպէս զի գիտնան թէ կղզին մօտ են, և
հոն ապահովութիւն գտնուի կրնան գտնել.
որովհետև անտարակոյս գիտէր՝ թէ կըղ-
զին մօտ նաւ կայ վտանգի մէջ. և թըն-
դանօթին ձայնը յայտնի նշան կուտար
օգնուի հասնելու։ Սակայն կրակին բո-
ցը հաղիւ թէ վէր ելած էր՝ անանկ անձ-
րև մը վրան եկաւ, որ բոլոր կրակը մա-
րեց։ Պօղէնսօն ու գերին հարկադրե-
ցան բնակարանին մէջ նստիլ, որպէս զի
անձրևէն չի թրջին։ Երկինքին որոտու-
մը ծովին գոչումը և զարհուրելի փայլակ-
ները աւելի սաստկացան. թէպէտև այս-
չափ սոսկալի աղաղակներ կըլլային, բայց
Պօղէնսօն մտադրելով երբեմն երբեմն
թնդանօթի ձայն կառներ. վերջապէս
տարակուսեցաւ՝ թէ այն ձայնը չըլլայ թէ
ամբի գոռալ ըլլայ հեռուն։

Ի վերջ այսր ամի բոլոր գիշերը սիրտը
խղճալով՝ երևակայուելը զինքը տանջեց,

միտքը կը բերէր որ մօտ տեղ նաւ մը ալէ-
կոծուած վտանգի մէջ է։ Ան ալ կը մտա-
ծէր որ նաւապետը թէ որ այս ահագին
վտանգէն ազատի, արդէօք զիրենք նա-
ւին մէջ կընդունի՞ր, ու Եւրոպա կրտա-
նէ՞ր։ Մատանգամ երբ կրակ վառէց,
ամէն անգամ անձրևը մարէց. ուրիշ ճար
չի գտաւ օգնուելու ընելու խեղճերուն, որ
վտանգաւոր ալէկոծուած մէջ կը չարչար-
վէին՝ ինչպէս կրկարծէր, միայն աղօթք
կընէր ոյ անոնց համար կաղաչէր ջերմե-
ռանդութիւն, ոչ զի այն մերձաւոր վտան-
գէն ազատէ խեղճերը։ Որովհետև (կը-
սէր) ուծային բարութիւնը միշտ բարի կընէ
բարիներուն և առաքինիներուն, ու ինչ
որ կուտայ՝ բարի է։

Ուռաւօտուն դադրեցաւ այն ահագին
փոթորիկը. իսկ Յովհաննէս գերիին հետ
միատեղ երբ մէյմը վախնալով՝ մէյմը
յուսալով ծովուն քով գնաց, որ նայի
թէ ի՞նչ կար և ի՞նչ էր պատահած, աղէկ
թէ գէշ։ Այց մէկէն աչքերնուն երևե-
ցաւ մէկ տրտմալի բան մը՝ որ Յովհաննե-
նին սիրտը վշտացուց, և գերին յուսա-
հատեցաւ. իբր զի ալէկոծութիւնը իրենց
նաւը առեր տարեր էր մեծ ծովը. սկսան
ողբալ արտասուք թափելով, գերին յու-
սահատելով սիրտը կոտրեցաւ՝ երբոր տե-
սաւ թէ իր բերկրալի յոյսը ոչընչացաւ,

որ պիտի երթար հայրը գտնէր։

Խեղճին երեսին գոյնը մեռելի գոյն դարձաւ, լեզուն կապվեցաւ, չէր կրնար խօսք մը արտաբերել. աչվընները մընթնելով գետինը կընայէր, և բոլոր մարմինը կըդողար. ոչ թէ հոգին մարմինէն պիտի զատվէր՝ մահւան դուռը հասածի պէս։ Ա՛չքէն արտասունքը աղբիւրի նըման կըվազէր, սրտին հառաչանքը՝ խօսքը կարգելուր. երբեմն կուրծքին կըզարնէր, և երբեմն մազերը կըփետթէր։ Խսկ Ասպէնսօն տեսաւ որ իր անբաղդութիւնը ամէն տեղ յայտնի կըլլայ, հարկ եղաւ որ ուրիշին ալ ցաւակից ըլլայ, ու մխիթարէ. ուստի գերիին յուսահատութիւնը վրայ սիրտը ցաւելով՝ կըմխիթարէր և կըջանար այսպիսի խելացի խօսքերով սիրտը զօրացընէ։

Շատ բան զուրցելէն ետև ըսաց քաղցրութիւ՝. ոչ գիտէ սիրելի, կրնայ ըլլալ որ մեր նաւուն կորուստը մեզի աւելի օգտակար ըլլայ։ Ո՛վ գիտէ թէ այս փոթորիկը ուրիշ կոզմանէ ինչ օգուտ ետքը պիտի բերէ թէ՛ մեզի, և թէ՛ ուրիշներուն։ Կրկնեց գերին դառնութիւ՝, թէ ի՞նչ օգուտ պիտի բերէ. զրկեց մեզ մեր նաւէն, ահա շահը։ Իրաւ է ըսաց, որովհետև մարդ ենք՝ չափաւոր է մեր միտքը, և տեսութիւնիս կարճ է. մենք հիմա ուրիշ

բան և օգուտ մը չենք տեսներ այս փո-
թորիկէն, բայց եթէ մեր նաւին կորուստը։ Ոչ-
ուն կաւատաս որ ոչ ամենաբարին
անհուն իմաստութիւնը ուրիշ պատճառ մը
չունենայ այս փոթորիկը տալու. ինչ-
պէս քու տկար միտքդ կը համարձակի դա-
տաստան կտրել և չափի մէջ դնել ան-
սահման խորհուրդը ամենակալին։

Պատասխանեց գերին, թէ ճշմարիտ է
բանդ ընդհանրապէս. բայց մեզի համար
մասնաւորապէս ինչ օգուտ կրնայ ու-
նենալ այս ալէկոծութիւն։ Այս բանը ին-
ծի՞ կը հարցընես՝ ըսաց. ահա ամենագէ-
տը անանկ կը կառավարէ. ընդհանուր
տիեզերս, որ խելք ու միտք չի հասնիր.
մարդ կրնայ շատ բանի վրայ կարծիք ը-
նել դատաստան կտրել. բայց ոչ կարող
է հաստատել, թէ ճշմարիտ է։ Կրնար
ըլլալ որ մեր կղզին վրայ մահաբեր ար-
տաշնչութի՞ն, և թունաւոր գոլորշիք մը
գար. այս փոթորիկն եղաւ՝ որ ցրվէ տա-
նի, ու մեզ վտանգէն պահէ, որ կրնար
հիւանդութի՞ն և մահ պատճառել։ Կարելի
էր թէ մեր նաւակը թէ որ մնար, որուն
վրայ այսչափ կը կսկրծանք, մեզ կորսընցը-
ներ։ Կրնար ըլլալ որ . . . . . բայց ինչո՞ւ
համար կրնար ըլլալ. բաւական չէ՞ մեզի
գիտնալ, թէ ոչ ամենաբարին է, որ ը-
իւր կամացը կուզէ՝ ալէկոծութի՞ն կը հանէ,

կուգէ՝ կըդադրեցընէ , և ՝ամ արարածք կրձանչնան իրենց արարիչը իմաստուն հայր ամենագթած ։ Պերին զասունք լսելով ինքն իրեն եկաւ ու սկսաւ ամենչնալ սխալանացը վրան , և շատ զղջացաւ ըրած արտունջին համար , ու բոլորովին ՝այ արդար դատաստանին հնազանդեցաւ ։ Սակայն Հոպէնսօն անդադար ծովուն երեսը կընայէր , որ նաւ մը բան մը տեսնէ . բայց ուրիշ բան չի տեսաւ , միայն ընդարձակ ծով ։ Ուստի հետևցուց թէ խաբվեր է . և միտքն որ դրեր էր թէ թնդանօթի ձայն եկաւ , անտարակոյս ամպի գոռալու ձայն էր։ Ցրտմեցաւ որ այս յոյսն ալ փուճ եղաւ , ետ դարձաւ սկսաւ իր բնակարանը երթալ ։

Բայց ամենևին սիրտը չէր հանգչէր , միշտ իրեն կերևնար թէ նաւ մը երկրի վրայ կեցած է կղզին քով ։ Ոդիմացաւ եղաւ լեռանը վրան , ու նայեցաւ արևմտեան կողմը . բայց բան մը չի տեսաւ , որ սիրտը հանգչէր ։

Սակայն միշտ անհանգստութեան մէջ էր և տրտում , ուստի եղաւ գնաց խիստ բարձր լեռան մը վրայ , ուսկից որ կրնար տեսնել արևելեան կողմը կղզին . մեծ հոգով ծայրը եղաւ ու մէկէն ծովը նայեցաւ . բայց ի՞նչ մեծ բերկրութիւն զգաց սրտին մէջ , երբոր տեսաւ որ չէ խաբ-

վաճ. ահա նաւ մը կեցեր էր ծովուն վրայ թէպէտ հեռուն էր, բայց որոշ տեսաւ որ մեծ նաւ էր։ Ընկնարին է Լոպէնսոնին ըրած բաներըը պատմել, չափազանց ուրախութէն չկրցեր ի՞նչ ընէ. կայծակի պէս թռաւ, շունչը հատնելով հասաւ բնակարանը, և առաւ զէնքերը վրան, որ առանց անոնց հեռու տեղ չէր երթալ. չի կրցաւ բան զուրցել գերիին, որ զարմացեր էր անոր իրար անցնելուն վրայ՝ քան թէ խօսքին, որ այսպէս կըսեր։ Ընոնք ահա՛ հոն են, շո՛ւտ շո՛ւտ։ Եկէն ելաւ սանդուղքէն վեր, ու վազեց գնաց թուջունի նման։ Գերին այս խռովութիւնը և շփոթած գործքը տեսնելով նաև կէսկատուր խօսքը լսելով՝ կարծեց թէ լեռան մարդիկ եկան հոն հասան. ուստի ինքն ալ առաւ իր զէնքերը ետևէն գնաց արագութիւնը։ Ընսանկ ճամբայ ընելով 12 մղոն տեղ գացին, ու չի կրցան հասնիլ ծովուն քով, ուսկից նաւը աւելի մօտ կերևնար. և հոն գերին հասկրցաւ եղած բաներուն պատճառը, երբ Լոպէնսոն հեռուէն նաւը ցրցուց իրեն։ Լակ գերին զարմացաւ մնաց. այնչափ հեռուն էր, որ կերևնար թէ այս նաւը հարիւրապատիկ աւելի մեծ պէտք էր ըլլար իրեն տեսածներին։

Լոպէնսոն չկրցեր թէ արտին ուրախու-

թիւը ինչպէս յայտնէ , երբեմն կրցաթ-
կէր , երբեմն ուրախութիւն ձայներ կրհա-
նէր , և երբեմն կրգրկէր գերին . արտա-
սունք թափելով երդում կընէր անոր ալ
մասնակցելով սրտին մէջի կիրքը : Իմա
կրդառնանք Եւրոպա կրսէր , և Ն. մպուրկ
քաղաքը պիտի տեսնես՝ ինչ տներ շինած
կան . և այս խեղճ օրերը՝ պիտի ուրա-
խութիւն օրերու փոխվին , միշտ պիտի զը-
ւարճանանք հանդիստ և ցանկալի վիճա-
կի մէջ : Ասպէնսօնին բերնէն խօսքը աղ-
բիւրի պէս կրվազեր , որ ոչ երբեք կը-
ցամքի : Յսպէս անընդհատ մինչև մէ-
կալ օրը պիտի խօսեր , թէ որ չի մտա-
ծեր թէ անխոհեմութիւն է անգին ժամա-
նակը կորսընցնել փուճ խօսքերով . նաև
ամէն բանէն աւելի պէտք էր մէկ կեր-
պով մը հասկընալ , թէ ի՞նչ աղգ են
նաւին մէջի մարդիկը , իսկ թէ ի՞նչ կերպ
պէտք էր իմանալ , չգիտնալով պաշարվե-
ցաւ մնայ :

Ուստի փորձեց թէ կրնայ լսել տայ
ձայնը նաւուն մէջ եղողներուն , բայց
անօգուտ . թէպէտ ալէկոծութիւն ատենը
հովը փոխվեցաւ , ու ցամաքէն դէպ 'ի
նաւը կրփչեր : Ղաչեց ընկերոջն որ շու-
տով կրակ վառէ , ոգ զի նաւին մէջի է-
ղողները կարենան տեսնել : Դէկէն կրա-
կրվառեցաւ , բոցը մինչև ծառերուն բարձ-

ըուԹիը էլաւ։ Ի՞նչքը միակերպ նաւուն վրայ էր հաստատեր ու ամէն վայրկեան կը դիտէր, Թէ արդեօք մակոյկը կինչ-ցընե՞ն ծովը՝ ցամաք գալու համար. բայց պարապ տեղը սպասեց։

Երջապէս կրակը մէկ ժամէն աւելի վառեցաւ, բայց ամենևին մակոյկ մը չերևցաւ։ ՈւրբաԹ գերին ուզեց լողալով նաւն երԹալ Թէպէտև հեռուն էր. որպէս զի կանչէ մէջի եղողներն՝ որ ցամաք գան։

Օսէնսօն գրկեց գերին, ու հաւանեցաւ որ երԹայ՝ չէ Թէ յանդգնուի համար, այլ ձեռքէն եկած օգնուիը հեղգուի չի ձգէ՝ ընէ։ Ճ ուտով գերին լաԹերը հանեց ծառի մը ճիւղ կտրեց բերանն առաւ, սկսաւ ալիքներուն վրայէն լողալով երԹալ։ Օսէնսօն ընկեր եղաւ իրեն միայն աչքին տեսուԹիը և ջերմեռանդ աղօԹքով։

Գերին յաջողուԹիւն նաւը հասաւ ու մէկ երկու անգամ նաւուն բոլորը պտըտեցաւ։ Ի՞նդադար ձայն կուտար մարդկանց, բայց մարդ մը չերևցաւ իրեն. հուսկ յետոյ տեսաւ՝ որ նաւուն մէկ կողմն սանդուղ մը կախած էր, վերը էլաւ կանանչ ճիւղը ձեռքը (*)։

(*) Ծառին կանանչ ճիւղը վայրենի մարդկանց մէջ նշան է խաղաղուիւն. ոչ որ կանանչ ճիւղ մը ձեռ-

Երբոր վեր ելաւ նաւին վրայ՝ ասդին անդին կընայէր, տեսաւ մէկ չի տեսած կենդանի մը՝ վախուն սարսափեցաւ, որուն մազերը սև էին և բրդոտ։ Տեսածին պէս կենդանին անանկ հաչեց որ գերին անանկ ձայն չէր լսած վախցաւ. բայց կենդանին մէկէն սկսաւ քծնիլ և քաղցրութիւն իրեն քսվիլ. մինչև գերին ալ չի վախցաւ, կենդանին ալ մօտեցաւ ու խոնարհութիւն իրեն կըքսվէր պոչը խաղցընելով ոտքերին կոռնար, մինչև գերին հասկըցաւ թէ իրեն օգնուիր և պաշտպանութիւն կուզէ։

Երբոր կենդանին գրանը քով կեցաւ՝ գերին ալ համարձակեցաւ կենդանին սիրել և գգուել, կենդանին ալ կերևնար թէ ուրախութիւն կըզըարձանար. իսկ գերին վեր վար կըպտրտեր շարունակ մարդ կըկանչէր, բայց մարդ մը չերևցաւ։ Երբոր կըաղէլով ասդին անդին կընայէր ու չի տեսած բաներուն վրայ կըզարմանար՝ որ նաւուն վրայ աչքին կըպատահէին, կոռնակը մէկալ դին դարձուց կընայէր. նայիս յանկարծ եաւէն մէկը զարկաւ ի-

քը կըմօտենայ մէկին՝ ամենևին վախնալու բան չի կայ. ասոր համար գերին ալ իր ապահովութիւնը համար այս զգուշութիւն ըրաւ, որ ուրիշը զինքը թշնամի կարծելով չի մեռցընէ։

բեն անանկ սաստիկ՝ որ վար ընկաւ (*)։ Ալ էր ցաթկեց սարսափելով՝ աչքը չորս դին դարձուց, թէ ի՞նչ է. մէկէն զարհուրեցաւ մնաց, տեսաւ հոն կենդանի մը մեծ ծուռ եղջիւրներով, և երկայն մորուքով, որ ետևի երկու ոտքին վրայ ելաւ կեցաւ և սպառնալով պատրաստվեցաւ երկրորդ անգամ զարնել անոր։ Գ.երին սոսկալով աղաղակեց, և ինքը զինքը ծովը նետեց՝ փախաւ։ Ա.ռջի տեսած սև կենդանին հարկաւորապէս մազոտ շուն էր, որ գերին չի զատվելով ծովը նետվեցաւ ու սկսաւ անոր ետևէն լողալով գալ։

Գ.երին երբոր ետևէն լողալու ձայն կառնէր, կարծէր թէ այն եղջիւրաւոր կենդանին է ետևէն կըվազէ, անանկ զարհուրեցաւ վախնալով, որ արտաքոյ կարգի կըլողար, և մէկէն ծովուն տակը կըմտնէր ու կելլէր։ Ա.հա նոր օրինակ մը, որ կըտեսնենք թէ վախը որչափ մեծ փնաս կրնայ բերել. որովհետև անանկ վտանգի մէջ կըձգէ մարդն, որ պիտի այն վտանգը չի դար թէ որ վախը չի տիրեր վրան։

(*) Այս կենդանին մեծ այծ էր, որ կաթը խմելու համար եւրոպացիք մեծ նաւերու մէջ կըպահեն. իսկ առջի կենդանին եւրոպայի մեծ շուն էր։ Ասոնք Ամերիկայ ջըլլալուն համար՝ գերին շատ վախցաւ, ու փախաւ։

Գերին չէր համարձակեր ետին նայելու. երբ քիչ մը կըհանգչէր, նորէն արագ արագ կըլողար, որ շունը չէր կըրնար ետևէն հասնիլ։ Յամաքն որ հասաւ, վախուն չի կրցաւ խօսք մը գուրցել. եկաւ Պօպէնսօնին ոտքն ընկաւ մարեցաւ, քիչ մը անցաւ շունն ալ եկաւ հասաւ։

Պօպէնսօնին խելքը գլխէն գնաց որ ձար ընէ, մարէն անցընէ հաւատարիմ ընկերոջը և անանկ խեղճ վիճակի մէջ չի թողու. վրան ընկաւ շունչ կուտար իրեն, կըշփէր կըցնցէր, և բարձր ձայնով անունը կըկանչէր, բայց քանի մը րոպէ անցնելէն ետև գերին աչքը բացաւ և նշան տվաւ թէ ողջ է։ Հուսկ յետոյ միտքը վրան եկաւ սկսաւ խօսիլ և պատմել այն սոսկալի դիպուածն որ իրեն պատահեցաւ. նաև ինչպես այն նաւը փայտէ ահագին լեռ մը երևցաւ իրեն, որուն վրան երեք հատ ծառեր տնկած էին ՝ի (տիրեկներ)։ Նաև ինչպէս սև կենդանին այնչափ սիրելով քծնեցաւ իրեն. և ինչպէս այն մօրուքաւոր և եղջիւրաւոր հրեշ կենդանին զինքը պիտի մեռցընէր։

Դարձեալ ըսաց թէ կարծեմ այն հրեշ կենդանին այս մեծ շարժող լեռանը ՝ի նայ ին տէրն էր, որովհետև ուրիշ մարդ մը չ՚ը տեսած հոն։ Պօպէնսօն այս պատմութիւնները զարմանալով կըլսէր. մինչև

մտածելով իմացաւ որ եղջիւրաւոր ըսած կենդանին այծ պիտի ըլլայ։ Նաև նաւը աւազի վրայ նստած պիտի ըլլայ, որ մէջի ճամբորդները ոդեր փախեր էին մակուկին մէջ մտնելով. սակայն չէր կրնար հասկընալ, թէ արդեօք փախչողները ողջ մնացեր էին. վն զի ինչպէս յայտնի է, եթէ դէպ 'ի այն կղզին եկած ըլլային, պէտք էր որ իրենց եղած տեղը մնտենային, բայց հոն ոտքի նշան մը չի կար. իսկ եթէ փախչելու ատենը խղդըված ըլլային, պէտք էր որ կամ մարմիններին և կամ մակոյկը տեղէ մը երևնար, և ծովուն քովերը դուրս վարներ։ Սակայն միտքն ընկաւ թէ փոթորիկին ատենը արևմըտեան հովը փոխվեցաւ արևելեան. ասանկ ըլլալով հասկըցաւ որ մակոյկը ուրիշ տեղ ընկած էր. այս քանս առաջ չի կըրցաւ իմանալ։

Ինքնիրեն կըմտածէր թէ հարկաւորապէս արևելեան հովը թող չի տվաւ որ մակոյկը այս կողմերս մնտենայ, փոթորիկը վանոնք տարաւ դէպ 'ի արևմուտք. կրնայ ըլլալ որ խեղճերը կորսըված ըլլան անծանօթ տեղ մը. և կամ կարելի է թէ հոսանքի (կիրտապի) մը մէջ ընկած ըլլան, նաև կրնայ ըլլալ որ արևմտեան կղզիներուն մէկը գացած ըլլան. ամենայն որ այս եռքի կարծիքս ճշմարիտ ելլէր ը-

սաց հառաջելով։ Այս մտմրտուքները յայտնեց գերին, անոր ալ հաւանական և Ճմարիտ երևցաւ։

Սակայն մենք հիմա ի՞նչ կրնանք ընել կըսէր. թէ՛ կորսըված ըլլան ողորմելները, և թէ՛ հովին բռնուքը մոլորած, մենք ամենևին անոնց Ճար մը չենք կրնար ընել. մեզի կիյնի՝ որ ջանանք նաւին մէջէն պիտանի բաները դուրս հանենք որչափ կարելի է։ Այլ հիմա մենք ի՞նչ կրնանք ընել որ նաւակնիս կորսընցուցինք։ Ասպէնսօն սաստիկ կըկսկըծար նաւակը, ինչպէս առաջ կսկըծաց գերին. Ճար կըփնտրուէր որ հնարք մը գտնէ, ուրիշ Ճամբայով բան տեսնէ, որ նաւին գործքն ընէ. սակայն երկար ատեն մտածելին յարմար բան մը չի գտնըվեցաւ, նորէն ուրիշ նաւ մը շինել, շատ ժամանակի կարօտ էր։ Ասպէնսօն չէր համարձակեր ըղալով նաւն երթալ այնչափ հեռու ըլլալով. թէպէտև երթար՝ ի՞նչ շահ, ի՞նչ կրնար ազատելու։ Այ՝ երջապէս մտածեց որ լաստ (սալ) շինէ, ասկէ ուրիշ յարմար Ճամբայ չի կայ կըսէր. որով կրնանք երթալ նաւին քով, և պիտանի բաները կրնանք ազատել։

Ասոշեցին որ իրենցմէ մէկը դառնայ բնակարանը, ուտելու բան բերէ. նաև չուան, և ուրիշ պիտանի բաներ բերէ

ինչ որ կար։ Պերին պատրաստ ըլլալով, այս աշխատանքը վրան առաւ, ճամբայ ելաւ։ Լոպէնսօն ալ այն միջոցը սկսաւ ծառեր կտրել լաստին հմար։ Պերին իրիկվան դէմ հազիւ կրցաւ դառնալ. իսկ Լոպէնսօն շատ զբաղուած շանը հետ. որ իրեն քաղաքացին ըլլալով եւրոպայէն՝ կըխաղար հետը սիրելով։ Ճ ուն ալ իրեն կողմանէ սէրը և ուրախութիւնը յայտնելով իր երջանկութիւնը վրայ կըզբաղուեր։ ու Լոպէնսօնին հաճոյ ըլլալու համար իր սորված խաղերը կընէր առջին։ Պերին որ դարձաւ եկաւ՝ Լոպէնսօն ամէն բանէն առաջ կտոր մը բան կերցուց շանը, որ նոյն օրը բան մը չէր կերած։ Ը.ծ յաջողեց որ այն գիշերը աղուոր լուսին կար. բաւոր գիշերը երկուսն ալ աշխատեցան շարունակ։ Կէս գիշերէն ետև քունեարնին կոխեց, պառկեցան խոտին վրան, շունը ոտքերնուն տակը իրենց պահապան կեցաւ մինչև առաւօտ, որ հոգնութիւնին անցնելով ուժ առին անոյշ քնով (*)։

(*) Լոպէնսօն որչափ ուրիշին խեղճութիւնը վրայ գթալով օգնուի ընել ուզեց, ինչ ալ իրեն աղէկութիւն ընելով օգնեց. և ինչպիսի հաստատուն յոյս որ ուներ ուծային նախախնամութիւնը վրան, բոլորը կատարուեցաւ անկարծելի եղանակաւ։

ԻԳ. Ղեպաճ.

Հապիւ թէ արշալոյսը բացվեցաւ և ա-
րևելեան կողմի երկինքը սկսաւ կարմը-
րիլ, Ոսկէնսօնին քունը այլ չի տարաւ
կանուխ ելաւ արթընցուց գերին. որ ել-
լէ գործքը առաջ տանի, որ դիշերվընէ
սկսեր էին։ Ընդհանրապէս ջանքով աշխատե-
ցան բոլոր օրն, որ նոյն իրիկունը կատա-
րեցին լաստը։ Ընդանկ լաւ յարմարեցին
ծառին փայտերը իրարու հետ, և այնպէս
գերանները կարգով կապեցին չուանով
և ուռիի ճիւղերով. որ հաստատ տախտա-
կամած եղաւ յարմար ճամբայ երթալու.
գրեթէ 20 ոտնաչափ երկայնութիւն և լայ-
նութիւն ունէր։ Դաւ առաջուց մտածելով
ոտքի կամ (թէքէրլէկի) վրայ շինեցին
այս լաստը ծովին քով, որ դիւրին եղաւ
ծովը ձգել առանց ժամանակ կորսընց-
նելու։

Մեծ յաջողութիւն եղաւ որ առտուանց
սկսաւ մակընթացութիւնը և շատ չանցաւ
ծովը բարձրանալով լաստը ջրին վրայ է-
լաւ որ 6 ժամէն ետև երբոր տեղատուի
ըլլալով ծովը կը քաշվեր՝ ջուրը ետ վազե-
լու ատենը գետի պէս լաստը պիտի առ-
նէր տանէր մինչև մեծ նաւուն քով։ Ան-
այսպէս ժամանակին որ եկաւ՝ նստեցան

լաստին վրան՝ ծոմն առաւ քշեց լաստը, կէս ժամին մէջ հասան նաւուն վրայ։

Լոպէնսոն Եւրոպայի նաւ տեսնելով անանկ սիրտն եկաւ՝ որ նաւին շատ տեղը համբուրեց շատ անգամ. վասն զի Եւրոպայէն եկած էր, և Եւրոպացի մէջը նստած էր. այս պարագանները սրտին գուլթը կը շարժէին։ Սակայն աւաղ ափսոս որ էին այն սիրելի Եւրոպացիները, նաւը կար, իրենք չի կային, արդեօք ալիքներուն մէջ խղդըված էին չիյտեր։

Այս մտքերով խիստ շատ ցաւեցաւ Լոպէնսոնին սիրտը, որ յոժարութիւն կը զոհեր տրտմալի կեանքին կէսը որչափ որ պիտի ապրեր, միայն թէ մարդ և նաւաւոր գտներ ու միատեղ Եւրոպա երթար։ Բայց այս ակնկալութիւնը մտքէն հանելէն ետև մինակ պէտք էր մտածել, որ նաւուն մէջէն պէտք եղած բաները դուրս հանէ, որչափ որ կարելի էր, և յետոյ գործածէ, որովհետև նաւը անտէր մնացեր էր. թէ որ ինքը չառնէր, կամաց կամաց ծովը պիտի երթային. ասոր համար Լոպէնսոն իրաւունք ունէր որ առանց խղճմտանքի պէտք եղած բաները նաւէն դուրս հանէ ու գործածէ քաշած աշխատանքին տեղը՝ իբր աւանդ, և երբոր տէրն ելլէր, ետ կուտար։

Հասարակօրէն այսպէս է Եւրոպայի օ-

ընդքը, որ ծովէն ելած բաները իրեք կը-
բաժնեն. մէկ բաժինը տիրոջը կուտան.
մէկ բաժինը ծովէն հանողին է, մէկալ
բաժինն ալ քաղքին տիրոջը կուտան։ Ա-
սով Ալոպէնսօն ալ իրաւունք ունեցաւ
նաւը պարպելով բաներուն տէր ըլլալ.
մէյմ՝ որ որ չի կար, երկրորդ՝ աշխատան-
քովը պիտի հանէր. և երրորդ՝ կղզիին օ-
րինաւոր տէրը ինքն էր, որուն մօտ ցա-
մաքն ընկեր էր նաւը. իբր զի օրէնքը կըցը-
ցընէ, թէ մէկ երկիր մը, և ի՛նչ և իցէ
բան՝ երբոր տէր չունի, անոր կիյնի բնա-
կանապէս, որ նախ և առաջ զայն ժա-
ռանգեց։

Ալոպէնսօնին ուշը երբոր վրան եկաւ,
որ ուրախութէն այլայլեր էր Եւրոպայի
նաւ տեսնելուն համար, առջի խնդիրքն
ու ջանքն եղաւ՝ նաւը անվնաս ցամաքին
վրայէն հանել։ Ընանկ որոշեր էր որ գե-
ղիին հետ միատեղ մէջը մտնէ Եւրոպա
երթայ. եթէ Եւրոպա չըլլայ, գէթ Ա-
մերիգայի Եւրոպացիները երթայ գտնէ։
Ա՛ինքը դրեր էր՝ որ այս անկապմ նաւովը
մեծ ծովը Ճամբայ ընէ, որ նաւավարուն
արուեստը չիյտեր։ Ալոպէնսօն իրեն լաս-
տովը նաւին չորս բոլորը պտըտեցաւ. և
ամէն դիէն ջրին բարձրութիւնը չափեց.
հուսկ յետոյ յուսահատելով շատ սիրտը
կոտրեցաւ. վ՚ը զի անանկ ցած էր ջուրն,

որ անհնար էր որ կարենայ նաւը ջրին վրայ ելլել։ Իբր զի փոթորիկը բերեր նաւը երկու քարի մէջ էր ձգեր, այնպէս դամբեր էր որ անկարելի էր ոչ առաջ երթալ, և ոչ ետ դառնալ։ Հարկ էր անանկ մնալ, մինչև որ ալիքները կտոր կտոր խորտակէին։

Մոպէնսօն երբոր յոյսը կտրեց այս բանիս վրայ, պատրաստվեցաւ նաւուն մէջ մտնել, ու նայել թէ ի՞նչ բան կրնար պարպել մէջէն։ Պերին մէկալ օրուան քաշած վախը չի մոռնալով տիրոջը հետ միատեղ մտաւ նաւին մէջ. սակայն վախուն սկսաւ դողալ երբոր տեսաւ եղջիւրաւոր հրեշը, որ զինքը այնչափ վախցուցեր էր։ Բայց այծը առջի օրուան պէս կատղած չէր, ուժէ ընկած տկարացեր էր՝ անանկ որ չէր կրնար վեր ելլել. վո՞ զի իրեք օր էր որ բան չէր կերած կենդանին։

Մոպէնսօն ամէն բանէն աւելի նայեցաւ որ բան մը գտնէ անօթի այծին կերցընէ, որ ուտելով տկարուէն զօրանայ։ Որովհետև նաւի մէջի եղած բաներուն ծանօթ էր, առանց դժուարութե՛ փնտռուած խոտը գտաւ. երբոր այծին առաջը լեցուց, անանկ փափաքելով կուտէր, որ կուզէր բոլորը մէկէն կլլել. շատ զըւարճացաւ Մոպէնսօն այս բանիս վրայ, թէպէտ գերին անանկ կըսարսափէր այծին

ձևէն՝ որ վախուն չէր կրնար աղէկ մը նայել. վա՜ զի այն երկիրները չբլալուն համար իրեն անծանօթ էր։

Հուսկ յետոյ Ռոպէնսոն մտաւ նաւին համբարը խորշ խորշ պտըտեցաւ, ամէն տեղ գտաւ բիւրաւոր բարիք որ Եւրոպայ մեծ բան մը չեն համարիր. բայց իրեն առջին ամէն մէկ բանը՝ անգին գանձ էր։ Հոն գտաւ աղնիւ պակսիմաթ, բրինձ, յորեն, ալիւր, գինի, վառօդ, գնտակ (կիւլլէ, սաչմայ). Հոն գտաւ թնդանօթ, հրացան (թիւֆէնկ, փիշտով,) և զանազան թուրեր, դանակներ, նաև կացիններ, սղոցներ, մկրատներ, կռաններ (չէքիճներ), և այլ շատ պէսպէս երկրաթէ գործիքներ։ Դարձեալ՝ տեսաւ հոն կերպ կերպ ամաններ, ափսէներ, և ամէն սեղանի և խոհարանի բաներ։ Երջապէս գտաւ հոն ամէն տեսակ զգեստներ, հագնելու լաթեր, կտաւ, չուխայ, կօշիկ, գուլպա, և այլ շատ բաներ, մինչև Ռոպէնսոնին խելքը գլխէն գնայ։

Ասոնցմէ մէկ բան մը եթէ իրեն տեղէ մը ցցընէին առաջ՝ սիրով կուտար այն իրեն ոսկիէ գունտը, որ արդէն ձգեր մուցեր էր։ Իսկ Ուրբաթ գերին այսչափ զանազան բաներ տեսնելով՝ սասանեցաւ մնաց. ամէնն ալ իրեն անծանօթ էին, և ամենևին գործածութիւնը չէր տեր։ Նա-

ընդհակառակն՝ Ոսպէնսօն ուրախութէն կուլար տղու նման, որն որ ամէն բանէ կը զգէր, և ամէն տեսած բանին վրայ կուրախանայ թէ պիտի առնէ. ուրիշ բան մը տեսնէ, աւելի ազէկ կարծելով առջինը կը ձգէ՝ անոր կը փակէր սիրտը։ Հուսկ յետոյ Ոսպէնսօն ուզեց նաւին տակն ինջնիլ, բայց տեսաւ որ լեցուն ջուր է, ոչ թէ նաւին գոգը լիք գարձեր էր։

Ակսաւ մտածել թէ առջի գառնալուն ինչ բան պէտք էր տանել ցամաքը. ամենևին չի կրցաւ որոշել, թէ ո՛րը առնէ, և ո՛րը թողու։ Երբեմն մէկ բանը կուզէր առնել. երբեմն ուրիշ բան, որ իրեն կերևնար թէ բացարձակապէս աւելի հարկաւոր է. շատ անգամ ալ պիտանի բանը կը ձգէր, ուրիշ բան մը կընտրէր. ետքը անալ կը ձգէր։ Հուսկ յետոյ այսպէս որոշեց իր ընտրութիւնը, նախ ուզեց հանել ամէն բաներէն աւելի պիտուական սեպած բաները. զոր օրինակ ա երկու տակառ (ֆըչի) վերցուց՝ մէկը վառօդ, մէկալը մանր գնտակ. բ երկու հրացան և երկու զոյգ ատրճանակ (փիշտով). երկու թուր, և երկու դանակ. գ երկու հագուստի լաթեր, մէկը իրեն համար, մէկն ալ գերիին. դ երկու կապոց շապիկ. ե երկու կացին, երկու տղոց, երկու քերիչ (ռէնատէ), և երկրլթէ գաւազաններ,

քանիմը կռան, և շատ երկաթեղէն պի-
տանի գործիք. Ը քանի մը գիրք, Ճերմակ
թուղթ՝ գրիչ՝ մելան. Է հրահանները
(չախմախ) աբեթով և քարով. Ը մէկ
տակառ պակսիմաթ. Թ քանի մը կտոր
հասատ կտաւ. Ժ այծը։ Որովհետև Ռո-
պէնսոն սաստիկ գթած ըլլալով չի կրցաւ
այս կենդանին հոն ձգել անխնամ վտան-
գի մէջ. որ կրնար իրենց դառնալէն ա-
ռաջ նաւը ընկզմելով կորսըվիլ։ Ա՝անա-
ւանգ թէ ամէն հարկաւոր բաներէն ա-
ռաջ այծին տեղ շինեց լաստին վրայ, կոս-
կածելով չըլլայ թէ մոռնայ։ Զարմանա-
լին այն եղաւ, որ գին ընելու բաներուն
չի դպաւ, մը զի անարժան համարեցաւ
առնել այնպիսի բաներն որ Եւրոպա մեծ
համարում ունին։ Լաւապետին խուցին
մէջ գտեր էր ամանի մը ոսկիի մանրուք.
և մէկ մնտուկ լեցուն անգին անդամանդ
(էլմաս). բայց չի կամեցաւ մոռնալ ա-
նոնց, որ իրեն օգուտ մը չունէին։

Շատ անգամ ժուռ գալով նաւին մէջ
դիտեց առաւ պէտք եղած բաները՝ վերտե-
ղեց լաստին վրայ, ինչ որ կուզեր տանիլ,
մինչև ամէնը կատարեցաւ։ Ընելու այլ
բան չի մնաց, բայց եթէ քիչ մը ատեն
կուզեր որ մակընթացուները սկսի. ասոր
համար հարկադրեցաւ որ սպասէ ու եռքը
ճամբայ ելլէ, որ լաստը ջրերով ցամաքն

երթայ. որովհետև առանց մակընթացու-
թեան անկարելի էր ցամաք հասնիլ։

Լոպէնսօն այս միջոցս ուզեց կերակուր
ուտել եւրոպայի կերպով, որ երկար ա-
տեն էր չէր կերած։ Ինչպէս նաւին մէջ
փնտրուեց չորցած միս, և չոր ձուկ գտաւ,
քանի մը պակսիմաթ, կարագ եղ, և պա-
նիր, գտաւ նաև շուշայ մը գինի, սեղան
գրաւ նաւավարին խուցը. կանչեց գերին՝
աթոռներով սեղան նստան։ Ի՞նչ այսպի-
սի սեղանն ստիլ դանակով պատառաքա-
զով կարել ուտել եւրոպացիի պէս՝ մե-
ծապէս զարմացուց Լոպէնսօնին սիր-
տը. մանաւանդ եւրոպայի կերակուրներն
ու հացը. մինչև ուրախութէն չէյտեր թէ
ինչ ընէ։ Այս քաներուս շատ անգամ
այնչափ տարի կըմտածեր ու չէր գտներ։
Պարզ չի կրնար երևակայել թէ անոր
քիմքը (տամաղը) ի՞նչպիսի համ և ի՞նչ
քաղցրութի՛ն կառներ։ Այս իրաւունք ու-
ներ, որովհետև 9 տարի միակերպ զրկը-
ված էր բոլոր այս կերակուրներէն, և ա-
մէն հանգստութէն։

Իսկ գերին՝ որ չէյտեր թէ եւրոպացոց
կերակուրը և սեղանը ի՞նչ է, խիստ զար-
մացեր էր, և չէյտեր թէ ինչպէս գործա-
ծէ դանակն ու պատառաքաղը (չաթալը).
Լոպէնսօն կըսորվեցըներ իրեն։ Գե-
րին ալ բաղձալով նմանիլ տիրոջը՝ պա-

տառաքաղով կտոր մը միս առաւ բերանը տանելու ատենը՝ իրեն սովորութիւնը պատառաքաղին կոթը ձեռքին հետ բերանը տարաւ, և մեին կտորը դէպ՝ ի ականջը դընաց։ Լոպէնսօն գինի մը ուզեց անոր խմցընել. հրաժարեցաւ գերին խմելու, որ մինակ ջուր խմելու սորված էր. և ընուիր չէր կրնար տանել բարկ խմելիքի։ Այլ պակսիմաթին վրայ խնցաւ՝ ախորժակին յարմար ըլլալով։

Ճաշընթացութիւնը երբ սկսաւ՝ անոնք ալ ինչան լաստին վրայ, ու մեկնեցան նաւէն. ջրին բարձրանալովը հանգիստ լաստը դէպ՝ ի ցամաք կերթար. մինչև քիչ ժամանակին մէջ կղզին հասան և պատրաստվեցան ցամաք հանել բաներին որ լաստին վրայ բեռցուցած էին։

Գերին հետաքրքրութիւն ունեցաւ գիտնալ թէ ի՞նչ զօրութիւն և ի՞նչ օգուտ ունէին այն բաներն որ դուրս հանեցին։ Ասոր հետաքրքրութիւնը լեցընելու համար Լոպէնսօն ծառի մը ետին անցաւ, ու իր լաթը հանեց. նաւէն հանած լաթերը հագաւ, գուլպաները և կօշիկները ոտքն անցուց, կատարեալ զօրապետի կերպարանք մտաւ. գլխարկ (շափղայ) մը գլուխը դրաւ, սուրն ալ մէջկը կապեց. մէկէնի-մէկ եկաւ Ռոբաթ գերիին երևցաւ։ Գերին զարմանալով հիացաւ ու ետև

ետև փախաւ. վասն զի մէկէն չի ճանչցաւ տէրը, կարծէց թէ գերազանց հոգի է։ Իսկ Յոսէֆոսն չիկրցաւ զինքը բռնել՝ որ չծիծաղի, սկսաւ բարեկամութիւն ձեռք ընել քովը կանչել՝ հաստատելով թէ ես միշտ նոյն Յոսէֆոսն եմ, և միշտ քեզի բարեկամ. միայն հագուստս ու բաղդս փոխվեցաւ։ Յետոյ հանեց նաւավարի հագուստ մը տվաւ գերիին, ու հասկրցուց ինչպէս պիտի հագնէր. և պատուիրեց որ երթայ ծառերուն ետին լաթերը փոխէ։

Գերին գնաց լաթը փոխելու, բայց զարդարանքը երկար քշեց. վասն զի ամէն մէկ լաթը ծուռ կըհագնէր, որչափ որ փորձէց՝ չեղաւ. զորօրինակ երկու ոտքը խօթեց շապիկին թևերուն մէջ. նմանապէս երկու թևը անցուց վարտիքին մէջէն, որ վարտիքով գլուխը գոցվեցաւ. կըջանար որ բաճկոնը կունակին դիէն կոճկէ։ Երջապէս փորձելով փորձելով հազիւ հասկրցաւ սխալանքն ու շտկեց։

Երբոր շիտակ կարգով լաթերը հագաւ՝ ուրախութէն վեր ցաթկեց տղու պէս. մանաւանդ երբոր հասկրցաւ թէ որչափ հանդիստ և պիտանի էին այս հագուստներս, որ ճանճերուն խայթելէն ալ կըպահէին զինքը։ Միայն կոշիկներուն վրայ չուրախացաւ, որ անհանդիստ և անօգուտ բան կերևնային իրեն. ուստի

ինդրեց որ անոնք ձգէ չի հագնի. Ամ-
պէնսօն ալ իրեն կարքին ձգեց, ինչպէս
որ ուզէ՝ անանկ ընէ։ Լոտքը իրեն սորվե-
ցուց կայինին գործածութիւնը, և ուրիշ
գործիքներուն օգուտը. որով գերին շատ
զարմանալով ուրախացաւ։ Այս գործիք-
ներով մէկէն սկսան շինել լաստին հա-
մար կայմ (տիրէկ). ոտ զի առագաստին
օգնութիւնը կարենան երթալ մեծ նաւուն
քով առանց սպասելու մակընթացուէ.
ինքը կայմը կըշինէր, գերին ալ խրկեց
որ երթայ բնակարանը լամանները կթէ.
որովհետև երկու օր էր որ ձգեր էր կեն-
դանիները։ Գերին որ անկէ հեռացաւ,
Ամպէնսօն լեցուց հրացանը պահեց՝ որ
նետելով զարմացընէ ընկերն ու զըւար-
ճանայ։

Գերին դառնալու ատենը տեսաւ Ամ-
պէնսօնին ջանքն որ լմընցուցեր էր գործ-
քը, շատ զարմացաւ։ Իսկ Ամպէնսօն
մէկ ծով ու լաղ մը տեսաւ, որ ձուկ մը
բերանը կըթուչէր. ըսաց գերիին թէ՝
նայէ՛ սա թուչունը հիմա պիտի իյնի. նոյն
կէտին Ամպէնսօն ծնկան վրայ եկաւ, ու
թուչունէն նշան առնելով նետեց հրացա-
նը, նայիս մէկէն թուչունը վար ընկաւ։
Ամենուտա՛ թէ ինչ վախ, և ինչ սարսափ
եղաւ գերիին. որ մէկէն գետինն ընկաւ,
ոտ թէ իրեն զարկած ըլլար։

Շուտ մը իր առջի աւելորդապաշտութիւնը միտքն եկաւ, Յուփան չաթին տեղը դնելով։ Այս վախին մէջ միտքը դրաւ՝ թէ Պոպէնսօն է Յուփան չաթը։ Պէկէն վեր ելաւ ծնկան վրէ եկաւ, դողալով թաւերը բացաւ Պոպէնսօնին դէմ աղօթք ըրաւ, էր կրնար բան մը խօսիլ։

Պոպէնսօնին սիրտը չկրնաշէց այս բաներուն վրայ զբաղանալ, որովհետև մոլորական բան տեսաւ գերիին վրայ։ Այս աւելորդապաշտութիւնը կարծիքը տեսնելով շատ նեղացաւ, ու անկէ ետև ջանաց որ շտկէ ընկերին պակասութիւնը։ Ուստի Պոպէնսօն բարեկամաբար վերցուց գերին ու գրկեց սիրով, յորդորեց որ դադրեցնէ վախը ապահով ըլլայ. ետքը ըսաւ՝ թէ ասկէ ետև քեզ ալ կըստրմեցընեմ հրացանը կրակելով անանկ ձայն հանել տալ կայծակի նման. անոնք ուրիշ բան չէն, բայց էթէ բնական գործքեր են։

Հասկցուց գերիին, թէ գիտես վառոդը ինչ զօրութիւն, և ինչ գործք ունի։ Նատենը հրացանին հնարքը և շինվածքը իրեն բացատրելու համար՝ լեցուց հրացանը և տվաւ ձեռքն որ նետէ։ Սակայն գերին մեծ վախի մէջ ըլլալով աղաչեց Պոպէնսօնին, որ առնէ ինքը նետէ։ Նաև 100 քայլ հեռուն նշան մը դրաւ՝

նետեց հրացանը զարկաւ, գերին քովը կեցած էր։

Երբ մնաց նորէն գետինը պիտի բըռ-
վէր գերին. ինչոր տեսաւ և լսեց՝ իրեն
կուգար թէ բնուէ դուրս բան է։ Որած
նշանը կտոր կտոր եղած էր նետած գըն-
տակէն, որ շատ առաջ գացեր էր մինչև
անտառին մէջ հասեր էր։ Լոպէնսօն այս
պարագան հասկըցնելով անոր՝ հետևե-
ցուց, թէ ասկէ ետև ո՛րչափ ապահով
կրնան հալածել վայրենի մարդիկ, ասանկ
որոտում հանելով, և այս արուեստաւոր
կայծակը անոնց վրայ նետելով։

Ահա այս գործքը և նաւին մէջ միւս
բաները ապացոյց եղան ու գերիին սիրտը
անանկ շարժեցին՝ որ մեծ յարգութիւն, և
խորին ակնածութիւն մը ունեցաւ Եւրոպա-
ցոյ վրան ընդհանրապէս, և Լոպէնսօ-
նին վրան մասնաւորապէս. որ այնչափ օր-
ւան մէջ անկարելի եղաւ նորէն ունե-
նալ բարեկամին հետ այն ընտանի եղա-
նակն, որ արդէն առաջուց սորված էր։
Երիկուն որ եղաւ՝ թողուցին այն երջա-
նիկ օրւան աշխատանքն ու հանգչեցան։

ԻԳ. Դէպք.

Ոսկէնսօն քանի որ իր կղզին մտեր էր անանկ անոյշ և հանգիստ քուն չէր քնացեր, ինչպես այս գիշերուան քունը։ Որովհետև այսպիսի երջանկութիւն ոչ երբէք տեսած էր. բայց չէ եղած որ մարդ մը ասոր նման ուծային բարերարութիւնը ճանչնայ, ու ստեղծողին սիրովը վառվի. որուն մեծապէս պարտական էր՝ տեսած երջանկութիւնը համար։ Որչափ որ մինակ կըլլար, ինչ ջերմեռանդութիւններ և քանի՞ երկրպագութիւն կընէր յարդուք երկնաւոր թագաւորին՝ վասն այնչափ բարերարութեցն որ իրեն շնորհեր էր։

Դաւական չի համարեցաւ իր երախտագէտ սիրտը, ուզեց գերին ալ հաղորդել, անոր ալ սորվեցուց պառկելէն առաջ, մէկ շնորհակալութիւն երգ մը՝ տված շնորհացն համար. երբոր սկսան երգել, աւելի սրտերնին շարժեցաւ գովել և փառաբանել իրենց երկնաւոր հայրը։

Հետևեալ օրը խիստ կանուխ ելան՝ բոլոր հանած բաները տարին անտառին մէջ գրին, վրան ալ ծածկեցին տերևներով, որ անձրևէն պահվին՝ եթէ անձրևէր։ Երբոր ծովն սկսաւ բարձրանալ, նորէն ճամբայ ելան որ նաւուն քով երթան, լաս-

տին վրայ քանի մը թի էին շիներ, որ քա-
շելով քիչ ժամանակին մէջ յաջողհասան
հոն, որ մէկէն նաւը մտան ու որչափ
տախտակ գտան դրին լաստին վրան. ոմն
կի աւելի մեծնայ, ու աւելի բեռ առնէ,
և առջի օրը ինչ շատ բան բերէ ցամաքը։

Պօպէնսօն նորէն մտածեց նաւը պար-
պելուն համար, որ ընտրելով աւելի պիտ-
ուական բաները հանէ այնչափ վանապան
բաներուն մէջէն. վա՜ կի անհնարին էր
բոլորը մէկէն դուրս հանել։ Այս ան-
գամ պաշարվելու մնաց, որովհետև առ-
ջի անգամ ամէն հարկաւոր բաները հա-
ներ էր. ուստի չէր կրնար որոշել թէ ինչ
բան հանէ։ Վերջապէս որոշեց որ նա-
ւուն թնդանօթին մէկը դուրս հանէ.
վա՜ կի իր վիճակին նայելով խիստ հարկա-
ւոր համարեցաւ թնդանօթը. ոմն կի ա-
պահով և հանգիստ կարենայ ըլլալ։

Իբր կի՝ լաստը պարպած տեղը ուր որ
բաները առ ժամն կը հանէին՝ բաց տեղ
էր, և անյաջողութիւն մօտ էր այն տեղին՝
ուր որ կուգային կելլէին վայրենի մար-
դիկ. Հնմարիտ է թէ առանց թնդանօթի
ալ կրնար ապահով ըլլալ, եթէ ծեծկը-
վիլ ալ պէտք ըլլար՝ կրնար հրացանով
թնամիները հալածել. բայց իրեն կերևե-
նար թէ մեծ անգթութիւն է վայրենի մար-
դիկը հրացանով ջարդել մեռցընել. հա-

պա բաւական էր զանոնք վախցընել եր-
բոր հոն մնտենային։ Ուստի կըմտածէր
որ եթէ մէկ թնդանօթ մը դնէր ծովին
քով, և լեռան մարդիկ թէ որ նաւով
գային մնտենային կզլխին, թնդանօթը
վերէն նետելով կրնար զանոնք վախցընե-
լով ետ դարձընել։

Ռոպէնսօնին ասանկ խորունկ մտած-
մունքը շատ մարդու խրատ կրնայ ըլլալ,
որ ամէն բանին ետքը մտածէ. և ուրիշին
միտքը չի հասկըցած՝ վրան դատաստան չի
կտրէ և ըրած բանը չիդատէ. որ շատ
անգամ կըխաբվինք չի ճանչնալով թէ
ինչ մտքով ըրած է այն բանը. որովհետև
անկարելի է, թէ մէկ բանին ամէն պա-
բագաները ճանչնանք. հապա ինչպէս
դատաստան կրնայ կտրըվիլ։ Որ հիմ
գիտուն մարդը ուրիշին գործքը չի կրնար
դատել. միայն իր գործքին նայելով կըգ-
ուշանայ։ Ամէն մարդ ասանկ պէտք է
ընել. ուրիշին միտքը չի հասկըցած վրան
դատաստան չընէ. ինչպէս որ մեծապէս
կըսխալէր թէ որ մէկը Ռոպէնսօնին ըրած
բաները դատէր սնգիտութիւն։ Այսպէս
Ռոպէնսօն ետքը մտածելով թնդանօթը
դրաւ լաստին վրայ. նաև հարկ համարե-
ցաւ՝ որ այս բաներն ալ առնէ. Ա իրեք
տօպրակ հնդեղէն. Բ երկու սնտուկ դամ
ու գինի. Գ 12 կացին. Դ տակաւ մը վա-

ուղ և կապարէ գնտակ. Է մէկ առագաստ մը առաւ, և մէկ երկանի քար՝ ցորեն աղալու համար. որ իրեն աւելի հարկաւոր ըլլալով անդամանդը ձգեց ու այս քարերը դրաւ լաստին վրայ։

Լաւէն դեռ չէին զատված Ալոպէնսօն նաւը քննեց նայեցաւ, որ ջուրը լեցուն է մէջը. և ալիքները զարնելով ապառաժին՝ երկու կողմէն ալ շատ տախտակներ փրցուցեր էին, ուստի հասկըցաւ որ ալէկոծութիւն մը եղածինպէս պիտի խորտակէ նաւը. այս պատճառաւ պատրաստվեցաւ, որչափ որ կրնայ մէջի բաները պարպէ ապատէ։

Որովհետև անատենը հովը ծովէն ցամաքը կըփչէր, առագաստը բացին թէ քաշելով գացին հասան յաջողութիւն. թէպէտև տեղատուութիւնը սկսած ըլլալով ջուրը իրենց ներհակ էր։ Ամբան գալու ատենը Ալոպէնսօնին միտքը բան ընկաւ և ինք զինքը անարգելով զղջաց, որ ոսկին ու անդամանդը չէր բերած հոն թողուցեր էր։ Թէպէտ այն վիճակին մէջ իրեն հարկաւոր չէր, սակայն ասանկ կըմտածէր թէ կրնայ ըլլալ՝ որ ետը ողջ ըլլայ, ու օրմը գայ այս կողմերս քննէ, թէ բան մը կրնայ գտնել։

Ասալ կըսէր, թէ որ հովը զարնէ նաւը կտոր կտոր ընէ ես նորէն չի դարձած՝

ոսկին ու անդամանդները ծովը որ էր-
թան, ես այ առջին պարտական չեմ
մնար. ի՞նչպէս պիտի արդարանամ ար-
դար դատաստանէն և իմ խիղճմտան-
քէս, որ ուրիշ բան չապատեցի. միայն
ինծի պէտք եղած բաներուն նայեցայ, ա-
ռանց ջանալու ուրիշին անգին բաներն
ապատելու. ոչ զի ապատածներս ալ ար-
դարութ՚ եղած ըլլային։ Արնար ըլլալ որ
տիրոջը բաղդը և շատ մարդու յաջողու-
թ՚ը այս պզտի ուշադրութ՚էս կըկախվեր՝
որ ես զանց ըրի։ Հոպէնսօն Հոպէնսօն՝
կանչեց ինքնիրեն տժգոհութ՚ամբ. քանի՞
հարկաւոր է որ դուն արդար ըլլաս՝ ինչպէս
որ պարտական ես։ Այն կէտին կարելի
ըլլար, լաստը ճամբայէն եւ կըդարձը-
նէր՝ որ նորէն նաւուն մօտենայ, այն բա-
ներն ապատելով խիղճմտանքը շտկէ, որ
խռոված էր արդարութ՚ դէմ ընելուն հա-
մար, որով պարտաւորութ՚ամբ տակ զինքը
կըճանչնար։ Սակայն ցամաքին մօտեցան,
տեսան որ հանած բաներուն վտանգ պի-
տի ըլլայ և ծովը պիտի թափին. որով-
հետև դեռ ջուրը քաշվելու հետ էր։ Ա-
սանկ ըլլալով՝ եղած տեղերնին ցամաք
էր, լաստին գլուխը աւազին վրայ խրեցաւ
մէկէն, ու ետևի կողմը բարձր մնաց ջրին
վրայ. որ միշտ ցածնալու հետ էր։ Ծ-
ովաւ որ Հոպէնսօն ու գերին լաստին

Եռանի կողմն էին, որ թող չի տային Եռանի բաները ծովը թափելու, որ ծովուն աչքները զարնելով ջուրը պիտի ճգէին։

Լաստը աղէկ մը հաստատելէն Եռանի, վրայի բաները ցամաքը կրեցին տղմին (չամուռին) և ջրին մէջէն անցնելով, որ մինչև ծունկը կը հասնէր. անանկ ջանքով և զգուշութիւն պարպեցին, որ անիշնաս բան մը չի կորած՝ամէն բան ցամաքը դրին, ու ջուրը չի բարձրացած նորէն դարձան։

Ոսպէնսօն նաւին վրայ ելածին պէս մէկէն ոսկիին ու անդամանդին սնտուկը դրաւ լաստին վրան. որ խիղճմտանքին բեռէն ազատի ու պարտական չի մնայ, միայն իր բանին նայելուն համար։

Այս ճամբորդութիւն ուրիշ բաներէն՝ի զատ՝դուրս հանեց քանի մը պզտի սայլեր (արապա), որ գտաւ նաւուն վրայ. չեմ տեսեր ինչ բանի համար. շատ զգեստներ, և կտաւներ հանեց. գործիքներ, և տան գործածելու բաներ, կանթեղ մը, նաև բոլոր թղթերն որ գտաւ նաւավարին խուցը հանեց։

Երբոր ծովն սկսաւ բարձրանալ, նորէն ճամբայ ելան, շուտ մը հասան ցամաքը ջրին բերելովը և հովին օգնութիւնը։ Ոսպէնսօն մնացած օրը չուզեց այլ երթալ. ուրիշ բանի աշխատեցաւ զգուշութիւն համար, որ իրեն խիստ հարկաւոր

կերևնար. վասն զի վախուն կըդողար որ չըլլայ թէ անձրև գայ, որով անկարելի էր թէ կարենայ վառօդը գործածել, որ այնչափ ցանկալի էր իրեն։ Ա. յս դիպուածէն պահվելու համար, նոյն օրը տաղաւար (չատրը) մը շինեց բերած առագաստըն՝ որ ազատեր էր. որուն տակը պահեց իր գանձերը անձրևէն։

Որովհետև Ասպէնսոն մկրատ, ասեղ և թել հաներ էր նաևէն, մէկէն սկսաւ գործածել կարել տաղաւարը և գերիին ալ սորվեցուց գործածուին. որ իրեն օգնութիւն ընելով կըզարմանար Եւրոպացոց ճարտարամիտ գտումին վրայ՝ որ ասեղն ու մկրատը հնարեր էին. և անդադար մտածելով կըբաղդատեր իր ազգը Եւրոպացոց հետ. ուրիշ բան չենք կըսեր, բայց եթէ խեղճ յիմար թանձրամիտ։ Ա. յս գործքս կատարելէն ետև՝ Ասպէնսոն տեսաւ թէ իրիկուն ըլլալու դեռ ժամանակ կայ, ուզեց որ գերիին հասկըցնէ թնդանօթին զարմանալի գործքը զըւարճութիւն համար։

Անդանօթը զետեղեց ծովուն դէմ ասնոր համար՝ որ ռումբը ծովին երեսը ցաթկըտելով՝ գերին որոշ տեսնէ թէ որչափ հեռուն կրնայ երթալ. Ասպէնսոն կրակ տվաւ թնդանօթին։ Երբոր գերին թընդանօթին ահեղ ձայնը լսեց՝ անանկ խռո-

վեցաւ որ բոլոր մարմինը կը դողար , թէ-
պէտ երկու անգամ հրացանին ձայնը լը-
սած էր։ Խելքը չէր հասնէր թէ ի՞նչպէս
կը ցաթկըտէր ռումբը ծովին երեսը . որ
ծովին ջուրը խռովելով սաստիկ գնաց
հեռուն , մինչև մտաւ ջրին մէջ անե-
ըևոյթ եղաւ ։ Ոչերին վկայեց , որ եթէ
միանգամ նետես այս գործիքը , բոլոր
իմ ազգս ասոր ձայնէն կը հալածին թէ-
պէտ բիւրաւոր ըլլան . վ՞ զի չեն տարա-
կուսիր թէ այս որոտումը թուփան չ՚ածին
ձայնն է ։

Երբոր գիշեր եղաւ՝ Ոսկէնսոն բերած
կանթեղը վառեց , որ կարդայ նայի թէ
հանած թղթերը ի՞նչ են . ոչ՞ զի հասկը-
նայ նաւին տրամադրութիւնը թէ ուսկի՞ց
ո՛ւր պիտի երթար . բայց դժբաղդութիւ-
բոլոր գրերը անանկ լեզուով գրված էին ,
որ չէր կրնար հասկընալ ։

Այս նորէն կսկիծ մը ունեցաւ , որ
մանկուէ ատենը ծուլութիւն չէր սորված
ուրիշ ազգի լեզուները . բայց այս կսկի-
ծը անանկ ատեն ունեցաւ որ աւելորդ և
անօգուտ էր , ժամանակը անցեր գացեր
էր ։

Սակայն և այնպէս երկու մասնաւոր
բան գիտեց , որ իրեն շատ լոյս տվին այս
նաւին Համբորդութիւնը և վախճանին հա-
մար ։ Անոնց մէջ քանի մը բարևագիրը

գտաւ Պարպատ կղզին վրայով որ Ն. մերիգա է, ուր մեծ առուտուր կըլլայ գերիներու. ինչպէս առաջուց պատմեցինք՝ որ Ն. փրիկէ ալ կըլլայ այս առուտուրը Սեերուն մէջ։

Ն. յս սև աղգերը թանձրամիտ ըլլալով գապանի վարք ունին. որոնց իշխանը կամ թագաւորը իրենց պէս վայրենի ըլլալուն համար ասանկ կըկառավարէ։ Երբոր եւրոպացիք հոն կերթան՝ ասոնք անասունի պէս կըծախեն մէկմէկ։ Իրենց հարազատ հայրը կըբերէ փուճ բանով կըփոխէ կամ կըծախէ որդին. եւրոպացիք ասոնց մէջ բաղմուն գնեն Ն. մերիգա կրտանին՝ ու ծանր աշխատանքի մէջ կըծառայեցընեն մեծ նեղութ։ Որովհետև այս գերիներուն վիճակը այսպէս է՝ կըկոչվին թըշուառ ողորմելի. շատը աւելի կըփափաքին մեռնելու քան թէ ողջ մնալու. ահա այս առուտուրը այն կղզին ալ շատ կըլլար, որ է անիրաւ վաճառականութիւն. յոյս կայ որ ժամանակով դադրի այս անօրէն մարդու առուտուրը։

Ասպէնսօն թղթերուն մէջ մէկ ծանուցման թուղթ մը գտաւ. ասով քիչ քիչ հասկըցաւ թէ նաւուն մէջ հարիւրաւոր գերիներ կային, որ այն կղզին պիտի տանէր։ Ն. յս բանս գերիին հասկըցընելէն ետև ըսաց. ով գիտէ թէ այս խեղճ գե-

ընները ինչպէս չնորհակալ եղան ալէկո-
ծութենն, որ նաւը ցամաք նստեցուց ու
իրենք ազատեցան։ Որվ գիտէ թէ ինչ-
պէս ազատեցան մակոյկին մէջ մտնելով.
արդեօք կրցա՞ն կղզին մը մօտենալ։ Կը-
նայ ըլլալ որ իրենց բռնաւոր տերը վրա-
նին չըլլալով հիմա հանգիստ են իրենց
խեղճութենն և ուրախ։

Դերին ալ հաւանելով հաստատեց՝ թէ
այդ կարծիքդ պէտք է որ ճշմարիտ ըլլայ։
Ուրեմն բարի է սիրելի՛ ընկեր՝ ըսաց Ա-
պենսօն տաքնալով. հիմա դուն կրնաս
այն բանը ինձի զուրցել, որ առաջ կը-
հարցընէիր թէ ի՞նչ օգուտ կրնայ բե-
րել փոթորիկն՝ որ մեր նաւակը քշեց տա-
րաւ։ Դերին ամընչնալով սկսաւ առաջը
նայիլ։

Որվ Ուրբաթ կանչեց Ապենսօն ա՜ծ-
պաշտութե՛ նախանձով մը. Ճանչցի՛ր ըս-
տեղծող թագաւորին ամենակարող ձեռ-
քը՝ն, որ այս դիպուածով յայտնի ըրաւ ի-
մաստուն կառավարութիւնը. մտմըտա՛ թէ
այս փոթորիկը մեզի որչափ բարիք ըրաւ.
ի՞նչ բաներ հանեցինք. մեյմը նայէ՛ թէ
որպիսի զանազան ուտելու և հագնելու
բաներ ունեցանք, որով երջանիկ և հան-
գիստ կեանք մը կրնանք վարել։ Ասոնք
ուր տեղէն պիտի ունենայինք թէ որ փո-
թորիկը եղած չըլլար։ Ճշմարիտ է որ

աղէկ բան չէ ուրիշին խեղճութիւնը երջանիկ ըլլալ. սակայն այս նաւին մէջ եղողներուն շատը՝ կրնայ ըլլալ որ առաջվանէն երջանիկ եղած ըլլան այս դիպուածովս։ Որովհետև այս ենթադրութիւնս ճշմարիտ կերևնայ, հիմա դուն ի՞նչ կըմտածես Ն. մենակարողին վրայ, որ աշխարհք կըկառավարէ։

Պատասխանեց գերին թէ ես կըմտածեմ՝ թէ Ն. մենակարողը պէտք է որ ունենայ անհուն իմաստութիւն, և անճառելի բարութիւն. իսկ ես եմ մէկ տխմար թանձրամիտ մը։ Ն. յս բանիս վրայ գերին աչքն ու թևերը երկինքը վերցուց՝ լալով թողութիւն խնդրեց սխալանացը համար, որ յիմարութիւն գործեր էր։ Ոսկենսօն զգուշութիւն կըպահեր թղթերն ու ոսկին և անդամանդը. ոչ՝ վի թէ որ եւրոպա երթայ, կարենայ անով հասկընալ և հատուցանել գանձը տիրոջն, որ նաւէն հաներ էր։ Վեց օր շարունակ օրը երկու իրեք անգամ նաւը կերթային, ու որչափ կարելի էր՝ մէջի բաները ցամաք կըբերէին։ Զարտեսակ բան կար մանտրըմունտը, որ մենք երեսը չենք նայիր, որովհետև անանկ բաներ չունենալը մեզի պակսութիւն չենք սեպեր։ Այց անոնց քով մեծ յարգունենալնուն՝ բոլորը չի մոռցան ժողովեցին։ Նաւուն մէջ շատ փղի ակռաներ

կային և շատ տակառ խահվէ։ Ասպէն-
սոն ձգեց հոն չառաւ. որ իրեն բանին
չէին ծառայեր. մանաւանդ առաջադրեր
էր՝ աւելորդ սովորութի մը չունենայ և ա-
ւելորդ բան չընէ, թէպէտև զբաղաձալի
բան եղած ըլլայ։ Սակայն շատ տախտակ-
ներ փրցուցին ցամաք բերին, որ իրենց
խիստ պիտանի և հարկաւոր էին։ Լաւ
հինգ թնդանօթ դուրս հանեցին և որ-
չափ երկաթ գտան, ու փրցուցին ամէնը
բերին։

Վերջապէս 18 անգամ Համբայ ընե-
լէն ետև և յաջողութիւն ունցած բաները
հանելէն ետև վերջի անգամն որ նաւուն
մէջն էին, դիտեցին որ փոթորիկ պիտի
ելլէ. պատրաստվեցան շուտով Համբայ
ելլելյուսալով թէ փոթորիկ չելլած ցա-
մաքը կրհասնին թիւ քաշելով։ Սակայն
այս յոյսը պարապ ելաւ. վերջն կէս Համ-
բան չի հասած յանկարծ սոսկալի հով մը
ելաւ հանդերձ կայծակով անձրևով և
որոտումով. անանկ ծովը խռովեց, որ
ալիքները լաստին վրայէն անցնելով բո-
լոր բաները տարին ծովը։

Այս միջոցիս մէջ երկուան ալ կայմին
փաթթվելեցան ուժով մնացին, որպէս զի
ալիքները վերենք չի տանին. թէպէտ եր-
բեմն երբեմն ալիքները կուգային գլխը-
ներէն բարձր վրաներէն կանցնէին։ Հուսկ

յետոյ տկար լաստը երկար ատեն չդիմա-
ցաւ սոսկալի ալիքներուն դէմ. կապերը
թուլցան որ բռներ էին գերաններըը, բո-
լորը ցրվեցան իրարմէ։

Ողորմելի՛ մարդիկ, տե՛ս ի՞նչ բան եկաւ
գլուխնին։ Գերին կըջանար որ լողալով
ցամաքն ելլէ. իսկ Օպէնսօն գերանի
մը վրայ փաթթըված, երբեմն ծովին ան-
դունդը կինջնիր, և երբեմն ալիքներուն
վրան կելլէր, խեղճ անանկ խռոված էր
որ ո՛չ բան կըտեսնէր և ո՛չ լըսէր։ Սաստ-
իկ ուժէն տկարացեր էր ողորմելին, ար-
դէն խելքն ալ կորուսեր էր. սոսկալի
աղաղակեց, ու մէկէն գինքը թաղված
գտաւ ահագին մեծ ալիքի մը մէջ, որ ի-
րեն գերանն ալ առաւ տարաւ։

Ինչ տվաւ որ հաւատարիմ գերին միշտ
քովէն չ՚ը հեռանար. որ եթէ ուզենար
շատոնց կըհասնիր ցամաքը։ Նրբոր տե-
սաւ թէ Օպէնսօն ծովին տակը կերթայ
անշարժ առանց լողալու, հասաւ վրան
բռնեց ձախ թևէն, կաշխատեր որ ջրին
տակը չերթայ. վերջապէս սաստիկ ուժ
տալով յաջողեցաւ, որ քանի մը բոպէէն
ետև ցամաքը բերաւ հանեց Օպէնսօնին
մարմինը՝ անշարժ ամենևին ողջուն նշան
մը չունենալով։

Գերին ցամաքին վրայ երկնցուց՝ որն
ու յուսահատեցաւ, սրտին կսկիծուն վը-

ման ընկաւ բարձր ձայնով կըպօռար. երբեմն կըշարժէր և երբեմն կըշփէր բոլոր մարմինը, ետքը բերանը բերնին դրաւ, որ իր շունչը անոր հաղորդելով շունչ կուտար իրեն։ Ինչ սոսկալի կսկիծի մէջ էր խեղճ գերին։ Երջապէս յանկարծ ողջութիւն նշան մը վրան տեսնելով սիրտ առաւ անպատմելի ուրախութիւն։ Յինչափ շարունակեց այն բաներն որ մինչև Օպէնսօնին զգայուն վրան եկաւ։ Այլիս աչքը բացաւ, ես ո՞ւր եմ հարցուց տկար և ողորմելի ձայնով մը։ Պատասխանեց գերին լալով թէ սիրելի տէր իմ, ահա իմ գիրկս ես։ Յն տեղը անանկ խեղճ պատկերք մը ձևացաւ՝ որ կըկտրտէր մարդուն սիրտը։ Օպէնսօն շնորհակալ ըլլալով գերիին՝ դուն իմ ազատիչս ես ըսաւ։ Ինկ գերին տեսաւ որ տէրն ողջընցաւ, ուրախութէն խելքը գլխէն գընաց։

ԻԱ. ԳԼԽԱԾ.

Օպէնսօն ահա այս անգամ ալ ազատեցաւ մեռնելէն։ Այն գիշերը գերին տեղ չինեց տաղաւարին տակը տարաւ պառկեցուց զինքը, բոլոր գիշերը քնացաւ մինչև 'ի լոյս։ Յրթնցաւ որ ուժ առեր է. շնորհակալ եղաւ ՈՒՅ, որ զինքը

պահեց կենդանի, և առողջ։ Իսկ փոթորիկը բոլոր գիշերը տևեց։ Յովհաննոն անհամբերութիւն կընայեր որ աղեկ մը լուսնայ ու տեսնէ թէ ի՞նչ եղաւ նաւը։ Երբեմն որ կելլեր նայեցաւ Յովհաննոն՝ տրտմութիւն տեսաւ որ նաւն աներևոյթ եղեր է. տախտակները ասդին անդին ցրված են ծովուն քովերը, հասկրցաւ որ աղեկոծուիր խորտակեր է նաւը։ Երբ որ տեսաւ՝ մխիթարվելով գովեց ըրած ջանքն, որ առանց ծուլութեան այնչափ բաներն ապատեր էր։

Երանի՜ այն մարդուն որ իմաստութիւն և խոհեմութիւն կըվարէ իր գնացքը և ամէն դիպուածի մէջ կրնայ օգուտ մը հանել. ինչպէս որ Յովհաննոն այս դիպուածին մէջ իրեն ընկածն ըրաւ խոհեմութիւն առանց պակասութեան։ Այս բանը խրատ ըլլայ տրտնջողներուն, որ տժգոհութեամբ իրենց նեղութիւնը աւելի կըդառնացընեն։

Յովհաննոն ու գերին աշխատեցան բոլոր նաւին տախտակները ժողվեցին ծովուն քով դիզեցին. գիտնալով թէ ատենով ամէն մէկը կրնան իրենց ծառայել։ Այս գործքը լմընցնելէն ետև կարգի դրին իրենց բանն որ հետևաբար պիտի ընէին։ Լաս և առաջ կուզէին որ հանած բաները տանին բնակարանին մէջ,

բայց իրենց ինասակար երևցաւ այս բանս. որովհետև ամէն մէկ անգամ երթալու ատենը՝ մնացած բաները ձգէին հեռանային պիտի անկէ երկար ատեն, կրնար ըլլալ՝ որ թշնամիները գային տիրէին այն զէնքերուն. ուստի Լոպէնսօն կարգաւորեց՝ որ մէկը առտուանց սպասէ մէկալը բաները կրէ, ընկերն ալ իրիկվան տանի այս կերպով։ Ընդանօթը լեցուց պատրաստելով ծովին քով դրաւ շտկեց դէպ՝ի ծովը։ Ոտքն ալ կրակ վառեցին. ով որ պիտի հոն սպասէր, պէտք էր որ զգուշութիւն նայի կրակը. պատրոյգն ալ բռընկցուցին թնդանօթին քով դրին, ոնգ զի պատրաստ գտնի նետելու՝ երբոր հարկը պահանջէ, կամ թէ երբոր մէկը հոն մնատենայ։ Լոպէնսօն առջի ճամբորդութիւնն ընելով սկսաւ բաները կրել. և ոնգ զի հագած աղէկ լաթերուն մնաս մը չի գայ՝ հանեց զանոնք, նաւավարի լաթ հագաւ. և փոխանակ հին զէնքերուն՝ մէջքը զարկաւ մեծ դանակ մը, և երկու լեցուցած ատրճանակ (փիշտով)։

Նախ և առաջ տարաւ իրեն սայլովը տակառ մը վառօդ և ուրիշ պիտանի բաներն, որ կրվախնար խոնաւուէ, ջրլլայ թէ հոն մնալով թրջին։ Յետոյ շու�՝ ոչ երբեք իրմէն կը զատվեր, սկսաւ ընկերութիւն ընելով հետն երթալ։ Լոպէնսօն

ալ կապեց շունը սայլին առջին՝ որ քաշե-
լով կօգներ առաջ տանելու ։

Որովհետև Եւրոպայի շները կրթած
են այսպիսի բաներ ընելու, այս շունն ալ
մեկէն սկսաւ քաշել անանկ՝ որ որպես թէ
բուն քաշող կենդանի է ։ Եւ կապոց
մը բան ալ բերանը բռներ կըտաներ, ը-
որում առաջուց սորված էր ։

Ի դարձին Յոսէնսօն բոլոր լամանե-
րը առաւ հետը բերաւ որ վրանին բան
բեռցընէ ։ Սոնք 7 հատ էին, որ յի-
սուսական հօխայ բեռ կրնային բերել,
զարմանալի բան էր, որ ամէն անգամ
այնչափ ծանրուն կըբերէին առանց հոգ-
նելու ։

Այսչափ բանը բնակարանին մէջ չի
աղմելով պէտք եղաւ որ քովի համբա-
ռանոցն ալ լեցընեն, և բակին մէջ ալ
զետեղեցին ։ Ութ օրուան մէջ բոլորը
կրեցին բաց ի տախտակներէն, որ ծած-
կի տակ դրին և խիտ մացառներուն մէջ
շարեցին ։ Սակ այծը դրին լամաներուն
գոմին մէջ, որ բնական ընտանութիւն
ունենալով անոնց հետ խիստ աղէկ կեր-
թար ։

Որչափ մեծ զբաղմունք ունեցան հիւ-
մա, որ առաջ չունէին. հապա թէ կըը-
նային որոշել թէ նախ ո՞ր բանն ընեն, և
ո՞ր բանը շտկեն ։ Սակայն Յոսէնսօն կարը-

գաւոր բան ընելու սորված ըլլալով, շուտ մը որոշեց ամէնէն աւելի հարկաւոր բաներն ընել. և քիչ հարկաւորները թողը ձգեց։ Ամէն բաներէն հարկաւոր իրեն կերևնար, որ մէկ տեղ մը շինէ, որ դուրս մնացած բաները ծածկի տակ առնէ, ու ապահով պահէ։ Ուստի առաջ կամեցաւ հիւանդանոց ընել և տախտակները շտկել. թէպէտ երկուքն ալ արուեստին տեղեակ չէին։

Բայց ինչ դժուարութիւն կրնար ըլլար Աղենսոնին պէս Ճարտարամիտ մարդուն, որ ամէն հարկաւոր բաները ձեռքէն կուգար։ Մ՚ըչափ մեծ աշխատանք և դժուար բան ըլլար՝ որ տեղեկութիւն ալ չունենար այն բանին, իրեն առջին խաղկընելիք էին. որ առանց օգնութիւն գեղեցիկ յաջողութիւն կը հանէր։ Զարմանալի արագութիւն փայտերը կարեց, գերաններն ու տախտակները տաշեց. պատերը շինեց շտկեց վերայի ծածկը շինեց նախ տախտակով, յետոյ քօքոյի տերևով ծածկեց։ Ամապէտի շինք մը շինեց լմընցուց, որ գեղի տներէն աղբար եղաւ։ Աղենսոն նաւին պատուհանները փրցուցեր էր, որոնք յարմարցուց դրաւ իր շինքին. իսկ ապակի (Ճամերը) մեծապէս զարմացուցին Աղենսոնին միտքը, թէ ինչպէս կըլլայ, ո՞ր ոչ հետև բնաւ չէր տեսած. բայց փորձե-

լով հասկրցաւ թէ ոչչափ դեղեցիկ և պիտուական բան էին։

Այս գործքս կատարելէն ետև՝ բանեբը դրաւ մէջը կարգաւորեց. մտածեց որ իր առաջեան շինած բերդին Ճամբայ մը շինէ, որ առանց անոր ոչինչ էր. ուստի միտքը դրաւ որ դուռ շինէ, ու շարժական կամուրջ մը դնէ, որովհետև ամէն բան առատապէս ունէր այս գործքիս ծառայելու համար, գամ, երկաթ, շղթայ, կղպաք, և՛ն. ասոր համար շուտով այս գործքիս ալ ձեռք զարկաւ։

Ուստի երկուքը միատեղ կաշխատէին դուռն ու կամուրջը շինելու. ետև լուսամուտ շինեցին պատին և պատնէշին դրանը համեմատ։ Անոնք կարգի դնելէն ետև կանգնեցին շարժական կամուրջը դրան դիմացը, վրան ալ ծածկոց շինեցին։ Այսպէս կատարելէն ետև պատնէշին վրան թնդանօթներ շարեցին. երկուքը ալ կողմը շտկեցին, երկուքը ձախ կողմը. երկուքն ալ բերդը պաշտպանելու համար շտկեցին։ Անկէ ետև բոլորովին ազատեցան վախէ 'ի կողմանէ վայրենի մարդկանց. ուր մինակ մէկ դուռ մը կար ելլելու մտնելու այսպիսի հանգստուք։

Հնձելու ժամանակն ալ եկաւ, Ռոպէնսոն սուր մանգաղ մը առաւ որ նաւէն հաներ էր, սկսաւ կտրել մայիզը, և ժողը-

վեց, նաև գեմնիինձորն ալ հանեց խիստ մեծ դիւրութիւն նոր գործիքներովը. շատ զլուարձուն այս բաներս լմընցուց առանց դժուարութեան։ Յետոյ շինեց երկու գաւազան մայիզը ծեծելու համար, որ զատեց յարդն ու երկու ամանի մէջ լեցուց պահեց։

Մեպէտ Մօպէնսօն նաւէն շատ պակսիմաթ հաներ էր, բայց իրեն տարեկան հացը պաարաստեց, ինչպէս որ հարկաւոր էր. ուստի ուզեց փորձելով հաց շինէ. և որովհետև նաւէն երկանքի քար էր հաներ, մայիզը աղաց ալիւր ըրաւ մաղեց ու խմոր շինեց, փուռը դրաւ եփեց հաց ըրաւ խիստ պատուական։ Յետոյ ոչոլրակ մը շինեց մէջը դրաւ պահեց։

Դու այսպէս երկու տեսակ հաց ուներ. մէկն էր հաճարի ալիւրէ, որ նաւէն աղատեր էր, մէկալն ալ էր մայիզի ալիւրէ, որ է մնրացարէնի նման, բայց առջինը աւելի համով էր։ Այս բաներն ըրաւ պատրաստեց անձրևները չըսկըսած։ Մօպէնսօն միտքը դրաւ որ հաճար ալ ցանէ, որ իրեն աւելի ախորժելի էր. ուստի գերիին օգնականութիւնը շատ դաշտեր հաճար (չաւտար) ցանեց մայիզին տեղը՝ մինչև հացի կարօտ չի մնայ. և հոն տարին երկու անգամ առատապէս կը հասցըներ։

Այս բաներուն վրայ նայելով Մօպէն-

սոն ուզեց որ երկրագործուն ամէն գործիքներն ունենայ, և այս գեղեցիկ արուեստս հոն լաւ ծաղկեցընէ։ Որովհետև ամէն բան ունէր, բայց աղէկ բրիչ չունէր. գերին կարծը փայտէ շիներ էր, բայց այն հողին աղէկ բրիչ պէտք էր. ասնոր համար սկսաւ դարբինի խանութ մը շինել, որ ուզած գործիքները կարենայ շինել։

Ընձրևներն որ սկսան՝ Լոպէնսոն ծովէն հանած տախտակներով դարբինի խանութը կատարեց, ու այն թաց եղանակին մէջ բրիչը և ուրիշ պէտք եղած բաները շինեց. նաև իր ուժին համեմատ սայլ մը շինեց, որ բաները բառնար կըտանէր հեռու տեղեր ալ կաշխատեր։ Որովհետև հոն ձի կով չի կար, անանկ շինեց սայլն որ երկուսին ուժովը դիւրին կըշարժէր, և ուզածներուն պէս կըգործածէին։

Լոպէնսոն անպատմելի կուրախանար այս յաջողուեց վրայ. մանաւանդ գտումներուն, որ ուզած բաները կըհնարէր. ինչպէս հին ատենը նոր բաներ որ կըհնարէին՝ մեծ իմաստուն կըսեպվէին, որոնք Լոպէնսոնին շինած բաներէն պարզ էին. մանաւանդ շինած սայլը անանկ պիտուական բան էր, որ հին ատենն ըլլար, մեծ բան էր, մինչև գտնողներուն ուծային պատիւ կուտային. զոր օրինակ կառքը

(արապան) փիւնիկեցոց մէջէն Պաղան անունով մէկը գտաւ . այնչափ մեծ բան համարեցան որ երկնային էակ ըսին իրեն և որդի երկնից ։

Հեպէտ լամանները աւելի բեռ կրելու յարմար էին քան թէ սայլ քաշելու , սակայն Յոպէնսօն անանկ կրթեց որ ամէն բանի կրծառայէին յաջող , ինչպէս հոս եղն ու ձին կաշխատին ։

Ընձրևն որ կտրեցաւ ցանեցին հաճար , գարի , ոլոռն , որ 5 ամիսէն ետև տասնապատիկ աւելի պտղաբերեցին , որ իրենց շատ էր . բայց խոհեմութիւն մտածելով աւելի կրպահէր , որ չըլլայ թէ դիպուած մը պատահի ու չըլլայ ։ Ուստի որոշեց որ համեստանոց մը շինէ , որ վեց ամիսէ վեց ամիս հնտեղէն կըլեցընէր , ու կըպարպէր ։ Յոպէնսօն ամէն կերպ աշխատանացը յաղթեց , և բոլոր ուզած բաներն ըրաւ ։

Խակ այծը յղի ըլլալով երկու ձագ ծընաւ . շունը պահապանի պէս գիշերը զիրենք կընայէր . Գոլ թուռթակը իրենց հետ ժուռ գալով կըխաղար ։ Խակ լամանները առաջվանէն շատ պիտուական եղան . մէն զի կաթէն կըշինէին մածուն , էղ , և պանիր . դաշտին մէջ ալ միշտ կաշխատցընէին ։

Յոպէնսօնին երջանիկ կեանքը ուրիշ

պակսուի մը չունէր, միայն կըփափաքէր որ ծնօղքը տեսնէ, և մէկ քանի ընկեր ալ ունենայ. որովհետև երկու հոգի ըլլալով, եթէ մէկը մեռնէր, մէկալը ամէն մարդկային ընկերութէն զուրկ ըլլալով խիստ ոգորմելի կըլլար։ Սակայն Ռօպէնսօն զգուշանալով մեղք կըսեպէր ուրախութէը վրայ դառնուի լեցընել այսպէսի մտածմունքներով։ Այլ այսպէս կըսէր ինքնիրեն. այն ստեղծող տէրն որ մինչև հիմա վրս հոգաց իր անհուն բարութէը, ասկէ ետքն ալ կրնայ հոգալ։

Սանկ խորհելով բոլոր օրերը ուրախութէ գոհ կանցընէր առանց այլայլուե։ Մեծապէս կըզբաղեցնար ներսէն հոգւոյն հանգստութէը վրայ. դուրսէն ալ կուրախանար, որ ոչ պակսուի մը, և ոչ տեղէ մը վախ ունէր. կատարեալ երջանիկ էր ոյ ուզածին պէս։

Ի. Օ. Դիպուած.

Ռօպէնսօն այսպէս զբաղելով հանած բաներուն հետ՝ ամէն օր նոր նոր գործքեր կըհնարէր և զանազան բաներ կըշինէր այն գործիքներով։ Ուստի ասանկ փորձեր ընելով գրեթէ ամէն արուեստի բան շինեց, և ամէն արուեստաւորի կատարելուի ունէր. զոր օրինակ հիւսնուի կը-

ներ , դարբնութիւն , դերձակութիւն (թէրզութիւն) , կօշկակարութիւն , հացագործութիւն , պարտիզպանութիւն , ձկնորսութիւն , որսորդութիւն , բրուտութիւն , և՝ն ։

Ընանկ յաջող և ճարպկութիւն այս գործքերս կընէր , որ քիչ ժամանակին մէջ շատ կերպ կերպ բաներ հնարեց պիտուական և գեղեցիկ , որ եւրոպայի մէջ վարպետ մարդիկ միայն կրնային ընել ։ Ու այսպէս այս մարդիկ շարունակ աշխատելով թէ իրենց մարմիններին առաւելապէս յարմար եղան գործելու , և թէ հոգիներին և խելքերնին աւելի ուշիմութիւն առատացան , և օգտակար գործքերով օրէ օր կատարելութիւն հասան ։ Ասկէ յայտ է թէ ամէն մարդ ունի միակերպ յարմարութիւն մը արուեստի . սակայն հետզհետէ կրթելովը բան կըսորվի , ու հարկաւ առաքինի քաջ և խելացի կըլլայ ։

Այ՝ եց ամիս շարունակ կըւարձալի գործքեր շինելով կըաղեցաւ , բայց դերին ամենևին չի համարձակեցաւ ըսելու թէ Էրբ պիտի երթանք իմ հայրենիքս ։ Սակայն շատ անգամ երբոր ձեռքի գործքը կըկատարեր՝ կելլեր լեռանը վրան չորս դին կըդիտեր և ծնած կղզին կողմը նայելով սրտանց կըհառաչեր , ու կուլար իր ողբալի վիճակին վրան , որ հօրմէն կատվեր էր , ու կրնար ըլլալ , որ ա՛լ չի տեսնէ ։

Իսկ Աղոպէնսոն իր կողմանէ ամենևին բան չէր խօսեր, որովհետև ատեն չունէր անոր փափաքը լեցընելու։ Աստի համբերեց մինչև որ այս պէտք ըլլալու բաները բոլոր կատարեցան, որ նոր վիճակին և նոր եղանակ կենացը համար աշխատելու շինելու էր։

Երբ պէտք եղած օգտակար բաները կատարելէն ետև՝ Աղոպէնսոն առաջարկեց գերիին որ ուրիշ նաւ մը շինենք, ու երթանք հայրդ փնտրենք։ Այս բանս որ լսեց գերին այնչափ ուրախացաւ, և մեծապէս պարտաւոր ճանչցաւ զինքը Աղոպէնսոնին։ Մինչև առտու մէկէն նաւին շինելն սկսաւ. որ կտրուկ կացիններուն և ուրիշ գործիքներուն օգնութիւնը քիչ ժամանակին մէջ թէ՛ աղէկ և թէ դիւրին կերպով շինվեցաւ նաւը՝ առաջվանէն շատ աղէկ։

Մէկ առտու մը Աղոպէնսոն գործքի հետ ըլլալով խրկեց գերին ծովուն քով, որ կրնայ բերել. վո՞ զի երկար ատեն էր որ չէր կերած։ Բիչ մը անցաւ նայիս վազելով դարձաւ եկաւ խռոված՝ շունչը հատած վախէն և վազելէն. մինչ զի հազիւ կրցաւ թոթովելով զուրցել, թէ ահա՛ եկան. ահա՛ հոս են։ Աղոպէնսոն զարհուրելով հարցուց մէկէն թէ ի՞նչ կրնաս։ Պատասխանեց գերին, թէ ո՞վ տէր իմ,

ոչ տեր իմ, մէկ, երկուք, երեք, վեց քանոդ նաւ էն. այնչափ սարսափած էր որ մինչև 'ի վեցը չի կրցաւ համբել։ Ասպէնսօն վաղեց քնակարանին վրան եւաւ տեսաւ որ գերին չէ խաբված. ահա՛ վեց նաւ լեցուն լեռան մարդիկ կուգան. և մօտեցեր էին ցամաքին։ Շուտով վար ինջաւ, ու սիրտ տվաւ գերին որ կըդողար. և հարցուց, թէ որ պատահի թշնամիները վրանիս գան՝ ամէն ուժդ թափելով հաւատարմութիւն պիտի ծեծկըվի՞ս մինչև 'ի մահ։

Պատասխանեց գերին թէ արիւնովս և կեանքովս կեցեր եմ, և անկէ ետև ժամանակ անցնելով կամաց կամաց վախն անցաւ սիրտ առաւ, որ ծեծկըվի։ Այսպէս աղէկ ըսաց Ասպէնսօն, հիմա պէտք է ջանալ որ արգիլենք վայրենիներուն գարշելի տօնախմբութիւնը, և չի թողունք կատարելու։ Այս քեզ կըհասկըցնեմ կըսէր ընելիքս երթալու ատենս, երթանք շուտով ատենը չէ խօսելու, պէտք է ջանանք։ Ոյն կէտին մէկ թնդանօթը բերդին վրայէն վար առին դրին սայլին վրան, ու անիւները ամրցուցին, վեց հրացան լեցուցին և չորս ատրճանակ, և երկու սուսեր. ասոնց կէսը մէկն առաւ, կէսն ալ մէկալն առաւ, մէջքը խօթեց. նմանապէս հրացաններն ալ կռնակնին առին,

բաւական վառօդ և գնտակ առին հետերնին, քաշեցին թնդանօթը հետերնին կը-տանէին ցամաքէն. և ամ պատերազմա-կան պատրաստութիւն դաշտին Ճամբայէն կերթային։ Լրբոր շինած կամուրջէն անցան քիչ մը հանդիստ առին։ Գերին մտաւ բերդին մէջն ու կամուրջը վերցուց, դուռն ալ ամրցուց։ Լտքը չուանէ սան-դուղով ելաւ եկաւ տիրոջը քով։ Ոսպէնսօն տեսնելով թէ այս զգուշութիւնը խիստ հարկաւոր էր զանց չըրաւ. վե՞ զի եթէ պատերազմը չի յաջողէր կասկած ունէր որ չըլլայ թէ թշնամիները գային տիրէին բերդին։

Այս միջոցս Ոսպէնսօն կըպատմէր գե-րիին թէ ինչ պիտի ընէր. կըսէր թէ լե-ռանը ետևէն պտըտինք խիտ անտառնե-րուն մէջէն երթանք, որ չի տեսնեն թըշ-նամիները. ետքը մտնենք կարգաւ ծա-ռերուն մէջ, որոնք գրեթէ մինչև ծովին քով կըմօտենային. և այսպէս կըմօտե-նանք վայրենի մարդկանց առանց երևնա-լու. երբոր մօտ կըհասնինք մէկէն թնդա-նօթը կընետենք գլխըներին վեր. բար-բարոսները վախերնուն կըձգեն իրենց որսն ու կըփախչին նաւերուն մէջ։ Գե-րին խիստ հաւնեցաւ այս խորհուրդիս. Ոսպէնսօն երթալով այսպէս կըսէր, թէ մեզի բաւական է որ ապատենք խեղճ գե-

ինները՝ որ պիտի ուտեն, առանց կաթ մը արիւն թափելու։

Սակայն եթէ այս ըսածիս հակառակն ըլլայ, անատենը սիրելի պէտք է մեր ջանքը մեր քաջութիւնը յայտնենք կտրիճութիւնը՝ առանց վախնալու. ոչ զի եթէ վտանգ հանդիպի՝ դէմ դնենք ծեծկըվինք բարի դիտաւորութիւն։ Իսկ ամենագէտն ամենայն երբեմն կըտեսնէ թէ վտանգի մէջ պիտի ինինք, կըպահէ մեր կեանքը եթէ օգտակար է։ Եւ այսպէս եղիցի կամք ամենայնեալ։ Այս խօսքերս խօսելէն ետև իրար գրկեցին, և իրարու երդում ըրին որ մինչև ետքի կաթիլը արեան թափեն և իրարու օգնեն։ Երբոր հասան առանց ձայնի մօտ տեղը, քիչ մը հանգիստ առին. Ալեքսանդրոս կամաց մը ըսաց գերիին որ գետնին վրայէն սողալով երթայ մինչև ծառին ետին, որ խիստ մօտ էր անոնց. ոչ զի աղէկ մը դիտէ հասկընայ թէ թըշնամիները ի՞նչ կընեն։ Ինչ ինչպէս պէտք էր դիտեց նայեցաւ որ վայրենիները կրակին չորս դին շարված էին. ու գերիի մը ոսկորները կըկրծէին, որ մորթեր միսը կերեր էին։ Եւ քիչ մը հեռուն մէկ կապած մարդմ՝ ալ գետինն ընկած էր, որ էր մօրուքաւոր և Ճերմակ, ան ալ պիտի մորթէին ուտէին։

Ալեքսանդրոս երբոր այս բաները լսեց գե-

ըիէն սիրտը կտրրտեցաւ, մանաւանդ լսեց որ Ձերմակ էր կապած մարդը՝ շուտ մը գիտակը հանեց, որ նաւէն հաներ էր. գընաց ծառին ետին դիտեց տեսաւ՝ որ Ալիբաթ գերիին ըսածը իրաւ է. և 50 մարդակեր կային որ կրակին չորս դին նստած էին, և որոշ տեսաւ որ կապած գերին էր Եւրոպացի։ Ա.յնչափ սիրտը շարժեցաւ որ չէր կրնար կինքը բռնել, արիւնը կեփէր, թէ որ սրտին տաքութիւնը հետևէր՝ մէկէն առանց մտածելու պիտի երթար մարդակերներուն հետ զարնըվէր, ու արիւնը թափէր. բայց գիտէր որ կոյր կրնց շարժմունքը մտաց դէմ ըլլալով՝ միշտ ինաս կրբերէ և ետքը չար կըլլայ անխոհեմութիւն։

Որովհետև եղած տեղերնին խիստ մօտ էր և մորմենին կրգոցէր զանոնք՝ որուն ետին մտան, Թնդանօթն ալ բերին հոն դրին, և արևեստով շակեցին, որ ռումբը գլխընեերուն վրայէն անցնի մարդակերներուն, և սորվեցուց գերիին ալ թէ ի՞նչ պիտի ընէ։ Երկու հրացանը գետինը դրաւ մէկը ձեռքն առաւ, գերին ալ այնպէս ըրաւ. ետքը Թնդանօթին մօտեցաւ ձեռքը կրակ, տվաւ կրակն ու ետ փախաւ։ Երբոր Թնդանօթը բարձրէն նետվեցաւ՝ մարդակերները բոլոր միատեղ գետնին վրայ բռվեցան ընկան, ոմ

թէ մէկէն մեռած ըլլային։ Ոսպէնսօն ու գէրին՝ որ կըդիտէին եղած բանէրը, չէյտելով թէ ինչ պիտի ըլլայ, իրենց կողմանէ պատրաստվէցան որ պատերազմին, թէ որ պէտք ըլլայ։ Այն կէտին մէջ մարդակերներուն խելքը գլուխնին էկաւ վէր ցաթկէցին, որոնք որ աւելի վախկոտ էին իրենց նաւերը վազէցին փախան. և որոնք որ կտրիճ էին զէնքերնին ձեռք առին որ կըռվին։

Բ. սոնք միայն թնդանօթին ձայնէն ասանկ զարհուրեցան, առանց տեսնելու կրակն ու ռումբը. բայց առջի վախը չի մնաց իրենց քով, աչքերնին չորս դին տնկեր կընայէին, ամենևին վախու բան մը չի տեսան. ուստի ապահովուբ պատրաստվեցան կըռվելու. նաև փախչողներն ալ մէկէն ետ դարձան, ու սկսան զարհուրելի կերպով ռնալու ձայներ հանել. և պատերազմի պար խաղալով զէնքերն ալ ձեռքերնին առած կատաղուբ, կըշարժէին զանազան ձևերով։

Ոսպէնսօն անանկ կեցաւ սպասեց, մինչև որ խաղը լմընցաւ. բայց զարմանալով դիտեց, որ մարդակերներուն խումբը ոչ միայն առջի եղած տեղերնին էկան, այլև իրենցմէ երկու հոգի վազեցին որ Եւրոպայի գէրին մոտենան, ու զըւարճանան. բայց անկարելի եղաւ իրենց այս

քանս ընելու. վասն զի Լուսիկնսան նայեցաւ գերիին ու ցած ձայնով ըսաց, դուն աջ կողմէն, ես ալ ձախ կողմէն կոխենք ոյ կարողուքը. երկուքը միատեղ հրացանին նետելնուն պէս նայեցան որ ձախ կողմէն 5 հոգի ընկան, և աջ կողմէն 3 հոգի միայն ընկան. բայց աջ կողմինները մեռած էին, ձախ կողմինները վիրաւորած էին. մնացածներն անանկ սարսափեցան, որ փախչելէն'ի զատ՝ուրիշ բանի չի նայեցան։ Լուստի ոմանք մէկ դի փախան, ոմանք ալ մէկալ դի, ամէնքը սոսկալի ձայներ հանելով հալածեցան։ Լուսիկնսան ծառերուն մէջէն դուրս ելաւ թուրը ձեռքը. ոտ զի երթայ շուտով ազատէ եւրոպացի կապած գերին. բայց զարմանալով տեսաւ՝ որ քանի մը հոգի թշնամիներէն յանկարծ միացան, ու կամեցան նորէն դէմ դնել. ուստի պէտք եղաւ որ Լուսիկնսան ու Լրբաթ գերին հրացանը նետեն անոնց վրայ։ Այիս 2 հոգի ընկան անոնցմէ և շատը վիրաւորած փախան զարհուրելի աղաղակով. այս միջոցիս մէջ 3 հոգի ալ ընկան փախչողներէն, բայց ողջ էին։

Լուսիկնսան ձեռքի հրացանը ձգեց ու լեցուն հրացանը առաւ. և գերիին ըսաց որ հիմա դուրս ելլենք երևնանք թշնամիներուն. երկուքն ալ յայտնի դուրս ելան,

Ալոպէնսօն վաղէց կապած մարդուն վրայ ազատելու համար՝ որ գոհ պիտի ըլլար։ Երբոր մօտեցաւ անոր՝ նայեցաւ անդին որ ոմանք փախչողներէն առաւել կատաղի ըլլալով՝ երբոր տեսան իրենց թշնամիները կեցան հոն մէկ տեղէցան որ ծեծկըվին. ուստի Ալոպէնսօն վանոնք նորէն ցցուց Ուրբաթին, և ըսաց որ առաջ երթայ նետէ հրացանը. անալ նետեց մէկ հոգի մը ձգեց։

Ընատենը Ալոպէնսօն դանակը հանեց կարտեց չուաններն, որ կապեր էին խեղճ դերիին ձեռքերն ու ոտքերը։ Հարցուց իրեն ինկիլիզերէն և նեմցէյերէն թէ դուն ո՞վ ես։ Ան խեղճ ողորմելին ալ պատասխան տվաւ լատիներէն, թէ Սպանէօլ Քրիսթոնէայ է։ Սակայն վերջի աստիճանի տկար ըլլալով այլ չի կրցաւ խօսելու։ Ալոպէնսօն առաջուց հոգալով հետը լաւ գինի առեր էր, որ եթէ յանկարծ շարնըվէր՝ կրնար իրեն պէտք ըլլար։ Ան գինիէն խմցուց Սպանէօլին, որ շուտմը ուժ առաւ։

Երբոր մարդը ալէկ մը զօրացաւ՝ Ալոպէնսօն տվաւ իրեն սուր և զէնք, որ իրեն օգնէ եթէ նորէն ծեծկըվին. իսկ Ուրբաթին ալ պատուիրեց, որ հրացանները լեցնէ։ Սպանէօլը զէնքերը ձեռքն առածին պէս կատղած գազան դարձաւ,

ու մէկէն վազեց Թշնամիներուն վրան յանկար, ծերկու հոգի զարկաւ մեռցուց։ Ուրբաթն ալ հրացանին մէկն առաւ վազեց. երկուքը միատեղ գնացին Թշնամիներուն վրան, բայց իրարմէ զատ։ Սակայն սպանեօլը կտրիճ մարդակերի մը վրայ հասաւ կըծեծկըվէր, Ուրբաթն ալ մէկալ կողմը հրացանը պարպելէն ետև չարաչար տաքցած սուրը ձեռքը կըծեծկըվէր քանի մը հոգիի հետ, որոնցմէ մէկ քանին զարնըվեցան, ոմանք ալ ծովը նետվեցան, որ լոզալով քանօդին մէջ մնանէն փախչին. մնացածն ալ անտառներուն մէջ պահվեցան։

Իսկ սպանեօլը անանկ տաքցած կըծեծկըվէր, որ այնչափ տկարուքը մարդակերին հետ սաստիկ կռվեցաւ՝ երկու անգամ արովը անոր գլուխը վիրաւորեց չարաչար։ Բայց այս վերջը անանկ կատղեցուց Թըշնամին՝ որ իրեն քարէ շինած ծանր դանակովը վազեց՝ սպանեօլին վրայ ընկաւ նեղը ձգեց. Թէպէտ անալ սաստիկ դէմ դնելով շատ զինքը պաշտպանեց։ Բայց վերջապէս այս վայրենի կատղած մարդուն հետ գլուխ չի կրցաւ ելլելու, մինչև զինքը տակն առաւ ու սուրը ձեռքէն առաւ որ պիտի մեռցրնէր. յանկարծ Իսպէնսօն տեսաւ, ու նոյն կէտին պարպեց հրացանը լեռան մարդուն գլուխը զարկաւ խորտակեց,

Սպանեալը վերը ցաթկածին պէս առաւ
լեցած հրացանն՝ ու նոյն կատաղութիւն
Ուրբաթին հետ միատեղ վայրենիներուն
ետևէն ընկաւ, որոնք անտառը փախած
էին. որովհետև շատը ջարդուած էին՝ քի-
չը մնացեր էր։ Ռոպէնսոն ուզեց որ մի-
կէն չերթայ պատերազմը, կենայ ու դի-
տէ փախչողներուն շարժմունքը, որոնք
քանոներուն մէջ լեցվեցան փախան։
Նատենը եկան հոն հասան երկու ծեծ-
կըվողները, և պատմեցին Ռոպէնսոնին
թէ անտառը փախչողներուն մէկը չի մնաց
բոլորը ջարդեցինք։

Երկուքը միատեղ ուզեցին որ շուտ մը
մնացած քանոնին մէջ մտնեն ու նաւով
փախչողներուն ետևէն հասնին մեռցը-
նեն, որ առագաստը բացեր հեռացեր
էին. բայց Ռոպէնսոն զանոնք արգելեց։
Սիրելի՛ք ըսաց, բաւական է այսչափս.
կարծեմ չափէն աւելի արիւն թափեցինք.
թողուցէ՛ք որ ողջ մնան, որոնք ասկէ ետ-
քը չեն կրնար մեզ վնաս մը բերել։

Պատասխանեց Ուրբաթ գերին. թէ որ
մենք ազատ թողունք զանոնք, նորէն կը-
դառնան սաստիկ ուժով մեզի հետ կը-
զարնըվին։ Երկնեց Ռոպէնսոն բարեկա-
մաբար կռնակը ծեծելով, և սպանեալը
անոր ցցընելով թէ հիմա առտըվընէ ա-
ւելի չէ՞ մեր զօրութիւնը։ Ո՞ենք հիմա կա-

ըօղ ենք դէմ դնել մեր տկար թշնամի-
ներուն մեծ խումբին. սակայն եթէ կա-
մենանք, կրնանք սպասել այս փախչող
թշնամիներուն. երբեմն պէտք է դիտել,
որ յանկարծ չիգան։

Ը.ըդարև ահա Պօպէնսօնին իմաստուն
և մարդասէր գործքը, վ՞ը զի դիտէր որ
հարկ չեղած տեղը մարդ մեռցընելն է
անգթուի. թէպէտև տարակոյս չունէր
որ այն թշնամիները թէ որ կարողուի ու-
նենային՝ զիրենք չարաչար կըմեռցընէին.
և անանկ մոլորուած մէջ էին որ մեծ բարե-
գործութի՛ կըսեպէին մեռցընել ուտել
իրենց թշնամիները։ Որովհետև մանկու-
թե՛ ատենէն ամենևին կրթուի՛ չունին,
և խրատ մը չեն առած այսպիսի բաներու
համար. նաև իրենց մեծերը հայրն ու
մայրը միշտ կըսորվեցընեն իրենց, թէ
շատ աղէկ հոգևոր բան է մեռցընել ու-
տել թշնամիները։

Ուրեմն տարակոյս կրմնա՞յ ասանկ տը-
ղուն վրան. հարկաւորապէս որչափ հա-
սակը աճի, այս կրթութի՛ն ալ հետը կա-
ճի, որ մարդ ուտելով տօնախմբուի կա-
տարե։ Ը.հա այս պատճառաւ այս չար
մարդակեր մարդիկ այսպիսի մոլորութե՛
մէջ մնացեր են։ Ո՞նորհակալ ըլլանք ա՛յ,
որ մեզ անոնց մէջ՝ չէ ստեղծեր. նաև
տվեր է մեզ այսպիսի բարեպաշտ ծնողք,

որոնք անանկ կրթեր են մեզ որ կրնանք
չարն ու բարին Ճանչնալ, արդարուին ու
անիրաւութիւնը որոշել։

Իսկ առաքինի և մարդասէր Ոսպէնսոն
պատերազմ եղած տեղը ժուռ դալով
կուլար, ու յաւելով օգնուի կրնէր զար-
նըւօղներուն, որ դեռ շունչ կուտային
կառնէին. ոմանց վերքին վրայ գինի լե-
ցընելով կրկապեր, և կըզօրացընէր որ
ողջ մնան. ոմանք ալ իր գրկին վրայ հոգի
կուտային։ Եւ այսպէս վայրենիներէն 21
հոգի նոյն օրը կորան. իսկ յաղթողնե-
րուն բան մը չեղաւ, առանց վերքի մնա-
ցին. միայն թէ ծեծկըվելու ատենը սպա-
նեօլին մարմինը չարաչար Ճզմըվեր էր։
Այս միջոցիս մէջ Ոսպէնսոն ատեն չու-
նեցաւ հարցընելու, թէ սպանեօլը ի՞նչ-
պէս վայրենիներուն ձեռքն ընկեր էր.
անոր համար պէտք եղաւ որ հետևեալ
գիպուածին մէջ հասկընայ։

ԻԸ. Գիպուած.

Հետաքրքիր Ոսպէնսոն Էլաւ գնաց քա-
նօգները նայելու, որ վայրենիները ձգեր
էին հոն. երբոր մօտեցաւ մէկ նաւին
քով խիստ շատ զարմացաւ. մի՞ զի մէջը
գտաւ ուրիշ ողորմելի գերի մը՝ ձեռքն ու
ոտքը կապած, ինչպէս էր սպանեօլը. որ

աւելի մեռած կերևնար քան թէ ողջ։ Ոսպէնսօն մէկէն վազեց որ կապերը կտրէ, և ուզեց որ վերցընէ. սակայն խեղճը ոչ կրնար շարժիլ, և ոչ կրնար խօսիլ, միայն կըհառաչէր. կերևնար թէ հոգեվարքը է։

Բայց որովհետև այս մարդս եւրոպացի չէր, հապա լեռան մարդ էր որ մեռնելու վրայ էր՝ Ոսպէնսօն կանչեց Ուրբաթ գերին, որ բնական լեզուն խօսի հասկընայ, թէ ինչ մարդ է։ Գերին տեսածին պէս խելքը գլխէն գնայ. և անանկ ողորմելի տեսարան մը եղաւ, որ Ոսպէնսօն ու սպանեօլը սկսան արտասուք լալ։ Որբ էր Ուրբաթը այս կապած գերին որ տեսաւ՝ մէկէն վազեց վրան ընկաւ, խելագարի նման գրկեց զինքը փաթթըվեցաւ. երբեմն կուլար, երբեմն կըխնդար, մէյ մը կըխաղար. ձեռքերը կըսըխմէր, երեսին կուրծքին կըզարնէր. նորէն կըպօռար, կըցաթկէր՝ ինչպէս խենդ մը։ Երկար ժամանակ Ոսպէնսօն հարցընելով և ստիպելով, հազիւ կրցաւ բերնէն առնել այս երկու խօսքս, թէ այս իմ հայրս է։

Անկարելի է գրով պատմել ամէն եղած գործքերը որդիական սիրոյ, որ այս առթիս մէջ ցցուց հօրը այս սքանչելի պատանին։ Դասն անգամ քանօթէն

ցամաքը ցաթկեց, և ցամաքէն քանօղը ցաթկեց։ Մէկէն նստեցաւ, բացաւ իր կուրծքը բռնեց հօրը գլուխը ծոցը խօ-թեց, որ տաքցընէ, երբեմն կըշփէր ձեռ-քին ու ոտքին յօգուածները. որ սաստիկ կապերէն միսերը կըտըրտեր և գօսացեր էին. և երբեմն նորէն վրան կըփաթթ-վէր ու կըպադնէր։ Իսկ Ալօպէնսօն քիչ մը գինի ունէր ամանին մէջ, տվաւ իրեն՝ որ հօրը անդամները լըւայ, որ չարաչար ուռած էին. յետոյ թոյլ տվաւ առանձին թողուց, որ Ուրբաթ գերին գլխովին ու-րախութեամբ ընկղմի։ Քիչ մը ժամանակ անցնելէն ետև էկաւ հարցուց՝ թէ ար-դեօք հայրը ուտելու բան մը կուզէ՞։ Ընօ-թի ծերը պատասխան տվաւ զինքը ցցը-նելով՝ թէ անօթուէս ես զիս կերած եմ արդէն։

Ալօպէնսօն իր ուտելու նախաճաշիկէն անոր ալ տվաւ, որուն չէր դպած, և գե-րին ալ իրեն բաժինը հօրը տվաւ։ Հայրը առածին պէս կերաւ. որդին փութացաւ ցաթկեց դուրս ելաւ նաւէն, ու սկսաւ վազելով երթալ անանկ որ Ալօպէնսօն այս խօսքս չի լմընցուցած թէ ո՞ւր կեր-թաս՝ Ուրբաթը անհրաժեշտ եղաւ, նայիս մէկէն էկաւ ձեռքը ամանով ջուր, և ու-տելու բան. որ ջուրը հօրը տվաւ, և կե-ղակուրը տիրոջը տվաւ, ոնգ ալ ոտը անօ-

թի չի մնայ կերակուր ուտէ, որ իր հօրը տվեր էր. ծերը ջուրն որ տեսաւ հոգի առաւ զօրացաւ. վասն զի ծարաւը զինքը մահին դուռն էր հասուցեր։

Ընտանենը Յոպէնսոն դարձաւ սպանեօլին գին, որ հոգնելէն խոտին վր մարեր ընկեր էր. որուն ծառայուն ընելով Ուրբաթը շատ զօրացուց։ Սպանեօլն ալ իր կոզմանէ կըջանար որ անոր հաւկրցնէ իրեն երախտագիտուն։ Որձեց որ վեր ելլէ, չի կրցաւ. վե զի կապերուն տեղերը խիստ կըցաւէին, որ սաստիկ ուժով կապած ըլլալով ուռած էին չարաչար։ Ուրբաթը տիրոջը հրամանով կըջանար սիրով նայի և օգնէ սպանեօլին, շարունակ գինիով շփելով կապերուն տեղերը. անանկ կըհոգար ինչպէս որ կըհոգար իր հայրը։

Ընդ քեզի մէկ խեղճ տեսարան մը, ազնիւ պատանին բոլոր սրտով կըհոգար սպանեօլը. և ամէն մէկ վայրկեան կըդարձընէր գլուխը հօրը կընայեր, թէ ինչպէս է։ Խեղճ ծերը հանգիստ պառկելու համար երկընցաւ. որդին անհանգիստ ըլլալով մէկէն քովը վազեց, բայց տեսաւ որ հանգիստ պառկեր էր, նորէն դնաց սպանեօլին ծառայութիւն ընելու։ Յոպէնսոն ուզեց որ դերիին օգնութիւնը վերցընէ սպանեօլը քանոգին մէջ դնէ.

բայց չի կրցաւ. վերջապէս դերին զօրեղ պատանի ըլլալով կռնակն առաւ ու նաւը բերաւ. անկէ ետքը որչափ որ բան կար հոն՝ հրացանները, թնդանօթը և մեռածներուն զէնքերը բերաւ նաւը դրաւ։

Այս քանօդ նաւերը երկուք էին. Ուրբաթ դերին մտաւ մէկին մէջ թէպէտ հովը հակառակ էր, բայց անանկ ուժով թի կը քաշէր, որ Ռոպէնսօն ցամաքէն վազելով չէր կրնար անոր արագութիւնը հասնել։ Մինչ զի՝ Ռոպէնսօն կէս ճամբան չի հասած դերին հասաւ բնակարանին քով. նաւը հոն կապեց ու ետ դարձաւ որ մէկալ նաւն ալ բերէ։ Անանկ սոսկալի արագութիւն կաշխատեր, որ Ռոպէնսօն հասաւ բնակարանին քովի նաւին քով, որուն մէջ հիւանդները էին, նայիս դերին մէկալ նաւն ալ բերաւ։

Նաւերը բնակարանին դիմացը կապեցին. Ռոպէնսօն գնաց պատգարակ (թէճկէրէ) ճարելու, որ դիւրութիւն կարենան հիւանդները բերել բնակարանին մէջ. և այս կերպով բերին հիւանդները պառկեցուցին։ Որչափ մեծ ուրախութիւն եղաւ Ռոպէնսօնին՝ որ միշտ կրիափաքէր ընկերութիւնը շատնալ և Եւրոպացի մը տեսնել. սաստիկ բերկրութէն սիրտը կը դողդողար՝ երբոր կը մտածէր թէ այլ ազատեցայ թշուառ մինակութէ, անպատմելի կուրա-

խանար։ Տեսաւ թէ հիւանդները կերա-
կուրէն աւելի դեղի կարօտութիւն ու-
նէին, եւաւ գինի տաքցուց, ու ուռեց-
ները փաթթեց. գերին ալ իրենց տեղ
շինեց մէկէն պառկեցան։

Հիմա մնաց այս երկու օտարականնե-
րուն լաւ կերակուր մը պատրաստել. գե-
րին հրաման առաւ որ երթայ լամայի
ձագ մը մորթէ. մէկալ բաներն ալ Ա-
պէնսօն կը պատրաստէր, ու կէնար կէնար
կը ծիծաղէր կը զարձանար, երբոր ըն-
կերներուն վրայ կընայէր՝ իրեն կերևնար
թէ կամաց կամաց թագաւոր կը ձևանար։

Արովհետև բոլոր կղզին իր տերութիւնը
տակն էր, հպատակներն իրենց կեանքը
անոր պարտական էին որ օրինաւոր ճար
կը ձանձնային զինքը, թէ որ պէտք ըլլար
կեանքերնին ալ անոր համար կը դնէին։
Բայց մէկ դիտելու պարագայ մը կար՝ որ
հպատակներուն ամէն մէկը մէյմէկ հա-
ւատք ունէին. սպանեօլը ուղղափառ էր.
գերին դեռ չէր մկրտած, հայրը կռա-
պաշտ էր։ Հիմա ինչ ընելու է կըսէր Ա-
պէնսօն. արդեօք չի՞ կրնար ըլլար որ
բռնադատելով ամէնուն հաւատքը մէկ
ընենք։ Յամանակ կուզէ որ՝ կըսէր այս
բանիս վրայ մտածենք. վ՞ը զի մարդկուն
դէմ բան կըսեպէր հաւատքի համար գե-
րին նեղութիւն տալ. միայն բարի օրինակ

տալով պէտք էր ուրիշին հոգին շահիլ՝ էն թէ բռնուք , որ շատ անգամ աւելի գէշ կըլլայ . իբր զի՝ առանց առաջը դնելու ուրիշին մոլորութիւնը և առանց համոզելու միայն բռնադատելը ի՞նչ շահ կրնայ ընել . մանաւանդ աւելի կասկածի մէջ կը ձգէ դիմացինը , և աւելի մոլորութիւնը կը հաստատէ , երբոր նեղուի տալով կուզէ ընդունել տայ իրեն հաւատքը . թէպէտ ճշմարտութիւնը ինք զինքը յայտնի կընէ ։

Ն. ճ է միայն աղբիւր ճշմարտութիւն , անոր կինին փոխել մարդուս սիրտը . և ճշմարիտ հաւատքը պայծառացընել լուսաւորելով մոլորելոց միտքը ։ Յոսպէնսօն այսպէս մտածելով կըսէր , թէ հեռու ըլլայ իսմէ որ այսպիսի աւելորդ նախանձով ուրիշը բռնադատեմ . և այսպիսի կոյր կատաղութիւն մարդու մը հալածանք տամ կենցաղս մէջ հաւատքի համար ։ Ն. սանկ բան ոճ չի տայ որ իմ կղզիս մէջ ըլլայ . ես միայն պարտական ըլլամ իմ քաղաքացիներուս բարի օրինակ տալու ։ Ն. նոնց նեղուի տալով ես երջանիկ չեմ ըլլար , և իմ հաւատքիս ճշմարտութիւնը ասով չի պայծառանար . հապա իմ վարքս աղէկ ըլլալով և անով ուրիշները խրատելով ։ Ինաւ չեմ ուզեր որ հաւատքիս հմար մարդ մը զիս փառաւորէ , և ինձի հաւա-

տայ, որ իրենց պէս մարդ եմ սխալական. այլ կուզեմ որ միայն ՆՈՅ հաւատան, և ՆՈՅ պատուիրանացը հետևին առանց իրարու հետ հակառակութիւն ընելու (*):

Այս միջոցիս մէջ Ուրբաթ գերին կերակուրները պատրաստեց բերաւ. և նոյն օրը մեծապէս ուրախանալով կրկին տոնախմբուի կատարենք ըսաց Ռոպէնսոն. մէյ մը երկու ընկեր ապատեցինք մարդակեր գազաններուն ձեռքէն, մէյմ՝ ալ որ հայրդ գտար. ուստի ո՛րչափ աղէկ բան ունինք, պէտք է որ սեղանը դնենք այսօր: Իսկ Ուրբաթ գերին անանկ անպատմելի ուրախութիւն ունէր, որ կենացը մէջ չէր տեսած. անդադար ծիծաղելով կրցաթ կրտէր. որչափ ուրախութիւն և ցնծութիւն կրնար ընել, բոլորն ըրաւ չափազանց եղանակով: Եւ այսպէս առանց պակասութիւն ամէն բան պատրաստեցին:

Իսկ երկու նոր օտարականները վեր էլան պառկած տեղերէն. թէպէտ դեռ ոտքերնին ու թևերնին կրցաւէին, սակայն շատ հանգիստ և զօրացած գտան

(*) Երանի՜ թէ Ռոպէնսոնին այս խրատը ամէն մարդ պահէ. վա՜ղ ի ամէնքը կըփափաքին որ ուրիշները դարձի բերեն, ու իրենք իրենց վարքը չեն շըտկեր, որ բարի օրինակ տալով տկարները զօրացընեն. շատ մարդ ուղղափառ հաւատքին վրայ կըպարծի, ու սիրտը նախանձով լեցուն ըլլալով մեռած է հաւատքը:

զերեանք Ասպէնասնին և Ուրբաթին դարմանովը։ Ուստի Եկան սեղան նստան. Ծեր ամերիգացին կէրակուրներուն վրայ նայելով զարմացաւ. մանաւանդ տեսնելով որդւոյն Ճարտարութիւնն՝ որ Եւրոպացոց կրթութիւն սորված էր, և ամէն բանի մէջ յաջող։

Ուրբաթը թարգման եղաւ տիրոջն ու երկու օտարականներուն մէջ. Ասպէնասն ինչ որ խօսեցաւ, Ուրբաթը կը թարգմանէր սպանեօլին ու ծեր ամերիգացոյն։ Ը թէպէտ չէյտէր սպանեօլի լեզուն, բայց սպանեօլը 6 ամիս վայրենիներուն մէջ ըլլալով բաւական կրնար խօսիլ Ուրբաթին քաղքի լեզուն, և կրնար հասկըցնել։

Իսկ թէ սպանեօլը ի՞նչպէս ընկաւ վայրենիներուն ձեռքը, ահա այսպէս է պատմութիւնը. մեր նաւը կըսէր որոշված էր՝ որ սև գերիներու վաճառականութիւն ընէ, ու ափրիկէի կողմէն ելեր էինք. գերի բերինք, որ փոխենք ամէն կերպ աղնիւ բանի հետ. ցորոսկիի, փղոսկրի, և անդամանդի հետ։

Ա. յս բաղմութի գերիներուն Պարպատ կղզին պիտի տանէինք վաճառելու համար. որոնցմէ արդէն 20 հոգիի չափ մեռեր էին, իրարու վրայ լեցուցած ըլլալով։ Մէկ սասստիկ երկարատև հով մը մեղ

մեր Ճամբայէն մոլորցուց, և նեռեց պրա-
սիլիայի կողմերը։ Այլիս նաւը ջուր ա-
ռաւ չի համարձակեցանք բացէն երթալ,
շտկեցինք նաւը դէպ 'ի ցամաք երկիրը։
Այս միջոցս նորէն ալէկոծուն եկաւ, ա-
նանկ սաստիկ կըփչէր արևմուտքէն, որ
մեզ շատ հեռացուց ցամաքէն. յանկարծ
գիշերանց նաւերնիս քարի վրայ նստաւ
կղզիի մը մօտ։ Շատ թնդանօթներ նե-
տեցինք, և ուրիշ նշաններ տվինք որ լսեն
ու մեզի օգնեն՝ Ճար չեղաւ. ուստի որոշե-
ցինք որ մինչև եռքը նաւը չի ձգենք. գե-
րիներուն երկաթները հանեցինք ազատ
ըրինք, որ մեզի օգնելով նաւին ջուրը
պարպենք։

Բայց նաւը ամէն դիէն ջուր կառներ։
Իսկ գերիները ազատելնուն պէս ամէն-
քը միաբանեցան բռնի առին մակոյկները,
որ փախչին, և իրենց կեանքն ազատեն։
Մենք ի՞նչ կրնայինք այնչափ մարդկանց
ընել, անհնարին էր որ բռնութիւն կարե-
նայինք անոնց տիրել. վերջն մենք 15 հո-
գի էինք, անոնք 80 հոգի, որոնց շատը
քաշեցին զէնքերնիս ալ առին։ Բանի՞
ողորմելի էր մեր վիճակը այնպիսի նաւի
մը մէջ՝ որ մակոյկ չունի, տեղէն չի շար-
ժիր, ջրով լեցուն է. մեզի մեռնելէն 'ի
զատ՝ ուրիշ Ճամբայ չի կար։

Ակսանք մտմտալ թէ ի՞նչ ընենք,

կաղաչէինք կաղաղակէինք խեղճ ընելով կըինդրէինք՝ որ ողորմին մեզի հետերնին դուրս հանեն։ Սակայն այս սև գերիներուն մեկի ըրած մարդավարուները չի պատմվիր։ Որոնք թէպէտ մեզմէ շատ խըստուի տեսեր էին և շատ վիշտ քաշած էին, բայց ողորմեցան մեզի խիստ մեղքընալով, և թոյլ տվին որ մակոյկներուն մէջ լեցվինք այս դաշամբ որ վէնք չառնենք հետերնիս։ Ուստի առանց վէնքի թափեցանք մակոյկներուն մէջ, որոնք անանկ ծանրացած էին բեռով, որ ամէն բոպէ կըսպասէինք որ պիտի ընկղմինք։

Սակ մենք՝ որ հոգւով մարմնով կըջանայինք որ կվազին երթանք հասնինք, անհնարին եղաւ. վե՞զի հովը շուտով փոխվեցաւ ու մեզի դէպ 'ի ծովը բացաւ, թէպէտ և սաստիկ ուժով թի կըքաշէինք։ Ընատենը հասկըցանք որ անտարակոյս մահը մեզի հասաւ։ Մակոյկները անհնարին լեցուն, և աղիքները սոսկալի վրանիս կուգային. բայց ՝այ յաջողութիւնը դեմ կըդնէինք, չէինք ընկղմէր. վերջապէս առանց մէկ մարդ մը կորսընցնելու հասանք անծանօթ կղզի մը, որուն բնակիչքը մարդավար և բարեսիրտ ըլլալով՝ սիրով մեզ ընդունեցին (*)։

(*) Ահա այս կղզին էր Ուրբաթ գերիին քաղաքը, և այն նաւն էր Ռոպէնսոնին պարպած նաւը, որ

Որչափ որ մնացինք այս վայրենի մարդկանց քով՝ միշտ կը ջանային մեզ պատուել, և որչափ որ կրնային՝ մեզ կը հոգային առանց կարօտութիւն թէպէտ աղքատօրէն։ Խեղճերը աղքատ ըլլալով ուրիշ ապրուստ չունէին, բայց եթէ ձուկ և պըտուղ, որ ինքնիրեն կելլեր այն կղզիէն։ Իրենց ապրուստը կը բաժնէին՝ կէսը մեզի կուտային կէսն ալ իրենք կառնէին։ Մենք ալ իրենց ձուկ բռնելու կերպերը սորվեցուցինք, որպէս զի կարենանք մենք ալ առատ կերակուր դտնելու։ Ուր սև դերիներուն վիճակը մերինէն շատ աղէկ էր, նախ որ ազատեցան գերութէ. երկրորդ իրենց վարքին յարմար ըլլալով հանգիստ կը վարվէին, որուն արդէն սորված էին։ Մտեն մը այսպէս անցնելէն ետև՝ մօտակայ ազգ մը եկաւ ասոնց երկիրները՝ տիրելու։ ուստի բոլոր ժողովուրդը գէնք առին որ պատերազմին. մենք ալ պարտաւորեցանք միատեղ պատերազմ երթալ, որոնք մեզ այնչափ պատուելով բարերարուն ըրեր էին։ Այս այս զօրաւոր ծերուն հետ միատեղ էի, որ քաջութիւն կը ծածկվեր առիւծի պէս. նայիս մնաց խիստ զօրաւոր թշնամիներուն մէջ խաու-

ձգեր փախեր էին. իսկ Ուրբաթին հայրը իրենց քաղքին մէջ երևելի մարդ էր, որ թշնամիները բռներ էին։

նըվէցաւ , տեսայ որ զինքը փաթթեր էին , վրայ հասայ որ ապատեմ. բայց թըշ-
ւառու

միատեղ կրզարմանար ՝ծծային իմաստութիւնը վրայ։

Հարցուց թէ ի՞նչ բեռ դրեր էիք նաւը. սպանեօլն ալ պատասխան տվաւ, թէ շատը զէնք և գործիք էին, որ երկու վաճառական բարձուցած էին Քատիչէ քաղաքէն (*). մէկը հրաման էր տվեր իրեն՝ որ սև գերի գնէ. իսկ մէկալը այսպիսի վաճառականութիւնը անիրաւ սեպելով պատուիրած էր՝ որ ծախած բաներուն տեղը ոսկի բերէ։

Երջապէս Յոպէնսօն բռնեց սպանեօլին ձեռքէն տարաւ բնակարանին մէջ, ետքը տարաւ շինած խուցին մէջ, և իրեն ցցուց նաւէն հանած պիտուական բաները, տեսնէ թէ կըճանչնայ բան մը։ Ուրբաթ գերին սկսաւ բոլոր պատմութիւնը անոր պատմել։ Սպանեօլը այս պատմութիւն լսելով՝ զարմացաւ մնաց, անանկ որ բան մը չէր կրնար խօսել։ Յոպէնսօն դարձեալ ցցուց անդամանդները և աղուոր հագուստները։ Հասկըցաւ որ ասոնք էին մէկ ինկիլիզ զօրապետի մը, որ երկար ատեն Հնդկաստան նստեր էր, յետոյ ինչ-

(*) Քատիչէ է մեծ և հռչակաւոր քաղաք սպանեօլներուն. այս քաղաքիս նման հարուստ և վաճառականութիւն քաղաք չի կայ Եւրոպայի մէջ. ամէն տեսակ թանկագին նաւեր լեցուն են միշտ, մանաւանդ Հնդկաստանու, և Ամերիգայի։ Այս քաղաքն ելեր էր այն նաւն որ Յոպէնսօն գտաւ պարպեց։

կիլիկիա դառնալու ատենը՝ Ճամբան կը-
հիւրընդնայ, կը խնդրէ որ զինքը ցամաքը
հանեն Լ. փրիկէի կողմը, և հոն կը մեռ-
նի. իսկ նաւը այս բաներս կառնէ Լ. մե-
ր ի գա կերթայ դէպ 'ի Պարպատ կղզին՝
որ յետոյ անկէ ինկիլիա պիտի եր-
թար։

Հուսկ յետոյ Ռոպէնսոն ցցուց անոր
բոլոր թղթերն որ նաւէն հաներ էր. ըս-
պանեօլը կարդայ գտաւ թէ ոսկին և
հանդերձները այն մեռնող զօրապետին
կնկանը պիտի հանէին։ Լ. նկէ ետքը Ռո-
պէնսոն անանկ զգուշութիւն կընայեր անդա-
մանդը՝ ոսկին և թղթերը, ինչպէս մէկ
նուիրեալ աւանդ մը՝ որ իրեն հաւատա-
ցեր էին։ Լրիկունն որ մոտեցաւ, ամէնքը
չարաչար հոգնած ըլլալով նոյն օրուան
մէջ՝ ուզեցին շուտով պառկիլ հոգնուն
առնելով զօրանալ, և հանգիստ քնանա-
լով ուժ առնել։ Ռուսի շնորհակալութի
ընելով այ գացին պառկեցան։

ԻԸ. Դէպ-ած.

Հետևեալ օրը Ռոպէնսոն միաբանեց
իր տերուն ուժն՝ որ պէտք եղած բաները
միաբանութիւն կատարէ առանց ուշացընե-
լու։ Լբր զի թշնամիներուն մարմինը դաշ-
տին մէջ ձգած էին և կը հոտէին, կը-

վախնար որ չըլլայ թէ օդը ապականէ, ու հիւանդութիւն պատճառէ հոն։ Ուստի մէյմէկ կայրին առին եկան պատերազմ եղած տեղն՝ որ չէ թէ փոս փորեն թաղեն, հապա փայտ կտրեն կրակ վառեն, ու մեռածներուն բոլոր մարմիններն երեն (*)։

Թէպետ մեռել երեալն է հնդկաստանցոց և հին ազգերուն սովորութիւնը, բայց Ռոպէնսոն չուզեց եւրոպացոց սովորութիւնը հետևիլ. որոնք իրենց մեռելները եկեղեցիներուն, և քաղքին մէջ կըթաղեն. որ ոդջերը այն հոտած օդը շնչելով մեծապէս կըվնասին հիւանդութիւն։ Այս վտանգաւոր սովորութիւը հին ըլլալուն համար՝ դժուար է վերնալ. ինչպէս ուրիշ շատ հինցած սովորութի՝ ալ կայ վնասակար, որ դժուար է վերցընել։ Այս պատճառաւ միշտ պէտք է խոհեմութիւն կառավարվիլ և ամէն բան ըստ տեղւոյն կատարել։

Վա՞ղ մէկ անկարգութի՝ մը սովորութի՝ եղածին պէս՝ դժուար է վերցընել. թէպետ վնասակար ըլլալը ամենուն յայտնի ըլլայ։ Այս ամէն աշխարհք գիտէ թէ մեռելին

(*) Ռոպէնսոնին կղզին տաք ըլլալուն հմար պէտք եղաւ այսպէս ընել՝ որ չապականի օդը. վա՞ղ թաղելով ալ չէր ըլլար, արեգակին տաքութիւը օդը կաւրէր վնասակար գոլորշիներով. անոր համար խոհեմութեամբ բանեցուց Ռոպէնսոն ու երեց զանոնք։

հոտած դոլորշիքը ողջերուն թոյն ըլլալով մեծ վնաս կրբերէ, և սակայն շատ քաղքի մէջ հորեր փորած կայ, կրտանին մեռելները հոն կրլեցրնեն. որ ասոնց հոտը ապականելով օդը կրնայ հիւանդութիւն պատճառել։ Բ. յսպէս շատ բան կայ որ վնասակար ըլլալը ամէնքը գիտեն։ Բայց հին սովորութիւն ըլլալուն համար չեն փոխեր, այնպէս կրմնայ։ Բ. հա՛ այս է նախապաշարումն, որ միտքը պաշարվելով ինչ որ տեսեր է, այն կրնէ. և սակայն պէտք չէ կուրօրէն հին սովորութիւն ետևէն երթալ առանց որոշելու աղէկն ու գէշը. հապա պիտի աղէկ բանին հետևիլ անկարգ բաները ձգել, և անխելք բաներն ալ կատարելագործել. ոչ զի ամէն աշխարհք, ամէն քաղաք, և ամէն տուն բարեկարգ ըլլայ, և բարեպաշտութիւն զարդարվի (*)։

Բ. մէն տղայ պարտական է որ ուսման ետևէն ըլլալով խելք սորվի, հասկրնայ թէ այն ազգերն որ միայն իրենց նախնեացը հետևելով աղէկ բանի ետևէ չեն

(*) Եւրոպացիք հին ատենը ամէն ազգէն կոշտ և անխելք էին. բայց հռոմայեցիք երբոր սկսան ուրիշ ազգերուն տիրել, ամէն ազգին աղէկ բաները ժողվեցին, իրենց հասած բաները ձգեցին աղէկին հետևեցան. կամաց կամաց ամէն աղէկ բան խելք և իմաստութիւն ստացան, ու մի միայն բարակ և գիտուն եղան. ինչպէս որ կերևնան։

եղած, մինչև հիմա կոշտ մնայեր են. և այն կոշտ աղգերն որ իրենց նախնեաց անկարգ բաները ձգելով, բարեկարգուեց ետևէ եղեր՝ իրենք զիրենք շտկեր են, խիստ գիտուն և բարեպաշտ են եղեր (*)։

Ուստի այսպէս Ճանչնալէն ետև մէկ տղայ մը պէտք է, որ մեծցած ատենը երբոր բանի մէջ մտնէ՝ ձեռքէն եկածին չափ բարեկարգուելու ընէ թէ՛ իր աղգին, թէ՛ իր հայրենեաց, և թէ իր տանը. ինչպէս որ Լոպէնսօն գիտնալով՝ թէ մեռելները անանկ ձգել, կամ փոսի մը մէջ լեցընել օդը կապականէ, ուզեց երեւ որ հի-

(*) Հնդկաստանցիք և Չինք մինչև հիմա իրենց նախնեաց սովորութիւնը չի ձգելու համար՝ շատ խենդ բաներ ունին. շատ տեղ իրենց թուաբանութիւնը ջուանի կապերով կընեն. և անալ շատ դժուարաւ իրենց տղոցը կըսորվեցընեն. մինչև որ լաւ մը չափահաս չըլլան բան չեն հասկցըներ. վա՜ զի իրենց նախնեաց-մէ ասանկ տեսեր են ասանկ կերթան. ոչ միայն չեն ետևէ ըլլար Եւրոպացոցմէ խելք, և թուաբանութիւն սորվելու. այլև կըգայթակղին անոնց վրայ, որ պզտի տղոց ալ բան կըսորվեցընեն։ Մեր ազգին մէջ ալ կըգտվին այսպիսի թանձրամիտ մարդիկ. որ իրենց սովորութիւնը հետևելով՝ խելք սորվիլ չեն ուզեր. և սորվողներուն վրան ալ կըգայթակղին թէ ինչ պէտք է. ինչ որ ունինք մեր նախնեացմէ, և ինչ որ գիտենք բաւական է. երկու կտոր գիրք մեզի կօգտէ։ Այսպիսի յիմարներուն պատասխան կուտան գիտունները, թէ մեծ կոշտուելի է նախնեաց յիմարութիւնը հետևելով տգէտ մնալ, և նոր նոր գիրքեր կարդալով աղէկ բաներ չի սորվիլ. վասն զի մարդս քանի որ ողջ է, պէտք է միշտ բան գիտնալ և ուրիշին բան սորվեցընել։

ւանդութիւն մը չի պատճառի, թէպէտ իր Ամպուրկ քաղաքը մեռելները ժամերուն մէջ կը թաղէին։

Երբ Յոսէֆոսն մեռելներն երեւէն ետեւ՝ ընկերներուն հետ միատեղ դարձաւ իր բնակարանը։ Ուրբաթ գերին իր հայրը խրատելով կը հասկցնէր, թէ գաղանի պէս մարդու միս ուտելը ո՛րչափ գարշելի և սոսկալի բան է Եւրոպացոց առջին, և ամէն քաղաքականութիւն դէմ գործք է։ Այս բանիս վրայ ծերը խիստ կը զարմանար. իսկ որդին ինչ որ սորվեր էր իր տիրոջմէն, բոլորը կը հասկցնէր հօրը. ոնգի դարշելի երևցնէ իրեն այնպիսի բարբարոսական սովորութիւնները։

Իսկ Յոսէֆոսն որովհետև որդուն անունը Ուրբաթ դրեր էր, հօրը անունը Հինգշաբթի դրաւ. մենք ալ ասկէ ետև այնպէս պիտի կոչենք։ Յոսէֆոսն ուզեց խորհուրդ ընել, զամէնքը կանչեց Ուրբաթը անոնց գլուխ և թարգման ըրաւ. որ խորհուրդին մէջ անոնց հասկցնէ այս պատուիրանները։

Սիրելի՛ բարեկամք ըսաց. քանի՛ հոգի որ հիմա հոս ժողված էք՝ գիտեմ որ կուզէք հանգիստ և երջանիկ կեանք մը վարելու. սակայն ես կը փորձեմ, որ այս ամէն բարիքը վայելելով իմ սիրտս չպիտի հանգչի, մինչև որ չգիտնամ թէ արդեօք

կա՞ն իսմէ արժանաւոր մարդիկ, որ գերու�մէջ կրտանջըվին զուրկ ամէն աղէկութէ. թէ՛ Եւրոպացի ըլլան, թէ՛ սպանեօլ ըլլան, և թէ ուրիշ ազգ, որ մարդակերներուն ձեռքն են ընկած. արդ ես կըփափաքիմ, որ ձեր կարծիքն ինձի հասկըցընէք, ո՛ր կերպով դիւրին կըլլայ այն խեղճերուն օգնութի՛ն հասնիլ. ոչ զի անանք ալ գան մեր վինճակին մասնակից ըլլան։

Ը. մէն մէկը սկսաւ ինքնիրեն մտածել. սպանեօլը առաջ նետվեցաւ, որ մինակ երթայ իր ընկերները փնտրուէ. ուստի ուզեց մտնել մէկ քանօթին մէջ թշնամիներուն ետևէն երթալու համար (*)։

Հինգշաբթի գերին ալ ըսաց որ ես ալ պատրաստ եմ. որդին պատասխանեց հօրը թէ դուն ծեր ըլլալով պէտք է հոս մնաս. աւելի ինձի կըվայլէ սպանեօլին հետ միատեղ երթալ. ծերը որդուն դէմ կենալով՝ ատոնց մէջ մէկ ալնուա-

(*) Ռոպէնսոն կըպատմէ՝ թէ կասկած ունէի որ փախչող վայրենիները նորէն բաղմու�դառնան կուգան, անոր համար միշտ զէնքով և պատրաստ ժուռ կուգայի. սակայն Հինգշաբթի գերին ապահով ըրաւ թէ անանք երկար ատեն վախերնուն հոն չեն հանդիպիր. իսկ Սպանեօլը կըսէր թէ 16 հոգի Եւրոպացի էինք այն կղզին, որ ալէկոծութիւն գացինք ընկանք. ոմանք Սպանեօլ են՝ ոմանք Փորդուգալ. խեղճերը հոն մնացին, պէտք է որ երթամ զանոնք ազատեմ։

կան հակաձառուն մը ծագեցաւ։ Ալ էր-
ջապէս Յովհաննոն նայեցաւ որ այս վէճը
չի լմննար՝ ատենը կանցնի, մէջ մտաւ
որոշեց որ ինքն ինչ որ ըսէ՝ այնպէս ընեն.
հրամեց որ ծերը սպանեօլին հետ մէկ
տեղ երթայ թշնամիներուն ետևէն.
Ուրբաթը քովը մնայ, վա՜ զի մտերիմ բա-
ռեկամուն թող չի տվաւ որ գերին քո-
վէն զատէ և վտանգի մէջ ձգէ. մանա-
ւանդ որ հայրը աւելի փորձ էր և որդուն-
մէն աղէկ գիտէր նաւավարուն։ Ասկ ըս-
պանեօլին երթալը խիստ հարկաւոր էր.
վա՜ զի կրնար ըլլալ՝ որ իր քաղաքացիները
աղատեին ու գային Յովհաննոնին հարկի-
քը վայելեին։ Այս միջոցս արտերը բոլոր
ցանեցին տասնապատիկ աւելի. որովհետև
մէկ դիէն կըբազմանային, պէտք էր որ
ուտելիքներն ալ շատցընեն։ Այս գործ-
քերս շատ աշխատելով կատարեցին քանի
մը շաբթվան մէջ. աղէկ սրտով աշխա-
տելնուն համար, անանկ աղէկ աձեցան
բոյսերն՝ որ 15 օրուան մէջ բաներնին լմնը-
ցաւ. պատրաստվեցան որ ձամբայ ելլեն
մտքերնին դրածը կատարեն։

Այց յառաջ քան ձամբայ ելլելը, ըս-
պանեօլը փորձ մը ցցուց ոչ միայն իր պատ-
ուոյն և երախտագիտուելը համար որ ու-
ներ առ Յովհաննոն, այլև նախատեսուելի
և զգուշուելը համար։ Յայտնեց Յովհան-

սոնին որ միւս սպանեօղները իրեն պէս
չէին, հապա նաւավար էին. ուստի կըր-
թուէ մը չունէին, և հաստ մարդիկ ըլ-
լալով իրեն կատարելուէր չունէին։ Ու
որովհետև գիտէր որ Լոպէնսոն էր կըղ-
ղին տէրը՝ առաջարկեց որ դաշնադրուէ
մը հաստատէ, ոնգ զի հոն եկողը այն դա-
շինքները նախ գիտնայ ըլլուն ու անանկ
գայ բնակի հոն։

Լոպէնսոն շատ ուրախացաւ ասոր հա-
ւատարմուէը վրայ. և հաւանեցաւ խոր-
հուրդին, շինեց մէկ դաշնադրութի մը,
որ այս բանիս վրայ կըկայանար։ Ո՛վ որ
կուզէ Լոպէնսոնին կղզին բնակիլ՝ հան-
գիստ կեանք վարելու համար, կըհրա-
ւիրէ որ գան մանակից ըլլան իրեն բա-
ղեացը այս պայմանովս. ա. Պէտք է հնա-
զանդ ըլլալ օրինաւոր տիրոջը կղզին.
յ՚ամ յօժարուէ պիտի հնազանդի օրինաց
և կանոնաց՝ ինչպես որ կարգադրեր է քա-
ղաքապետը հասարակաց բարւոյն հմար։

Բ. Պէտք է ըլլալ առաքինի աշխոյժ և
աշխատասէր. իսկ դատարկ՝ գինով՝ և
ախտաւոր մարդիկ ամենևին չի մտնեն
այս կղզին։

Գ. Ամենևին կռիւ և խռովուէ չըլլա-
լու համար, նաև պրկողուէ դիպուած պա-
տահելով՝ չըլլայ թէ մարդ ինքնիրեն դա-
տաստան կարէ. հապա պէտք է քաղաքա-

պետին երթալ դատը հասկցընել, կամ թէ ո՛վ որ դատաւորի պաշտօն ունի՝ անոր քով երթալ դատաստան տեսնել։

Դ. Ռանց տրտնջալու պէտք է ամէն աշխատանքը յանձն առնուլ, որ վեր օգտի ընկերու

համար, սակայն սպանեալը գիտէր որ իրենց նաւուն մակոյկը բան չէր եղած, պէտք էր որ անով գային։

Ճամբու պաշարը հոգացին հոնին ալ յաջող կըփչէր, այս երկու Ճամբորդները նաւը մտան, առագաստը հոլին տվին. մէկ տրտմալի սիրով մը բարևեցին ետև Պօպէնսօնն ու Պուրբաթը զատվեցան։ Այս զատվիլը անանկ տրտմեցուց Պուրբաթին սիրտն, որ աչքին արտասուքը չի կտրեցաւ, և ախորժակը գոյեց բան չի կրցաւ ուտելու։ Օրմէն զատվելու ատենը այնչափ անմխիթար էր, որ միշտ հօրը կըփաթթըվէր կուլար, չի զատվեցաւ իրմէն. մինչև ծերը բունի զատվեցաւ մտաւ նաւը Ճամբըվեցաւ. բայց որդին ծովը նետվեցաւ լողալով գնաց ցամաքին ծայրը կեցաւ, որ հայրը անկէ անցնելու ատենը ետքի բարևն ալ տայ անանկ գայ. որ ապա լալով դարձաւ եկաւ քարձր տեղ մը նստաւ միակերպ քանոգին ետևէն նայելով կուլար, մինչև որ քոլորովին անյայտ եղաւ տեսուչէն։

Իսկ Պօպէնսօն՝ գերին մխիթարելու համար, քոլոր օրը միատեղ որսի գնաց և լեռներուն վրայ երան ժուռ եկան։ Ալ առաջ պիտի երթային՝ տեսան որ շունը իրենց հետ երթալու ատենը՝ ապառաժի մը տակ որ քոլորովին փուշերով ծածկած

էր , կեցաւ անդադար կըհաչէր ։ Երբոր մօտեցան տեսան որ ծակ մը կայ ապառաժին վրայ , որուն մէջ սողալով միայն կրնային մտնել ։ Որովհետև Ասպէնսօն կուզէր որ ամէն տեսած բանը քննէ , գերին ըսաց որ փորձէ նայէ կրնայ ներս մտնել . գերին ալ փորձելով գլուխը ներս խօթածին պէս անանկ զարհուրեցաւ ու սոսկալի պօռաց , և անանկ խենդի պէս փախաւ արագութ՝ որ Ասպէնսօնին ձայնը ամենևին չէր լսեր , որ զինքը անդադար կըկանչէր ։ Երջապէս տէրը իրեն հասաւ զարմանալով հարցուց թէ ի՞նչ եղաւ , ինչո՞ւ կըփախչիս ։ Պատասխան տվաւ թէ ո՜հ սիրելի տէր իմ՝ փախչինք ազատենք մեր կեանքը . ահա՛ այս քարանձաւին մէջ մէկ ահեղ հրեշ մը կայ . աչքերը կրակի նման կըփայլին և բերանը անանկ լայն է , որ երկուքնիս ալ կրնայ միատեղ կլլել ։

Այս ի՞նչ սարսափելի բան է եղեր ըսաց Ասպէնսօն . պէտք է որ ես տեսեմ զայն ։ Աղաղակեց գերին ոտքն ընկաւ , թէ ի՞նչ կընես՝ ՝՝ այ համար ըլլայ մի՛ մտնար , անտարակոյս քեզ կըկլլէ . և խեղճ Ուրբաթը անտէր սիտի մնայ ։

Պատասխանեց տէրը խնդալով , թէ քեզ կերաւ ։ Գերին վախուն պատասխան չի տվաւ ։ Ասպէնսօն խրկեց զինքը

քնակարանն որ երթայ լապտերը կիր (գո-
ղի ֆէնէռը) բերէ, որ նաւէն հանէր էին։
Ը.յս միջոցս գնաց Ալօպէնսօն ծակին մօտ
հրացանը ձեռքը, մտիկ դնելու թէ ի՞նչ
կայ։ Ը.ղեօք ի՞նչ կրնայ ըլլալ որ այս-
չափ սարսափեցուց Ալրբաթը։ Ը.ղեօք
կատղած գազա՞ն կայ, առիւծ կայ,
վագր կայ, կամ թէ ասոնց նման կեն-
դանի՞ մը կայ, ի՞նչ կայ։

Յանդգնութի՛ կրսեպէր ծակէն ներս
մտնել. բայց այնպիսի կատղած կենդանի
չէր տեսած այն կղզիին մէջ. եթէ գա-
զան ըլլար՝ Ալրբաթը ի՞նչպէս կրնար
փախչիլ անկէ։ Ոչ՛ կրսէր, կերևնայ թէ
անանկ կատղած կենդանի չպիտի ըլլայ.
սիրտ կրնէր որ ներս մտնէ նայի՝ թէ ի՞նչ
է. վա՜ղ մանկուէ՛ն՝ի վեր այսպէս սոր-
ված ըլլալով բանէ մը վախ չունէր։ Ը.յս
խորհուրդիս վրայ Ալրբաթն ալ վառած
կանթեղը ձեռքն եկաւ. որ լալով կաղա-
չէր ու կըջանար՝ որ տէրը այս խորհուրդը
ձգէ, և զինքը այնպիսի յայտնի վտանգի
մէջ չի ձգէ. վա՜ղ իր կարծիքովը անտա-
բակոյս պիտի կորսըվէր։ Իսկ Ալօպէնսօն՝
որ վախ ըսած բանը չիյտէր, երբոր մէկ
բանի մը վրայ լաւ կըմտածէր հասունու-
թիւն, անկէ ետև ո՛չ երբէք ետ կըկենար.
ուստի յորդորեց Ալրբաթն որ սիրտ առ-
նէ զօրանայ, և լապտերը մէկ ձեռքն ա-

ռաւ՝ հրացանն ալ մէկալ ձեռքը, սկսաւ
երթալ ծակին քով։

Գլուխը ներս խօթածին պէս Հրաղին
լուսովը զարհուրելի բան մը տեսաւ,
բայց չի փախաւ. այլ դէպ 'ի ներս եր-
կնցուց լոյսն, որ լաւ տեսնէ այն հրեշ
կենդանին։ Երբոր աղէկ մը նայեցաւ ո-
րոշ տեսաւ՝որ ծեր լամա մը պառկեր էր,
ծերուէն չէր կրնար շարժիլ։ Որս դին
դիտելէն ետև հասկրցաւ որ ուրիշ կեն-
դանի չի կար անկէ 'ի զատ, ներս մտաւ
ու կանչեց որ գերին ալ ետևէն եր-
թայ։

Իսկ գերին անանկ սարսափած ըլլալով
չի կրցաւ տերը մինակ ձգել, այլ վերջի
ձիգն ընելով վախը մէկ դի ձգեց, ու
սիրտ առնելով տիրոջն ետևէն գնաց.
մէկէնիմէկ զարմացաւ մնաց երբոր տե-
սաւ թէ ինչպէս փուճ տեղը ի՞նչ կերպ
վախցեր էր, ու լամային աչքին և բերնին
մեծուները այնչափ զինքը սասսիկ խռովեր
էր. երբոր ներս մտաւ, Ասպէնասն զը-
ւարճանալով ըսաց իրեն. տեսա՞ր սիրելի
թէ վախը ի՞նչ բան կընէ մարդուն. ուր
է կրակի պէս աչքերն որ կըպատմէիր. և
ո՞ւր է սարսափելի բերանն որ տեսեր
էիր։

Պատասխանեց Ալրբաթը՝թէ ինձի կե-
րևնար թէ անանկ կըտեսնէի ճշմարտա-

պէս։ Կրկնեց Ոսպէնսօն, թէ տարակոյս չունիմ, գիտեմ որ քեզի այսպէս երևցաւ. բայց պէտք է գիտնաս, որ վախը շատ անգամ կրխաբէ մարդը. անանկ որ չեղած բաները երևակայուելով կերևցընէ. և հաղար կերպ բան կրցցընէ, որ մէկը չի կայ։ Ո՞տի՛կ դիր սիրելի Ուրբաթ, և գիտցի՛ր, թէ այսպիսի բաները երևակայութիւն են, և պարզ մտմըտուքէ առաջ կուգան։

Շատ անգամ վախկոտ ծերերը, կամ վախկոտ կանայք որ իրենց բան կերևնայ, երևակայելով քեզի պէս կըսեն, թէ չի տեսած բան տեսանք. մէկը երկուք կերևնայ, և ոմանց ալ սիրտը վախով պաշարված ըլլալով կնիկ մարդէն աւելի վախկոտ և տկար կըլլան։ Ոերին խօսք տվաւ որ ասկէ ետև զօրանայ, բանէ մը չի վախնայ։

Այս միջոցիս մէջ ծեր լաման տեղէն ելաւ՝ Ոսպէնսօն ու դերին հրեցին դուրս ձգեցին. յետոյ քննեցին նայեցան այն բնակարանը, տեսան որ խիստ ընդարձակ պատուական տեղ էր զով և ցամաք՝ նաև խիստ զըւարճալի, որ շատ հարկաւոր կըրնար ըլլալ իրեն։ Այս քարանձաւը կերևնար թէ կամաւ շինած էր բնակելու համար, որ չոր էր առանց խոնաւուե, և պատերը ապակի (պիլօռ) քարի նման ել-

լալով ամէն դիէն լոյս կըցոլար. ոչ թէ
ջորս դին Ճերմակ պատած ըլլար։

Լ.օպէնսօն որոշէց որ իրեն հանգստու-
թիւն տեղ ընէ. հոն քանի մը ժամ կըւար-
Ճացաւ կոյ տեղը արևին տաքութիւնն.
միտքը դրաւ ուտելու բաներն ալ հոն պա-
հէ, որ առանց այլայլու�ցամաք և անա-
պական մնան ու սաստիկ տաքութիւնն չի
թթվին։ Այս տեղս ընդարձակ ըլլալուն
համար՝ խրկեց գերին որ երթայ գործիք-
ները բերէ. որով նախ դուռը մեծցուց,
և երկուքը միատեղ աշխատելով լաւ մը
շտկեցին, ամէն օր ուրախութիւնով կաշխա-
տէին (*)։

(*) Շատ մեծ կատարելութիւն է մարդուս ամէն
գիպուածի մէջ անխռով մնալ. և մեծ անկատարութիւն
նշան է քիչմը բանով այլայլիլ, ինչպէս որ կըսէին
հին փիլիսոփաները. որովհետև մարդը միշտ նոյն ըլ-
լալով՝ ինքը չի փոփոխիր, գիպուածը կըփոփոխի.
ուրեմն հարկ չի կայ որ մարդը փոփոխելով այլայլի։
Սակայն այս կատարելութիւնը՝ Ճշմարիտ ուծապաշտ մար-
դը կրնայ ունենալ. որ յոյսը ոչ հաստատելով՝ ամ-
ենևին բանէ մը վախ չունի, ու ինչ որ գլխուն գայ՝
ոչ կըխռովի և ոչ իր կարգէն կըփոփոխի. հապա ա-
ռանց այլայլուելու վերջը կըգիտէ, մինչև որ այն փո-
թորիկն անցնի ու խաղաղութիւնը տիրէ։

ԻԹ. ԴԻՊԱԾ.

Ութ օր անցաւ՝ գայդողները չերևցան, ասոնք ալ սկսան խռովիլ և մտմըտալ ասոնց վրայ։ Ուրբաթ գերին օրը քառասուն անգամ կելլէր լեռանը վրայ, և կերթար ծովուն քով դիտելու համար. բայց պարապ տեղը աչքը կըհոգնեցընէր՝ որ զասոնք տեսնէ։ Օր մը Ռոպէնսոն բնակարանին մէջ կաշխատէր՝ գերին վազելով եկաւ մէյմը կըխնդար մէյմը կըցաթկէր, երբոր տերը տեսաւ հեռուէն, սկսաւ պօռալ կանչել խենդի պէս, թէ եկա՛ն եկա՛ն։

Այս ուրախական լուրն որ լսեց Ռոպէնսոն, առաւ դիտակն ու ելաւ լեռանը վրան՝ որ դիտէ։ Յայտնի տեսաւ աչքովն որ մակոյկ մը հեռուէն կուգայ դէպ ի՛ր կողկին. բայց երբոր դիտակով նայեցաւ՝ նեղանալով, և գլուխը շարժելով ըսաւ գերիին, թէ կարծեմ թէ մերոնք չեն. գերիին սիրտը փրթաւ։ Ռոպէնսոն կրկին անգամ դիտակը դրաւ նայեցաւ, բայց կասկածը խռովութի՛ն փոխվեցաւ. վերջապէս որոշ հասկըցաւ, որ եկողները իր մարդիկը չէին. ուստի գնաց որ սրտին խռովութիւնը Ուրբաթին յայտնէ, որ արդէն սասանած էր։ Այրեալ՝ ըսաց, ահա

ասոնք ոչ սպանեալ են, և ոչ քու հայրդ է. հապա այս մէկ ինկիլիզի մակոյկմը նէ, ինկիլիզներով լեցուն։ Ասերին որ լսեց դող եկաւ։ Ակռ հետս ըսաց տէրը, ելան քարձը տեղ մը. ուսկից աղէկ կերևնար հիւսիսային կողմը ծովին։

Այս տեղէն ծովուն վրայ նայածնուն պէս պաղեցան մնային. լեզունին փախաւ փայտ կտրեցան։ Ա՞ռ զի երկու մղոն հեռուն տեսան մեծ ինկիլիզի նաւ մը, երկաթի վրայ կայնած։ Հիմա հոս զարմանքն ու վախը, և ուրախութիւնը փոփոխակի կը-շարժէին Ռօպէնսօնին սիրտը. կուրախանար տեսնելով եւրոպայի նաւ, որ զինքը կրնար այն կղզիէն ազատել. զարմանար կը վախնար, վ՞ռ զի չէր գիտեր թէ ի՞նչ պատճառով կուգային կը մօտենային իր կղզին. կրնայէր որ ալէկոծութի՞ւն եկած չէն, որովհետև քանի մը շաբաթ կար՝ որ ծովը խաղաղ էր. նաւուն կերպին կրնայէր որ հարկաւորութի՞ւն մը չէր երևնար հոն մօտենալու։ Ա՞ռ զի ի՞նչ պատճառ կրնար ունենալ նաւապետը հոն երթալու. այն կողմը ինկիլիզները բնակութի՞ւն չունէին և վաճառականութի՞ւն մը չի կար. ուրեմն պէտք եղաւ վախնալ՝ չըլլայ թէ այն աւազակներն ըլլային, որ Ռիրադ կը կոչվին. որոնք այն կողմի կղզիներուն մէջ կը բնակէին, բոլորը վայրենի մարդիկ էին և

մանկութիւն առանց կրթութիւն մեծնալով, ամենևին մեղքը չէին ճանչնար՝ ինչ որ ընեն ինաս չունի կրսէին. զրկողութիւն յատիշտակուն ըլլայ, խորամանկութիւն նենգութիւն ըլլայ, մանաւանդ ուրիշին բանը կողոպտել իրենց մէջ կտրիճութիւն էր։

Ովուն ցամաքին վրայ գողուն աւազակուն իրենց տրված է, եամ չարիք կընեն։ Այս անզգամ ժողովուրդը թէպէտ եւրոպացոցմէ եկած ինկիլիզ են, բայց վայրենիներուն մէջ երկար ատեն բնակելով՝ անոնց բարքը ստացեր են, իրենք ալ անզգամ մարդիկ ըլլալով բոլորը աւազակ եղեր են. որովհետև միշտ պակաս չեն եղած ինկիլիթէռա այսպիսի գող աւազակ մարդիկ։ Որդ Ռոպէնսոն առջի տարիները առանձնական խեղճ կեանքին մէջ ըլլալով խիստ կրցանկար այս Ինրադներուն ձեռքն ինկիլ, ու գերի երթալ. ոչ պի այս միջոցով կարենայ մարդկային ընկերութիւն տեսնել. սակայն հիմակվան վիճակին մէջ, որ է այնչափ կարդաւորեալ և քաղցր, զարհուրեցաւ որ չըլլայ թէ այն աւազակներուն ձեռքն ինկելով կորսնցընէ իր երջանկութիւնը. ուստի յայտնեց կասկածը Ուրբաթ գերիին. Ելան միատեղ նորէն դիտեցին մակոյկն, որ կրմօտենար կղզիին. և ջանացին որ

հասկընան անոնց միտքը թէ ինչո՞ւ հա-
մար հոն կուգան։

Ոսպէնսօն ու դէրին գայլին բարձր
տեղ մը ելան, որ ծառերով գոյված էր,
ուսկից առանց երևնալու՝ կրնային դի-
տել թէ ի՞նչ կընէն եկողները. տեսան
որ մակոյկին մէջ 11 հոգի կային, եկան
ցամաքն ելան մէկ մղոն իրենցմէ հեռուն։
Այս մարդիկ դուրս ելան ցամաքը՝ ու թ
հոգին զինեալ էին, և իրեքը կապած։
Այս կապածներուն ողորմելի տեսքը
յայտնի կիմացընէր՝ որ մէկալոնցմէ ողոր-
մութիւն կըխնդրէին, որ իրենց խնայեն.
վո՞ւ զի մէկէն զէնք ունեցողներուն ոտքն
ընկան աղաչանք կընէին. իրենցմէ երկու-
քը թևերնին վերցուցած երբեմն երբեմն
կըխնդրէին՝ որ զիրենք ազատեն։ Ոսպէն-
սօն այս խեղճ բանն որ տեսաւ՝ սիրտը
չդիմացաւ, սաստիկ կըսկրծալով կըմտա-
ծէր թէ ի՞նչ ընէ։ Դերին անատենը մո-
տեցաւ տիրոջն ու ծիծաղելով ըսաց։ Ա՛հ
ահա ձեր քաղաքացիներն ալ կուտեն ե-
ղեր իրենց գերիները։ Դնա՛ ըսաց Ոս-
պէնսօն բարկանալով, անոնք ասանկ բան
չեն ըներ։ Մի՛ակերպ Ոսպէնսօն անոնց
կընայէր դիտակով։

Մէծապէս զարհուրեցան երբոր տե-
սան թէ զէնք ունեցողները վախցընելու
համար թրով կըդպչէին մէկալոնց գըլ-

խուն, որ ծունկ չոքած էին առաջնին։ Վերջապէս տեսան որ այն գերիները մինակ մնացին հոն. և մէկալոնք անտառին մէջ ցրվեցան։ Այն իրեք խեղճ գերին սաստիկ խռոված և բոլորովին յուսահատած նստեցան հոն։

Այս ողորմելի տեսարանը Աստվածածնին սիրտը շարժելով միտքը ձգեց այն խորհուրդն՝ որ կղզին մտած ատենը առաջադրեր էր, թէ երբոր հանդիպի՝ ամէն վտանգի մէջ մտնէ խեղճ գերիներուն օգնուելի հասնելու համար։ Աստի մէկէն Աստրբաթը խրկեց որ նայի հրացանները և ուրիշ գործիքները բերէ՝ որչափ որ կրնայ։

Աստվածածն կամեցաւ հոն մնալ ու դիտել թէ ի՞նչ կրնեն. գերին գնաց բոլոր պետք եղած գործիքները ժողվեց բերաւ, աղէկ մը դիտելէն ետև հասկրցան որ մակոյկը բերող նաւավարները ծառերուն տակը պառկած էին ասդին անդին կը.քնանային կէսօրուան տաքին ատենը։ Աստվածածն 4 ժամ դիտելէն ետև՝ կտրիճութեամբ առաջ գնաց դէպ 'ի խեղճ կապածներուն քով, որոնք նոյն տեղը ծովին քով նստած էին կռնակնին ասդին։ Աստվածածն իրենց մոտենալուն պէս կանչեց, թէ ո՞վ էք դուք. անանկ զարհուրեցան որ կարծեցին թէ կայծակ զարկաւ իրենց։ Էկէնիմէկ վեր ցատկեցին կուզէին փախչիլ. Աստ-

պէնսօն ինկիլիզերէն ըսաց իրենց՝ թէ մի՛
վախնաք, ես ձեզի օգնելու համար եկայ։
Ասոնցմէ մէկը գլուխը ծռելով պատաս-
խան տվաւ, թէ արդեօք դուք երկինքէն
եկած էք մեզի համար. և զարմանալով
միակերպ կընայէր անոր երեսը։

Կրկնեց Փոպէնսօն թէ օգնութիւնը եր-
կինքէն կուգայ. բայց հիմա ինծի այս
պուրցեցէք, թէ դուք ո՞վ էք, ձեզի ի՞նչ
պէտք է ընել, և ի՞նչ ճամբայով կրնամ
ձեզ ազատել։ Մէկը պատասխան տվաւ,
թէ ես այն նաւին նաւապետն եմ. ընկեր-
ներուն համար ալ ըսաց, թէ ասոնց մէ-
կը ղեկավար (տիւմէնճիս) էր, մէկալն
ալ ճամբորդ էր։ Մեր նաւավարները մե-
զի դէմ ելան նաւը մեզմէ յափշտակելուն.
կուզէին որ մէկէն մեռցընեն զիս երկու
ընկերներովս. զի ասոնք չմիաբանելով ա-
նոնց՝ անարգեցին ըրած գործքերնին.
բայց ետքը մտածելով մեր կեանքը մեզի
բաշխեցին, թէպէտ այս շնորհքը մեռցը-
նելէն սարսափելի է. վա՜ղ զի բերին մեզ
հոս ձդեցին այս անմարդաբնակ կղզին,
ուր ամէն բանէն զուրկ ըլլալով ողորմելի
պիտի կորսըվինք։

Կրկնեց Փոպէնսօն թէ երկու դաշին-
քով ձեզ կապատեմ այս խեղճուէս, ու
ձեզի համար ո՛չ արիւնս կըխնայեմ և ո՛չ
կեանքս։ Ի՞նչ բան են հարցուցնաւապե-

տը՝ ոչ փառաւոր այլ բարեպաշտ։ Զ.նալ ըսաց թէ որչափ որ այս կղզիս մէջ բնակիք, պէտք է որ իմ կամացս հնազանդ ըլլաք. իսկ եթէ ձեր նաւը առնեմ, պարտական ըլլաք զիս ու ընկերս ինկիլթէռա տանելու։ Պատասխանեց նաւապետը թէ մենք ու նաւը և բոլոր մէջի եղածները ձեզի՛ ըլլան բացարձակապէս։

Խի՛ստ բարի ըսաց Պոպէնսօն կապերնին քակելով՝ ահա ձեզի կուտամ մէյմէկ հրացան և մէյմէկ սուր այս խօսքով, որ մինչև ես չի կարգաւորեմ, դուք չի գործածէք։ Գիտնաք որ հիմա ձեր թշնամիները պառկեր կը քնանան մէկմէկ հեռու. երթանք բռնենք զանոնք կապենք առանց արիւն թափելու. Ամբոյ ելան, քակած չուանները դերին հետն առաւ, որ այն իրեքը կապած էին։ Ա.խ տեսան որ նաւավար մը մօտ տեղ բռվեր պառկեր էր գետնին վրայ, անանկ խոր կը քնանար, որ ձեռքը ոտքը շարժեցին ու բերանը բանդրին, չարթընցաւ. յետոյ ձեռքերը ետևէն կապեցին, երբոր արթընցաւ պատւիրեցին իրեն որ նոյն տեղը անանկ մնայ առանց ձայն մը հանելու. թէ չէ՝ նոյն կէտին կը կորսընցընէ կեանքը։ Զ.յս մարդը ծովը բռնած ըլլալով գլուխը դարձած էր, և անանկ ալ ըղեղը տաքցած էր՝ որ չիյտեր զինքը. որուն գլուխը դէպ 'ի ծո-

վը դարձուցին, ոչ ոք չի տեսնէ թէ մէ-
կալոնք ինչ կըլլան։ Երկրորդ նաւավարն
ալ նոյն վիճակին մէջն ըլլալով կապեցին
զինքն ու անդին դարձուցին, և առջինին
պէս ըրին։

Եհա այսպէս ուծային նախախնամութիւնը
յայտնի եղաւ այս դիպուածիս մէջ, թէ
անմեղաց պաշտպան է ուծ և վրէժխնդիր
անօրէնութեց, որով վեցն ալ դիւրին կեր-
պով բռնեցին կապեցին. բայց ետքի եր-
կուքը մէկէն արթընցան վեր ցաթկեցին,
զէնք առին ու դէմ դրին. Պօպէնսօն մէ-
կէն կանչեց իրենց թէ թշուառականներ
տեսէք ձեր ընկերները. Ճանչցէք մեր խշ-
խանութիւնը ձեր վրան, շուտով վար ձգեցէք
ձեր զէնքերը, մէկ պզտի պակասութիւն մը
թէ որ ընէք՝ ձեր կեանքը վտանգի մէջ
կը ձգէք։

Շուտով զէնքերնին ձգեցին ու Պօ-
պէնսօնին ոտքն ընկան թողուի խնդրե-
ցին իրենց նաւապետէն. անոնց ալ ձեռ-
քերը կապեցին ինչպէս մէկալոնց, և ա-
մէնը միատեղ տարին բանտը դրին այրի
մը մէջ, որ նոր գտեր էին։ Իրենց ասալ
պատուիրեցին թէ՝ պահապանն որ զիրենք
պիտի նայէր գլուխնին կըկտրէր, ով որ ի-
րենց մէջէն ջանայ դուռը բանալու։
Օ գուշուն համար ամէնուն վրայէն դա-
նակները առին։ Ընկէ ետև Պօպէնսօն

ու դերին նաև նաւապետը իրեն ընկերներովը դարձան ծովուն քով, մակոյկը ցամաքը քաշեցին ու տակը ծակեցին որ չըլլայ թէ մէկը մտնէ մէջն ու նաւն երթայ՝ մինչև որ բանը կարգի չի դնեն։ Որովհետև նաւավարներուն շատը նաւին մէջն էին, միայն 8 հոգին եկան որ այս խեղճերը անմարդաբնակ կղզին ձգեն ու նաւն առնեն երթան։ Այս խորհուրդով այսպէս ըրին, որ նաւուն մէջի եղողները երբոր տեսնէին թէ մակոյկը չեկաւ, հարկաւ ուրիշ մակոյկմ՝ ալ կըխըրկէին, որ գան առջի եկողները նաւը տանին։

Ասպէնսօնին այս խորհուրդը պարապ չելաւ. վե՞ղ ի կէսօրէն 3 ժամ ետև՝ նաւէն թնդանօթ նետելով նշան կուտային, որ ցամաքն եղած նաւավարները մակոյկն առնեն գան. տեսան որ գայօղ չի կայ, թէպէտև 3 անգամ նշան տվին, հարկադրեցան ծովէն ինքնեցընել միւս մակոյկն ու շտկեցին դէպ 'ի ցամաքը կուգային։ Ասպէնսօն ընկերներուն հետ միատեղ բարձր տեղմ՝ ելաւ՝ կըդիտեր թէ ի՞նչ կընեն։

Երբոր մակոյկը ցամաքն հասաւ, 10 հոգի ելան մէջէն վրանին լեցուն զէնք, դուրս ելածնուն պէս զարմանալով ասդին անդին կընայէին. վեր վար կըվազէին, ու

իրենց ընկերները կրկանչէին անուններին տալով. բայց տեղէ մը ձայն չի կար, պատասխան չի կար։ Երբոր տեսան մակոյկը ցամաքը քաշած տակը ծակ՝ սոսկացին մնացին։ Հոպէնսօն նաւապետէն իմացաւ՝ որ այն գերի բռնըված նաւավարներուն մէջէն 3 հոգին ակամայ մէկալոնց վախուն հաւաներ էին ապստամբութիւն. ուստի խրկեց Ուրբաթն ու ղեկավարն, որ զանոնք բանտէն հանեցին բերին։

Նաւավարը Հոպէնսօնին միտքը հասկընալէն ետև՝ լաւ մը նախատեց զանոնք ապստամբելնուն համար. ետքը այսպէս ըսաց իրենց. Թէ որ մենք ձեր յանցանքը ներենք, մեզի հետ հաւատարիմ կրմնաք առանց զատվելու։ Ամենքը միաբերան գոչալով պատասխան տվին, Թէ մինչև 'ի մահ ձեզի հետ մէկ ենք։ Այնէկեն նաւապետին ոտքն ընկան. նաւապետը կրկնեց Թէ ապստամբուէն առաջ ես ձեզ պարկեշտ և պատուական մարդիկ ճանչցեր էի. կարծեմ Թէ դուք ակամայ միաբանեցաք ապստամբներուն հետ. ուստի առջի անունիդ կրնաք ստանալ և ապստամբութեան անունը վրաներեդ քերել հաստատ հաւատարմութիւն և փորձով։ Ամենայն խօսքերով անանկ գղջացան այն 3 նաւավարներն՝ որ մէկէն սկսան լալ անկեղծութիւն. և շնորհակալ ըլլալով նաւապետին ձեռքը

պադին։ Նաև սիրով զիրենք ընդունեց զենքերը իրենց տվաւ, ու երդվենցուց՝ որ ամ զգուշութ հնազանդ ըլլան հրամանաց իրենց զլխաւորին, որ է Ասպենաց։

Սակ երկրորդ մակոյկին մարդիկը անդադար կըպօռային, ու երբեմն երբեմն հրացան կընետէին յուսալով թէ իրենց առջի ընկերները ասդին անդին ցրված ըլլալով, կուգան կըմիանան։ Հուսկ յետոյ տեսան՝ թէ բոլոր իրենց յոյսը ոչնչացաւ, իրիկվան դէմ սկսան իրենք ալ վախնալ, ուստի ամենքը մէկ տեղ եկան, ու մտան մակոյկին մէջ սկսան երթալ։ Որոնք կըվախնային որ չըլլայ թէ նաւը չի հասած՝ նաւուն մէջինները նաւն առնեն երթան առանց սպասելու իրենց։ Սանց այս կերպ շարժումը տրտմեցուց Ասպենաօնին և նաւապետին սիրտը, խըռովեցան՝ որ չըլլայ թէ փախցընեն զանոնք։ Ուստի պէտք եղաւ որ ուրիշ ձամբայ մտածելով պատուիրեն Ուրբաթին և նաւավարներուն մէկին՝ որ ծածուկ երթան մակոյկին մօտ ծառերուն տակը պահվին ու կանչեն թէ հոս ենք, որոնցմէ հազար քայլ հեռուն էին. ասալ պատուիրեցին թէ երբոր մէկալոնք ձայներնին լսելով մակոյկէն ելլէն գան դէպ 'ի ձայնը՝ իրենք կամաց կամաց հեռանան, անտառներէն ձայն տան, մինչև որ լաւ մը

հեռացընեն անկէ , և ուրիշ Ճամբայ տա-
նին ։

Ը. Յս խորհուրդը խիստ լաւ յաջողե-
ցաւ . վասն զի նաւավարները մակոյկը մտեր
երթալու ատենը նայիս ձայնը առաձ-
նունպէս՝ ետ դարձան ու դուրս թափե-
ցան և հրացանը ձեռքերնին դէպ 'ի ձայ-
նը վազեցին . երկուք միայն մնացին որ
մակոյկը նային ։ Իսկ Ալրբաթը իր ընկե-
րին հետ միատեղ խիստ աղէկ բանը կա-
տարեց՝ որոնք ներս քալելով անտառը խո-
թեցին զանոնք 3 մղոնէն աւելի , և ու-
րիշ Ճամբայով վազեցին Եկան Ալոպէնսօ-
նին պատմեցին , որ իր խորհուրդը հաս-
կըցուց նաւավարին . ոչ զի առանց արիւն
թափելու զանոնք ալ բռնեն ։

Գիշերը վրայ հասաւ կամաց կամաց
մութը կոխեց ։ Երբոր ձայն ձուն տեղը
չի կար՝ Ալոպէնսօն ընկերներուն հետ միա-
տեղ գնաց դէպ 'ի մակոյկը իբր 20 քայլ
հեռու առանց իմանալու երկու նաւա-
վարներուն , որ մակոյկը կընայէին ։ Ընա-
տենը յանկարծ ամէնքը միատեղ մակոյ-
կին վրան թափեցան պօռալով և զէնքեր-
նին շարժելով սպառնայան , թէ հիմա
երկուքնիդ ալ կըմեռցընենք թէ որ տե-
ղերնուդ շարժիք ։ Երկու նաւավարները
վախերնուն անձնատուր եղան . ասոնք ալ
վրանին գացին ձեռքերնին ետին կապե-

ցին։ Այս բանս կատարելէն ետև մակոյկը ցամաքը հանեցին և որչափ կարելի էր հեռուն տարին. ետքը երկու կապածներն ալ տարին մօտ տեղ անտառին մէջ պահեցին, ու կըսպասէին միւս նաւավարներուն որ մոլորած կըպտըտէին։

Ի երջանիս անոնք ալ եկան ետևէ ետև հասան՝ խիստ հոգնած հարփած պարապ վազելէն։ Սակայն երբոր մակոյկը չի գըտան հոն՝ զարհուրելով յուսահատեցան. և անպատմելի խռովեցան։ Անոնք 5 հոգի էին՝ որ միատեղ կըմտածէին թէ ի՞նչ ընեն. բայց Պօպէնսօն մէկ նաւավար մը խրկեց իրենց հարցուց՝ թէ կամ զէնքերնիդ վար կըձգէք ու անձնատուր կըլլաք ձեր կամքովը կղզիս գլխաւորին, և կամ կըջարդըվիք. ահա 30 քայլ հեռուն կեցած է, որ ձեր երկու մակոյկն ալ առաւ, մէկալ ընկերնիդ ալ գերի ըրաւ. ուստի ձեզի ուրիշ բան չի կայ ընելու, պէտք է որ ընտրէք. մեռնիլ կուզէք, թէ անձնատուր ըլլալ։

Անատենը Պօպէնսօն ալ ընկերներուն հետ միատեղ զէնքերու ձայն հանեցին, որ նաւավարները զարհուրեցան։ Ընդհանրապէս ներսում կուտայ մեզի իշխանը, հարցուցին։ Նաւապետը հոն մօտ ըլլալով ձայն հանեց, և առանց երևնալու այս պէս ըսաց. Թոմա Սմիթ դուն իմ ձայնս կը-

ձանձնաս . հիմա ձգեցէք զէնքերնիդ , կեանքերնիդ կըբաշխենք ձեզի , բայց՝ի Ս. քին նաւավարին , որ էր ապստամբնե-րուն գլուխը : Ս. մէնքը զէնքերնին վար ձգեցին : Ս. քին ալ սկսաւ լալով թողու-թիւն խնդրել նաւապետէն ըրած անօրէ-նութիւնը համար , և կըսէր թէ ինքը ուրիշներին աւելի յանցաւոր չէ :

Պատասխանեց նաւապետը՝ թէ որչափ որ ձեռքէս կուգայ միջնորդութիւն կընեմ իշխանին ձեր փրկութիւնը համար : Յետոյ խրկեց Ուրբաթը իրեք ընկերով որ անոնց ալ ձեռքերը կապեն : Ս. յս միջոցիս մէջ իրեք հոգի ալ ապստամբներէն եկան հոն հասան , որ ետև մնացեր էին . երբոր ա-սոնք ալ բանը հասկըցան , ամենևին դէմ չի կեցան մէկէն անձնատուր եղան , որ ձեռքերնին կապեցին :

Ս. ն ատենը Ուսպէնսօն զօրապետի հա-գուստով երևցաւ նաւապետին հետ միա-տեղ , և մօտեցան գերիներուն քով . ա-սոնց մէջ որոնք որ ուղիղ սրտով զղջա-ցեր էին՝ իրենց հետ միատեղ տարին բնա-կարանը , մէկալոնք խրկեցին բանտը : Ս. ռաջուց հոն եղած նաւավարներուն մէջ երկու հոգի ալ կային որ նաւապետը գիտեր թէ սրտանց զղջացեր են , անոնք ալ բերել տվաւ . միատեղ նոյն գիշերը անցուցին :

Լ. Դիպուած.

Բոլոր այս եղած յաջողութիւնները շուտով որոշեցին Յովհաննէսին վիճակը, խիստ ծանր կուգար իրեն անկէ ետև մնալ կըղզին մէջ. վասն զի սաստիկ սիրտը ելած էր որ երթայ ծնողքը տեսնէ. բայց այս յաջող դիպուածը նաւապետին կըկախվէր, որ հոգ տանի. սակայն կըմտմըտար՝ թէ արդեօք կրնայ նաւուն մէջի մնացողները հնազանդեցրնէ. կրնայ արդեօք երթայ նաւուն տիրէ ու անոնց վրայ իշխէ։ Լ. թէ այս բանս յաջողէր՝ ահա ուզածը կըլլար, ամէն նեղութիւն կազատէր, թէ չէ՝ նոյն վիճակին մէջ պէտք էր մնայ, և յոյս չէր ունենար որ անկէ ետքը կարենայ այն կղզին դուրս ելլել։

Որոնց որ ներսում ըսեր էր և իրեն հետ կըբնակէին՝ 10 հոգի էին. Յովհաննէս ասոնց հասկըցուց թէ ձեր յանցանքը բոլորովին չեմ ներեր մինչև որ իմ կողմանէս չի ջանաք և ինձի չօգնէք որ տիրեմ նաւին։ Ամենքը միաբերան երդում ըրին որ կամքդ կը կատարենք՝ ամ հաւատարմութիւնը, Յովհաննէս ալ խօսք տվաւ որ էթէ ինչպէս պէտք է ձեր պարտքը կատարէք, ոչ միայն ամէն պատիժէն ազատ կընեմ ձեզ. հապա կապած ընկերներդ ալ

ձեզի կը բաշխեմ. իսկ եթէ այս իրիկուն նաւը իմ ձեռքս չի տաք, ամենքնիդ ալ վաղը կը մեռնիք։ Այս վճիռը իմացուց կապածներուն ալ, և ետքը ուզեց որ ամենքը մէկ տեղ գան ու մնածէն. որպէս զի նախատես ըլլալով իրենց յանցանացը և մեծաւոր մահուանը՝ ասով հաստատվին հաւատարմութեան մէջ, որ էր մի միայն միջոց իրենց կեանքը ազատելու։

Այս խօսքին վրայ՝ իրենց մէջէն մէկ գլխաւորը կանչեց ընկերներուն, որ մէկէն պատրաստեն մակոյկը և միւս ծակ մակոյկն ալ շինեն. շուտ մը նայիս պատրաստեցին երկուսն ալ ծուռն ինջեցուցին։ Հրաման եղաւ որ նաւապետը մէկ մակոյկին գլուխ ըլլայ, զեկավարն ալ մէկալին. և նաւավարներն ալ բաժնեցին կէսը մէկին մէջը մտան, կէսն ալ մէկալին։ Բոլորը զէնք առին՝ մակոյկներն ալ աղէկ մը զօրացուցին։

Պօպէնսօն փաթթըլեցաւ նաւապետին, և յաջողութիւն խնդրելով իրենց համար՝ Համբայ դրաւ։ Սակայն Պօպէնսօն չէ թէ վախնալուն համար չի գնաց միատեղ, հապա խոհեմութիւն ընելով կեցաւ, որ չըլլայ թէ հեռանալով անկէ կապածգերիները ոտք ելլեն ու տիրեն իր բնակարանին։ Այս մի միայն պատսպարանն, որ ամէն պէտք եղած բանը ունէր մէջը,

ինչպէս կրնար անխոհեմութիւն վտանգի մէջ ձգել։

Եւ նաւապետն ալ այսպէս կրմտածէր. որ երբ հասկրցաւ թէ Յոպէնսօնն ու Ուրբաթը հոն պիտի մնան իրենց բնակարանը պահելու համար, շատ ուրախացաւ։ Եւ մութն որ կոխեց սկսան երթալ նաւուն վրայ։ Յոպէպետ Յոպէնսօն ամէն բան կարգի դրաւ, բայց մեծ անհանգստութիւնի մէջ էր, և անանկ խռոված էր՝ որ ամենևին սիրտը հանգիստ չէր։ Երբեմն բնակարանը կերթար, երբեմն իր բերդը կրվազէր, և երբեմն սանդուխէն վեր կելլէր բնակարանին վրան որ գիշերվան լռութիւնի մէջ նայի թէ ի՞նչ ձայն կըլսէ նաւէն, և բան մը կրնայ հասկրնալ նաւին վրայ։ Յոպէպետ բոլոր նոյն օրը բան մը չէր կերած, բայց անհնարին էղաւ որ բան մը ուտէ։ Բանի գնայ իր հոգն եւելցաւ, վ՞ա ալ կրսպասէր որ նշան մը ձայն մը առնէ նաւէն. այնպէս խօսք դրեր էին որ եթէ իրեք թնդանօթ նետվէր՝ յաջողութիւն նշան էր. սակայն կէս գիշեր եղաւ՝ բան չի կար։ Հուսկ յետոյ մտածեց թէ ասանկ վախի և յոյսի մէջ տանջվիլը աղէկ բան չէ. մէկ միտք մը եկաւ իրեն, հասկրցուց Ուրբաթին, թէ երբոր կասկածելի դիպուած մը պատահի՝ պէտք է միշտ ձախորդին սպասել։ Եթէ ձախորդը չի պատահի,

մեծ երջանկութիւն կըլլայ. եթէ իրաւ պատահի ալ, առաջուց նախատես ըլլալով պատրաստ կըլլայ մարդ և Ճամբայ մը կըգտնէ։ Պօպէնսօն ահա այսպէս միայն ձախորդը մտածելով՝ կարծէր թէ անտարակոյս գէշ պիտի ըլլայ այս բանին վերջը. սակայն բոլորովին ՆՃային նախանամութիւնը զինքն յանձնեց, որ այս վտանգն ալ անցընէ։ Այիս յոյսը նորոգվեցաւ երբոր հեռուէն յանկարծ լսեց թնդանօթի շփոթ ձայն մը. մէկէն ականջը դրաւ զգուշութիւն մտիկ կընէր՝ երկրորդ անգամ նոյն ձայնը առաւ, յետոյ երրորդ անգամ ալ լսեց. ուստի սկսաւ ուրախանալ թէ անտարակոյս նաւին տիրեցի, և մօտեցաւ ժամանակն՝ որ ելլէմ երթամ Եւրոպա։

Սաստիկ ուրախութենէն խելքը գլխէն գնաց, մէկէն ինչաւ եկաւ Ուրբաթին վիզը փաթթըվեցաւ, որ խոտին վրէ նստած կըմրափէր. անանկ կուլար՝ որ չէր կրնար բան մը խօսիլ։ Պատասխանեց Ուրբաթը աչքը բանալով, թէ ինչ կայ ՆՐ իմ. ի՞նչ եղաւ քեզի. վախուն չիյտէր թէ ինչ եղած է այսպիսի փոփոխութիւն տեսնելով տիրոջը վրան։ Պօպէնսօն անպատմելի խնդութենէն ուրիշ բան չի կրցաւ ըսելու, միայն այսչափ ըսաց. Ը.Ղ տիրելի՛ Ուրբաթ։ Ը.նալ ինքնիրեն ըսաց որ

ՅԱԾ ողորմի տիրոջս ու խելքը գլուխը բե-
րէ . կարծէր թէ յանկարծ խելքին բան
մը եղաւ ։ Պէտք է երթաս պառկիս , կը-
սէր սիրելի՛ որ իմ . և ուզէց որ ձեռքէն
բռնէ բնակարանը տանի ։ Յոսէնսօն ու-
րախ ձայնով կրկնեց . Ես պառկիմ Ո՛ւր-
քաթ , Ես պառկիմ այս առթիս մէջ , որ
ՅԱԾ ամենաբարին իմ փափաքս պիտի պսա-
կէ , որուն այսչափ տարի կրցանկայի ։
Դուն չի լսեցիր իրեք անգամ թնդանո-
թին ձայնը , չիյտես որ յաջողութիւն տի-
րեցինք նաւին ։ Դերին երբոր լսեց՝ խիստ
շատ ուրախացաւ . բայց աւելի տիրոջը հա-
մար կուրախանար քան թէ իրեն համար .
Վա՜ զի երբոր կըմտածէր թէ իր ծնած եր-
կիրները պիտի ձգէ երթայ , հայրը այլ
չպիտի տեսնէ՝ չարաչար կըվշտանար սիր-
տը . և այս խորհուրդը միայն այնչափ սիր-
տը դառնացուց որ , մինչև մոռցաւ այն-
քան տեսած աղէկութիւնները և հրաշքները
Յոսէնսօնին հետ ըլլալովը . Վա՜ զի հոն
տեսաւ հայրը , նաև մեծ յոյս ունէր ա՛լ ա-
ւելի բարիքներ տեսնելու ։

Իսկ Յոսէնսօն անանկ այլայլուն չէր
տեսած՝ որ ուրախութէն չիյտէր ինչ ընէ,
մէկէն վեր ելաւ լեռը գնաց երեսի վրայ
ընկաւ երկրպագուն ըրաւ ու աչքը վեր-
ցուց դէպ 'ի երկինքը ՅԱ շնորհակալ է-
ղաւ , որ իրեն ողորմելով վերջապէս այս

միջոցը տրվաւ՝ որ այս կղզին էլլէ։ Ընդ-
կէ շուտով վար ինջաւ եկաւ սիրելի Ուր-
բաթին քով՝ միայն Ամպուրկ քաղքին վր
կրեսսէր. և սկսաւ բանները կարգի դնել։
Ամոլոր նոյն գիշերը ասանկ բաներով ան-
ցուց ամենևին չի հանգչեցաւ։ Առաւօ-
տուն կանուխ չի լուսցած՝ աչքը դրաւ նա-
ւուն վրայ միշտ այն կողմը կընայեր, ուր
որ նաւը երկրթի վրայ կեցած էր։ Այսե-
լով սիրտը հատաւ, կրփափաքեր որ աղէկ
մը լուսնայ, ոչ զի ուզածին պէս զբաղ-
ճանալով դիտէ նաւն, որ զինքը պիտի ա-
զատեր անկէ։

Հա նոյն փափաքելի բոպէն եկաւ՝ լու-
սացաւ. բայց ուրախանալու տեղը խեղճ
ողորմելին աղաղակելով գետին ընկաւ,
վոյ զի տեսաւ որ նաւը աներևոյթ եղեր
է. ի՞նչ խեղճուն թափեց, ի՞նչ ողբեր
ըրաւ՝ չի պատմըվիր։ Ուրբաթը վազեց ե-
կաւ, երկար ատեն զարմացաւ մնաց՝ թէ
ի՞նչ եղած է իր տիրոջը։ Հուսկ յետոյ
տրը դողալով ցոյց տվաւ Ուրբաթին, նայէ
դեպ 'ի ծովը՝ կրսէր տկար և մարած ձայ-
նով. իսկ Ուրբաթը հասկընալով տիրո-
ջը վշտանալուն պատճառը շատ խռովե-
ցաւ։

Ռոպէնսոն այս իրեն օրինակովը կը-
յայտնէ թէ որչափ պէտք է մարդուս
համբերուն ունենալ, որ իր կիրքը իրեն

չի յաղթէ, ու կիրքը ՝որ չը լլայ մարդուն. որովհետև եթէ Յովհաննոն քիչմը առաջ այնչափ չափազանց ուրախութեան մէջ ընկած չը լլար, հիմա ալ այսպիսի չափազանց տրտմութիւն չէր պաշարվեր, և իր աչատ բանականութիւնը տրտմութիւն չէր խաւարեր։ Կրնար ուշաբերել, թէ միշտ ձախորդ դիպուածին մէջ հաստատ մնալու է, և նեղութեան մէջ ՝այ կամացը համակերպելու է, թէպէտ և յաջողութիւն յոյս մը չը լլայ։ Մանաւանդ թէ կրվայլեր իրեն մտածել, թէ ՝ածային նախախնամութիւնը կրնայ դիւրին կերպով վիշտը փոխել ուրախութեան, որուն առջև չի կայ անկարելի բան մը։ Այսպիսի բաներ թէ որ մտածեր, պէտք էր որ սիրտը հանդարտ էր ու ասանկ չի յուսահատեր։ Երեմն որչափ կատարեալ ըլլայ մարդ և ծեր, պէտք է որ միշտ զինքը կրթէ ու փորձութեան մէջ անխռով մնայ։

Երբոր Յովհաննոն ասանկ յուսահատեր էր և Երբաթ գերին զինքը կրվիթարեր, յանկարծ ոտքի ձայն առին լեռանը մէկալ կողմանէն. անանկ կերևնար որ շատ մարդիկ կուգան։ ՝Էկէն վեր ցաթկեցին ու չորս դին կրնայէին։ Այսպես հիանալով տեսան որ նաւապետը մէկ քանի հոգիով լեռանը վրան կելլէր։ Յովհաննոն թևերը բացած երբոր դարձաւ

նաւապետին դին, տեսաւ որ նաւը երկրաթի վրայ կեցած էր արևմտեան կողմը կղզին՝ ահա բոլոր տրտմութիւնը ուրախութի փոխվեցաւ։ Այսչափ միայն հասկրցաւ որ նաւապետը գիշերանց նաւը միւս կողմը տարեր էր. հոն մեծիկ տեղ ըլլալով ցամաքին և ապահով ըլլալուն համար աւելի դիւրին կըլլար իրենց բանը հոգալանոր համար հոն գացեր էր։ Հոպէնսօն ուրախութէն նաւապետին փաթթվաճ մնաց՝ չէր կրնար զատվիլ. նմանապես նաւապետն ալ իրեն կողմանէ սաստիկ ուրախութէն՝ որ ինչ խեղճութէն ինչ երջանկութե հասաւ, չիյտեր ինչպէս շնորհակալ ըլլայ Հոպէնսօնին. անալ անոր փոփոխակի։

Նաւապետը սկսաւ պատմել թէ ինչպէս յաջողեցաւ իրեն տիրել նաւին առանց մարդ մը մեռնելու և վիրաւորելու. վասն զի մութ գիշերանց առանց մարդ տեսնելու ընկերներուն հետ միատեղ նաւը կըմտնեն դիւրութիւ. և նաւուն մէջի եղողներուն շատը զինքը կընդունին. թէպէտ ոմանք աւելի չար ըլլալով ուզեցին դէմ դնել. բայց բան մը չի կրցան ընել մէկէն ստիպեցան զէնքերնին վար ձգել. նաւապետը պատմութիւնը լմընցուց ու բակրաւ երախտագիտութի ցցնելով իրեն ազատողին շնորհակալ ըլլալ, որ այսչափ

աղէկութեց պատճառ էղաւ (*) ։ Եւ հա
դուն ես ազատիչս ոմ բարերար Յովհան-
սոն՝ կըսէր լալով. որ քու ցաւակցութիւն և
խոհեմութիւդ զիս ալ ազատեցիր նաւս ալ
ազատեցիր ։ Սակայն քեզ կըվայլէ այն,
ինչպէս որ կուզես անանկ կարգադրէ՛ նա-
ւը. յետոյ հանեց նաւէն բերած պաշար-
ները. և նոյն օրը ամէնքը միատեղ մեծ
ուրախութիւն տօնախմբութիւն ըրին ափնիւ
կերակուրներով և գինիներով ։

Եւ յս միջոցիս մէջ Յովհաննսոն ալ իրեն
հանդիպած արտարոց դիպուածը պատմեց.
որուն վրայ խիստ շատ կըզարմանար նա-
ւապետը ։ Յետոյ աղաչեց Յովհաննսոնին,
թէ ինչ որ կուզես ինձի պատուիրէ՝ ընեմ։
Պատասխանեց Յովհաննսոն թէ բաց՝ի ի-
ւրիկվան ըրած դաշինքէս՝ որ վարձատրեցի
քեզ ըրած ծառայութիւդ համար, իրեք
շնորհք ալ տերութիւդ կըխնդրեմ։ Նախ՝
կաղաչեմ մինչև որ Պանեօլն ու Ուրբա-
թին հայրը չի գայ՝ չերթանք ասկէ. երկ-
րորդ՝ չէ թէ միայն մենք մեր մարդիքնե-
րով երթանք, հապա բոլոր սպանեօլներն

(*) Օրագրութիւն մէջ կըսէ թէ նաւը գացողները 12 հոգի էին. որոնք երբոր գիշերանց մօտեցան նաւին, նաւապետը պատուիրեց մէկ նաւավարին որ ձայն տայ նաւին մէջի պահապաններուն թէ ընկերնիս գտանք բերինք։ Ուստի մօտեցան նաւին նախ նաւապետը իր ընկերներով նաւը մտան զէնքով, մէկէն կոխեցին միւսան տիրեցին նաւուն։

ալ հետերնիս տանինք իրենց հայրենիքը։ Նրբորդ՝ ինձի բաշխէ՛ ապստամբներուն կեանքն որ բանտն են. մի՛ պատուհասեր զանոնք վրէժխնդրու�ի իմ կղզիս մէջ. գիտնաս՝ որ այս Համբայով՝ալ աղէկ կըրնաս զանոնք ուղղել։ Նաւապետը խօսք տվաւ, թէ՝ Համ զգուշութիւն պարտական էմ կատարել այս խնդիրքներդ. յետոյ բերել տվաւ ապստամբները, և ըրած անօրէնութիւնները երեսնին տվաւ ու դատապարտուեցան վճիռը առաջնին դրաւ։

Նրբոր լսեցին ամենևին բերաննին չի բացվեցաւ. վո՞ զի գիտէին՝ որ ըստ արդար օրինաց արժանի են մահու։ Իսկ Ոսպէնսոն մարդավար և գթած սրտովը խրատեց զանոնք. յետոյ հասկըցուց թէ ի՛նչ է զանակաւ պիտի վարվէին հոն. իրենց խոստացաւ ո՛չ միայն չի պատուհասել, հապա՝ բոլոր կղզին իրենց պիտի յանձնէր մէջի եղած դանձովը, կենդանիներովը, և բոլոր շինած բաներովը։ Նաև իրենց պատուիրեց շատ բաներ, ոնգ զի՝ այ ապաւինելով՝ միաբան սիրով աշխատին. ասաւ ալ հասկըցուց որ այս առաքինութիւնը շարունակ այսպէս ընելով անանկ կըքաղցրանայ իրենց այն կեանքն, որ չեն ուզեր կղզիէն դուրս ելլել։

Նրբոր այսպէս կըխրատեր՝ Ուրբաթը վազելով եկաւ աւետիս տվաւ՝ թէ հայրս

և Պանեօլը եկան ցամաքն ելան։ Այլիս ամէնքը միատեղ վազեցին դէմ գացին. իսկ Ուրբաթը թռաւ կայծակի պէս հասաւ հօրը փաթթըվեցաւ. մէկալոնք ալ հոն հասան։ Ռոպէնսոն նայեցաւ ու խիստ զարմացաւ. վ՞ը զի տեսաւ որ եկողներուն մէջ երկուք ալ կնիկ մարդ կային. հարցուց Ֆինդշաբթիին, իմացաւ՝ որ անոնք էին երկու սպանեօլներուն ընկերները։ Անոնք երբոր լսեցին թէ Ռոպէնսոն մէկ քանի նաւաւար պիտի ձգէ կըղզին մէջ ու ինքը պիտի երթայ, աղաչեցին որ զիրենք ալ հոն ձգէ իրենց կնիկներովը. խօսք տվին թէ ուր տեղ որ կամենայ, հոն կըբնակին իրեն հրամանովը։ Ռոպէնսոն ուրախանալով անոնց խնդիրքին վրայ, խիստ բարի ըսաց զբաղարձուցը. վ՞ը զի շատ հաճեցաւ որ այսպիսի մարդիկ բնակին իր կղզին, որոնց վ՞ը բարի վկայեցին ընկերները. ոչ զի կարենան վարվիլ ապստամբներուն հետ, որ պիտի հոն ձըգէր. և քաղցր կարգաւորեալ կեանք մը իրարու հետ վարել։ Ու այս խորհրդով որոշեց որ ասոնց իշխանութիւնը տակն ըլլան անոնք։ Որոնց վեցը ինկիլիզ էին, և երկուքը սպանեօլ իրենց ընտանեօքը. Ռոպէնսոն ամէնը մէկտեղ կանչեց՝ իր կամքը յայտնեց իրենց այս խօսակցութիւն։

Յուսամ թէ կըսէր, ձեզմէ մարդ մը

իմ կարգադրութիւնս չի հակառակիր , որ պիտի տրամադրեմ իմ ստացուածքս , որ է այս կղզին , և մէջի ամէն բանը . ես կը-փափաքիմ՝ որ հաւասարապէս ամէնուդ բարի ըլլայ . բայց որպէս զի հաստատուած մնաք հոս , պէտք է ձեզի կարգ և կարգադրութի . որ միայն ինծի կրնի օրինադրել ձեզ : Ուստի ահա իմ կողմանէս ես կը դնեմ երկու սպանէօլները իմ տեղս գլուխ . որ ասկէ ետև ըլլան օրինաւոր ձեր կղզիս : Պարտական էք որ ասոնց կատարեալ հնազանդութիւն ընէք , որոնք պէտք է որ իշխեն բերդին , և անոր մէջը բնակին . բոլոր զէնքերը լաւ պահեն , և զգուշութեամբ նային ամէն պատերազմական գործիքները , և բոլոր բանները . սակայն երբոր հարկաւոր ըլլայ՝ պարտական ըլլան ձեզի տալու այս պայմանով , որ դուք ալ ամ կերպով ըլլաք խոնարհ հպատակ և հանդարտ : Որչափ որ վտանգ պատահելու ըլլայ՝ պէտք է որ ամէնքնիդ միատեղ ջանաք մէկզմէկ պաշտպանելու :

Հասարակաբար ըլլայ նաև երկրագործութիւն աշխատանքը թէ՛ արտերուն մէջ և թէ՛ պարտէզներուն մէջ . նմանապէս հաւասար բաժնելի եղած պտուղը : Կը-նայ ըլլալ որ օր մը լսեմ ձեր բարի լուրը . նմանապէս կրնայ ըլլալ՝ որ օր մը դառնամ գամ հոս կատարեմ իմ մնացած օրս . ինչ-

պէս որ ահա մեծաղոս փորձ եմ՝ կիմանամ թէ ի՞նչպէս սիրելի է ինծի այս կղզիս։ Ընտանեաց՝ վայ անոր որ իմ կարգիս դեմ բան մը գործած ըլլայ. առանց ոգորմութեան սաստիկ տանջանաց ծովը կընեմ այն պիսին։ Մենքը հաւանեցան այս կարգադրութեան, և խոստացան ձշմարիտ հնազանդութիւն։

Յետոյ Ռոպէնսոն նշանեց՝ ինչ որ հետը պիտի տանէր. և պատուիրեց որ մէկէն նաւը տանին, որ էին ՃԿ՝ կաշիէ հագուստը, հովանոցը, և երեսին ծածկոցը, որոնք որ ինքն էր շիներ. Ը՝ տեգը, քարէ կացինը, և աղեղը, որ էին իր գործիքը. Ղ՝ փօղ թուղթակը, շունը, և երկու լամպան. Ղ՝ մինակուն մէջ շինած բաները և ամանները. Ե՝ ոսկիի մանրուքն ու անդամանդը. նաև ձոյլ ոսկին, որ գտեր էր հողին մէջ։

Ռոլոր այս բաներս նաւը դրաւ հոմէ աւ յաջող կըփչէր որոշեց որ միւս օրը ճամբայ ելլէ։ Ռոպէնսոն ու Ուրբաթը պատրաստեցին լաւ հարկիք մը, որ տունախմբուի կատարեն երթալէն առաջ և աղէկ մը հարկեն նաւապետը՝ նաև զանոնք. որ կղզին պիտի բնակէին։ Ընպիսի ակնիւ բաներով լաւ պատուեցին զամէնքը, մինչև նաւապետը սաստիկ զարմացաւ Ռոպէնսոնին ճարտարութիւնը

վրայ, թէ ի՞նչպէս զամէնքը կուրախաց-ընէր և ամէնուն սիրտը կըշահէր պատ-ւասիրութիւն և մարդասիրութիւն։ Նաւապետն ալ Յոսէնսօնին նմանելով և անոր առատասրտութիւնը պատասխանելու համար նաւէն բերել տալ ուտելու բաներ, նաև վառօդ և երկաթեղէն գործիքներ ու ընծայ ըրաւ նոր բնակիչներուն։

Յրիկուն եղաւ՝ Յոսէնսօն ազաչեց որ թող տան իրեն, մէկ ժամ մը մինակ նստի մտածէ նայի՝ երթալէն առաջ ընելու բան մը կան նէ՝ ընէ։ Մէնքն որ իրմէն հեռայան, Եւաւ լեռանը վրան չորս դին նայելով միտքը բերաւ բոլոր քաշածներն, որ՝ մինչև նոյն օրը քաշեր անցուցեր էր հոն. ածային բարիքները մտածելով անանկ սիրտը եւաւ, որ մորմոքելով բերանը հողին տալաւ շնորհակալ եղաւ իր բարերար ստեղծողին որդիական սիրելութիւն։

Ի՞նչպէս կարենամ յայտնել կրսէր՝ անհուն բարիքն որ տեսեր եմ, լաւ կըՀանչնամ։ Սակայն խօսքս կրպակսի չեմ կրնար բացատրել սրտիս մէջի տպաւորած երախտիքն՝ որ երկնաւորն ինծի ըրած է, պարտական կըՀանչնամ զիս յաւիտեան։ Այս խոկումներն ըրաւ կատարեց մեծ շնորհակալութիւն։ Հա եկաւ ժամանակը անկէ մեկնելու. Յոսէնսօն բարձ-

ըէն սկսաւ անոյշ խօսքերով յորդորել վարի եղողներն, որ միաբան ըլլան, սիրով աշխատին միշտ. մանաւանդ բարեպաշտ և բարի վարք ունենալով միշտ նոյն խրատները սրտերնուն մէջ պահեն, որոնք իբրև իր եղբայրները յանձնեց ՝այ ձեռքը. որուն շատ անգամ մեծամեծ հրաշքը տեսեր էր երջանկութիւն։ Հուսկ յետոյ վերջի անգամն ալ աչքը դարձուց չորս դին նայեցաւ զբաղարձուցիչ, և նորէն ՝այ շնորհակալ եղաւ, որ զինքը այնչափ վտանգներէ պահելով նոյն օրուան հասուց, և այնպիսի սքանչելի հրաշքներ և աղէկութիւններ իրեն յայտնեց մինչև նոյն օրը։

Վերջապէս եռքի մնաք բարովն ալ ըրաւ նոր բնակիչներուն. բայց տրտմութիւնն այլ ձայնը հատեր էր։ Լուրբաթն ու Հինգշաբթի գերին հետն առաւ չորս դին բարևելով՝ լալագին մնաւ մակոյկին մէջ, գնայ մեծ նաւը մնաւ, նաև սպանեօլներն ալ եկան նաւն որ միատեղ երթան։ Եւ այսպէս այսչափ տարուան բաղձանքը Հոպէնսօնին կատարեցաւ, և 12 տարի հոն բնակելէն ետև մեկնեցաւ անկէ ձամբայ ելաւ, որ իր հայրենիքն երթայ, ծնողքը տեսնէ։

Հովը յաջող և անոյշ կըփչէր՝ անանկ լաւ կերթային որ նաւուն մէջի եղողներուն կերևնար թէ կղզին կըփախչի իրենց-

մէ արագութիւն։ Ոսպէնսօն նաւին վրայ կէսցած շարունակ իրեն կղզին կընայէր տրտում և անխօս, ամենևին աչքը չէր փոխեր անկէ. վասն զի 12 տարեան հոն բնակիլը, և այնչափ բաներ քաշելը և ամէն վշտաց յաղթելով յաջողուի գտնելը՝ բուն իր հայրենիքին աւելի քաղցր և սիրելի ըրեր էին իրեն այն կղզին։ Ինչպէս կեռոյ կղզին աներևոյթ եղև տեսուէն. սկսաւ հառաչելով երգ ընել իր զատվելուն վրայ. կեռոյ գնաց նաւապետին խուցը մտաւ Ուրբաթին և Ինգշաբթին հետ միատեղ, որ ուրախական խօսքերով մխիթարէ զտին տրտմուիը բարեկամական կենակցուիր։

Ամս Համբորդուիը այնչափ յաջող եղաւ, որ 24 օրը հասաւ նաւը Ռատիչէ քաղաքը Սպանեօլին, և հոն հանեցին Համբորդ սպանեօլները, որ Ամերիկայէն բերեր էին։

Ոսպէնսօն քաղաքն որ մտաւ, հարցուց վաճառականներուն որ գիտնայ թէ որտեղն պէտք էր տալ ոսկիի մանրունքն՝ որ ցամաքը նստած նաւէն հաներ էր։ Շատ մեծապէս ուրախացաւ երբոր գտաւ տեղը. և հասկըցաւ որ երևելի վաճառական ըլլալով թշուառութեան մէջ էր ընկեր նաւուն կորսըվելովը. և այն մէկ տակառ ոսկին ձեռք ձգելով նեղութէն ազատե-

ցաւ. որովհետև նաւին կորուստը յուսա-
հատութիւն մէջ էր ձգէր խեղճ վաճառա-
կանը. և անանկ շփոթիւր էր որ պիտի
բացն ելլեր, բոլոր ունեցածը բաժնելով
առնելիքի տերերուն՝ գոցէր պիտի առու-
տուրը։

Ահա մէկ տակառ ոսկին բաւական է
դաւ զինքը վերցընելու, և առջի աստի-
ճանը գտնելու. ասոր համար այնչափ մեծ
ճանչցաւ իր բարերար Յովհաննէսին ըրած
շնորհքն՝որ ուզեց ոսկիին կէսը անոր ընծայ
ընել, բայց Յովհաննէս ամենևին չի
մտածեցաւ. նաև յայտնի վկայեց թէ ես
եմ պարտական ձեր երախտագիտութիւնը,
և ալ աւելի պէտք էր ձեզի հատուցանել,
որքեզի պէս պատուաւոր վաճառական մը
իր վաճառականութիւնը պատիւը գտաւ. ահա
այս ինծի մեծ բան է։

Այն քաղքէն ելան որ Ինկիլթէրա
անցնին, ճամբան երթալու ատենը մէկ
խեղճ դիպուած մը պատահեցաւ. վն զի
Ինդշաբթի գերին մէկէնիմէկ հիւանդ-
ցաւ, որչափ որ դեղ և ճար ըրին ամենևին
օգուտ մը չեղաւ։ Որդուն ըրած խեղճու-
թիւնները չի պատմուիր. տրտմութէն յուսա-
հատեցաւ երբոր սիրական հայրը մեռաւ։
Երկու լամաներն ալ անոր (*) նման հիւ-

(*) Որովհետև վարի աշխարհքին օդը վերի աշ-
խարհքին չի յարմարիր. թէ վերի աշխարհքէն գացող

ընդդեմն և ծովուն օդին երկար չդիմանալով մեռան։

Լաւը յաջողութիւն հասաւ ինկիլթէռա. Մոպէնսօն կը յուսար որ կարենայ գտնել հոն Մրբէվարի կնիկը այն ինկիլիզին. որուն անդամանդները քոշն էր։ Շատ փնտրուեց հարցուց՝ վերջապէս փնտրուելով գտաւ. բայց խիստ ողորմելի աղքատ եղեր էր. որովհետև երկու տարիէն՝ի վեր ոչ հնդկաստանէն բան եկած էր և ոչ երկանէն օգնուի մը եղած էր իրեն, անոր համար իր զաւակներովը վերջին աղքատուն հասեր էր. հինուսին լաթերով անանկ ողորմելի էին, որ երեսնին մեռելի գոյն էր, խեղճութիւնը վրաներէն կը կաթեր։

Մոպէնսօնին մեծ ուրախութիւն եղաւ այս անգամ ալ, և շատ բերկրեցաւ սիրտը այս խեղճերուն բարերարութիւն ընելով. հնորհակալ կը լլար՝ որ ասծային նախախնամութիւնը զինքը իրեն գործիք ընելով անանկ խեղճերուն սիրտը կուրախա-

ներուն շատը կը մեռնին և կը մնասին հիւանդութիւն, ինչպէս որ Մոպէնսօն եղաւ. այսպէս ալ վարի աշխարհքին մարդկանց վերի օգը չի գար։ Ուրբաթին հայրը տարիքն առած ծեր մարդ ըլլալով չդիմացաւ վերի օդին և ջրին մեռաւ. նմանապէս լամանեքն ալ վարի աշխարհքի կենդանի ըլլալով ինասեցան. շատ կենդանի կայ հոս, որ հոն երթան շուտով կը մեռնին։

ցընէր և ուրիշներուն կարօտութիւնը կըլե-
ցընէր։ Ուստի տվաւ այն խեղճերուն
անտուկ մը անդամանդը, որոնք աղքա-
տութիւն չորցած ծառի նման էին եղեր, մէ-
կէն սկսան կանանչնալով ծաղկիլ հարըս-
տութիւն և մեծութիւն։ Եւ այսպէս իրեն պատ-
ճառ ըլլալովը՝ տեսաւ որ այս մարած տու-
նը հարստացաւ, և մեծ ուրախութիւն կըկը-
ւարձանային իրենց բաղդին վրան, որ այն-
չափ ողորմելուն հասեր էր։

Ուօպէնսօն նաւահանգստին մէջ նաւ
մը գտաւ որ Ամպուրկ պիտի երթար.
հրաման ուզեց իր ինկիլիզ նաւապետէն
որ մէկալ նաւին հետ երթայ, կըվախնար
որ անոր անոյշ բարքը կըպարտաւորէ
զինքն որ հետը ուշանայ հոն. ուստի Ուր-
բաթին հետ միատեղ պատրաստվեցաւ,
որ Ամպուրկի նաւը մտնէ, որն որ առանց
ուշանալու շուտով պիտի ելլէր։ Այս
փոփոխութիւնը շատ օգտակար եղաւ Ուօ-
պէնսօնին որ շուտ մը Համբայ ելլան, ու
յաջողութիւն Էմիլեան Համբայէն կեր-
թային։ Երջապէս սկսաւ երևնալ Ուօ-
պէնսօնին ծնած քաղաքներուն հորիզոնը
կամ եղերքը. որ այնչափ կըփափաքէր
տեսնելու, մինչև ուրախութէն սիրտը կը-
հալէր։

Հա՛ հասաւ նաւը Լոնդոն գետին բե-
րանը. նայիս յանկարծ սաստիկ հով է-

լաւ ու սաստիկ ալէկոծութիւն հանեց, ա-
նանկ որ նաւը յափշտակեցաւ հովին դէպ
'ի ցամաքն ընկաւ բռնուելու։ Բ. ինչափ աշ-
խատեցան չի կրցան նաւը շտկել և անհը-
նարին եղաւ վտանգէն ազատել։ Մէկէն-
իմէկ սաստիկ փոթորիկ մը վրայ հասաւ,
ամէն բան վերիվար ըրաւ. եռքը վերցուց
նաւը տարաւ ցամաք տեղ մը ձգեց որ
նաւին տակը բացվելով ջուրը լեցվեցաւ
մէջն ու նաւն ընկղմեց. ուստի ուրիշ
բան չի կրցան ընել, ջանացին միայն հո-
գինին ազատել. բոլոր նաւին մարդիկը
լեցվեցան մակոյկին մէջ մեռնելէն ազա-
տեցան։

Ասպէնասն ընկերներուն հետ միատեղ
հասաւ Բիւսքաւ քաղքը մերկ և աղքատ
ինչպէս ողորմելի Ճամբորդ մը, որ շատ
անգամ ալէկոծուն քաշելով վերջապէս
ցամաքն ելաւ և իր երկիրները հասաւ՝
բայց բոլոր հարստութիւնը կորսնցուց. մի-
այն հաւատարիմ շունը ազատեցաւ՝ որ
ծովը նետվեցաւ ու ետևէն եկաւ. նաև
փոքր թուղթակն ալ ալէկոծութիւնէ ատենը
քովէն չի զատվելով ազատեցաւ։

Բիչ մը ատենէն ետև տեսաւ որ նա-
ւուն մէջի բաներէն բան դուրս ելաւ.
դնաց փնտրուեց գտաւ հովանոցն ու կա-
շիէ հագուստը, և երեսին ծածկոցը, ա-
սոնք առաւ պահեց. բայց մեծ կտոր ոս-

կին կորաւ գնաց։ Եւ այսպէս ահա Պօ-
պէնսօն Ամպուրկէն ելած տեղը որչափ
որ բան ունէր և ինչ աստիճանի մարդ
էր, նոյն աստիճանով դարձաւ ելաւ նո-
րէն Ամպուրկ։

Երնայ ըլլալ որ ՝ած ամենաբարին խոր-
հրդով այսպէս կարգաւորեց. որպէս զի
խրատվին կարճամիտ պատանիք, որ չըլ-
լայ թէ առանց մտածելու ուզեն Պօպէն-
սօնին նմանիլ և աշխարհք պարտելով
շրջիլ, որ գանձ գտնեն ու հարուստ դառ-
նան իրենց հայրենիքը։ Սակայն Պօպէն-
սօն իր կողմանէ ամենևին բան մը չէր մը-
տածէր, և կորուստին վրայ ոչ երբէք
կըկսկըծար։ Որովհետև միտքը դրեր էր
որ մնայած կեանքը պարզ և չափաւոր
անցընէ, միշտ աշխատանքի հետ ըլլայ՝
ինչպէս որ սորված էր իր կղզին մէջ. ա-
սոր համար իրեն մեծ բան մը չէր երևնար՝ գտնէր չի գտնէր այն կտոր ոսկին։

Ռիւսքաւ քաղքէն նաւը մտաւ դէպ՝ի Ամպուրկ ճամբայ ելաւ. Լաչպա գետէն
երթալով հասաւ Թատին՝դիմացը. երբոր ասկէ Ամպուրկին զանգակատուններ-
ը տեսաւ՝ սաստիկ ուրախութենէն կուլար։
Ոչոս ժամ մնաց որ հասնի իր ծնած քա-
ղաքը, և սիրական հայրը տեսնէ ու կա-
ցօան առնէ. վասն զի Ռիւսքաւ քաղաքը

լսեց որ մայրը մեռած է, դառն արտասուք կուլար սիրելի մօրը վրայ։ Հովին բարձրանալովը և հովին յաջողութիւնը նաւը անանկ կլվազէր որ աւելի կերևնար թէ կլթռչի քան թէ կլքալէ։ Նոյան Պլանքէնէզը և հասան Լէոէնսթատ. և անկէ Լլթօնա։ Հուսկ յետոյ մտաւ Մպուրկին նաւահանգիստը։

Ոսպէնսօնին սիրտը ուրախութենէն սկսաւ զարնել և դողալ, մինչև չդիմացաւ նաւէն դուրս ցաթկէց ցամաքը. և առանց նկատելու այնչափ բազմութիւն որ կընայէին, ընկաւ գետինը՝ երեսը հողին քսելով կըհամբուրէր իր հայրենիքը. տեսաւ որ հետաքրքիր բազմութիւը վրան թափեցան՝ ելաւ գնաց այն տեղի եղած օթարանը որ կըսվի Պոմ։ Անկէ հօրը տունը մարդ խրկեց, որ իմացընէ թէ որդին եկաւ, և այն անկարծելի բանը ուզեց որ կամաց կամաց իմանայ հայրը։ Խրկած մարդուն պատուիրեց որ հայրը գտնէ զուրցէ, թէ մէկը կուզէ զինքը տեսնել. և որդուն վրայ իրեն բաներ ունի պատմել, որով շատ պիտի ուրախանայ։ Անկէ ետև աստալ ըսէ՝ թէ որդին Ճամբան է Մպուրկ պիտի գայ. վերջապէս յայտնի ըսէ որ այս լուրը բերողը քու զաւակդ է, որ եկաւ հասաւ։ Պատածեց որ՝ էթէ ատանկ չընէ, խեղճ ծերը սաստիկ ուրախութէն

պիտի վտանգի. որ կրնար մահուանն ալ պատճառ ըլլալ։

Բայց զգուշութիւն ընելէն ետև, որովհետև Աստուածն դեռ կը ճանչնար ճամբաները՝ Էլաւ գնաց հօրը տունը. ներս մտածին պէս սաստիկ այլայլեցաւ սիրտը, և անպատմելի ուրախութիւն վազեց հօրը վիզն ընկաւ. իրար փաթթուելով լացին ուրախութիւն, և անանկ դող էլան՝ որ չիյտէին թէ ինչ խօսին. մէկը կըսէր, ո՜հ սիրելի հայրիկ. մէկալն ալ կըսէր ա՜հ սիրական որդեակ, ուրիշ բան չէին կրնար խօսիլ։ Սրտերնուն դողէն լեզունին կապվեցաւ, մունջ իրարու վրայ նայելով կը զմայլէին. ասանկ երկուսն ալ կապվեցան մնացին։

Երջապէս քիչմը անցաւ քաղցր արտասունք մը անոյշ անոյշ սկսաւ աչքերնուն վազել աղբիւրի պէս, որ սրտերնուն ուժ տալով զօրացուց. վո՞ւ պի չափազանց ուրախութիւնը սրտամէր էր սրտերնին (*)։

Իսկ գէրին այնչափ զանազան և շատ բաներ տեսնելով հոն՝ խիստ զարմացեր

(*) Սաստիկ ուրախութիւնը մարդուս սիրտը աւելի շարձակելով խօսքը և շունչը կարգելու. նոյնպէս և սաստիկ արտմութիւնը սիրտ սխմելով արտասունքին ճամբաները կը գոցէ՝ թող չի տար լալու։ Բայց ասոնց կիրքը չափազանց ըլլալուն սրտերնին գոցվեցաւ չէին կրնար ուրախութիւն խմանալ. մինչև որ կիրքը թուլնալով սիրտը ընդարձակեցաւ, որ կրցան լալ և ուրախանալ։

էր, լուռ չորս դին կընայէր ու չէր կրնար նայելով կշտանալ. այնչափ որ՝ առջի օրը ինչ բանի որ կընայէր՝ բոլորը շփոթ կըտեսնէր. վա՜ղ ի սատիկ զմայլելով խռոված էր միտքը և երևակայութիւնը։

Բայց երբոր Պօպէնսօնին դառնալուն ձայնը և զարմանալի դիպուածները քաղաքին մէջ լսվեցաւ, ամէնուն բերանը Պօպէնսօն էր. ամէնքը փափաքէին զինքը տեսնելու, և զարմանալի պատմութիւնը լսելու իրեն բերնէն։ Ուստի հօրը տունը առաջուանց մինչև իրիկուն լեցուն մարդ էր, աշխարհք հոն թափեցաւ. մինչև չէր հասնիր՝ որ բոլոր օրը պատմութիւնը պատմէ։

Որչափ որ բան կըպատմէր միշտ այս խրատս ծնողաց կուտար, որոնք իրեն մտիկ կընէին։ ,, Եթէ որ կըսէր՝ կուզէք ,, սիրել ձեր զաւակը, խրատ ըլլա՛ ձեզի ,, որ աղէկ կրթէք զանոնք ուսմամբ, բա- ,, րի վարքով, բարեպաշտական սովորու- ,, թիւն, պարկեշտութիւն, և աշխատանօք"։ Որչափ որ հոն տղաք և պատանիք կուգային՝ անոնց ալ այս խրատս կուտար։ ,, Սիրելի՛ որդիք հնազանդ եղիք ձեր հօրն ,, ու մօրը, նաև ձեր վարժապետներուն. ,, ինչոր ձեզի կըսորվեցընեն աղէկ ուշ ,, դրեք ջանացէք լաւ սորվելու. ա՜յ վախը ,, սրտերնիդ ըլլա՛. զգո՛յշ կեցէք, ոհ ըզ-

,, զոյշ կեցիք դատարկութիւն , որ է մայր
,, ամ մոլութեց ”։

Յոսկենսոնին հայրը վաճառական ըլլալով՝ կուզէր որ որդին ալ վաճառականութեան մէջ մտնէ , ու սորվի . ոնգ զի հայրը մեռնելէն ետև տեղն անցնի ։ Բայց Յոսկենսոն երկար տեն աշխատանքի մէջ սորված ըլլալով՝ խնդրեց որ իրեն հրաման տայ հիւանութիւն (մարանկոզութիւն) ընելու ։ Հայրը չուզեց որ զաւակը վշտացընէ՝ հրաման տվաւ որ ուզածն ընէ ։ Լատի Լուբաթին հետ միատեղ փայտեղէն բաներ կըշինէր . և այնչափ առաջ գնացին՝ որ տարիէն ետև իրենց շինած զարմանալի բաները երևելի վարպետները չէին կրնար շինել ։

Գործատուն մը շինեցին ու երկուքը միատեղ կաշխատէին . անանկ հաւատարիմ և սիրելի էին իրարու հետ՝ որ անհնար էր իրարմէ պատվիլ բոլոր կեանքերնուն մէջ ։ Շինատանքն ու բարեպաշտութիւնը այնպէս սիրելի էր երկուսին ալ , որ երկրորդ բնութիւն էր եղած . մինչ զի՝ անհնար էր որ կէս ժամ ատեննին պարապ անցընէին ։

Իրենց առջև առանձնական վարքին յիշատակ ըլլալու համար՝ շաբաթին մէկ օրը հաստատեցին , որ կղզիին մէջ ինչպէս որ էին՝ հոն ալ անանկ անցընեն նոյն օրը .

առանձին իրենց աղօթքին և բանին հետ ըլլալով ուրիշի հետ կենակցութիւն չէին ըներ։

Զարմանալի էր իրենց միաբանական սէրը. պատրաստ էին ուրիշին պակասութեց նեբելու, կուզէին որ ամէնուն աղէկութիւն ընեն, ամէնուն հետ քաղցրութիւն և մարդավարութիւն կերթային։ Այս առաքինութիւնները այնպէս սովորութի եղած էր իրենց, որ առանց կատարելու չէին կրնար հանգիստ ըլլալ. և իրենց յատուկ եղած էր պարզ անկեղծ և գործունեայ բարեպաշտութիւնը։ Որչափ անգամ որ ՚ի՜ այ անունը կուտային՝ ուրախութենն ու սէրը կըփայլեր դէմքերնուն վրայ։ Մեծապէս կըվշտանային երբոր կըլսէին՝ թէ այս սքանչելի անունը ստեղծողին՝ պարապ տեղը թեթևութիւն բերան կառնեն կըյիշեն մարդիկ։

Այս ՚ի՜ծային օրհնէնքն ալ իրենց վըրայէն չի պակսեցաւ. ի՛նչ բանի ձեռք որ կըզարնէին՝ կաջողէր։ Մինչ օգտակար գործքերու հետ ըլլալով աղէկ ապրեցան առողջ և հանգիստ կենօք մինչև՚ի խործերութի հասան։ Ուստի երկարատև ապագայ ժամանակը պարտակա՛ն է որ յարգէ մեծարէ Ոսկենսօնին և Ուրբաթին յիշատակն, որ այսչափ և այսպիսի բարի օրինակ թողին մարդկանց. ցոյց տալով

թէ ի՞նչպէս պիտի հանդիստ կեանք անցընէ մէկ բարեպաշտ մարդ մը ի՞նչ վիճակի մէջ որ ըլլայ, թէ՛ այս աշխարհքիս երջանկութեան համար, և թէ՛ յաւիտենական երանութեան համար։

ՅԱՒԵԼՒԱԾ։

Ահա հոս կը լմննայ այս գիրքս. սակայն ընդարձակ պատմութեան մէջ երկար գրած է Ալոպէնսօնին մնացած վարքը, որ համառօտելով պատմենք։

Ալոպէնսօն հօրը սիրուն համար այս առանձնական կեանքին մէջ երկար մնաց ու գերիին հետ միատեղ զարմանալի կաշխատէր իրեն դրած կանոնովը, և ամենևին վարքը չի փոխեց՝ քանի որ հայրը ողջ էր. ոչ զի չըլլայ թէ վարքը փոխելով վիճակին ալ փոխվի. մինչև հարկադրի նորէն հայրը ձգէ ու ճամբորդութիւն ընելով ուրիշ տեղ երթայ։

Այս միջոցիս մէջ իրեն նաւապետը դառնայ կուգայ Ամպուրկ, որուն որ կեանքն ու նաւը ապատեր էր. որ Ալոպէնսօնին վիճակը տեսնելով իրեն շատ ընծաներ կուտայ։ Այս ալ առած բաները ուրիշներուն կը բաժնէ. ամ որ իրեն աղէկութիւն ըներ էր երթալու ատենը՝ կրկին կը հա-

տուցանէ , նմանապէս փորդուքալցի նաւապետին ալ տված ստակը կուտայ ։

Յոպէնսօն կըպատմէ թէ տէրունը ուզեց դատաստանական քննութիւն հաստատել իմ գլխուս եկածները . կանչեց նաւապետը բոլոր նաւավարներովը քննեց և վճիռ ըրաւ , թէ ես նաւակոծութիւն այն կղզին ընկայ այսչափ տարի նստեցայ . և նախ հոն ոտք կոխելուս համար իրաւամբք ես եղայ տէր կղզիին . և այս թղթերը բոլոր հրապարակներուն մէջ փակուցին կըկարդային ։ Ես նաւը եկաւ նորէն գընայ Մերիգայ , ու քանիմը տարիէն ետև շատ բարիքով դարձաւ եկաւ . և շատ բան ալ Յոպէնսօնին տվաւ , մինչև որ լաւ մը հարստացաւ ։ Յոպէնսօնին հայրը 7 տարիէն ետև կըմեռնի . կառնէ Ուրբաթ գերին ու վաճառականութիւն կերթայ հնդկաստան . և որովհետև շատ կըփոփաքեր որ նորէն դառնայ իր սիրական կղզին տեսնէ , 8 ամիսէն ետև կըհասնի Մերիգայ իր կղզին ։

Տասը տարի անցեր էր կըսէ , որ զատվեր էի կղզիէս , տեսայ որ շատ բան փոփոխած էր . թէպէտ սպանեօլներն որ իմ տեղս դրեր էի , խիստ աղէկ նայեր էին կղզին , բայց ինկիլիզները շատ վիշտ էին հասուցեր անոնց ։ Շատ անգամ ալ վայրենիները եկեր էին հոն ծեծկըվեր էին ,

և անոնցմէ 5 հոգի և քանիմը կնիկներ գերի էին ըրեր. որոնցմէ շատ հոգի բաղմացեր էին լեցուն տղաքներով։

Լոպէնսօն ատեն մը կրնստի հոն, ու կարգադրելով երկիրը բնակիչներուն կը բաժնէ, որ երկրագործութիւնը աշխատին. նաև ինկիլիթէռայէն բերել կուտայ իրենց համար վառօդ, հրացան գործիք, թուր, կացին, բրիչ, և ն։ Ընկէ կելլէ կերթայ Պրասիլիա որ հոն հաստատէ բնակուիր, որովհետև հոն բաղմամարդ, և վաճառականութիւն տեղ ըլլալով շատ եւրոպացի կային։ Պրասիլիայէն 9 տուն ինկիլիզ կը խրկէ հոն, որ բաղմանան. նաև քանիմը կով, եզ, և խոզ կը խրկէ որ չի կար հոն. որոնք խիստ աղէկ աճեցան ու շատցան։

Ընկէ ետև օր մը 300 հոգի վայրենիներէն կուգան Լոպէնսօնին կղզին կը կոխեն, սակայն բնակիչները սասսիկ ծեծ կը վերով քաջութիւն զանոնք կը խորտակեն, և չարաչար կը վերնատեն. անանկ որ մարդ չի կրնար անկէ ետև հոն մնալ. ուստի բնակիչները հանդիստ կանցընեն իրենց կեանքը շարունակ աշխատելով Լոպէնսօնին կարգադրութիւնը։

Լոպէնսօն նորէն ելաւ գնաց իր կղզին նստաւ. տեսաւ որ բնակիչները շատցեր էին՝ խրկեց սպանեօլներուն կղզին մէկ

ուղղափառ քահանայ մը բերել տվաւ. որ խոհեմ և սրբակաց ըլլալով զանոնք ուղղափառութիւն մէջ հաստատեց. պսակ չէ ղածները պսակեց, և չի մկրտածներուն քրիստոնէութի սորվեցուց ու մկրտեց։

Անկէ ետև նորէն եկաւ Յովհաննէս վերի աշխարհք, և Հնդկաստան ժուռ եկաւ, ու մեծ վաստակով դարձաւ Պրասիլիա. և անկէ իր կղզին կերթար կուղար մինչև որ ծերացաւ և շատ փարթամացաւ։ Մինչ-ալէս որ ինքը կըգրէ՝ թէ Պրասիլիայէն ելլելէս ետև Հնդկաստան գնացի, անկէ եկայ հայրենիքս նստեցայ 10 տարի անցաւ։

Այս ճամբաներուն մէջ շատ բաներ ալ գլխէս անցան, և շատ կերպ կերպ վըտանգներէն ազատեցայ, մինչև որոշեցի որ ալ տեղմը չերթամ. որ 72 տարեան էի երբոր եկայ Ամպուրկ նստայ Ուրբաթ գերիս հետ միատեղ։ Այս դիպուածներուս մէջ լաւ սորվեցայ՝ թէ մարդ մը հանգիստ և աղէկ ապրելու համար պէտք է որ ըլլայ առաքինի, աշխատասէր, առանձնակեաց, և երկայնամիտ. որով խիղճմտանքը մաքուր պահելով՝ կրնայ ըլլալ ուրախ, և երջանիկ։

ՊԵՏ. ԱՄԵՐԻԿՅԱՆ Գ. ԵՐԵՎԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ
Ակ. Ա. ՄԱՍԻԱԿՅԱՆ
ՄԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ